



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

hkn

2135

1999

ԲԱՐԻՉՆ ՅԱՄԵՐԻԱԾ



ԵՂԻՆԱԿ

ԲԱՐԻՉՆԻ ԸՆԵՆԻ ԼԵՅԻՊՐԸ

ԲԱՐԻՉԵԱՆ

ՊԱՆՍԱՅԻ ՉԱՐԿ ՎԶԱՐՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԲԱՐԻՉԻ

ԿԱՌԱՎԱՐԵԱԼՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆԵ

ԱՆԳԱՄ

ԵՂԻՆԱԿԻ ԲԱՐԻՉԻ ԸՆԵՆԻ ԼԵՅԻՊՐԸ, ԵՒ ԱՅԼԵՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՅ



ԹԱՐԳՄԱՆՆՅ

Գ. ՄՍԵՐԵԱՆ

ՅԻՐ ՏՊԵՐՈՒԹԵՆՆԵՆ



ՋԱՄԻԻԹԻՎ

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԷՏԵԱՆ

1876

ԳԻՆ 2 ՖՐԱՆԿ

ՅՈՒՆԻՍԿՈՒՄ ԳՐԱԾ

ՏԷՏԷԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԶՄԻՌՆԵՍ

1976

Ա.Լ.ԵՐԱՍՆԱԿԻ ՏԻՒՄՍ

Ֆրանկ. Մ

Մանկ.—Բրիտոյ Կոմս. Պատկերազարդ. Բ. տպագրութիւն.

Թարգմանեալ 'ի Պ. Տ. Յ. Տէտէանէ,	6 հոգոր.	16.
Երեք հրացանակիրք. Թարգ. 'ի Պ. Մ. Մամուրեանէ,	3 »	7. 75
Քսան տարի ետք. » » » » »	4 »	10.
Պրաժլոն դերկոմս. » » » » »	12 »	24. 80
Ամօրի. » » » » »		3. 50
Բօլին. » » » զ. Մսերեանէ		1. 75
Քամէրին Հօուարտ. » » » Տ. Յ. Տէտէանէ		1. 40
Ժօզէֆ Պալսամօ. » » » Վ. Երզնանէ	8 հոգոր.	17. 50

Ա.Լ.ԵՐԱՍՆԱԿԻ ՏԵՂԱՍՏԱՐԱՆ

Ռաֆայէլ. Թարգմանեալ 'ի Պ. Գ. Չիլիկերեանէ		2. 60
Կրացիէլլա. » » Ս. Կ. Է.		1. 75

Ա.Լ.ԵՐԱՍՆԱԿԻ ՏԵՂԱՍՏԱՐԱՆ

Գարուս մէկ զատակին խոստովանանքը.

Թարգմանեալ 'ի Պ. Գ. Չիլիկերեանէ, 2 հոգոր.		3. 50
---	--	-------

ԱՄԵՏԷ ԱՇՍԻ

Հետվիճի երդումը. Թարգմանեալ 'ի Պ. Գ. Մսերեանէ		85
---	--	----

Ա.Բ.ԲԱՅ

Անիձեան. Թարգմանեալ 'ի Պ. Մ. Մամուրեանէ, 4 հոգոր.		8. 25
---	--	-------

Ա.Բ.ԲԱՅ Ա. ԿՈՍՏԱՆԳՅԱՆ

Տոմարակալութիւն գործնական. Բ. տպագրութիւն.		5.
--	--	----

Ա. Կ. ՏԷՏԷԱՆ

Ուսուցիչ գրասիրութեան		1. 40
-----------------------	--	-------

ԳԱՐԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ

Անուշապան. Պատկերազարդ.		1. 40
Մահ Պարէտի. »		1. 75

ԳՐԱԳՈՐ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Ծաղիկ.

Հանդէս բանասիրական, ազգային, գրական, և այլն: Տառը լրջութ, 3 հոգոր.

		50.
--	--	-----

Գ. ՄԵՐՏԻՉԵԱՆ

Մարիք մէմտուն ֆիննը տէֆանիր. Տոմարակալութիւն գործնական

Տաճկերէն լեզու. և Հայերէն տառերով, Ա. հոգոր.		3. 50
Բ. »		5.

Ա.ՊԷ ԲԻՆՎՈ

Մանուն Լեարօ. Թարգմանեալ 'ի Պ. Գ. Չիլիկերեանէ		2. 10
---	--	-------

ԷՅՈՒՆ ՍԻՐ

Գաղանիր Բարիզի. Թարգմանեալ 'ի Պ. Մ. Մամուրեանէ, 8 հոգոր.		20. 75
--	--	--------

ՎԵՂԻՆ ԹԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Վեղին Թարգմանեալ 'ի Պ. Վ. Յ. Տէտէանէ		1. 60
--------------------------------------	--	-------

ՄԱՍԻՍԻՍ ԹԱՐԵՐԳՈՒԹԻՒՆ

Մասիսիս Թարգմանեալ 'ի Պ. Գ. Չիլիկերեանէ, 4 հոգոր		13. 75
--	--	--------

ԷՅՈՒՆ ՍԳՐԻՊ

Վալերիա. Թարգմանեալ 'ի Պ. Տ. Գարազանէ,		
Լը Պարպուլիէէ հետ կազմուած		70

ԺԻՒԼ ՎԷՐՆ

Ս. շխարհի շրջանն ունտն մէջ. Թարգ. 'ի Պ. Մ. Մամուրեանէ		2. 75
---	--	-------

ԺՕՐԺ ՍԱՆ

Օրիորդ լա Գլենմինի. Թարգմանեալ 'ի Պ. Գ. Չիլիկերեանէ		3. 15
---	--	-------

ԷԼՎԻՍ

Էլվիս. » » » Մսերեանէ		1. 40
-----------------------	--	-------

ԲԱՐԻՋՆ ՅԱՄԵՐԻԿԱ

ՀԵՂԻՆԱԿ

ԲԺԻՇԿ ԲԸՆԷ-ԼԸՅԷՊՐԸ

ԲԱՐԻՋՆԱՆ

ՃԵՐԱՍՏԱՅԻ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐՈՒ ԵՒ ԲԱՐԻՋՆ
ԿԱՌԱՎԱՐԵԱԿՆԵՐՈՒ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՆԳԱՄ

ԵՂԱՍՏԱՐԱՆԿԱՆ, ՆՈՒՍԳՈՍԻՐԱՆԿԱՆ, ԵՒՍՈՒՆ
ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՆԵՐ

1708.

ԹԱՐԳՄԱՆՆԵՐ

Գ. ՄՍԵՐԵԱՆ

31րդ ՏՊԱԳՐՈՒԹԵՆԷՆ

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱՎԻՉ

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ




Զմիռնիս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԱՆ

1876

Երկու օտարազգի զբաղեցուցիչներ, մին Ամերիկացի, միւսն
 Անգլիացի, արտօնութիւն խնդրեցին Բաբելոն Ամերիկացի
 թարգմանութիւն մ'իրենց երկիրներու մէջ հրատարակելու:
 Այս արտօնութիւնը արուեստաւ, այնպէս որ այս զբաղեցու-
 ցիները հեղինակի իրաւունք ստացած են զոր կարելի է պա-
 հել ուղեն: Անոնց այս իրաւունքը յիշատակելիս ետքը
 Բաբելոն Ամերիկացի հեղինակն և հրատարակիչը թողտու-
 ութիւն կ'ընեն որ այս գիրքը ամեն օտար լեզուի թարգ-
 մանութի:



42135-ա

378 2140

ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՆ

Բարեկամ, քեզ կը նուիրեմ այս գիրքը որ քու եւ իմ հանոյքին համար գրուած է. ոչ փառքի եւ ոչ հարստութեան կ'ընծայեմ զայն: Հարստութիւնը պարմանուհի մ'է որ վեց հազար տարիէ ՚ի վեր պարմաններու ետեւէ կը վազէ, եւ փառքը՝ բանակներու մէջ ապրող ուտեստուհի (vivandière) մը՝ որ միայն զօրականները կը սիրէ, եւ ճերմակի՛ ու եւ ոչ մէկը մտուցած եմ, հետեւաբար միակ իղձս ու փախաբար ըստ իմ քմաց ճշմարտութիւնը փնտուել եւ իմ ձեռով ու կերպով զայն ըսել է:

Եթէ կովի մը, արջի մը, կամ . . . (ուցած անունը ընտրէ) ծանր հովերը չունիմ, ներէ ինձ:

Մեր կենաց առաջին գործերը զմեզ այնքան կը շնորհեն որ վարագոյրը չգոցուած ներելի է խնդայ: Մարդս երբ իր բանամտայ հաւակի խաբերը (illusion) կորուսած է, աչ չուրջ բանի տեղ չկրնար դնել ոչ կատակներն՝ եւ ոչ կատակերգութիւնները:

Եթէ այս գրքոյկը քեզի հաճելի ըլլայ, լա՛ է, եթէ գալթակդութիւն տայ շահագոյն է, իսկ թէ որ զայն մէկդի նետես, կը սխալիս, վասն զի թէ որ անոր միտքն հասկընաս Մարիամէջէն աւելի նրբամիտ ես: Գու պարապոյ ժամագիրքն ըրէ զայն ու չես զոցար, Non est hic piscis omnium. Ինչ որ երէկ նորանջան ու անհաստատ էր՝ վաղը ճշմարտութիւն կը դառնայ: Ուշիմ մարդը ըսածս կը հասկընայ:

Օրին մէկը կարելի է իմ չամբարի շուտով պիտի տեսնես բոլոր այն կուռքերու ազեղութիւնը զորս կը պաշտես այսօր: Կարելի է նաեւ հետզհետէ նուազող մութ անդին իր անմահ ժպտին մէջ պիտի նշմարես ազատութիւնը որ Աւե-

տարանի աղջիկը , արդարութեան ու ողորմածութեան քոյրը , հաւասարութեան , առատութեան եւ խողարութեան մայրն է :

Այն օրը , սիրելի բնութեան , քեզ աւանդած բոցս մի թողար որ մարի , յուսաւորէ , յուսաւորէ այս երիտասարդութիւնը որ արդէն ապագայի նամբան հարցընելով զմեզ կը հրէ ու կը մշտնէ :


Թող այս երիտասարդութիւնն իր հայրերէ աւելի խենթ չլլայ , բայց տարբեր կեդարով մը : Ահա իմ փախարն ու յոյսը սա է :

Ահա ստոր վրայ Աստուծմէ կը խնդրեմ որ զքեզ սգեաներն ու տխմարներն պահելով պահպանէ : Չարերն զգուշանալը քեզի կը մնայ , վասն զի կեանքը կոխ մ'է , զիմուոր ճնած եւ դու , պաշտպանէ քու անձդ կամ շահագոյն է Ամերիկացիներն առնույ Երանասյի հին առածը , **Ա՛րք յարա՛ն** , եւ **ժըր ա՛նն տէր յարա՛ն** :

Մնաս բարեւ , բարեկամ

ՌԸՆԷ ԼԸՖԷՊԸ

Նոր արտատրութիւն (վերջին) 4 յունիս 1862 :



ԲԱՒԶՆ

ՅԱՄԵՐԻԿԱ



ԱՄԵՐԿԱՅԻ ՈՂՆԵԱՆՔ՝ ՄԸ



Պ. ՅՈՎՆԱԹԱՆ Տրիմ, Սաղմնցի (Մասաչուսէ) ոգեկան ծայրագոյն մէտիօմբէ կ'հրախրէ զձեզ իր ոգեհարցական ու մէտիօմական երեկոյթին զոր ապրիլի 1 ին տալու է իր ապարանին մէջ — փողոց լա Լին թիւ 22 :

Քնաշրջումին , յափշտակումին մտրի , տեսիլ , նախատեսումին (prevision) մարգարէումին , երկրորդ տեսումին (seconde vue), հեռատեսումին (vue

* Spirite :
† Այս անունը որ ոգեխնամութեան (spiritisme) ձեզ ոգեխնամութեան հետ իւրաքանչիւրէ իր Հայերէնը շոտեմալով բնապէս , զայն անգործիկ կերպով կ'ընդունենէ , ինչպէս որ շատ լեզուներու ձեզ ընդունանա՞ծ է :

à distance), գուշակութիւն, թափանցողութիւն, մտաբարձութիւն (soustraction de la pensée), կոչումն ոգոց, խօսակցութիւն, բանաստեղծութիւն եւ գերբնական գրութիւն, անտիրիրիման խորհուրդներ, ապագայ կեանքի յայտումիւն եւայլն եւայլն,

Պոնները կ'զոցուին ժամը ճիշդ Յին:

— Աստուած վկայ, ըսի այս նամակը վերստին կարդալով, դէշ չըլլար եթէ Ամբրիկեան մէտիօմի մը՝ դրական և փորձառական ոգեխօսութեան մէջ ինձ եղբայրակից (confrère) եղող անձի մը հետ ծանօթութիւն բնեմ, վասն զի ես ալ ողեկան եմ և թէև Բարիդեան պարզ ոտանիկ՝ ես ալ հասարակ մարդու պէս Աեսարու. Նարօլեօնի, Աօլդէրի, տիկին տը Բօմբաստրի, Նինօն տը Լանբլօի, Ռօպէսրիէրի ևս ողինները կոչած եմ, և եթէ պէտք ըլլայ ըսել (թէև համեստութեանս կը դժնայ), այս նշանաւոր մարդերը իրենց հանձարով զիս նտեմացուցած չեն, ամենքն ալ այնպէս մը պատասխան տուած են ինձ՝ որ կարծես թէ ինէ լրածնին կը կրկնէին: Տեսնենք նայինք ուրեմն թէ այս պարոն Յոֆլաթան Տրիմն իր անգրովկիանեան յաւակնութիւններով (pretentions) ձեր նուաստ ծառայ՝ Տ. Բ. Բ. Գարիէլ Լըֆէպրէ՝ որ Պէրլինի պարոն Հօրնունիի. Պ. տը Բէյշնպաիի և տը Վօլտէնշթօպ պարոնի աշակերտէ աւելի ուշօղի (spirituel) է կամ թէ աւելի ողի կրնայ բերել, եթէ ան մէկ անգամ ողեկան է, ես մէկուկէս անգամ ողեկան եմ:

Գեղեցիկ բնակարանի մը մէջ, լոյսերով փողփողուն ու մեծ ըշգուշեաւ փակուած սրահիկի մը խորը՝ (ողեհարցական ակումբներու մէջ շատ լոյս ունենալը սովորական չէ) բոլորաձև սեղանի մ'առջև նստած գտայ զպարոն Յոֆլաթան Տրիմ:

Հինօրեայ սիրիզաններու ներշնչեալ և մաղձոտ դէմքն ունէր նա: Գրեթէ հինգ-վեց աշակերտ իր զիմացը նստած էին զգաստ դէմքով, ջրոտ մարդեր, արժեքնին չձանչցուած կիներ (incomprise), աշխարհէ քաշուած այրիներ կամ զնդապեաներ, կ'կազմէին հանդիսականներու խումբը որ միշտ նոյնն է ամեն տեղ: Ամեն մարդ թղթի կտորի մը վրայ կը գրէր այն մտած անձին անունը զոր հարցափորձել կ'ուզէր, ես ալ ամեն մարդու պէս ըրի:

Այս անունները դիտարկի մէջ դրուելով խառնուեցան ու նախ և յառաջ Ժօղէֆ տը Մէսթրինն ելաւ:

Յոֆլաթան՝ պահ մը հաւքրտուեցաւ, (se recueillir) ձեռքը ահանջին տարաւ կամացուկ մը իրեն խօսող ձայնը մտիկ ընելու համար՝ և շուտ մը հետևեալ տողերը զրեց:

«Չկայ զիտութիւն մը որ ամուլ ըլլայ, ամենքն ալ կը նմանին «այն զիտութեան՝ որու վրայ Ս. Գիբբը կը խօսի, Ազամ զեւան զիտցածին պէս Եւան մայր եղաւ:

«— Առանց հասարածի (crédo) հաւատարմութիւն (crédit) չկայ: Հէ՛, ըսի իւրովի, ահա քեզ համով վճիռներ՝ որ իրենց հեղինակին բոլոր պարծենկոտութիւնը ունին, միայն թէ՛ կարծեմ ուրիշ տեղ տեսած եմ այս խօսքերը, եթէ չեմ սխալիր Պատտէրի գործերու մէջ: Սակայն կրնայ ըլլալ որ անդի աշխարհքը զրական սեպհականութիւն չկայ և կարելի է հոն գտնուողները զուարճանալու համար իրարու դաղափարները կը գողնան:

Իտքը Հիբօբրաթ եկաւ ու Ֆրանսերէն խօսելու բարութիւնն ունեցաւ: Ահա իր թարգմանին գրածը:

«Ան որ ամենէ շատ կը մտածէ, կերածը ամենէ քիչ կը մարոնէ: Այլուր ամեն բան հաւասար է, ամենէ քիչ մտածող մարդը ամենէ աղէկ մարտողն է:

— Ափսոս, կ'ըսէր մանրուկ կլին մը՝ որու վտիտ դէմքը ճերմրկորակ մազերու ալիքի մը ներքև կը ծածկուէր, բժշկի մը պատասխանն է այդ, էրիկ մարդու մը կոշտ պատասխան՝ և էրիկ մարդերու համար շինուած: Մարդու սիրտը մաշեցընողը մտածութիւնը չէ, այլ. . . : Աս ըսելով հառաչեց:

Նօսդրատամիւս կանչուեցաւ ու Բոլոնիայի, Ֆրանսայի և Իտալիոյ ապագաներու վրայ իր կարծիքն հարցուեցաւ: Այս պատասխանը տուաւ մեծ գուշակը, վեհ հանձար՝ որ իր ըսածն իմանալու հոգը միշտ ուրիշներու կը թողու:

Ի Ֆրանսա, յիտալիա և ի Բօլօնիա
Թէպէտև շատ խելք՝ այլ քիչ ամօթ կայ

Ի Բօլժնիա, ի Ֆրանսա և յԻտալիա
 Խենթութենէ ետքը խեղճերնին կը դայ
 Յիտալիա, ի Բօլժնիա և ի Ֆրանսա
 Մարդ քիչ կը վայելէ, բայց շատ կը յուսայ:

Ստիպուեցանք զո՛ճ ըլլալ այս պատգամով, որ շատ խորունկ ըլլալուն բացորոշ չէր:

Բրովանայի կախարդէն ետքը, կարգը ֆօշիսքոյին եկաւ:

Սակայն այն իրիկուն Լեհացի Ուաշինկիթօնը, տխուր էր ու բերնէն Լատիներէն վճիռ մ'առնուեցաւ միայն, In servitute dolor, in libertate labor, Ստրկութեան մէջ մարդու բաժինը տառապանք և ազատութեան մէջ աշխատանք է:

Երեք անգամ հարցումները կրկնուեցան և երեք անգամ ալ նոյն խեռ պատասխանը տուաւ նա այնպիսի յանդիմանութեան մը պէս զոր ալ չէինք զգար իսկ:

Վերջին տոմսակը կը պահանջէր որ, Տօն ֆիշօտ, Թօմ ճօնս, Ռօպէնսօն և Վերթէր հարցափորձուէին, ասոր վրայ բոլոր ակումբը սկսաւ խնդալ, թէ և իրան ըսելով ամենքն ալ խնդալու շատ ախորժ չունէին:

Այս լրբութեան հեղինակը, կ'ամչնամ ըսելու, ես էի: Շատոնց ՚ի վեր մեռեալք և կենդանիք զիս կը տաղտկացընէին այնքան որ մեծապէս զո՛ճ պիտի ըլլայի իմանալով թէ վերջապէս երբէք գոյութիւն չունեցող մարդերու մտքէն ի՛նչ կ'անցնի:

Յովնաթան Տրիմ, չարագէտ տոմսակը սպետին մէջ նետեց, իմացուց որ նիստը վերցուած էր և շատ մը խոնարհութիւններով զմեզ ճամբեց: Այն միջոցին որ դուրս կ'ելնէի, ձեռքը ուսիս վրայ գրաւ ու աղաչեց որ մնամ:

Երբ մինակ մնացինք,

— Գո՛ւ ես, եղբայրակիցդ իմ, ըսաւ նա տարօրինակ կերպով մը ժպտելով, գո՛ւ ես ինձ այնպիսի հարցում մ'ուղղողը որ այս պիղծերը* անհեղեղ կը համարին, նաև կարելի է որ դու ալ անոնց

* Պէդօ (profane) կը կոչուեն Գեասի մը խորհուրդներու Գեղէակի շեղուները:

համակարծիք ըլլաւ: Այնք, որ յաւիտեական ճշմարտութեան խորհուրդները երբէք հետազօտած չես: Միթէ կ'երեակայես որ Տօն ֆիշօտ և Սանքօ, Ռօպէնսօն և Ուերթ, Վերթէր ու Շարլօթ, Թօմ ճօնս և Սօֆի, երբէք զոյութիւն ունեցած չե՞ն: Ի՛նչ, մարդ նիւթեղէն հիւլէ մը չկրնար ստեղծել և կը կարծես թէ կրնայ մտքէն ստեղծել հոգիներ որ ալ պիտի չկորսուին երբէք: Միթէ ամեն Արտաշէսներէ աւելի չես հաւատար Տօն ֆիշօտին: Միթէ քեզի համար Ռօպէնսօն, Տրէքերէ և Մակելլասերէ աւելի կենդանի չէ:

— Ի՛նչ, ըսի, միթէ Տօն ֆիշօտ աշխարհ եկած է, և իրօք պիտի կարենամ խօսակցիլ Պարաթարիա կղզոյն իմաստուն քաղաքապետին* (prefet) հետ:

— Անշուշտ: Կ'իտնաս որ բանաստեղծը մարդարէ մ'է, տեսող (voyant) մը որ մինչև անտեսանելի աշխարհը կը բարձրանայ: Հոն աշխարհքէս անցնող միլիոնաւոր էակներու մէջէ՛ որոնց յիշատակը երկրի վրայ մոռցուած է, կ'ընտրէ այն հոգիները որ մարդկանց յիշողութեան մէջ կենդանացընել կ'ուզէ: Ար կանչէ զանոնք, հետեւնին կը խօսի, ըսածնին մտիկ կ'ընէ և անոնց թելադրութեան տակ կը գրէ: Այսպէսով անծանօթ մեռեալի մը խոստովանութիւն է այն բանը՝ որ տիմար մարդկութիւնը արհեստագիտի մը հնարողութիւնը կը կարծէ: Բայց դուն որ ողեկան ես, կամ այնպէս կը համարուիս, ի՛նչպէս կ'ըլլայ որ արտաբնական (extra naturelle) ձայն մը չես ճանչեր, ինչո՞ւ ամբոխին պէս կը խաբուիս, միթէ այդ աստիճանի ետ մնացած ես մետիւնական պողոտային մէջ:

Յովնաթան Տրիմ այսպէս խօսելով, զլուխն ետին կը նետէր և թևերը շարժելով, ձեռքերը բանալով գոցելով դէպ ինձ կը յառաջէր իբրև թէ զիս իր հեղուկով խղզելու համար:

— Եղբայրակիցդ իմ, ըսի իրեն, կը տեսնեմ որ թէ և ողեկան՝ բայց ուղղի մարդ մ'ես: Տարակոյս չունիմ որ Տօն ֆիշօտի ձեռով պղտի ճառ մը, կամ Սանքոյի արժանի քանի մ'առածներ կրնաս

* Տօն ֆիշօտի յեպոստոն:

դրել յանպատրաստից : Բայց մինակ ենք և երկուքս ալ գուշակ* ըլլալով՝ իբարու նայելու և նայելու ատեն ալ խնդալու արտօնութիւն ունինք : Այսչափս բաւական է , բարի յաջողութիւն կը մտղթեմ քեզ : Այդ բաները Ֆրանսայի մէջ ընելը դիւրին է , վասն զի ինքզինքը աշխարհիս ամենէ մտացի ժողովուրդը կարծող ազգը բնապէս ամենէ դիւրաւ քիթէն կը բռնուի , Բարիդի կանանց հարցուր այս ըսածս ու պիտի տեսնես :

— Անցիր , գոչեց կախարգը մոլեղին : Միթէ խարուեցայ : Անդժ եղբայր մ'ես դու : Զիս խաբերայ կամ ձեռնածու մը կը կարծես , Գիտցած եղիր որ Յովնաթան Տրիմ բերնէն երբէք սուտ խօսք մը հանած չէ : Ա՛հ , իմ կարողութեանս վրայ կը տարակուսիս պղտիկ պարոնիկս : Ինչ ապացոյց կ'ուզես որ տամ քեզի : Ա՛ուզես որ ըզքեզ քու բոլոր իտէաններէ զրկեմ որ շատ դժուար բան չէ , կ'ուզես որ քնացընեմ , զքեզ ցուրտէ , տաքէ , հովէ , անձրևէ անցընեմ , կ'ուզես . . .

— Մաղնիսացում , չեմ ըսեր , ըսի , զիտեմ որ հոգ բնական երևոյթ մը կայ մինչև հիմա չբացատրուած՝ և զոր գուք կը եղծէք : Եթէ զիս համոզել կ'ուզես քնացընել մի սկսիր ամենակին : Ճեմաբանը չենք :

— Ուրեմն , ըսաւ նա վրաս բոցավառ աչքեր անկելով , եթէ ըզքեզ Ամբրիկա փոխադրեմ ինչ կ'ըսես :

— Զիս , կ'ուզեմ տեսնել որպէս զի հաւատամ :

— Այո , զքեզ , պուռայ նա , և չէ թէ միայն զքեզ այլ և կինդ , աղաքդ , զրկիցներդ , տունդ , փողոցդ և եթէ աւելին կ'ուզես ամբողջ Բարիդն ալ : Այո՛ , յաւելցուց նա տենդոտ յուզմունքով մը , այո՛ , եթէ ուզեմ վաղը առտու Բարիդ ի Մասաչիւսէ կը փոխադրուի և Սէնի եղբրքը միայն անբնակ դաշտ մը կը մնայ :

— Իմ սիրելի կախարգս , զաղտնիքդ պէտք էիք Բարիդի քաղաքապետին ծախել , կարելի է ատով քանի մը միլիոն Ֆրանք

* Հին Եւրոպայի գոշակները կամ հասանալի ճամբան իբարու նայա՞ծ ապրին կը ծիծաղէին

իննայած կ'ըլլայինք : Բարիդցոյ բացակայութեան ատեն բոլորովին նոր Բարիդ մը կը շինէին , ուղիղ փողեբով և Նիւ-Եօրքի նման միօրինակ , առանց անցեալի՝ անշէն , անյիշատակ Բարիդ մը , որով մեր բոլոր ճարտարապետներն , քաղաքային տեսուչներն ու բախութենէն կը թռէին :

— Դու կատակ կ'ընես , կը վախնաս , ըսաւ Յովնաթան , . . . Ահա կը կրկնեմ սակայն , թէ որ ողեմ , վաղը Բարիդն ՚ի Մասաչիւսէ կը փոխադրուի Աւերսայն ալ հետը : Հրաւերս կ'ընդունին :

— Այո՛ անշուշտ կ'ընդունիմ , պատասխանեցի խնդալով : Եւ սակայն այս շուտիկ մարդուն վստահութիւնը զիս կը շփոթէր : Մեծաբանութենէ կը հասկընամ , վասն զի օրը քան լրագիր կը կարդամ և շատ սքաշտօնեայներու ճառերը մտիկ ըրած եմ բեմի վրայ , բայց այս երազատեսին ձայնը , ակամայ կը նուաճէր զիս :

— Աս տուփը առ , ըսաւ կախարգը հրամայական եղանակաւ մը , բաց , ահա մէջը 2 դեղահատ կայ մէկը քեզի և միւսը ինծի համար , ընտրէ ու ինձ բան մի հարցըներ :

Խօսքէ դառնալու համար ալ շատ ուշ էր , ուստի դեղահատերէ մէկն առի , Յովնաթան միւսն առաւ ու բարևեց զիս խորունկ ձայնով մ'ըսելով՝

— Ա՛նղը , ովկիանոսի միւս կողմը :

Փողոցը ելածիս սէս , եզական վիճակի մը մէջ գտայ ինքզինքս : Ուղղակի Շանդ-Էլիզէ վաղեցի առանց հեռաւորութիւնը նշմարելու : Ինքզինքս աւելի թեթև և առոյդ կ'ըզայի և ամեն մարդկային աւրարածէ աւելի առաձիգ : Ինձ այնպէս կը թուէր որ քիչ մ'ուժով ցատկելով պիտի կրնայի բռնել լուսնին ծայրերը որ հօրեզունին վրայ կ'ընկէր երևի : Իմ բոլոր զգայարանները անհաւատալի նրբութիւն մ'ստացած էին : Քօնքօրաի հրապարակէն տը լ'Էթուալի կամարին բոլորաիբը զարձող կառքերը կը տեսնէի և Թիւյլըրի մեծ ժամացոյցին վրայ ժամը ցուցնող մեծ սլաքին թնդիւնը կը լսէի :

Աեանքը նոր արագութեամբ և տաքութեամբ կը վազէր երակներուս մէջէ : Ար հարցընէի իւրովի թէ արդեօք աներեւոյթ ձեռք զիս մը արդէն Ազլանտեան ովկիանոսէ անդին չէ՞ր տաներ :

Ինքզինքս հանդարտեցընելու համար՝ կամաց կամաց երկնքին մէջ բարձրացող լուսնի աղօտ մահիկը կը դիտէի : Միջօրէականս չփոխելուս վրայ ապահով եղածիս պէս տուն վերադարձայ զիւրահաւանութեանս վրայ ամչնալով ևՊ. Տըլմի ու իր յիմար սպառնալիքներու վրայ ծիծաղելով քուն մտայ :



ՄԻԹԷ ԵՐԱՋ ԷՐ

Գիշերը երազ մը տեսայ : Միթէ երազ մ'էր :

Յովնաթան սնարիս վերեւը նստած , հեզնոտ եղանակաւ մ'երեսս կը նայէր :

— Է՛յ , պարոն թերահաւատ , կ'ըսէր նա , ծովանցքէդ (traversée) ինչպէս ելար , ճամբորդութենէդ շատ յողնած չես :

— Ճամբորդութիւն , ըսի , անկողնոյս մէջէ չջարժեցայ :

— Չջարժեցար , բայց Ամերիկա կը գտնուիս : Խենթի պէս անկողնէդ վար մի ցատկեր : Այցիւր քանի մը տեղեկութիւններ տամ որպէս զի զարմանքէդ չմեռնիս : Նախ և յառաջ տունդ տակըլրայ ըրի (renverser) : Ազատ երկրի մը վրայ՝ զինանոցի մը մէջ ապրելու պէս չեն ապրիր խառնափնդոր առանց արժանապաւութեան և հանգստի : Այն ամեն դարակները զորս դուք գտտիկոն կը կոչէք , ես Ամերիկեան ձեռով բնակարան մ'ըրի , իմ ձեռով կահեցի կարգադրեցի և պարտեղ մ'ալ աւելցուցի : Բարիդի քառասուն հազար տուները այսպէս կարգադրելու համար՝ գրեթէ երկու ժամ կորսնցուցի որոնց վրայ չեմ ցաւիր : Ահա հիմակ տէր ես քու տանը մէջ , ամեն ազատու-

թիւններու առաջինն ատէ : Ասկէ ետքը զբացիներէդ պիտի չնեղուիս և զանոնք պիտի չնեղես : Խոհանոցի ու փոստի հոտ , լամուկներու * կիներու և սպասուհիներու ձայներ , շուներու հաւիւն , կատուի և դաշնակի մլաւիւն չկայ , ալ լմնցաւ : Այսուհետէ թիարանի կամ հիւանդանոցի թուանշան մը , տակառեալ տառեխ (hareng) մը չես , այլ մարդ մը՝ որ տուն տեղ և բնտանիք ունի :

— Տունս տակըլրայ եղած է , ուրեմն ոչ ու փուճ եղայ , վարձուորներս (locataire) ինչ ըրիր :

— Անհոգ եղիր , հոս են , ամեն մէկը հանգիստ տան մը մէջ : Անոնք հիմակ վարձկալներ (tenancier) եղած են , որ յիսուն տարի իրենց հասոյթը կը վճարեն քեզ՝ առանց որ երեքնիդ ալ զիրար խարելու և նենդութիւններ բանեցնելու պէտք ունենաք : Աջ կողմդ Պ. Լըվէր նպարավաճառը դրի և այսօր Պ. Կրին կը կոչուի : Առաջին դատիկոնիդ սեղանաւորը Պ. Բըթի , Պ. Լիթլ եղած է ու իր միլիոններով ոչ նուազ մեծ մարդ է : Երկրորդ դատիկոնիդ Պ. Բէյնար փաստաբանը՝ Պ. Փօքս դատաստարը (sollicitor) կ'անուանի ու ասով իր խորամանկութիւններէ մէկը պիտի չկորուանէ : Չախ կողմդ պիտի գտնես չորրորդ դատիկոնի գրացիդ Սէն-Ժան քաջ հազարապետը Սէն-ճօն արէ զորապետը անունով , իր ամեն յօդացաւերով , և վերջապէս Պ. Բօզ զեղավաճառը որ դեղագործ Պ. Բօզ կոչուելէն ի վեր ոչ նուազ ծանրագիմի (imposant) և ոչ նուազ պատկառելի է : Իսկ դու սիրելիդ իմ Լըֆէվըր գաղթականի իրաւունքով Պ. տօքթօր Սմիթ եղած ես և Անկլօ-Սաքսօնեան զարմէ ելած ամենէ բազմութիւ բնտանիքին անդամ : Նայէ որ քու նոր աշխարհի ծուխերդ (client) մեռցընելով կամ բուժելով ստակ շահիս : Բարեկամ պիտի չպակսի քեզի :

Պուալ կ'ուզէի բայց սոսկալի այցելուիս աչքերը զիս անկողնոյս վրայ կը դամէին :

— Աղէկ միտքս եկաւ , ըսաւ նա խնդալով , քիչ մը պիտի զար-

* Ուսուցանան բարձր որ պոլսոյ կամ փանկերէն զբուստ զօճուտի նշանակուած բեռնի կ'ընթաց արտի :

մանաս կնոջդ, զաւակներուդ ու զրկիցներուդ Անկլիարէն խօսիչն ու
 ունդախօսելը (nasiller) լսելով: Իրենց յիշողութիւնը հին աշխարհ-
 քը թողուցած և հարազատ եանքիներ* եղած են անոնք: Ալիմայի դար-
 մանալի ազդեցութիւն զոր նշմարած է արդէն ողեկաններու իշ-
 խանը մեծն Հիբօքրամ: Բւեւոին մօտեցած ատեն շուները չեն հա-
 ջեր, հասարակածին տակ ցորենը ամուլ սէղ մ'է միայն, եանքի
 մը 'ի Բարիզ՝ ինքզինքն ազնուական կը կարծէ և Գաղղիացի մը
 Միացեալ նահանգներն եկած ատեն ազատութեան դէմ իր ատե-
 լութիւնը կը կորսնսնէ: Քեզի գալով, պարոն թերահաւատ, քու թէ
 նախադաշարումներն և թէ յիշատակները վրագ ձգեցի: Ա՛րու՛մ որ
 իմ կարողութիւնս ենթակային ծանօթութեամբ դատես: Պիտի հաս-
 կընաս որ Յովնաթան Տրիմ ողեկան մ'է, ահա Ամերիկացիի մը կա-
 շիին մէջ կարուած ես և միայն իմ ուզած ատենս անկէ պիտի
 ելնես:

— Պէտք այ բնութի «ի՛նչ էնչիւն, բայց ես անկլիարէն չգիտեմ, գո-
 չեցի, յանկարծ կանգ առի սակայն՝ թուչունի մը նման սուլելուս
 վրայ բողբոլիին զարհուրած:

— Գէշ չէ, ըսաւ անտանելի ծաղրողը, երկու օր չերթար շու
 (shall) և «իւլ (will), «ի՛նչ (these) և «ի՛նչ (those) բառերը Սկով-
 տիացիի մը դիւրութեամբ և շնորհքով պիտի շփոթես:

— Մնաս բարև, աւելցուց ոտք ելնելով, մնաս բարև, կէսգիշե-
 րին Պօլսի հարէմին մէջ կայսեր սիրական սուլթանուհիին սենեակը
 զիս կ'ըսպասեն. ժամը երկուքին պէտք է որ Լօնտօն գտնուիմ ու
 արեւադալն 'ի Բէքին պիտի տեսնեմ, յետին խրատ մ'ալ տամ, յի-
 շէ որ իմաստունը և ոչ բանի մը վրայ կը զարմանայ: Եթէ բողբո-
 տիքդ այլանգակ դէմք մը տեսնես մի պուար, վասն զի գքեզ մեր
 լուսնոտներու հետ կը բանտարկեն, որով ընելիք դիտողութիւններդ
 կ'արդիւունին:

Ընդոտս ոտք ելայ, բայց երեսիս մէջ ընդունած երկու բուռ հե-
 ղուկ՝ զիս անշարժ և համր դարձուցին: Այն ատեն իմ մասնիչս հեղ-

* Ամերիկացի:

նական ծիծաղով մը ողջունեց զիս՝ յետոյ լուսնոյ ճառագայթ մը
 որ սենեկիս մէջ կ'երկննար, առնելով զայն իրեն գօտի ըրաւ՝ պա-
 տուհանէն անցաւ և օդին մէջ աներևոյթ եղաւ: Սարսափէ, քունէ
 կամ մազնիսացումէ ինքզինքս ճնշուած զգացի:

Մեռնելու պէս մարեցայ

Եւ ընկայ դիացեալ մարմինի մը նման:

Տա՛նի՛ն. դժո՛ղի:



Սթափած ատենս լուսցած էր: Տղաս Թրօվալթերէի Դիլերէրէն կ'եր-
 գէր մեծագոյ, աղջիկս որ Թհալպէրկի աշակերտուհի է Տօննէրի
 զարդարեալ (varié) եղանակի մը վրայ Սթիւրմի պճնեղքերը (varia-
 tion) կը նուագէր անման քաղցրութեամբ մը: Հեռուն՝ կինս կը
 յանդիմանէր սպասուհին՝ որ պուալով պատասխան կու տար նէրա:
 Խաղաղիկ տանս մէջ բան մը չէր փոխուած, գիշերուան հնհնուքը
 պարապ երազ մ'էր միայն ու այս քիմերական վախերէս ազատուած՝
 անոյշ մէկ սովորութեանս համեմատ, աչքերս բաց կրնայի երազել
 նախաճաշիկս սպասելով:

Ըստ սովորականին ժամը 7ին ծառան սենեակս մանելով լրա-
 դիրը բերաւ: Պատուհանը բացաւ, վարադոյնները քաշեց, արևու
 լյար և օդին զովութիւնը ամենէ հաճելի ազդեցութիւնս ըրին վրաս,
 զլուխս դէպ 'ի լոյսը դարձուցի: Անէ՛ծք, մազերս տնկուեցան, պու-
 ալու կարողութիւն անգամ չունեցայ:

1708

Գիմացս՝ դաշնակի ոսկորներու նման ակուններով և երկու ա-
 հաղին կարմիր շուրթերով որոնք իր քիթն ու թուշը կը ծածկէին ,
 սե մը կը պարէր ու կը ժպտէր : Բողբովին ճերմակ հաղուած էր՝
 գոգցես վախնալով որ ուրիշ գոյն հաղուտով մը բաւական սե
 պիտի չ'երևէր , անքանը ինձ կը մօտենար իր գուռը գլուխը ցըն-
 ցելով և մեծ աչերը դարձնելով :

— Մասն (պարոնը) աղէկ քնացաւ , շատ դո՛հ եմ , կ'երգէր
 Ջամպօ :

Այս խրտուիլակը վաճառելու համար աչքերս գոցեցի , սիրտս՝
 կուրծքս խորտակելու չափ ուժգին կը տրոփէր : Երբ նորէն նայե-
 լու համարձակութիւն եկաւ վրաս , տեսայ որ մինակ էի : Անկող-
 նէն վար ցատկել , պատահան վաղելս և գլուխս ու թևերս բռնել
 մէկ վայրկենի գործ եղաւ :

Գիմացս պզտիկ տուններու շարք մը կար որոնք թղթեայ կնքուղներու
 նման շարուած էին , երեք տպարան , վեց լրագիր , ամեն կողմ՝
 ծանուցումներ կ'պցուած էին և պարապ սեղ վատնուած ջուրեր ա-
 ուակներու մէջ կը կը յորգէին :

Փողերու մէջ բազմաբաղ մարդեր կը վազէին լուելեայն՝ ձեռ-
 քերնին գրպաննուն մէջ դրած՝ անշուշտ անոնց մէջ բիւօլվըրներ
 պահելու համար , ձայն ձուն՝ կամ դատարկաշրջիկներ , սիկարներ ,
 սրճարաններ չկար բնաւ և մինչև աչքիդ կտրած սեղը , ոստիկան
 կամ պահակ մը չէր երևեր :

Լմացաւ , յամբիկի կը գտնուէի , առանց կառավարութեան , ա-
 ուանց օրէնքի , առանց ոստիկանութեան երկրի մը մէջ՝ անոք ան-
 ծանօթ և վայրենի , կոշտ և ազահ ժողովուրդի մը մէջ սեղը :
 Կորսուած էի :

Սայլիտի մը վրայ ընկայ Ռօպէնսօնէ աւելի սրտաբեկ և լքեալ՝
 իր նաւարեկութենէ ետքը : Բայց սայլիտս տակս սկսաւ պարել : Բո-
 լբովին գողալով ոտք ելայ ու հայելոյս մէջ ինքզինքս փնտռեցի ,
 ափսոս , ինքզինքս չլրցայ ճանչել անգամ : Գիմացս հայելոյս մէջ՝
 նիհար , կնտակ ճակտով որու վրայ հագիւ թէ քանի մը ցանուցիր
 կարմրորակ մազեր կը ցլուէին , դունատ դէմքով մ'և բոցաբոց

կրկնամօրուսով մէկը կար , կրկնամօրուք՝ որ մինչև ուսերս կ'երկն-
 նային :

Բաղդի չարութիւնը ահա այս վիճակիս վերածեր էր Զօսէ տ'Ան-
 թէն թաղին մէկ Բարիզեանը : Գոյնս նետած էր , ակուններս կը
 կափկափէին ու մինչև ոսկորներուս մէջ ցուրտ մը կ'զգայի :

— Աղէ , մարդ ըլլանք , արիւնանք , գոչեցի , ընտանիք մը և
 Գաղղիական անունը պէտք եմ հոգալով պաշտպանել : Ջրացում-
 ներուս վրայ պէտք եմ ձեռք առնուլ այն իշխանութիւնը զոր կո-
 րուած եմ : Գժբաղդութիւնն է որ դիւցազներ կը շինէ :

Մարդ կանչել կ'ուզէի , բայց զանդակ չկար . պղնձի կոճակ մը
 տեսայ՝ զոր փորձի համար հրեցի :

Յանկարծ Ջամպօ երեցաւ այն սատանաներուն մէկուն պէս՝ որ
 տուփէ մը կ'երնեն և զքեզ բարեւելով լեզունին դուրս կը հա-
 նեն :

— Կրակ , պոռացի , կրակ բեր ինձի , կրակարանին մէջ մեծ կրակ
 մը կ'ուզեմ :

— Մասն լուցկի չունի՞ ուրեմն , ըսաւ Ջամպօ կրակարանին վրայ
 դրուած լուցկետուփ (briquet) մը ցուցնելով , Մասն չկրնար ծուխ ,
 աւելցուց հեղինական եղանակաւ մը :

Յետոյ կրակարանին վարի դին պտուտակ մը դարձուց և հանք-
 ածուխի կտորի մը վրայ լուցկի մը քսելով՝ բոցի բխուրտը լեզու-
 ներ սկսան դուրս ժայթքել :

— Տէր Աստուած , միթէ ներելի է որ , ըսաւ նա դուրս ելնե-
 լու ատեն , արեւին նստած խեղճ սե մ'անհանգիստ ընեն այսպէս :

— Այնքանի ժողովուրդ , պոռացի կրակին մօտենալով և անոր
 քաղցր ու միօրինակ տաքութենէ կենդանութիւն առնելով , վայրե-
 նի ժողովուրդ որ ոչ թի , ոչ ունելի , ոչ փութ , ոչ ածուխ և ոչ
 ծուխ ունի : Բարբարիկ ժողովուրդ , որ կրակը խառնելու հաճու-
 թիւնն անգամ չճանչեր : Կրակը վատելու , մարելու կամ շտկելու
 համար ծորակ մը դարձրնելը անշուշտ առանց երևակայութեան սե-
 բունդի գործ է որ անծանօթին արժէք մը չտար և վայրկեան մը
 կորուսնելու կը վախնայ ըսելով որ ժամանակը ստակ է :

Տարցածիս պէս՝ ուզեցի հաղուիլ : Առջևս կահենեայ տրապիզ մը ունէի՝ սղնձէ կարապի գլուխներով և ուրիշ անէ զարդերով ծանրաբեռնեալ՝ բայց որնոր յարգարուած էր անկլիական պնակներով որոնց նկարներու և դոյներու հարստութիւնը մարդուս աչքը կը պարարէ : Այս տրապիզին վրայ, խողանակներ, աւելներ, սպունդներ, սպայօններ, հոտաւէտ քացախներ, իւղեր ևս կային առաստօրէն, բայց կաթիլ մը ջուր չկար :

Կոճակը դարձեալ հրեցի, Ջամպօ վերջին անգամէն աւելի կախ դէմքով ներս մտաւ :

— Լուացուելու համար պաղ ու տաք ջուր բեր շուտով, դործ ունիմ :

— Շատ բան, պոռայ Ջամպօ . Մասան հոն անկիւնը գտնուող տաք ու պաղ ջուրերուն ծորակները չկրնա՞ր դարձնել : Պատուոյս վրայ ձգել երթալու բան մ'է, հաւկուր տիրոջ մը ծառայելը չեմ կրնար շարունակել :

Այս ըսելով դուռը քթիս դոցելով գնաց :

Ուզած ատենդ և ուզած տեղդ տաք ջուր ունենալը լաւ՝ այլ այնպիսի ժողովուրդի մը գիւտն է որ միայն իր հանգստութիւնը (confort) կը մտածէ . փառք Աստուծոյ, մեք Գաղղիացիքս հոն հասած չենք և անշուշտ մէկ երկու դար պիտի անցնին մինչև որ մենք ալ սոյն իզացեալ թուլութեան և մարբութեան իջնանք :

Բան մը չկայ որ մարդու գաղտփարները հանդարտեցընէ որչափ ածիլուիլը : Ածիլուելէ ետքը ինքզինքս փոխուած գտայ, սկսայ երկայն դէմքիս և առջևի ախտաներուս հետ հաշտուիլ :

— Եթէ բաղնիք մ'ալ երթամ, ըսի մտքէս, կատարեալ կը հանդարտիմ և աւելի արիւթեամբ կնոջս ու զաւակներուս դիմացը կրնամ ելնել : Բա՛րէ կարելի է անոնք ալ ինէ ոչ նուազ փոխուած են :

Չանդակը զարկի, Ջամպօ գլուխն ետին ձգած երևցաւ :

— Բարեկամ, քաղաքին մէջ որ կողմը բաղնիք մը կայ, ճամբան ցոյց տուր ինձի :

— Բաղնիք մը, Մասան, ինչ ընելու համար :

Ուսերս վեր ըրի ,

— Աւանակ, լուացուելու համար անշուշտ :

— Մասան բաղնիք մտնել կ'ուզէ, ըսաւ Ջամպօ, ահաբեկ զարմանքով մ'երեսս նայելով : Ասոր համար է որ Մասան Ջամպօն պարտիզին խորէն կանչել կու տայ :

— Անտարակոյս :

— Շատ բան, գոչեց սևը գլխէն ափ մը մազ փրցընելով : Ամեն ննջարանի քով բաղնիքի սրահ մը կայ և Մասան Ջամպօն վեր կը կանչէ «Բարեկամ, որ կողմը բաղնիք կայ» ըսելու համար : Ամբիկացիի մը վրայ այսպէս չեն խնդար :

Այս ըսելով սևը պատտաւին ներքև թաղուն դուռ մը հրեց, զիս շքեղ դահլիճ մը խօթեց, ուր՝ ճերմակ մարմարէ լողարան մը կար :

— Աղէ, Ջամպօ, կ'երդէր նա կատղած և ծիծաղելի եղանակաւ մը . Մասային համար ծորակ դարձուր, տաք ջուրի ծորակ, պաղ ջուրի ծորակ, ջուրը խառնէ, ճերմկեղէնները ուռանին մէջտաքցուր, դայեկութիւն ըրէ Ջամպօ, վասն զի Մասան իր ձեռքերը գործածել չցիտեր :

Լուելէ աղէկը չկար . թողուցի որ Ջամպօ իր կատարութիւնը յայտնէ և լեզուն դուրս հանելով զիս ծաղրելը չտեսնելու զարկի, այլ մեղմիկ անիծեցի այս Ամբիկեկեան սարսափելի տունները, անընկերական բնակարաններ՝ որ ճշմարիտ բանտերու կը նմանին, վասն զի հոն մարդ ձեռքին տակ կը գտնէ այն ամեն բաները որ ՚ի Բարիզ մեր տունէն դուրս՝ իրաւ շատ սուղ գնով, բայց գոնէ շատ հեռուն գտնելու հաճութիւնն ունինք :



Ի ՏԱՆ

Բաղնիքէն ելածիս պէս, առանց հանդարտելու և բողբոջի մտախորհ՝ սկսայ իջնել սանդուխէն որ դեանայարկը կը տանէր: Տունս ինչ ըրած էին արդեօք, արդեօք ինչ գիմակի ներքև պիտի դտնէի ընտանիքս:

Ճաշարանը մտայ, մարդ չկար, խօսարանը անցայ, պարսպ: Սպասելով այս երկու սենեակները կը քննէի, իմ նոր բնակարանին կերպարանքին վարժելու համար:

Օթոցով մը ծածկուած ճաշարանի մը մէջ, իբրև զարդ՝ կահնետայ հին ու ծանր արկղ մը կար, վրան արծաթէ աւելի փայլուն Ասողիական մետաղէ թէյնոցներով ու ճենական թասերով: Արկղին դիմացը երեք հասարակ պատկերներ:

Մէջտեղը Բէննի՝ Շամաքսոնի կնձնիին տակ Հնդիկներու հետ սակարկութիւնը, աջ կողմը Վաշինկթըն ձիով ու իր սևով, ձախ կողմը առժամայ վեհապետը, իմաստուն և ծերուկ Ապէն՝ այսինքն Աբրահամ Լինքոլն՝ վաղեմի հիւսն և այսօր՝ Միացեալ Նահանգաց նախագահը:

— Զասոնք ուրեմն, գոչեցի, իբրև իմ նոր տան պաշտպան ու գինեբը, պիտի ճանչեմ այսուհետէ ես՝ Գաղղիացիս՝ որ ոյժի և յաջողութեան պաշտաման մէջ մեծցած եմ: Խաղաղասէր քուէքըր * մը, զօրապետ մ'որ նոր աշխարհին կայսր մ'ըլլալու կարող է և կը

* Այսպէս կը կոչուէն որեալ մ'աղանդատորք որ շատ արարածուած էն Անկիոյ և Ափրիկայի մէջ:

զիջանի ազատ երկրի մը առաջին մագիստրոսը (magistrat) մնալ, գործաւոր մ'որ իր աշխատութեամբ փաստական ու դիպուածով իր երկրին նախագահ կ'ըլլայ, ահա ասոնք են Ամերիկայի դիւցազնները: Այս կէս վայրենի հողին վրայ մեծ մարդերու բարոյականը ուստանիկներու (էմնաֆ) բարոյականին հետ նոյնը մնացած է: Այս տեսակ նախապաշարուններով ազդէ մը ինչ կարելի է սպասել: Ապահով եմ որ Ամերիկա երբէք նոր Աեսար մը պիտի չընծայէ:

Խօսարանին մէջ բաղնիանտը փայտէ դաշնակ մը կար, թուղթերով ծածկուած գրասեղան մը, և զբքերով լի գրատարան մը: Երեք չորս հատ Աստուածաշունչի հատորներ կ'երևէին հոն Փրանսիզ Բուէրլլոսի, Պոննընի, Ժէրէմի Թէյլլորի, Լօլի, Ժօնաթան Էսվարտսի գործերու մէջ, որոնք անշուշտ շատ իմաստուն մարդեր՝ այլ որոնց անունը առաջին անգամ կը կարգայի:

Հոն կեցայ, վասն զի քիչ ախորժ ունիմ Աստուածաբանութեան համար՝ նաև քունս փախած դիշերները:

Ասոնցմէ ետքը քանի մը պատմագիրք կամ բարոյագէտներ կու գային, Փրանքլին, Էմըրսըն, Մարշալ, Վաշինկթըն-Իրվինկ, Բըրիքըթ, Պանքրօֆթ, Լօթհրօթ-Մօթլի, Թիքնըր, ապա ինչ ինչ լուրջ վէպեր ու խել մը Անկլիացի, Ամերիկացի, Գերմանացի և Սպանիկ բանահիւսններ:

Բայց Գաղղիան ո՞ր էր:
Բարէ, հայրենիքս ներկայացընելու համար միայն Տելեմաք մը գտայ կերպաւորեալ, կամ լաւ ևս ըսել, այլակերպեալ Անկլիական արտասանութեամբ: Եւ մտածել թէ օր մը կարելի է իր հօրը տօնը խմբելու համար, աղջիկս, իմ սիրելին Սիւզաննը, իր նրբիկ շուրթերով բերնուց պիտի ըսէ ինձ, «Բըլ-դ'ուօ կէր է «բէ, էն մը ինչիսը էնք չէ՞ Օրիէէն»:

Հեճուկէս, զիբքը նետեցի ու պարտէզն անցայ որ բաղեղով ու այծեսերևով ծածկուած և չորս պատով զոցուած ամուսնէր: Ամեն կողմ շեփորակներ, վարդենիներ, նոր ծաղիկներ, ու խորը պղտի ջերոց մը և ճենական քէօշկ մը կար որ խիստ հանդիստ պատասխարան մը կը ներկայացընէր թէյ խմելու, սիկար մը ծխելու կամ աստղերը դիտելու:

Պարտէզը մարդ չկար Ջամպօէն զատ՝ որ ճերմակ մարմարէ սե-
ղանի մը վրայ, պղնձի արձանի մը պէս՝ տարածուած էր :

Սէր ճանճերով ծածկուած երեսը արեւին դարձուցած՝ խրալով
Հանգիստ կ'առնուր իրեն տուած յոգնութիւններէս :

Թշուառականը իմ քովս պաշտօնի մտած ըլլալը 'ի կիր առնե-
լով բան մը չէր ըներ և ազատօրէն կը ննջէր :

Այս անբնակ տան մէջ շրջիլս սկսեր էր զիսնեղել, և կ'ուզէի
Ջամպօն արթնցընել, քրիստոնէի մը հետ կռիւ ընելու հաճութիւնն
ունենալու համար, երբ տան գետնափորէն՝ ե՛նող ձայներ լսեցի :

Քանի մը ոտք սանդուխ իջնելէ ետքը, վերջապէս մեծ խոհա-
նոցի մը մէջ նշմարեցի երկու կին այնքան զբաղած որ ոտքիս ձայ-
նը չլսեցին :

Մէկը որ կռնակն ինձ դարձուցած էր, բայց զոր իր ձայնէ ճանչ-
ցայ, իմ սիրելի ծէննին էր, իմ որդոցս մայրը, միւսը՝ որու
կարեւորութիւնը 'ի մօտոյ պիտի հասկընայի, ահագին ու դեղին մա-
զերով արարած մ'էր հինգ ոտք ութ փթաչափ բարձրութեամբ որ
աւելի Սկովիացի զօրականի՝ քան թէ Եւայի աղջկան մը կը նմանէր :

Այս էր Մարթա՝ խոհակերուհին, բնիկ Բանսելվանիացի, կրօն-
քով Տիւնքերեան, քուէքրուհի նման բան մը, բարի անձ մը որ
շարունակ կը աւտար ու միայն մէկ թերութիւն ունէր, այն էր ամեն
իրենց հագուստի կամ խիլայի վրայ շիզ մը կրողներն հեթանոսի
և մաքսաւորի տեղ գնել :

Այս եռանդոտ հողիին համար, քրիստոնէութեան նշանաբանը
չէ թէ խաչը այլ ճարմանդն էր :

Այս երկու կիներու ծանր կերպարանէ և անոնց աշխուժիւ փո-
խանակած խօսքերէ դատելով, այս միջոցին խոհանոցին մէջ մեծ
գործ մը կը պատրաստուէր :

Ծէննի, (իրօք իմ կի՛նն էր այն) անձև խմոր մը կը կապէր զեն-
ջակի մը մէջ և զայն շրով լեցուն պուտուկի մը մէջ կը տեղաւորէր
զգուշեալ :

Իսկ Մարթա թանկագին ամանը երկաթի թոնիքի մը մէջ կը
խոթէր որ խոհանոցի ամբողջ մէկ մասը կը բռնէր :

Մեծ շէնք մ'էր այն, տան մը պէս դատիկոններով և չղիտեմ
քանի գրողով և դարակով՝ ուրիշ շողին խոյս կու տար :

Փուռ, լուացարան, խորովարան, կրակարան, տաք ջուր, տաք
օդ և ամենքն ալ այս հրէշ թոնիքին մէջ կը դանուէին որ յաղ-
թական կամարի մը նման փորագրութիւն մը կը կրէր :

Ճ. ՉԱՅԼԱԸՆՍՒ ՔՈՒՔԻՆԿ ԲԷՆՃ, ՊՕՍԹԸՆ :

Կը տարակուսիմ որ սագանն իր ունեցած միջոցներով իսկ՝ ասոր-
մէ աւելի աղէկ տաքցած թոնիք մը հնարած ըլլայ :

Երբ ամեն ինչ տեղաւորուեցաւ ու սաներու և ջեւուցիչներու բա-
նակ մը շարժելով կարգաւ դրուեցան, կինս ետին դարձաւ և զիս
տեսնելով խնդութեան աղաղակ մը ձգեց :

— Բարի լոյս, սիրականս, ըսաւ ինձ, յուսամ որ լաւ քնացար,
Մեր պատրաստութիւնները կը դիտես, Բոֆֆէ՛կ մը կը շինենք նման
անոր որ անցեալ օր հաւնեցար : Ես ձեռքովս յօշեցի (hacher) ու
խառնեցի զայն, վասն զի քու ճաշակը Մարթայէնաւելի աղէկ պիտեմ :
յուսամ որ ինէ գո՛հ պիտի ըլլաս ու զիս պիտի վարձատրես բոլոր
աշխատութեանս, լաւ ևս ըսել, բոլոր հաճոյքին համա որ կ'զգամ
քեզ ծառայելով :

Այս ըսելով նէ ինձ մօտեցաւ ու ճակատը ինձ երկնցուց : Չար-
մանալի բան, նէ իմ կի՛նս էր և չէր :

Նոյն դէմքը, նոյն գծագրութիւնը ունէր որ հին աշխարհին մէջ
կը կրէր, բաց 'ի քթին ծայրէն որ քիչ մը կարմրած էր, բայց մի և
նոյն ատեն չղիտեմ ինչ հանգարտ ու անմեղ բան մը նայուած-
քին, քաղցրութիւն մը խօսուածքին, դորով մը շարժուածքին մէջ
կար, զոր ես մեր Բարիքի հին կենցաղավարութեանը մէջ երբէք
նշմարած չէի :

Ինքզինքս սիրուած, խնամուած զգալով սիրաս կը հրճուէր, ուս-
տի առանց Մարթան ու քսան տարիէ 'ի վեր ամուսնացած ըլլալս
'ի նկատի առնուլ՝ դորովալիւր կերպով մը զրկեցի տիկին Արֆէվըր
. . . Միտթէս Սմիթը ըսել կ'ուզեմ :

Ներեցէք ինձ Բարիքեան ամուսիններ, յԱմերիկա կը դանուէի :

— Մարթա, ըսաւ կինս, իր խոհանոցի դողնոցն հանելով ու իջեցնելով մետաքոս պարեգօսը որ վերուցեր ու ետևէն կապեր էր, Մարթա, Պ. Կրիսի խանութը պիտի երթաս: Իր վերջին խահուէն աղէկ չէ, Պրէզիլինն է, Էրիկս Մօրիսինը կը սիրէ, պզտի և կլօրիկ հատիկ մ'առ, ևս ձեռքովս պիտի խորվեմ զայն: Շուկան նոր ելած ելակ տեսայ, կարկանդակի մը վրան զարդարելու չափ գնէ անոնցմէ, այն կարկանդակէն որ դու այնքան լաւ կը շինես և զոր անցեալ սարի ամուսինս և զաւակներս այնքան հաճութեամբ կ'ուտէին: Ծաղկեպան Զօֆմանին ըսէ որ մեր պարտիզէ զատ՝ ամեն կողմ՝ Շահաքրամ կայ և Էրիկս ակնդէտ կ'ըստասէ այն նոր երեք տեսակները որ ինձ խոստացուեցան: Մի մոռնար նաև Սիւզանիս համար ընտրած շուշաններս ու Հէնրիին համար ուզած կոնկրետներս: Վերջապէս գրած ակէն անցիր ու Պէլլովս պատուելին Աշքէն Կեֆէն Լըայ վերջին ճառը առ, պերճախօս ու հայրենասիրական գործ մ'է այն, Էրիկս՝ որ այնքան լաւ կը կարգայ, այս դիշեր զայն պիտի կարգայ մեզի: Այս ընթերցումը տղոց ու ինձ այնքան հաճութիւն պիտի պատճառէ:

Ի՛նչ տկար սիրտեր ունինք, ինքզինքս մագնիսացած ու հմայուած կ'զգայի այս նոր նուագով որ իմ և տղոցս անունները մէն մի եղանակին կը կրկնուէին:

Բարիդ՝ ի Քրանսա, բոլորովին ուրիշ եղանակ մը կը լսէի, Կինս ամեն առաքինութիւնները ունէր, այլ իր ծայրայեղ համեստութիւնը կեանքը քիչ մը տաժանելի կը ներկայէր ինձ, բոլոր աշխարհէն ըրածը լսելէ Լրֆէվրի նշանարանն էր:

Ստուած դիտէ թէ ուրիշներէ չտարբերիր ինձ քանիի կը նստէր: Բոլոր աշխարհէն նմանելու համար 110 ոտք բարձրութեամբ բնակարան մը կը նստէինք, իրաւ, իշխանական ապարանի մը մէջ՝ որու զրոյլը սպասաւոր մը և մաքրող մ'ունէր և ինքն ալ վրաս կը խնդար:

Բոլոր աշխարհէն նմանելու համար, մեծ, գարշելի ծառայ մ'ունէինք զինով ու ստախօս, շքեղ թշուառական մը, ասուիէ տափառով ու կարմիր բաձկանով որ շատ սուղ էր, դէշ կը ծառայէր և չէր թողուր

որ իմ ուզածիս պէս հաղուիմ, ուտեմ ու խմեմ: Բոլոր աշխարհէն նման հագուած ըլլալու համար, կինս ու աղջիկս սարսափելի սուղ շրջազգեստներու պէտք ունէին, և այնպիսի բնօրէններու որոնց ամեն մէկը կառք մը կը ընուր և զիս կ'ստիպէր կառապանին քով տեղ մը փնտուելու:

Վերջապէս բոլոր աշխարհքին դացած տեղն երթալու համար կը հարկադրէի հրաւերներու ետևէ վագել ու անանկ մարդերու երեսին խնդալ որ ՚ի ներքուստ գերածայր արհամարհով մը կ'արհամարհէի:

Այս էր սովորութիւնը, բարի ճաշակը կը պահանջէր որ հարստութիւնը պաշտուի ու երևնալու համար մարդ մսիսի վրայ նստի, չէի կրնար բարձր ընկերութենէ հեռանալով զատուիլ, այս բանն ընելը այլանդակութիւն մ'էր, ամենէ ստորին մոլութիւն մը զոր Քրանսա Անկլիոյ կը թողու ու ինքը չըներ:

Իմ կնոջ՝ ու իր իմաստուն խորհուրդներու շնորհիւ՝ կարծեմ թէ վայելուչ կերպով դժուարին դեր մը կը կատարէինք, ինչպէս որ կրնան զատել այն անձինքը որ ամեն օր որ և է օրով որոշ ժամուն գմեղ Պուլօնի անտառը կը տեսնէին:

Ար համարձակիմ ըսել թէ մեր կարգը կը պահէինք Բարիդ և պատուով կը վարուէինք ամենէ զբաղեալ կեանքը որ կարելի է երևակայել, ամեն առտու քսան այցելութիւն կ'ընէինք և երեկոյեան հանդէս մը չէինք փախցըներ:

Այս ամենը աղէկ էր, բայց իրան ըսելով այս վայրենի երկրին մէջ իմ բիրտ ընտելութիւնը կը յաղթանակէր, երջանիկ էի ալ բոլոր աշխարհքին խօսքը չլսելով, գոհ էի որ կինս միայն ինձմով զբաղէր ու իր ամուսնէն, զաւակներէն ու տունէն դուրս բանի մը չխառնուէր:

Իմ տանս մէջ ինքզինքս տէր ու թագաւոր կ'զգայի և իմ հպատակներէ ու իրենց հնազանդութենէ այնքան գոհ էի որ անդու խէն վեր ելնելու աստի թևս Ժէննի մէջքն անցընելով համբուրեցի անգամ մ'ևս որով խիստ կարմրեցուցի զնէ:

— Ա՜յշ, միտքը Սմիթ, մրմնաց նէ եղանակաւ մը որ ինձ

կարծեցընել տուաւ թէ կէն և ես, մէկէն քսան տարի ետ զարձեր էինք մեր տարիքին մէջ:



ԱՆՊՈՌՅՆ

Մինչդեռ Չամբոյ ննջելով կը յողներ, կինս ու Մարթա սեղան կը դնէին ու ճաշը կը պատրաստէին, սկսայ Բարիղեան-Տեռաղիբ անուն ահագին ու աժան լրագիրը կարդալ որ նշանաբան ունէր հետեւեալ խօսքերը:

Աշխարհս չափազանց կառավարեալ է: *

Այս թերթին բիրտ ոճը անհաճոյ թուեցաւ ինձ: Գոհանամ Եստուծոյ, մեղ լաւագոյն գաստիարակութիւն մը կը տըրուի և ընտիր ճաշակի պաշտպան կառավարութիւն մը չթողուր զմեզ որ վարձինք դարչելի սովորութեան մը, այն է՝ կատու մը կատու և Ռօլէ մը գող կանչելու:

Օրինակի համար, ո՞վ պիտի հաւատայ որ Բարիղեան-Տեռաղիբը գող՝ նոյն իսկ մարգասպան անուններով կ'ժտէր անուանարկ ընել իմաստուն միլիոնաւոր մը՝ որ անշուշտ ներելի սխալով մը հիւսիսային բանակին վաթսուն հազար մուճակ տուած էր որոնց ներբանները խաւաքատեայ ըլլալով՝ բանակատեղոյն խոնաւութեան չզիմացեր էին: Խոշոր շահագործութիւնները այսպէս քիչ յարգուած տեղ՝ եթէ կրնաս եկու գործ ըրէ ուրեմն:

* The world is governed too much.

† Տեղեկալէ մը անսան՝ որ Պոստլէ երգիչաբանու թիւներով քանօք է:

Լրագրոյն բոլոր գրածները այս ձևին վրայ էին և այն լրբենի ու թշուաւական խմբագրին հայհոյանքէն բան մը չէր ազատեր: Այս ինչ օրէնքը անճոռնի է եղեր որովհետեւ քաղաքացիներու ազատ գործողութեան խոչընդոտ կ'ըլլայ, այս ինչ դատաւորը Ժէֆրիս* մը և Լօպարտըմօն մ'է եղեր, որովհետեւ արգարութեան վտահոյ խարդախ մը անմեղ թակարդի մը մէջ կը ձգէր, այն-ինչ քաղաքապետը Աէրրէս† մը կամանբան մէկն է եղեր արթուն բաժնետէրեր շնորհելուն համար մենավաճառութեան մը որ ամենուն համար շահաւոր էր, ինչպէս որ շահաւոր են միշտ մենավաճառութիւնները:

Չմարդիկ կառավարելու աշխատութիւնը յանձն առնելէ ետքը եկու ամեն օր ալ ասոնց նման թշամանքներ կրէ:

— Թշուաւական պարսաւագրող, դոչեցի, եթէ աշխարհիս ամենէ սիրուելիք և լուսաւորեալ ժողովրդեան մէջ ապրելու պատիւն ունենայիր, ի ծննդենէ պիտի դիտնայիր որ օրէնքը, դատաւորը կամ պաշտօնաւորը քննադատելը ընկերագու ոճիր մ'է: Քաղաքակիրթ ժողովրդեան մ'առաջին վարդապետութիւնը իր կառավարութեան անսխալականութիւնն է: Անիծեալ ըլլայ լրագիր հնարողը, մանաւանդ ազատ ու աժան լրագիր հնարողը: Մամուլը կազէ, լոյս մը՝ որ աչերդ կ'այրէ և միանգամայն կը թունաւորէ զքեզ:

— Ինչո՞ւ չենք ճաշեր, հարցուցի մէկէն կնոջս՝ անախորժ գաղափարներս ցրուելու համար: Տղաք ո՞ր են: Ինչո՞ւ վար չին իջներ:

— Գուրս ելան, բարեկամ, և չեն ուշանար կու դան: Հէների այս իրիկուն իր առաջին ճառը պիտի խօսի Նորսոթ լեւեբցոյններու ձեւաբանը և հրապարակաւ շիտեցած՝ սրահին հնչական ըլլալուն վերայ ուղեց ապահով ըլլալ:

— Եւ այս իրիկուն ինչ նիւթի վրայ պիտի աստեաբանէ մեր վեշտասանամեայ Աիկերոնը:

* Անկէպոյն՝ դատաւոր մը որ հուշակաւոր եղած է իր անօրէնութիւններով:
† Հատուցեցի որ մեծ համբաւ ապացած էր իր անասալութիւններով կէ-կերոնէ օրով:

— Ահա իր նախարտակը , ըսաւ Ժէննի , մօր մը հպարտութեամբ , ստորագծեալ բառերով , միջարկութիւններով դադարի (pause) նշաններով և բացազանչութիւններով լեցուն թուղթ մ'ինձ երկնցընելով :

Խոշոր գրերով գրուած խորադիրն ինձ աւելի պատկառելի քան բացորոշ երեցաւ .

Կանանց բարոյացոմն չբայ

զաննէ իբրև մարդային սեռի դաստիարակութիւնը նկատելով :

— Աստուծոյ զօրքին զո՛հ ըլլամ , գոչեցի , աշխարհք առաքինութենէ պիտի կործանի : Թէ որ տասնեւվեց ասարեկան հասակի մէջ բանի մը կը մտածէինք , տարակոյս չկայ որ տղուս պէս բարոյացումի վրայ . . .

— Բարեկամք իմ , ըսաւ Ժէննի . . . Այս ձայնը խօսքս կտրեց յանկարծ և այնպէս պատեհ ատեն մ'որ բառին մէջ տեղ լեզուս խածի ու կարմրիլս զզացի ահամայ :

— Բարեկամք իմ , շարունակեց կինս որ շփոթս չնշմարեց , կարծեմ թէ Հէնրիի վիճակին մէջ փոփոխութիւն մը կը պատրաստուի : Ամեն օր կը կրկնէ ինձ թէ մեզ ծանրութիւն ըլլալը շատ եղաւ , թէ այս բանը կառավարչին ձանձրոյթ պատճառել պէտք է :

— Կառավարչը ըսածդ ո՞վ է :

— Գիտես , մեր տղոց իրենց հօրը տուած բարեկամական առնուն է : Կարձ ընեմ , Հէնրի գործի մը մտնել կ'ուզէ :

— Համբերութիւն , տիկին Սմիթ , դեռ ժամանակ ունինք և այդ հոգը ինձ կը վերաբերի :

— Բարեկամք իմ , մեր տղան արդէն տասնեւվեց տարեկան է , իր ամեն ընկերներն գործ մը գտած են , պէտք է որ ան ալ առջև երթայ : Գու խօսէ հետը . քու վրայ լիուրի վստահութիւն մը ունի նա և մէկը չկրնար ուղղութիւն մը տալ անոր քենէ աւելի աղէկ :

Սկսայ սենեկիս երկայնութեամբ և լայնութեամբ շրջիլ , մինչդեռ կինս պատուհանէն կը նայէր որ մեր տղաքը կու գային թէ ոչ :

— Ո՛ր իմ տղաս , կ'ըսէի մտովի , զքեզ գործի մը զնելու հոգը ինձ կը վերաբերի , այո՛ . շատոնց է որ քու յաջողութեան համար ամեն բան պատրաստած եմ : Ասկէ տասնեւվեց տարի յառաջ Պ. Ռէքրլմանը՝ որ այն ատեն դանձուց պաշտօնատուր մաքսի բաժինին մէջ փոխ ատենադպիր էր , քեզի կնքահայր ընտրելու առանց նպատակի չէր : Այո՛ , սիրելիդ իմ Հէնրի , արդէն առանց դիտնալու , դանձուց պաշտօնատան անվճար պաշտօնաորի հետամտութեան մէջ ընտրելի ես (candidat à l'aspirance) երեք տարիէն՝ եթէ երեք կամ չորս մրցումէ յաջողութեամբ ելնես և եթէ լաւ պաշտպանուած ես tu Marcellus eris : Երեսուն և հինգ տարեկան՝ աչքիս առջև կու գաս փոխ ատենադպիր եղած , երկու-հազար չորս հարիւր ֆրանք թոշակով և շքանշան առած՝ ինչպէս որ կնքահայրդ առաւ : Կը տեսնեմ զքեզ քու օրինակին նման , քաղցրարարոյ , խոնարհ , քաղաքավար ու կամակատար՝ մեծաւորներու պ առջև և խիստ ու վեհ՝ ստորնադոյններու գ քով՝ որով աստիճանաբար մինչև պաշտօնատան մարդիկներու վերատեսչութեան կը հասնիս : Յիսուն տարեկան եղած ատենդ ալ՝ եթէ բան մը հօրդ փառասէր յոյսերը սուտ չհանէ , տասը հազար պաշտօնաւորներու սարսափն ու յոյսը պիտի ըլլաս դու : Ինչ բազդ և ինչ ապագայ :

— Ահա Հէնրի կու գայ , գոչեց կինս որ դեռ պատուհանն էր : Պարոն Արինի հետ կը խօսի նա , հաւաստի եմ՝ որ բարի խորհուրդ մը՝ կարելի է նաև աւելի բան մը կը խնդրէ անորմէ :

— Ինչ կ'ըսես , սիրելիս , նպարավաճառ Արինի հետ , միթէ տղաս այդ պզտիկ մարդերուն հետ կը խօսի :

— Պզտիկ մարդ , կրկնեց կինս զարմացած եղանակաւ մը : Պ. Արին պատուաւոր մարդ մ'է , բարի քրիստոնեայ մը և ընդհանրապէս յարգուած : Երեք հարիւր հազար տօլարի* տէր , ու իր աշխատանքով վաստկած ստակը ամենակարևոր կերպով ՚ի գործ կ'ածէ :

— Հատ լաւ : Երանելի՛ երկիր որ նպարավաճարները միլիոնա-

* Այսինքն 1,600,000 ֆրանք :

ւսններ են և փաստարաններու պէս խորհուրդներ կու տան եթէ ոչ պաշտօնեաններու պէս պաշտօններ: Թող աղաս Նորին Ասեմութիւն Սալորեան Շարաբեանցէ պաշտօն մը խնդրէ: Բայց Սիւզանը կանչէ, չեմ կարծեր որ ան ալ յարողոյ Պ. Արինէ բան մը սպասէ:

— Սիւզանը անգամազննութեան և առողջապահութեան դասին դնայ:

— Անգամազննութիւն մի, աէր Աստուած, աղջիկս տասնեկնը տարեկան հասակին մէջ անգամազննութիւն կը սորվի: Կարելի է նաև կ'անգամատէ:

— Ինչ կ'ըլլաս, բարեկամ, կրկնեց սիրելի կինս այնպիսի հանգարտութեամբ մը որ զիս արթնցուց: Օրին մէկը Սիւզանը զաւակներ պիտի ունենայ: Ա՛ուզես որ կուրօքէն զանոնք մեծընէ և հողայ անոնց, կաղմուածքէն առանց բան մը հասկընալու: Հարիւր անգամ իր առջին ըսած չեմ որ մարդուս մարմնոյն ուսումը բարի դաստիարակութեան մը մաս կը կազմէ:

— Եւ ո՞վ է այն բժիշկը՝ որու խոհեմութեան յանձնուած է պարմանու հինբրու անգամազննութիւն գասելու հողը:

— Տիկին Հօրը, որ մեր հուշակաւոր բժիշկներէ մէկն է:

— Աին բժիշկներ, ով Գօլիէր Գ. ր ես: Ինչ, այս երկրի մէջ որ միւս բոլոր երկիրներու հակառակ կերպով շնուած է, մեր մայրերը, կիններն ու աղջիկները խնամազններն էրիկ մարդեր չե՞ն: Կարելի է բարձր ընկերութեան կիններուն ալ մանկաբարձութիւն ընողները կին են: Այս և ոչ տեղ մը կ'ըլլայ, անվայել բան է, արիւն Սմիթ, անվայել է:

— Ես ատոր հակառակը կը կարծէի, բարեկամ, բայց հարկաւ դու ինէ աւելի ազէկ դիտես: Այսպէս ուրեմն, եթէ երբէք մեր աղջիկը ունենայ այն սկարութիւններէ մէկը որ ծանր եղեր են կամ թեթև, կին մ'ի պարկեշտութեան մէջ հազիւ ինքնիրեն խոստովանելու կը համարձակի, աւելի ազէկ կ'ընտրես որ էրիկ բժիշկ մը կանչեմ:

— Ամենեկն, միտքս սխալ կը հասկընաս, սիրելի բարեկամուհի: Սա ըսել կ'ուզէի միայն թէ, հին սովորութիւններ կան որ յարգե-

լի են ինչպէս ամեն հին սխալները, այսինքն չէ, ուրիշ օր այս բանս կը բացատրեմ քեզի: Այս անգամազննութեան դասին երթալու համար ո՞վ ընկերացաւ Սիւզանի հետ:

— Ոչ ոք:
— Ինչպէս ոչ որ, աղջիկս տասնեկնը տարեկան ու հրեշտակի պէս ալ գեղեցիկ ըլլայ ու առանց պաշտպանի փոփոքը շրջի:

— Ինչո՞ւ իր ընկերութիւններու ըրածին պէս պիտի չընէ: Ինչ վտանգ կայ իրեն համար: Կը կարծես թէ Ամերիկայի մէջ այնքան խենթ կամ ոճրագործ մարդ մը կայ որ երիտասարդութեան և անմեղութեան պարտաւորած յարգանքը մոռնայ: Հայր, ամուսին, եղբայր կամ տղայ՝ ամենուն թեւերն ալ այսպիսի պարագայի մը մէջ պատրաստ կ'ըլլան պատժելու այնպիսի թշուառական մը. այլ այս ազնիւ երկրին մէջ այդպիսի վատութիւն մը տեսնուած չէ, ատոնք՝ անանկ ցածութիւններ ու մոլութիւններ են որ հին աշխարհի ձգելու է:

«Այլուր, շարունակեց կինս իր անոյշ ժպիտով, զՍիւզան լաւ պաշտպանութեան տակ կը կարծեմ: Ալֆրէտ Պ. Ռօզի կրասերագոյն տղան Հնդկաստանէն վերադարձաւ, երէկ տեսայ որ իր հօրը և ութը եղբարցը հետ կը պտըտէր: Արդ՝ գիտես որ ան ու Սիւզանը շատոնց իրարու կապուած են:

— Կապուած են մի: Աղջիկս գեղազործի մը իններորդ տղուն սիրահարուած է: Եւ այս տեսակ լուր մ'ինձ իմացընողը իր մայրն է:

— Ինչո՞ւ իր սիրած մարդուն հետ չամուսնանայ մեր աղջիկը, ըսաւ ինձ Թէննի, իր ծաւի գեղեցիկ ահանողիքը վրաս յառելով: Բարեկամդ իմ ես ալ նոյնը չըրի: Եւ զղջացած եմ, կամ դուն այնպէս ըրած ըլլալուս կը ցաւիս:

— Այլ ի՞նչ կացութիւն, ինչ հարստութիւն ունի այդ երիտասարդը:

— Միամիտ լէր, բարեկամդ իմ: Ալֆրէտ աղնիւ տղայ մ'է, Սիւզանը չառներ նա մինչև որ ընկերական վիճակ մը չունենայ անոր նուիրելու: Եւ Սիւզանը եթէ պէտք ըլլայ աստ տարի պիտի սպասէ:

— Եւ պոռոյզը, տիկին Սմիթ, պոռոյզը մտածեցիր: Գիտես ինչ կ'ուզէ մենէ այդ տղան որ մեր աղջկան անունը կը հանէ: Գիտես ինչ կրնանք ընել և մեր պղտի հարստութենէ ինչ մաս պէտք պիտի ըլլայ զո՛հել:

— Միտքդ չեմ իմանար, Գանիէլ, միթէ մեր զաւակը պիտի ծախենք: Միթէ երիտասարդի մը, սիրահարի մը ստակ տալ պէտք է որպէս զի հաւանի իրեն ընկերուհի ընդունիլ չքնաղ աղջիկ մը որու տեսքը մարդուս աչերը կը զուարթացնէ և որ գեղեցկութեանը չափ ալ բարի է: Ո՛րիկէ առիւր այդ այլանդակ գաղափարները որ առաջին անգամ կը լսեմ:

— Անպոռոյզ, պոռացի, այնպիսի երկրի մը մէջ ուր գիշերէ մինչև լոյս ամեն մարդ տօլլարի մ'առջև ձունկի վրայ եկած է:

— ՅԱմերիկա, բարեկամդ իմ, զիրար կը սիրեն, կ'ամուսնանան վասն զի կը սիրեն զիրար և այր ու կին բոլոր կեանքերնին երջանիկ կ'ըլլան շարունակ կրկնելով իրարու որ զիրար սիրելով ընտրած են: Ամեն մէկը իբր պոռոյզ և օժիտ իր սիրտը կը բերէ և կը յուսամ որ մերինին պէս ազատ՝ երիտասարդ և վեհ ազդի մը զաւակները այս պոռոյզէ ուրիշ պիտի չճանչեն երբէք:

— Անպոռոյզ, կ'ըսէի մտքէս, անպոռոյզ: Հարբակօն իրաւունք ունի, գործը կը փոխէ այս: Ամուսնութիւնը ալ սակարկութիւն մը չէ: Սղբատ կամ հարուստ՝ խօսեցեալ աղջիկը ապահով է որ սիրուած է, իրեն՝ և չէ թէ ստակին համար է որ զինքը կ'առնեն, իր աղջիկը գողալով տուող հայրը՝ չվախնար գոնէ որ զնէ վատազգի շահագործի մը կու տայ: Անպոռոյզ: Բարբարիկ ազգերը՝ առանց զիտնալու ունին երբեմն այս փափուկ զգացումներէն որ մեր քաղաքակրթութեան պատիւ կրնային բերել:

— Աստիկ է Սիւզան, պոռաց կինս որ զիտողութեան տեղը անցեր էր վարձեալ: Ալֆրէտ հետն է, ինչպէս որ գուշակած էի:

Գուռը վազեցի: Աղջիկս, իմ սիրելի Սիւզանը յառաջուանէ աւելի գեղեցկացած էր: Իր գեղնորակ երկայն մազերը որ քան պոռոններով իր աչերու վրայ կ'ընդհեղին, իր ժպտուն նայուածքը, վստահ դէմքը, կայտառ քալուածքը իրեն նոր հրապոյր մը կ'ըն-

ծայէին: Խենթի պէս վիզս նետուեցաւ, սրտիս վրայ ճնշեցի զնէ եռանդուն ու թևերուս մէջ առած մինչև ճաշարանը տարի:

Միայն այն ատեն տեսայ որ Սիւզանն առանձին մտած չէր տունը: Քոյն էր այն հրէշն որ իմ երանութիւնն ու խինդը յափշտակելու կու գար: Սիւզանն անոր ձեռքէն բռնեց ու ինձ ներկայացուց ամենէ բնական կերպով:

— Պ. Ալֆրէտ Ռօզ, սիրելի հայրիկ, զինքը չեմ վերաճանչեր:

Քաջ կը վերաճանչէի, թշուառականը գեղեցիկ էր: Հառաչեցի ու ձեռքս երկնցուցի այս ապառնի փեսացուին որ կը հաճէր զին իրեն սկեսուր ընտրել առանց իմ կամքս հարցնելու յողորմութիւնն առնելու:

Պոռոյզ չառնելովը իրաւունք ունենալ կը կարծէր սիրած կնոջ հետ ամուսնանալու: Եթէ գործ չունիս պատշաճութեան խօսք ըրէ այս կոշտերուն՝ որ շիտակ իրենց նպատակին կը քալեն:



Ես և Ալֆրէտ մինչդեռ այնպէս զիմաց զիմաց կը կենայինք, լռելեայն իրարու նայելով, երկու կիները ցած ձայնով կը խօսէին իրարու հետ սաստիկ աշխուժիւ, մայրը կը խնդար, աղջիկն ազերսուն աչեր ունէր:

— Բարեկամդ իմ, ըսաւ ժէննի երկու պարմանիներու ձեռքէն

ընենելով, ահա երկու տղաք որ Աստուծոյ օգնութեամբ քրիստոնեայ ընտանիք մը կազմել կ'ուզեն և քու օրհնութիւնդ կը խնդրեն :

— Իմ օրհնութիւնը : Պիոս Թ.ի զՀռոմ և զաշխարհ օրհնելը տեսած եմ այն քաղցր վեհութեամբ որ նոյն իսկ թերահաւատները ծնրադրութեան կ'ստիպէ . պարկեշտ եպիսկոպոսներու զանմեղութիւնը և առաջին հաղորդութեան մը ջերմնուանդութիւնը օրհնելը տեսած եմ : Գեղեցիկ ու մեծ բան մ'էր այն, սրբութիւնը կարծես թէ կը հաղորդուէր ամենուն : Բայց ես մեղաւորս, նոյն իսկ իմ զաւակներս օրհնելու իրաւունք ունենալս չ'զգացի : ԶՍիւզան և զԱլֆրէտ գրկեցի ուրեմն, անոնց երկու ձեռքը իմիններուս մէջ միացուցի և լացի :

Ապիրատները այնքան երջանիկ էին սր իմ արցունքները չտեսան, իմ թեքէրէ սարգեցան դէպ 'ի ժէննիս վազելու համար որ զանոնք ընդունեցաւ ձայնը բարձրացնելով,

— Յերահամու և Սարայի Աստուածը, ըսաւ անոնց, Իսահակայ և Ռեբեկայի, Յակոբայ և Հուսքէլի Աստուածը զձեզ օրհնէ իմ զաւակները և ձեզ քրիստոնէի կեանք մը շնորհէ :

— Ամեն, պատասխանեց ձայն մը՝ որու ծանրութիւնը զիս դողացուց : Մարթան էր ան որ մարդարէի մը աչքով և շարժումով կը մօտենար :

— Այր դու, ըսաւ, այս կինը կ'առնես Աստուծոյ առջև, կ'ին դու այս էրիկ մարդը կ'առնես հետը կապուած ըլլալու համար թէ յաջողութեան և թէ ձախորդութեան, թէ առողջութեան և թէ հիւանդութեան՝ թէ կենաց և թէ մահուան մէջ, մի մոռնար զայս, Աստուած ալ պիտի յիշէ :

— Ոչ, անշուշտ, պիտի չմոռնամ երբէք, գոչեց Ալֆրէտ ձեռքը վերցնելով, Տէրը վկայ թող ըլլայ :

Ի նախատինս իմ խոստովանիմ, Քրանսայի մէջ առած պատուական դատարարակութեանս հակառակ՝ և թէ և մանկութենէս ի վեր՝ միայն ծիծաղելի բաներու վրայ չինչարու սորվեցուցին ինձ, այս խոստման հանդիսաւորութեան վրայ մինչև հոգոյս խորը յուզուած զլացի ինքզինքս :

Ինձ այնպէս կ'երևար թէ իմ տունը Աբրահամու յարկին պէս նուիրական եղած էր և թէ անտեսանելի ու ներկայ Աստուածը հոն կ'իջնէր այս երիտասարդներու միութիւնը օրհնելու համար :

Զամպօի դալուստը այս ծանր խորհուրդները փարատեց, ասի պարտէզն ու ջնուցը թալլեր էր նշանուած աղջկանս ահագին փունջ մը նուիրելու համար :

Իր դէմքն այնպէս ծռելով ու ծաղրելի ձևերով ու շնորհաւորութիւններով տուաւ իր ընծան որ սկսայ ակամայ խնդալ :

— Հարսնիքը երբ է, իմ դեռահաս տէրս, կը հարցնէր սեր : Վաճառը, վաղը չէ միւս օր, ո՞րք օրէն : Զամպօ երգել, Զամպօ պարել կ'ուզէ :

— Սիւզան, գոչեցի աղջկանս երեսը նայելով, օրը որոշուած չէ :

— Հայրիկ, քու հրամանին կ'սպասենք, պատասխանեց օրիորդ աղջիկս կեղծ համեստութեամբ մ'որու վրայ ստիպուեցայ հառաչել :

— Եւ ալ միայն այդ կ'սպասենք, ըսաւ Ալֆրէտ, տուն մը վարձեցի ու կահեցի հոս մօտ, չորրորդ ծառուղոյն անկիւնը : Իմ հարստութիւնը և անունը ընդունելու պատիւն ինձ ընողը ընդունելու համար, ամենայն ինչ պատրաստ է :

— Տղաս, ըսի Ալֆրէտին, և այս տղաս բառը բերնէս ելնելու ատեն զիս խղեց, Սիւզան ընտրեց զքեզ, մենք ալ աչքերնիս դուրսը կ'որդեգրենք զքեզ, բայց հօր մը անհանգստութեան և օրինաւոր հետաքրքրութեան համար ներողամիտ եղիք : Ո՞րքան ատեն է որ աղջիկս կը սիրես, և որովհետև հարստութեան ալ խօսք կ'ընէր, ինչ պետի ըլլայ ձեր երկուքին ալ կայութիւնը այդ ամուսնական կեանքին մէջ որ այնքան մօտ է մեզի :

— Ձեզ ըսել թէ որքան ժամանակէ 'ի վեր զՍիւզան կը սիրեմ, դժուար է ինձի, պատասխանեց երիտասարդը, ինձ այնպէս կ'երեւի թէ ծնելու ատենս կը սիրէի զանի : Բայց տարակոյս չկայ որ արդէն կը սիրէի՝ մէկտեղ հասարակաց դպրոցը զացած ատեննիս երբ ճամբուն երկայնութեամբ կը վազէինք, նէ բոլորովին մանուկ և ես գրեթէ երիտասարդ : Այն ժամանակէ 'ի վեր այնքան անդամներ

մէկտեղ խաղացած, խօսած ու աղօթած ենք. այնքան ստէպ զնէ զուարթ, բարի և սիրուն տեսած եմ, այնքան անդամներ բաց սրտով տեսնուած ենք, այնքան անդամներ իր հողոյ բոլոր գեղեցկութիւնը կրցած եմ տեսնել որ եկաւ օր մը՝ ուր զգացի որ Սիւզան էր այն կինը զոր Աստուած իր բարութեան մէջ ինձ սահմանելով ընտարած էր: Երբ Սիւզան տանեմեց տարեկան եղաւ՝ խնդրեցի անորմէ որ զիս իրեն իբրև ամուսին ընտրէ, ու իրարու խօսք տուինք առինք և նոյն օրն ալ ձեզ զեկ տուաւ նէ, ահա մեր սիրահարութեան պատմութիւնը:

— Այսպէս ուրեմն, ըսի հառաչելով, իրարու վրայ զգացած յարգանքն ու բարեկամութիւնը տարաւ ձեզ այն զգացման զոր սէր կ'անուանէք: Յանկարծական կամ շանթանման բան մը, կիրք կամ բանաստեղծութիւն չկայ ամենեին:

— Քսան և չորս տարեկան եմ, ըսաւ երիտասարդը, զՍիւզան կը սիրեմ, զնէ սիրած եմ միայն, և միայն զնէ պիտի սիրեմ, կը յարգեմ զինքը աշխարհիս մէջ ամենէ աւելի, իմ անձէս շատ կը սիրեմ, և չցիտեմ թէ այս բանը խելացութիւն կամ կիրք է, բայց կը յուսամ որ Սիւզան ասկէ աւելին պիտի չպահանջէ ինէ և պիտի ներէ ինձ որ մինչև իմ վերջին օրը մի և նոյն կերպով սիրեմ զինքը:

— Շատ լաւ, տղաս, դու հանձարեղ մէկն ես, երջանիկ պիտի ըլլաս ինչպէս որ արժանի ես, ու շատ զաւակներ պիտի ունենաս: Հիմակ ստակի վրայ խօսինք:

— Հարստութիւն չունէի, ըսաւ Ալֆրէտ, և այս բանս իմ դիտաւորութիւնները շատ ետ կը ձգէր, քսան և մէկ տարեկան էի և որոշած էի շուտով առջև երթալ. յաջողութեանս վրայ տարակոյս չունէի:

— Անշուշտ հզօր պաշտպաններ ունէիր, կամ կառավարութեան գործերու մէջ պաշտօն մը ստանալու խոստում մը: Կարելի է հայրգժամանակաւ ծերակուտի անդամ մը զարմահարն զարմիկին բարիք մը ընելով զան պարտաւորած էր:

— Ոչ, գլուխս և թեերս և ամեն ճշմարիտ Ամերիկացիի նշանա-

բանն ունէի, պատասխանեց Ալֆրէտ: Յառաջ, բան մը հորդօ մը ընէր և ամէն բան դուրս գնէր յաստ: Այս բանը օտար պաշտպանութենէ մ'աւելի կ'արժէ: Մերինին պէս շուտ մեծցող երկրի մը մէջ, ով որ տխմար մը չէ և կամեցողութեան տէր, միշտ լաւ միջոց մը կը գտնէ ի վերջէ: Լեղակի առուտուր ընող հարուստ վաճառականի մը քով տարրալուծի պաշտօն կը վարէի, և կը լսէի որ վաճառականս՝ Հնդկաստան զրկուող նաւերուն միայն կիսովին բեռնաւորուած ըլլալուն վրայ կը գանգատէր: Մեր սարքարարներուն (armateur) հաստատուն գաղափարն էր, բեռընելունոր պարանք մը գտնել: Ես գտայ պարանք մը՝ որ մէկու մտքէն չէր անցներ և որու ծախուիլը անտարակուսելի էր, այսինքն ձիւնը: Արչափ ալ ձիւն դրուի Հնդկաստան, անկարելի է որ սպառուած ինչ չափ ըլլայ: Գժուարութիւնը ճամբան զայն պահելուն վրայ էր և այս՝ լուծելի խնդիր մը կը մնար: Հօրս շնորհիւ՝ ես տարբարուծական գործանոցի մը մէջ ուսում առած եմ և բնական գիտութիւնն ու տարբարուծութիւնը իմ առաջին զբօսանքն եղած են: Իմ սառուցները կը զիջացրնելու համար ջերմութեան անհաղորդ մարմինի մը պէտք ունէի: Փայտի սղոցածքը (sciure) որ հոս արժէք մը չունի, փորձեցի և տեսայ որ գիւտը գտած էի, միայն գրամոզուիլը կը պակսէր:

«Բարի խորհուրդ մը՝ ի գործ գնելու համար Ամերիկայի մէջ ստակ գտնելը դիւրին է: Պ. Արինը մտքէս անցաւ որ լեղակի, խահուէի բրինձի և համեմի մեծ գործեր կ'ընէ. վրաս վտահարութիւն ունեցաւ նա և վաճառքի յուղարկման մը վտանգը աչքն առաւ: Կալիֆթա երթալու ճամբայ ելայ բեռնաւորուած վաճառքովս, ճամբան ձիւնը չհալեցաւ և զայն այնպիսի գնով մը ծախեցի որով երթալ գալու նաու վարձք մը շահեցայ և վերագարձայ քսան տարուան համար շահաւոր սակեր ընելէ ետքը: Ետ գառնալուս՝ իմ մասիս հազար սողար առի և Արին Ռօզ և Ընկերաց առևտրական տան գլուխն անցայ: Յաջողութիւնն ապահով է: Թէ որ ուզեմ այս օր կ'ընամ զեղջիլ զայն: Լաւադոյն ապագայ մը սպասելով առայժմ տարին տաս կամ տասներկու հազար սողար կ'ընամ նուիրել ախկնոջս:

— Տարին երեք հազար Գաղղիական ոսկի, պողպի, ինչաղոր բան է առուտուրը երբ մարդ կը յաջողի : Աւելի մտան նայեցայ փեսային երեսը և վրան բարձր հանձարի մը հովերը տեսայ : Ճակտին և գէմքին վարի կողմը Նաբոլէոնեան բան մը կար :

Իր հօրը խանութպան ըլլալը բոլորովին մտքէն ելած էր երբ Զամպօ գալով իմաց տուաւ Պ. Ռօզի դալուստը որ հասարակաց ուրախութեան մասնակից ըլլալու կը փութար :

Որքան ալ յարգելի ըլլար այն պատուական մարդը, իմ աղջկանս համար երազած սկեսուբս չէր դեղագործ մը : Ես փոխ-քաղաքապետներ անցուցած էի մտքէս, բայց ինչ կրնայի ընել անուպայ և բիրտ երկրի մը մէջ՝ որ տակաւին ստացած չէ այն կեդրոնացումը որու համար համայն Եւրոպա մննէ կը նախանձի :

Պ. Ռօզի հետ, Պ. Կրին ալ ներս մտաւ, ետքէն ալ Հէնրի : Գեղագործը ճանչցեր էի այն բժշկական հովէն որ երբէք չկորսուիր, բայց սև հագուած ու ճերմակ փողպատով նպարավաճառը ինձ համար անձանօթ հրէշ մ'է : Իր լեզուն որ ձևերը իր հագուստէն ոչ նուազ այլանդակ էին :

Իւշ և խահուէ ծախող Կրինը, միլիոններու հետ խողացող մարդու մը պաղարիւնով ու հեղինակութեամբ կը խօսէր :

— Գրացի, ըսաւ ինձ, գորովալի բարեմտութեամբ մը, ահա գրեթէ խնամի եղանք այս երիտասարդին միջոցաւ որ քու փեսան և իմ ընկերն է : Բայց այսչափով պիտի չմնանք : Քու Հէնրիդ եկաւ տեսնուեցաւ հետս, արթուն տղայ մ'է, զինքը հաւնեցայ և իրեն պաշտօն մը գտայ : Ալֆրէտ՝ ահա սնական եղաւ և հարկաւ ճամբորդութիւն ընելու համար չէ որ մարդ կը կարողուի, սակայն Ապրիլամայի մէջ վստահելի մարդ մը պէտք է մեզի : Իր պղտի տարիքին հակառակ՝ Հէնրին մտքէս անցաւ : Մարդ որչափ կանուխ գործի մէջ մտնէ քիչ է : Հնդկաստան երեք տարի կեցածին պէս՝ փորձառու մէկը կ'ըլլայ նա : Իրեն մաս մը կը հաննէ շահէն, որ եթէ աշխատի՝ տարին հինգ հազար սօլլարի պիտի հասնի : Գու աղայ մը կը վստահիս ինձ, և երեք տարիէն մարդ եղած քեզ կը վերագարձընեմ գանի : Խորհուրդիս ինչ կ'ըսես, Հէնրիին չափ դուն ալ կը հասնիս նայինք :

— Ո՛վ տղաս, քեզի համար ուրիշ ապագայ մը երազած էի. այո՛, քեզի համար աւելի աղէկ է կարելի է այս, կարելի է նաև դիւանապետութեան աստիճանին հասնելու ոչ պէտք եղած քաղաքագիտական հանձարն և ոչ ճարտարութիւնը ունիս գու : Ա՛լ բաղդդ ուրոշուած է, միայն միլիոնաւոր մը պիտի ըլլաս :

Ընորհակալ եղայ Կրինէ որ ինձ ըսաւ մեզմիկ :

— Գրացի, այսքանով չենք մնար : Մարդարիտը կը ճանչես, երկուստաններորդ զաւակս, պղտի սիրուն աղջիկ մը որ տասը տարեկան է և արդէն պէպէտի մը կ'ըլլի հասակն ունի. այն դաղափարունիմ որ վեց եօթ տարիէն զնէ տիկին Հէնրի Սմիթ մը կ'ընենք : Մինչև այն ատեն աչքերնիս աղուն և իր հարստութեան վրայ պիտի ըլլայ : Արաս վստահ եղիր :

Ալ չափը կ'անցնէր : Ես՝ բժիշկ Լըֆէպրը, ես՝ որ իմ երկրի մէջ ստանիկ մը և դիտուն մ'էի, նպարավաճառի մը խնամին ու երախտագրտը մնամ : Հաւասարութիւնը կը սերիմ անշուշտ, Գաղղիացի եմ, աւետարանի համար 1789 թուականին սկզբունքներն ունիմ,

Մանկանայս + հաստար էն, շնորհող չէ բնաւին,
Այլ միայն առաքինութեամբ՝ իբարտ էլ Գարբէրէն :

Ինչպէս կ'ըսէ մեր անմահ Աօլդէրը :

Կ'ուզեմ որ այս հաւասարութիւնը ամեն տեղ հոչակուի, տարածուի. կը հաւանիմ նաև որ մեր օրէնքներու մէջ արձանագրուի, վասն զի օրէնքը չդորձագրուի բնաւ : Բան գործ չընող մարդը միշտ վեր պիտի ըլլայ ան մարդէն՝ որ աշխատելով իր մասերը կ'աղտոտէ :

Այս հմայն խորտակելու և լրբենի հարստութիւնը մերժելու վրայ էի, երբ կնոջս հրատերին վրայ՝ մեր ամեն մէկ դրացին ապուխտի շերտ մը և թաս մը թէյ ընդունեցաւ :

— Գանիէլ, ըսաւ ինձ Թէննի, ահա սեզան նստանք, օրհնութիւնը ըսէ :

Սիրելիք իմ, այնքան յուզուած եմ, որ ալ ըրածս չլիտեմ : Գու իմ տեղս անցիր և ինձի համար խօսէ :

— Եստուած իմ, ըսաւ Ժէննի . օրհնէ այս տունը և բոլոր անոր մէջ գտնուողները : Օրհնէ մանաւանդ զանոնք որ անկէ կը հեռահան , իցիւ թէ , տէր իմ , անոնց մէջ միայն մաքուր և հլու սիրտեր գանես :

Ամեն մարդ՝ առն ապտասխանեց այնպիսի անկեղծ ձայնով մը որ իմ զաղափարներու ընթացքը տակուվրայ եղաւ : Բարեկամներուս , զաւակներուս և կնոջս երեսը կը նայէի , կը դիտէի Կրինը՝ որ այնքան պարզմտ էր և ընտանեացս բաղդը կը շինէր , զէէնրի՝ որ տասնեակեց տարեկան հասակին մէջ՝ մարդու մը հաստատամտութիւնը և տղու մը եռանդն ունէր , և աշխատութեան շնորհիւ աշխարհին մէջ կացութիւն մը կ'ուզէր ձեռք ձղել , առանց վտանդէն , արսորէն ընկրկելու , զՍիւզան և զԱլֆրէտ՝ որ այնքան մաքուր և խանգակաթ սիրով մը կը սիրէին զերար , վերջապէս կինս , բարի Ժէննին՝ որ միայն ուրիշներու հօգը կը ասնէր ուշադրութեամբ , ինքնուիրութեամբ և տան հողին՝ ու թաղուհին էր այս փեթակին՝ ուրիշ մեղուներու պարը կը թռէր :

Եւ ես անօգուտ իշամեղուս որ ինչ մըմուշալս չգիտէի , կ'ըսէի իւրովի՝ թէ առանձին պիտի մնայի այս կրակարանի մօտ որ երբեմն Սիւզանի և Հէնրիի ուրախութեամբ կենդանի էր :

Ռօզ իննը զաւակ ունէր , Կրին տասնեակեց , Եստուած մեծ ընտանիքները կ'օրհնէ և երբ մենք իրմէ աւելի խօսեմ կ'ուզէնք փրթթիլ , մեր սխալ խոհեմութիւնը կը շփոթէ զմեզ դառապարտելով այն առանձնութեան՝ զոր մենք փնտրած ենք :

Եւ կը դիտէի թր կնիկս աակաին երիտասարդ , թարմ էր , և կոկիկ զերութիւն մ'ունէր ու կ'ըսէի ինքնին . . . :

Չդիտեմ ինչ կ'ըսէի , երբ Զամբո գուռը հրելով ահաբեկ գէմբով մը ներս մտաւ պտուղով ,

— Հտապի զանդակը , շտապի զանդակը , մտիկ ըրէք , հրգեհ կայ :



Զամպոի առաջին ձայնին , դեղադործը պատուհանը վազեց , յետոյ դէպ ՚ի Կրին գտունալով ,

-- Տեղակալ , ըսաւ , զմեզ կը կանչեն , հրգեհը երկուստասներորդ ծառուղին է :

— Հասայ , յիմնապետ , ըսաւ նստարավաճառը ոտք ելնելով : Տօքտօք , աւելցուց յետոյ ուսիս զարնելով , օն անդր , կառքը չսպասեր :

— Լաւ , ըսի մտովի , անոնց դուրս ելնելը տեսնելով Ալֆրէտի և Հէնրիի հետ , ահա հիմակ տը ազդային պահակի դեր կը խաղան : Ազդային պահակը պարզ և մ'է զոր Ամերիկան մեզ զրկած է Լաֆայէթ քաղաքացիին ձեռքով և որ մեզ մեծապէս օգտեց : Այս անօգուտ հանդէսներուն վազեցէք , սիրելի բարեկամներ , և աղէկ կ'ընէք , ես իմ մօտիս տունը կը մնամ : Կրինի ըսած կառքն ինչ է : Կը կարծէ՞ թէ ապուշի մը նման հրգեհը տեսնելու պիտի երթամ , այնպիսի երկրի մը մէջ՝ ուր կ'ըսուի թէ ամեն օր հրգեհ կայ :

Պատուհանին մօտեցայ . մուսի օձապտոյտ յորձանքներ երկինք կը բարձրանային կայծեր արձակելով , կրակը երթալով կը մեծնար :

— Հո՛ւտ , տէր իմ , շո՛ւտ , ըսաւ ինձ Մարթա յանկարծ , կառքը կը մօտենայ ,

Եսիս զարձայ , Զամպո առջևս կանդնած էր տապար մ'ի ձեռին , եփած կաշիէ սաղաւարտ մը գլուխը :

Մարթա՝ կարմիր լաթէ բաձկոնակ մը և կիմնագեան լայն գօտի մը բռնած էր : Իմ համազգեստն էր այն , ես ալ հրանցոյց էի :

Ես հրանցոյց ըլլամ , բաղդին այս նոր նախատիրն ղէմ կ'ուզէի բողբել , բայց Մարթայի ձեռքն ընկեր էի : Անթարթի մը մէջ զիս հագուեցուցած , խուրած (coiffé) , գօտեորած և ահագին համակառի (omnibus) մը տանիքին վրայ բարձրացուցած էին որ իր կողերուն մէջ տաք տաք ու մխացող շողեշարժ մեքենայ մ'ունէր : Երկու հոյակապ սև ձիեր , ջրհանը ու հրանցոյցները կը ամսէին արշաակի :

— Բանէ մը մի վախնար , Դանիէլ , կը պոռար Մարթա թեւը վերցնելով . Ստուծոյ ծառայելու կ'երթաս , Բարձրեալը կրակին մէջէ՛ մեզի կը վերադարձնէ : Ղքեղ , ինչպէս որ իր Սեղբաք , Միսաք և Արեթնաքով ծառաները ազատեց :

Այս կտակարանն օրհնութիւնը զօրացուց զիս , խունկ կը հոտէր այն :

— Ինչ տարօրինակ խորհուրդ , պոռացի , կեանքերնիս անծանօթներու համար 'ի վտանգի դնենք , երբ կրնանք վարձքով հրանցոյցներ ունենալ :

— Ազ ինչ կ'ըսես դուն , տօրթօր , ընդմիջեց խիստ ձայն մը , որմէ Փօքս դատաստացի կերպարանին տակ իմ Բէյնար զրացիս ճանչցայ :

— Քաղաքակիցք , աւելցուց , դատական հին ճառ մը դոց ըսելով , թէ որ ազատ ըլլալ կ'ուզէք , դուք եղիք ձեր ոստիկանն ու բանակը : Ինքզինքնուզ պահապաններ տալը տէրեր առնուլ է : — Սիրելի բարեկամ , շարունակեց բնական եղանակաւ մը , այդ եւրօպական զաղափարները ուրիշ առիթ , միթէ ազատութեան բարեկամ մը չէ՞ս դու :

— Ամեն բանէ յառաջ ազատութիւն , փութացի պատասխանել , տկարութեանս վրայ քիչ մ'ամհնալով : Քաղաքակիցներու օգնութեան վազելը պարտաորութիւն մը և հաճութիւն մ'է որ ուրիշի չեմ տար . հրանցոյց ըլլալուս վրայ հպարտ եմ :

— Բայց Արինի չափ հպարտ չես , սիրելի զրացի , վրայ բերաւ

սրածայր դէմքով մարդը : Ահա ան՝ հրեհհի երթալուն համար իրօք դոհ է : Սատանայի չափ նրբամիտ է , ըսաւ ականջիս խօսելով . devilish smart կրկնեց չորս անգամ աչքը թարթելով ու քթով և թուշով նշան ընելով :

Յետոյ իր քթախոտի տուփը բացաւ , հառաչեց ու երկու հեղքթախոտ առաւ ,

Մեր Սէն-Ճօհն գնդապետը , շարունակեց հրածարականը կուտայ . Արին տեղակալ և փառասէր է : Աւելի առջև երթալու մտքով դնդապետ կ'ուզէ ըլլալ : Հուտիկի չափ վարպետ է , բայց որբան որ իր թուղթերը պահել կ'աշխատի ես իր խաղին մէջ կը կարդամ :

Դեռ Փօքս իր նենգաւոր խոստովանանքը լմնացած չէր երբ հասանք : Ոչ ոստիկան կար հոն և ոչ զգուշութիւն մը , հետաքրքիր բազմութիւն մը արոսնոցներու (trottoirs) վրայ շարուած՝ և բարեբաղչարար փողոցին մէջ տեղը պարսպ ձգած էր :

Մէկ վայրկեանի մէջ մեքենան տեղաւորուելով խողովակներն արձակուեցան , ամեն կողմ ջրով լեցուեցաւ : Մինչդեռ տեղակալը հրեհհին գլխաւոր տեղը փնտռելով իր հրամանները կուտար , սկսայ սիրուն զրացույս հետ ջրփողերն ուղղել :

Դիմացիս բոլորովին կրակի մէջ եղող տուն մը կար , բոցերը պատուհանները խորսակեր՝ ու իր յորձանուտ լեղուններով դուրս կը յարձակէր :

Յանկարծ առաջին դատիկունէն աղեկեղ ձայներ լսուեցան , ձերմակ դէմք մը՝ ստուերի մը նման անցաւ , կանայի ձայն մը օղնութեան կանչեց : Ամիջապէս Արին , պատին երկայնութեամբ սանդուխ մը կռթնցընելով վեր ելաւ և մուխին մէջ աներեւոյթ եղաւ :

— Հուտիկի չափ վարպետ է , ըսաւ Փօքս սատանայական դէմքով մը , devilish smart , փառասէրը կարտորայ :

— Այս կողմէ , տղաք , այն կողմ , կը պոռար Ռօզ կրակը խղրելու զբաղած բոլորովին : Բազկիս ուժով ծանր ջրփողը կը վերցընէի բայց չէի կրնար աչքերս դարձնել այն պատուհանէն ուրկէ Արին ներս մտած էր , սիրտս կը տրոփէր ու անձկութիւնը կը խլղէր զիս :

Յանկարծ Արին երեցաւ թեւերուն մէջ կին մը առած՝ և բարձու-
թեան կէցցէնէրու ձայնով վար իջաւ :

Ոտքը դետինը կոխելուն պէս՝ կինը կանդնեցաւ :

— Չաւակս, կ'աղաղակէր նէ, զաւակս ո՛ւր է, ո՛ւր է աղջիկս :

Իր ամեն անդամներով կը գողար, կ'ողբար, թեւերը կը վերցը-
նէր գէպ 'ի բոլորովին կրակ կտրած պատուհանը, և այս հնոցին
մէջ նետուիլ կ'ուզէր :

Պարապ տեղ զայն բռնելու կ'աշխատէին, մեր ձեռքէն կը փա-
խէր, 'ի տուն կը վազէր, և բոցերէն յետս մղուած, սարսափեցի
ձայներ ձգելով ետ կը քաշուէր մագերը փեթտելով :

Ամենքն ալ իրարու կը նայէին, բոցը մըրկի նման կը գուար,
այրած տանիքը փլուելու կը մօտէր, մանուկը կորսուած էր :

Այս վայրկենիս չգիտեմ հողոյս մէջէ ի՞նչ անցաւ, այս թշուառ
մօր տեսքը, Մարթայի խօսքերը, Արինի օրինակը, Գաղղիացի ըւ-
լալուս գաղափարը, ի՞նչ գիտեմ, գինովութիւն մ'է գլուխս զար-
կաւ : Սանդուխը վազեցի և տակաւին ընելիքս չգիտցած, վեր ելած
զանուեցայ :

Ռօզ զիս արդիւնէլ ուզեց :

— Ես հայր եմ, պոռայի, պիտի չթողում երբէք որ այդ մա-
նուկը մեռնի :

Սենեակը մտածիս պէս, վրաս վախ եկաւ, բոցը բոլորտիքս կը
սուլէր. փայտակերտները կը ճունչէին, ապակիները կը խորտակուէ-
ին, դժնդակ աղմուկ մը կ'եղնէր :

Տարութենէ խղուած, մութէն աչքերս կուրցած մանուկը կան-
չեցի՝ պատասխան չելաւ, պոռայի՝ արձագանք մը չլուեցաւ : Յու-
սաստ էի երբ բոցի կարմիր լեզու մը մութը խղելով՝ դիմացս գոց
դուռ մը ցուցուց :

Տապարի հարուածով մը կղպանքը խորտակել, սենեակը մտնել,
վազել օրօրոյն ուր մանուկը կու լար, ինձի համար մէկ վայրկենի
գործ եղաւ, ի՞նչ բերկրանք, սակայն կարճ եղաւ այն : Ծուխերէ
շրջապատուած, գրեթէ հեղձամղձուկ՝ ալ ուր գտնուիլս չէի գի-
տեր, սիրտս կը տրոփեր, գլուխս կը դառնար, կորսուած էի :

— Այս կողմէ, սօքսօր, այս կողմէ Գանիէլ, կ'աղաղակէր Ռօզի
ձայնը յառաջացի՛ր բայց ետ ետ գալով, ուշադրութիւն :

Իրատրինաստալից էր, հազիւ թէ գարձած էի, երբ ջրի զօրա-
ւոր ցնցուղ մը, դեղադործին վարժ ձեռքէն ուղղուած գլխէս մին-
չև ոտքս ողողեց, զիս վար նետելու վտանգով :

Այս վարպետութեան՝ որ մէկ վայրկենի համար բոցը կ'արդիւնէր
և մուխը կը ցրուէր, շնորհիւ, պատուհանը տեսայ, հոն վազեցի,
և մէջէն անցնելով, դետին սահեցայ սև ու թրջուած, խանձողի
մը նման մխալով :

Մէկ բոպէ ետքը՝ ահուելի շառաչիւնով մը տանիքը կը փլուէր :
Մարթա իրաւունք ունէր, Աստուած Արեթնաքովի պէս աղատած
էր զիս :

Այս խեղճ մօր խնդութիւնը նկարագրել պարապ բան է, ամենէ
երջանիկն ես էի, վասն զի մանուկ մը աղատեր ու Գաղղիական ա-
նուան պատիւը պահէր էի : Իմ խենթութիւնը անշուշտ ինձի ալ
բաւական սուղի նստած էր. մագերուս մէկ կողմը խանձեր էր, մէկ
այստ փշտեր, և ձախ թևս դաստակէն մինչև արմուկը այրած էր.
սակայն ի՞նչ էր այս ամենը շահածներուս քով :

Այս գէպքէ շատ շատ՝ ժամ մը ետքը, մեր թաղը կը մտնէինք,
միացող բեկորները մարելու հողը վերջէն եկողներուն թողով :

Թեթևակի և գլուխս բարձր բռնելով ելայ այն համակաւին վրայ՝
ուր այնքան դժգոհութեամբ նստեր էի նոյն առտու : Պօքս հոն էր,
աչքին մէկը թարթելով՝ այնպէս մ'որ կարծես թէ կոյր էր :

— Արին վարպետ է, ըսաւ նա արմուկովը հիւանդ թևս այնպէս
հրելով որ զիս գողացուց, այլ դու կրողին չափ անորմէ վարպետ
ես : Աեցցէ՛ Սմիթ գնդապետը, աւելցուց նա ձեռքերը շփելով :

Պատասխան չտուի իրեն, վասն զի բոլորովին նոր տեսարանով
մը զբաղած էի :

Տրտնոցներու երկայնութեամբ և հաւասար կարգաւ՝ ահագին բազ-
մութիւն մը շարուած էր : Գրեթէ ամեն էրիկ մարդիկ ձեռքն ընին
թուղթ մը ունէին զօրս կը շարժէին մեր անցնելու ատեն :

— Աեցցէ՛ քաջազակալը, կեցցէ՛ Արին, կը գոչէին : Աեցցէ՛ Սմիթ,
կեցցէ՛ դիւցազն հրանցոյցը :

— Ահա առիկ են, կ'ըսէին զմեզ մասնանիշ ցուցընելով, այս՝
կրինն է, այն Սմիթն է, կեցցէ՛ :

Գլխարկները կ'ենէին, թաշկինակները կը ծածանէին, կանայք
զմեզ իրենց տղոց կը ցուցընէին, սրոնք իրենց թաթիկները կը շար-
ժէին իբրև թէ զմեզ օրհնելու համար :

Ինչ գաղանիքով արդէն բոլոր քաղաքը իմ անունն ուր դործը իմա-
ցեր էին, չգիտէի և չէի հարցըններ :

Մարդ փառքի շուտ կը սովորի, բայց երթալով կը յուզուէի և
պարսպ տեղ գիւցազնի մը համեստութեամբ և հանդարտութեամբ
կը նայէի բազմութեան, տան մտայնած առենս՝ աչքերս լցուած
էին բոլորովին :

Ժողովուրդը սաշարած էր զԹէնի, զաղջիկս և զՄարթա որ
քարոզ կու տար և Ջամիգոն որ խնթի'նման կը պարէր : Անոնց
թեքում մէջ նետուեցայ և իմ ծիտան մաքրողի դէմքիս հակառակ՝
Նստուած գիտէ թէ զամենքն ալ ինչ սրտով համբուրեցի : Ջամ-
պոն անգամ սեյուցի կարծեմ :

Տոն չմտած, Թէնիի ժպտելով մեր դիմացի տպարանը ցուցուց,
որ Բարիդեան-հետադէր խոսվարար լրագրին ապարանն էր : Տան
վրայ ահա ինչ ծանուցում մը կը բարձրանար և կէս մղոն հեռուէն
հետեւեալ սողերը կարելի էր կարդալ :

ՅԻՆԳԵՐՈՐԴ ՏԻՊ

ԲԱՐԻՋՆԵԱՆ ՀԵՌԱԳԻՐ ՍԱՐՍԱՓԵԼԻ ՀՐԴԵՀ

ԲԱԶ ՏԵՂԱԿԱԼՆ ԿՐԻՆ
ԳԻԻՑԱԶՆԱԿԱՆ ԿՐԱՆՑՈՅՑՆ ՍՄԻԹ

ՎՍԵՄ ԽՕՍԻՔ

Հայր եւմ, պիտի չքողոշու՞մ երբէք որ
այդ մանուշկը մեռնի :

50,000

ՕՐԻՆԵԿ ԾԱՆՈՒՄ ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԻՊ

Այս էր տաճարն ուր է փառքը կը բաշխուէր, և այն բաւական
էր զմարդ ունայնասիրութեան ախտէն բուժելու համար :

Ինչ հաճութեամբ բազնիքի սրահը մտայ ջուրը մտնելու, դէմքս
լուալու և այրած թևս զովացընելու համար : Այս անգամ հիանալի
դտայ տանս մէջ ամեն ժամ տաք ջուր պահող գիւտը :

Իսկ Ջամպո՝ քովէս բաժնուիլ չէր ուզեր, պնդելով որ Մասս
իւր ծառայութեանց պէտք ունէր և առանց անոր չէր կրնար ընել :
Բարեսիրտ տղան՝ զիս խօսեցընել կուզէր դրացիներու քով կարե-
ւորութիւն վաստակելու համար :

Իմ փառքս իրն էր, կարծես թէ իմ տեղս փոխանորդաբար ին-
քը կրակին մէջ մտած էր :

Երբ խօսարանն իջայ, Բարիդեան-հետադէր զրատունը զնորդնե-
րով լի՛ ապարանը թերթ չէր կարող հասցընել, բազմութիւնը մեր
պատահաններու տակ կը խռնէր զիս տեսնելու աշխատելով : Ապուած
թևովս, վիրաւորուած այտովս ու այրած մազերովս ինքզինքս կրնա-
լի գիւցազն մը կարծել :

Քիչ մ'ետքը, այս գեղեցիկ օրուան ուրախութիւնը կատարեալ
ընելու համար՝ հրանցոյցներու նուազը եկաւ ինձ գիշերերդ մը տա-
7

լը և ամբողջ խումբը կրինի առաջնորդութեամբ եկառ ճառ մը ուղղեց ինձ :

Այս ասիին (ճառ) մէջ որ շատ աղէկ շարադրած էր, նպարա-վաճառը, սրտառուչ համեստութեամբ մը ինքզինքը կը մոռնար միայն իմ ցոյց տուած քաջարտութեան վրայ խօսելու համար և իր խումբին կողմէ կ'աղաչէր զիս որ գնդապետի պաշտօնն ընդու-նիմ :

— Ընկերներ, բարեկամք, գոչեցի, ձեր բարութեանց վրայ ա-մօթապարտ եմ, բայց Աստուած չընէ որ կրին տեղակալին ինձ տուած օրինակը և Ռօզ քաջ յիննապետին ինձ ըրած օգնութիւնը մոռնամ, քառ լիցի՛ : Առաջնոյն կը պարտաւորիմ բարի գործի մը պատիւը և երկրորդին կեանքս : Ներեցեք ինձ ուրեմն երախտագի-տութեան պարտքը չմոռնալ և միշտ իբրև իմ գլխաւորները նկա-տել պատուական կրինը ու զվեհանձն Ռօզ : Ընկերք իմ ձեզի հետ կ'ուզեմ մնալ, ձեզի պէս պարզ հրահրոյց՝ ազատ երկրի մը մէջ : Ձեր բարեկամութեան և կիսգաղնութեան վրայ հպարտ՝ մեր պարզ համազգեստը պիտի չփոխեմ ընդհանուր գնդապետի հազուստին հետ : Կեցցէ Ամերիկա՛ և ազատութիւն :

Պատասխանս ընդունելութիւն գտաւ, մանաւանդ վերջի մասը որ արժէք մը չունէր, կրին թեւերուս մէջ նետուեցաւ, Ռօզ նմանա-պէս և Քօքս զիս մէկի Քաշելով կամայցուկ մ'ըսաւ :

— Ընկեր, շուտիկի չափ վարպետ ես, աչքդ բարձր տնկած ես, բայց հոգ չէ, միտքդ կը հասկընամ : Եւ երկու աչքը մէկէն թար-թեց, խորհրդաւոր լեզու՝ զոր չկրցայ բացատրել :

Կրինի մէկ նշմայրին վրայ, գիշերանուազը վերստին սկսաւ, մի ևնոյն կետին՝ Բարիգէան-հետաքրքին տարարանին երկայնութեամբ ծա-նուցումի մը բարձրանալը անսայ՝ մեծ կայմի մը վրայ քաշուած դրօ-շի մը նման :

Այս թմախնայիկ և գունաւոր լապտերներով լուսաւորուած ծանու-ցումին վրայ՝ յետազայ խօսքերը զրօշմուած էին մէկ ոտք բարձ-բութեամբ գիբերով :

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԻՊ

ԲԱՐԻՋԵՆ ԷԵՌԱԳԻՐ

ՍԱՐՍԱՓԵԼԻ ՀՐԴԵՆ

Դիւցագնական հրանցոյցն Սմիթ, նոր կիսկիւնաթուղ : *
Չառապիւնութիւնը ինչպէս կը վարձատրէ Ամերիկա :

100,000 օրինակ ծախուած

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿ ԻՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆԸ

— Այս ինչ կը նշանակէ, պուայի : Չամպօ դնա սա լրագիրը բեր ինձի, ասոր տակ գէշ կատակ մը կայ անվրէպ :

Լրագիրը բերուեցաւ և մեծ զարմանքով անոր մէջ կրինի ճառը և իմ պատասխանը տեսայ : Ատենարանութիւնս ըրած ատեն՝ խօս-քերս սղաղբեր և տպեր էին : Գնդապետութիւնը մերժելովս կին-կինաթօսի տիտղոսը շահեր էի : Ինչո՞ւ, երբէք չկրցայ հասկընալ, բայց բառը ծանուցման վրայ աղէկ կը վայէր : Նոր կիսկիւնաթու-ղուսը մարդը հարկաւ պէտք է բան մը ըլլայ :

Ճառիս տակ և գառախնութիւնը ինչպէս կը վարձատրէ Ամերիկա ծի-ծաղելի վերնագրին ներքև, հետևեալ երկու նամակները կը կար-գացուէին :

ԿԱՐԱՊՆ

Հրդեհի գէմ Ապահովութեան Ընկերութիւն
Փողոց Աքստայց թիւ 10.

Ընկերութեան վերամագլուխ 10 միլիոն տօլար, ապահովեալները մասնակից են շահին .

* Իր ռազմական ֆիլիթաթեամբ, առախնութիւններով ու անդամներն-դրօսութեամբ հաշակատար Հասմայեցի՝ որ ոչնորմ քանի ծ'անքամ ազատելէ-կորոք ատանց փառաքի ետևէ ընթելու երկրաբարձութեան կը հետևէր : Մ. Թ.

Պարոն ,

Այս առաւօտեայ հրդեհին մէջ՝ ձեր ցոյց տուած քաջարտու-
թիւնը Ընկերութեանս անօրէն խորհուրդին ուշք զրաւեց :

Այս վայրկենիս՝ հրդեհէ յառաջ եկող վէրքերը և պատահար-
ները ստուգելու համար , խորհրդատու բժշկի մը պաշտօնը բաց է :

Կը յուսանք որ զայն ընդունելու պատիւը կ'ընէք մեզի : Տարե-
կան վարձքն է 400 տօլար :

Ընկերութեան վերասեսուչ
Բ. Բ.

Առ Պ. բժիշկ Գանիէլ Սմիթ , հրանցոյց Դրդ գնդին :

ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ

Մանաւորներու բաժանորդութեամբ մանկանց համար հիւանդանոց :

Գին բաժանորդութեան 10 տօլար :

Ընկուզենեաց փողոց , թիւ 23

Պարոն ,

Իր տաղանդով և անձնուիրութեամբ բնասէս երէխաները խնա-
մելու կոչուած է այն բժիշկը՝ որ այս գեղեցիկ խօսքն արտասանած
է . Հայր ե՛հ , պէտէ չմոռո՛ւ երբեք որ այդ մանուկը Քրիստոսն է :

Մեր հիւանդանոցի բժշկապետի պաշտօնը պարաս է , կը յու-
սանք որ պիտի հաճիք զայն ընդունիլ :

Այցելութիւն , ամեն օր ժամը վեցէ մինչև ութը , տարեկան վարձք
2,000 տօլար :

Հիւանդանոցի հոգաբարձուք
Ռ . . . Թ . . .

Առ Պ. Գանիէլ Սմիթ , բժիշկ , հրանցոյց Եօթերորդ գունդին :

— Զամայօ , հարցուցի , ուրեմն ինձի համար նամակ բերի՞ն :

— Ոչ , Մասա , ցրուիչը շեկաւ տակաւին :

— Անկարելի է , եթէ ոչ այս լրագրին մէջ խազ մը կայ :

— Դուռը կը զարնուի , Մասա , ըսաւ Զամայօ , մտիկ ըրէք մէկ ,
երկու , երեք , սուրհանգակին զարնուածքն է , վաղեմ՝ նայիմ :

Սեր քառասունի չափ նամակ բերաւ , թուղթերու բլուր մը .
Խել մը հիւանդներ խորհրդակցութեան ժամս կը հարցնէին , մէկ
շատ ուրիշներ՝ կ'աղաչէին որ կարելի եղածին չափ շուտով գիրենք
տեսնելու երթամ , չորս պաշտօնակիցներ զիս խորհրդակցութեան կը
հրաւիրէին , վեց դեղադորձ հետս ընկեր ըլլալ կ'առաջարկէին և
'ի վերջէ զարմանալի բան՝ զգուշեաւ զմուսուած երկու նամակ՝ մտեր-
մօրէն կը ծանուցանէին՝ ինձ՝ ինչ որ Բարեկէան-հեռագիրը արդէն հրա-
տարակած էր բաց-բերան կերպով մը՝ որ իրեն կը ներէի :

Հուշակաւոր էի : Հարստութիւնս կ'սկսէր : Օրուան մը , մէկ ժա-
մու քաջարտութեամբ՝ անուն կ'ստանայի և այս՝ Սմերիկայի մէջ ին-
ձի համար շահաւոր կ'ըլլար քան թէ հին աշխարհին՝ այսինքն Եւ-
րոպայի մէջ քսան տարի քաշած աշխատանքս , բայց մտածեցի ,
և այս մտածումը տուաւ ինձ այն խոնարհութեանը որու մեծապէս
պէտք ունէի , որ եթէ այս շատխօս լրագիրը , այս թմբուկը՝ որ իմ
անունը բոլոր նոր աշխարհին արձագանդներուն յանձնեց , չըլլար
միթէ կրնայի՞ յաջողիլ :

Ոչ , հետեւաբար իմ առաջին դաղափարն եղաւ երթալ և ով որ
էր այն խմբագիրը՝ իրմէ շնորհակալ ըլլալ . ժամանակը շատ ան-
ցած էր , գրասենեակը դոց , լուսաւորուած ծանուցումը աներևոյթ
եղած և փառքս մարած էր . ուստի այցելութիւնս երկրորդ օրուան
թողուցի :

Երեկոյթն իմ հին բարեկամներուն , կնոջս և զաւակներուս հետ
անցուցի : Այն սոսկալի և փառաւոր դէպքին մանրամասն պարա-
զաները պատմել տալին ինձ :

Իմ անցուցած վտանգներու խօսքն ըրած ատենս՝ Ժէննիի գոյնը
կը նետէր և կը կարմրէր՝ երբ իր զաւակը դանող մօր ուրախու-
թիւնը կ'ըսէի : Սիւզան ձեռքս կը սեղմէր Ալֆրէտի նայելով :

Խօսակցութիւնը կարծեմ բոլոր գիշերը պիտի տևէր եթէ Մար-
թա՝ այժմեմբով կազմուած և պղնձի ճարմանդներով զոցուած՝

Աստուածաշունչի ահագին հատոր մը բերելով սեղանին վրայ չը դնէր :

— Կարգա՛, ըսաւ նէ, և պարծենկոտութիւնդ մեղմէ՛. Ազապի ցեղէն Ամատաթայ որդւոյն՝ Համանի պատմութիւնը մի մոռնար, յիշէ թէ հոս Մարտօքէ մը կայ՝ որ քու առջև ծունր պիտի չընէ բնաւ :

— Անհոգ եղիր, Մարթա. պատասխան տուի ծիծաղելով, դրանս առջև յիսուն կանգուն կախաղան մը չկայ և մէկը կախել չեմ ուզեր :

Ժէննի Աստուածաշունչը բացաւ և մեզի Գանիէլի երրորդ գլուխը կարդաց, որ քուէքրուհին բերկրացուց, ոչ նուազ հաճելի եղաւ նաև Զամպօի, և զիս մտածելու ստիպեց այն բարութեան վրայ որ Աստուած ունեցեր էր ինձ նկատմամբ :

Ժամանակը շատ ուշ էր, երբ այսպիսի զբաղուն օրէ մը ետքը իրարմէ բաժնուեցանք : Բոլորովին յողնաբեկ, քիչ մը հիւանդ՝ այլ ինքիբէս շատ գոհ սրտով, անկողնոյս վրայ նետուեցայ և բուլըր զիշերը գիշերեցի, ծանուցումներ, կեցցէներ ու ճառեր երազեցի :



ԴՐՈՒԿ ՀԱՄՊԿ ԵՒ ԸՆԿԵՐԻՔ

Արթնցածիս պէս՝ պատուհան վազեցի, իմ նորածին համբաւն վայելել ու անգամ մ'ես տանիքներու վրայէ անունս հուշակուած տեսնել կ'ուզէի :

Ծանուցումն իր տեղն էր, բոլոր անցորդները աչքերնին անոր վրայ կը նետէին, այլ ո՛վ ունայնութիւն մարդկային փառաց, ահա ինչ գրուած էր հոն :

Բէրեալի գալուստը

Եւրոպայէ կարևոր լուրեր .

Լօնտօն քօնսօլիտէ, 92 ³/₄

Լիվրբուլ, բամպակ 0/0 20 վերադրութիւն* .

— Աղած խողենի (քլիվըլէնտի), 4,000 տակաւ կ'ուզուի 'ի զին 14 տօլարի :



Հողագործներու յարմարացոյն առիթ .

Իգալիայի չորս էշ, ամենէ ընտիր տեսակէ

Դիմել առ պարոնայք շինօքիօ Եղբարք, Ուիլերմ Սթրիթ 70 :

— Ո՛վ վաճառական ժողովուրդ գոչեցի կուսիս անցորդներուն ցուցունելով, կուլիտ ցեղդ՝ որ ամեն բան խառնափնդոր կը քալէ-ցընես թէ առուտուրը, թէ զգացումները, և թէ բամպակն ու գազափարները, փառք կու տամ Աստուծոյ որ ես քեզի չեմ վերաբերիր : Կեցցէ իսէականին աշխարհը, կեցցէ Ֆրանսան որ հնչաւ կան բառով մը կը վարուի միշտ, Ֆրանսան՝ որ գոհութիւն Աստուծոյ երբ իր շահը կը մտածէ բանը բանէն անցած է :

Մեր խնդութիւնը այս եանքիներու իմաստութենէն աղէկ՝ և մեր աշխատութիւնը իրենց հարստութենէ աւելի ազնիւ է : Այս տգէտ հողակալներու համար Եւրոպայի կարևոր լուրերը, Իգալիայէ չորս էշ գալն ու խողի մնի գինն է :

Իսկ Ֆրանսայէ, ոչ վերջին նորելքին, ոչ աբբունեաց տուած պարին, ոչ նոր հրատարակուած վէպին և ոչ նոր վոտովիլին վրայ լուր մը, խօսք մը կայ : Ո՛վ գեղնած Անտայներ ձեզի համար միայն արհամարհանք կ'զգամ :

* Hausse

Բարկութիւնս այսպէս լիարեւոյն յայտնելով հանդերձ, կուզէի շնորհակալ ըլլալ այն խմբագրէն որ իմ վրայ խօսեցած էր առջի օրը, լրագրագետը ո՛վ կ'ուզէր ըլլար, չէր վայելեր որ իր առջև պարտաւոր մնայի, և զինքն իմ այցելութեամբ պատուելն արդէն իրեն հատուցում մ'էր:

Պարզ տեսքով տուն մը մտայ որու միակ նշանակը՝ պատին գամուած պղնձի տախտակ մ'էր՝ որու վրայ կը կարդացուէր:

Բարիզեան հեռագիր

Գրուդ, Համպրի և Ընկ. խմբագիր տեարք:

Առջևս կանանչ աստիէ դուռ մը կար, զայն հրեցի, և ու հագուած ու մինչև պարանոցը կոճկուած մանրուկ մարդու մը զիմացը գտնուեցայ, այն էր Պ. Գրուդ: Վահենեայ գրասեղանի մը առջև նստած՝ ձեռքը մեծ մկրատ մը, Անգղիական լրագրի մը մէջէ թուղթի երկայն շերտեր կտրելով զանոնք կը նետէր տեսակ մը նամակի տուփի մը մէջ՝ որ տպարանին հետ հողորդակցութիւն ունէր: Աման լրագրի մը խմբագրութիւնն էր այս:

— Ինչ կ'ուզէք, պարոն, հարցուց նա առանց գլուխը վերցնելու և գործն ընդհատելու:

— Պարոն, ըսի իրեն ծանր ու հաստատուն ձայնով մը, ես Գառնիէլ Սմիթ բժշկն եմ, երկրորդ գունդին ջրանկիրը, նոյն իսկ այն՝ որու գովեստն ընելու բարութիւնն ունեցեր էիք ձեր երէկուան երեկոյեան թերթին մէջ:

— Լաւ, ըսաւ լրագրագետը իր թուղթ մանրելը շարունակելով, բնջ կ'ուզէք:

— Ձեռնէ շնորհակալ ըլլալ, պարոն, և երախտապիտական պարտքս վճարել:

Զարմացած եղանակաւ մը երեսս նայեցաւ նա:

— Ինչ բան մը չէք պարտաւորիր, տօքթօր, ձեր գեղեցիկ գործը հրատարակելով իմ արուեստս 'ի գործ գրի և երէկ պատճառ եղաք որ երկու հարիւր սօլարէ աւելի շահիմ: Ուստի ինձ պարտք մը չունիք:

Ասոր վրայ իր աշխատութիւնը դարձեալ ձեռք առաւ նոյն իսկ առանց հրաւիրելու որ նստիմ:

— Պարոն Գրուդ, ըսի իրեն չոր և ծանր եղանակաւ մը, երէկ ձեր այնպէս վարուելուն պատճառը չեմ ուզեր զիմանալ, ինչ ծառայութիւն մը ըրիք դուք, հետեւաբար ձեզ պարտական եմ և կ'մնամ:

Երթալու կը պատրաստուէի երբ գլուխը վեր վերցուց նա և վրաս սեւեռեց մեծ ու սև աչքեր՝ որոնց վշտալիլ երեւոյթը ուշս գրաւեց:

— Տօքթօր, ըսաւ սպառեալ ձայնով մը, եթէ անպատճառ հատուցանել կ'ուզէք երեւակայական պարտք մը, ահա առիթը կը ներկայի ձեզ. ըսէք ինչ բոլորովին անկեղծօրէն թէ ունեցած հիւանդութիւնս ինչ է և որքան ժամանակ ունիմ ապրելու:

Ոտք ելաւ նա, ձեռքը սրտին վրայ գրաւ և յանկարծ կանգ առաւ, սաստիկ շնչարդելութիւն մը զինքը կը ճնշէր: Իր զարկը բռնեցի, շնչառութեանը ականջ դրի, կուրծքը զարկի և այնպիսի նշաններ գտայ՝ որոնցմէ աններելի էր խարուխ:

— Տօքթօր, ըսաւ Գրուդ, ճշմարտութիւնը կը պահանջեմ ձեռնէ: Երբ մարդ ինձի պէս սովորած է համատարած խոր ամեն մարդու բնէ, նոյն իսկ իրեն համար ալ գայն լինելու բարկութիւնը ունի: Ինչպէս ըլլալս զիմանալու պէտք ունիմ:

— Սրտի հիւանդութիւն մ'ունի, ըս զրոյն, որն որ անբուժելի ըլլալէ հետի է, փշախնձորի* սիկարներ ձեր ցաւերը կ'ամօքեն: Բայց եթէ բժշկուիլ կ'ուզէք մաքուր օդի, հանգարտ կեանքի, հողուոյ և մարմնոյ հանգստութեան պէտք ունիք, այսինքն այնպիսի բաներու՝ զոր լրագրի մը գրասենեակը անկարելի է գտնել:

— Շնորհակալ եմ, Տօքթօր ըսաւ ինձ նա, ձեր կարծիքը այս առտու ձիշգ իմ բժշկին տուած կարծիքին հետ համաձայն է: Պաշտօնիս յոգնութիւններէն պէտք եմ հրաժարիլ, և այս բանը որքան շուտով ընեմ այնքան լաւագոյն է: Եսնաքի մը երբէք իր ետևը չընայիր: Տօքթօր, լրագիրս գնոյ առէք, գուժարը վեց ամսէն կրնաք շահիլ: Եղաւ:

*Stramonium

— Օ՛, պողացի, շուտ կը լմնցնենք: Ես խմբագիրը ըլլամ, այդ փառքին համարը երբէք մտքէս անցած չէ:

— Մտածեցէք անգամ մը: Առաքինի մարդու մը համար ամենէ ընտիր արուեստն է: Միթէ մեր եղբայրները ճշմարտութեան և արգարութեան ճամբուն մէջ առաջնորդելէ դեղեցիկ բան մը կայ:

Լրագրասպետութիւնը այնպիսի պաշտօն մ'է որ հեռուէն չյարգուիր ամենեկին, բայց մօտէն չգիտեմ ինչո՞ւ ամենքս ալ քիչ մը համը առնել կ'ուզենք: Խմբագիրները դերասաններու հետ միևնոյն ընտանիքէ են, կ'արհամարհենք ու միանգամայն կը նախանձինք իրենցմէ: Այս թափառաշրջիկները մտացի են և մարդ անոնց քսուած աստի ինքզինքն ու ամբիկ կ'զգայ: Չկայ դեղեցիկ տիկին մը որ մեծ պշտողներու մօտենալով դո՛հ չըլլայ, չկայ քաղաքագէտ մը որ պատեհ ժամուն խմբագիրները չշողջորթէ՝ եթէ նոյն ինքը համաստրէն լրագիր շինողներու մէջ չսպրդի:

Աստի, ահամայ կ'զգայի որ Պ. Գրուզի առաջարկութիւնը իմ անձնասիրութիւնը կը զգուէր, հասարակաց կարծիքին առաջնորդ ըլլալու գաղափարը հաճե՞րի կու գար ինձ: Ինձ նման մարդ մը, ժողովուրդ կոչուող այս տղէտ և ապուշ ամբողջին սորվեցնելու անքան բաներ ունի: Միայն իմ արժանապատութեան զգացումը զիս արդիւնց որ այս խնդրութեան տեղի տամ:

— Լրագրի մը խմբագրութիւնը, ըսի իմ հիւանդին շատ դժուար բան է այնպիսի մարդու մը համար՝ որ այն արուեստին մէջ ծնած չէ:

— Ո՛չ, անկէ պարզ բան չկայ: Հոս քովս նստէք երկու ժամ և արուեստին գաղտնիքը կը սորվիք: Ըստ ինքեան ամեն ինչ մէկ կանոնի վրայ հիմնուած է, ըսել ճշմարտութիւնը, միայն ճշմարտութիւնը, բոլոր ճշմարտութիւնը:

Հետաքրքրութիւնս յաղթող ելաւ: Գեղին կաշիէ սայլիտի մը մէջ նետուեցայ, գաւազանս ծունկերուս մէջ տեղ առի և հիւանդ թևս կոթին վրայ դրի, տեղաւորուած իս պէս՝ սեղանին վրայ մոռցուած ծխատուփ մ'առի և Գրուզի երեսը նայելով:

— Սիրելիք իմ Արիստի, ըսի իրեն, ձեր սկզբունքը դեղեցիկ

է, բայց խօսքը մէջերնիս, միթէ չափազանց դեղեցիկ չէ: Խմբագրութեան մէջ կը կարծէի թէ սուտը ընդհանուր կանոնը և ճշմարտութիւնը բացառութիւնն էր:

— Ո՛ւր տեսած էք այդ բանը, տօբժօր Մաքիավելեան, կարելի է հին Եւրոպայի մէջ, Սպանիոյ, Ռուսաստանի, և Թուրքիոյ մէջ. ամեն տեղերն ուր մամուլը կառավարութեան ձեռքին մէջ մենապաշտութիւն մ'է, խեղճ խմբագիրները արտօնութիւն ունին վեց օր բան մը չըսել եօթերորդ օրը պաշտօնապէս սուտ ըսելու համար, Բայց ազատ երկիր մը՝ ուր ամեն ոք ուզածը կրնայ խորհիլ և խորհածը հրատարակել, սուտ խօսիլը ինչի՞ կը ծառայէ: Ճշմարտութիւնը մեր սպրանքը և հասարակութեան մենէ գնածն այն է: Ստեղծ, մեր վարկը կորուսնել և ամօթալի կերպով սնանկանալ է: Ամեն մոլութիւն կրնանք ունենալ բայ ՚ի մէկէն: Տեսէք Անկլիոյ Թայմը, փոփոխամիտ, հասոյիչ, կրքոտ է, բայց երբէք ստախօս չէ: Եթէ իր սուտը բռնուի, իր տէրը հարիւր հազար տօլարի հասոյթ մը կը կորուսնէ: Այդպիսի մեծ գումար մը կորսնցընելու համար մարդ ստախօս չըլլար. հաշուեգիտութեամբ ճշմարտախօս և շահագիտութեամբ առաքինի ենք:

Այս Ամերիկեան առաքինութիւնը զիս չէր շլացներ բնաւ, պատասխան մը կը փնտռէի՝ երբ տեսայ որ կուզի քիթ մը գոնէն կը մտնէր: Իմ պատուելի զինակիցն ու գրացին՝ Փօքս դատաստացն էր, որ յատակին վրայ սահելով մօտեցաւ և մեր ձեռքը բռնեց մտերմօրէն:

— Բարի՛ լոյս, սիրելի Գրուզ, ըսաւ խմբագրին ժպտելով: Պ. Լիթլ սեղանաւորին կողմէն կու գամ, ձեզի հետ խոշոր գործի մը վրայ խօսելու: Լրագրին համար երկու հազար տօլար շահ կայ, երկու հազար տօլար, կրկնեց նա բառին ամեն մէկ վանկը շեշտելով:

— Լաւ, պատասխանեց պաղութեամբ խմբագիրը, այդ ընկերիս գիտնալիք բանն է:

Այս ըսելով զանդակը զարկաւ նա:

Գուռ մը բացուեցաւ և անկէ գժուարութեամբ ներս մտաւ խո-

չոր մարդ մը, որու ահագին մարմինը, կնտակ զլուխը, մեծ ա- կանջներն ու գուրս յցուած ախանները՝ հագուած փղի մը երևոյթը կու տային իրեն :

— Բարի լոյս, տօբթօր Սմիթ, պուսայ քրքիչ բառնալով, բա- րի լոյս. պատաստեալ թնէդ կը ճանչեմ՝ զձեզ : Երէկուան ծանու- ցումին ինչ կ'ըսէք, սիրելի Այնկինաթոս : Այս օրուանին չափ չէր արժեք : Գրուդ, չորս էշերը ծախուեցան, ճինօթիօ կը գրէ ուր ծանուցումը ստակը կրնանք առնել : Բարի լոյս, Քօքս, այնչափ նի- հար ես որ զքեզ տօբթօրին շուքը կը կարծէի : Չեր՝ այսինքն դա- տասայններու խիղճը այնքան փափուկ է որ անոր խայթերը զձեզ կը նիհարցընեն : Ինչ կը բերես մեզ :

— Ահա եղելու թիւնը, ըսաւ Քօքս, Պ. Համպրիլի կատակներէ շատ դո՛հ չըլլալով, Լիթլ սեղանատունը Մեքսիկոյի կառավարու- թեան համար փոխառութիւն մը կ'ընէ, սկզբնաորութեան համար տասը միլիոն տօլար : Ամեն մէկ բաժնետոմսի արժէքը երկու հարիւր տօլար է և հարիւր վաթսուցի կը ծախուին, տարեկան վիճակահա- նութեամբ վճարելի են լիովին : Հարիւրին տասը տոկոս և հարիւ- րին քսան դրամադրիի շահէն պիտի տացուի, պատուական գործ մ'է :

— Լիթլի համար, ըսաւ Համպրիլ խնդալով : Եւ ծանուցումը պէտք ունիք *Mundus vult decipi, ergo decipiatur.** Անհոյ ե- ղիր, Քօքս, լրագրին մէջ պզտիկ ու աղուորիկ տեղ մը կու տանք քեզ : Չեր Մեքսիկեան փոխառութիւնը շատ լաւ պիտի փայլի Հօլ- լուէի սպեղանիին ու Վօրրիսընի գեղահատերու մէջտեղ :

— Սակարկութիւնը լմացընելու համար եկած էի, ըսաւ Քօքս :

— Գո՛ն ես ծանուցումներու սակը հարցընողը, մէկ խօսքը մէկ ստակ է, հարիւր խօսքը մէկ տօլար, այս հասարակաց անտառին մէջ խօսելու զինը կարած է, քաջ զիտես :

— Ներէ, սիրելի Համպրիլ, վրայ բերաւ Քօքս աչքը թարթե- լով, միտքս չհասկըցար : Գինի վրայ խօսելու ատեն՝ սակը չէր անց-

* Աշխարհն իսբանել է՝ ուզէ, զենքը խաբէնք ուրեմն :

ներ մպքէս : Լիթլ կը բաղձար որ այս օգտակար ու հայրենասի- րական բաժանորդագրութեան ծրագիրը՝ նոյն իսկ լրագրոյն մար- մնոյն մէջ գրուի՝ որպէս զի ծանուցումը մ'երևոյթը չուներայ : Պէտք եղածը կը վճարենք : Միտքս կը հասկնաս :

— Բարով չհասկընայի, վարպետորդի պարոն, պատասխանեց գէր մարդը առանց ծիծաղն ընդմիջելու : Բայց ինչպէս որ ձերն Բլօթ կ'ըսէ,

Հոնէրը որսի

Չէն երկուք բռնի*

Հատ ուշ արթնցեր ես, անխիղ Քօքս : Ովկիանոսին այս կողմը այսպիսի խոշոր թակարթով մարդ չորսացուիր. այդ բանը Եւրո- պայի միամիտներուն յարմար է : Ասկէ դատ՝ խնդիրը ծանուցում- ներուս վրայ չեղածին պէս՝ պէտք ես ընկերոջս դիմել : Հասկըցա՞ր մենէ ինչ կը խնդրեն, սերելի բարեկամ :

— Հաա լաւ հասկցայ, պատասխանեց Գրուդ ընդհատ ձայնով մը : Պ. Լիթլ իր փոխառութիւնը քալեցընելու համար իմ պատ- ւոյս պէտք ունի եղեր և իմանալ կ'ուզէ որ քանի՞ կը ծախուիմ :

— Սիրելիդ իմ Գրուդ, իրերը ծուռ կ'ըմբռնես, ըսաւ Քօքս ո- ղորպիլի եղանակաւ մը, և Բլիմութի ուխտաւորներէ աւելի խօտա- կրօն կը դառնաս : Չենէ այնպիսի բան մը կը խնդրենք զոր արդէն ընելու խոստացած են ուրիշ լրագիրներ, Լաւանք (LYNX), Արեգ- ակ, Բե՛ն մը փոխառութիւնը պիտի գովեն, գոնէ կը յաւատմ որ գովեն, սակարկութեան վրայ ենք :

— Քանի որ այդ լրագիրներն ունիք, պատասխանեց Գրուդ, ինչ հարկ կար հոս դալու : Ինէ ինչ պէտք ունիք :

— Հատ բնական պատճառ մ'ունէինք, պատուական բարեկամդ իմ, ըսաւ Քօքս մեղրոտ ձայնով մը : Պօրոսային մէջ միայն Բուրդ- Էան-ճե-ր-ի-ն վրայ վստահութիւն ունին, հետեւաբար խիստ բնա-

* Stultitia est venatum ducere invitos canes, բարս առ բարս՝ «Իտենլուրիւն է շուճերը ակամայ որսալ սալ» կը նշանակէ :

կան էր որ զձեզ մեր կողմը շահելու պարտաւորէինք : Ասոր համար ամեն զոհողութիւն կ'ընենք :

— Պարոն Ֆօքս , պոռայ խմբագիրը յուզմունքէն գոյնը նետած , դուռը աւասիկ է :

— Ծառայ եմ ձեզ , պարոն Գրուդ , ըսաւ դատասացը կծիկը գնելով :

— Բայց ես ձեր ծառան չեմ , պատասխանեց ծուխս : Այդ փոխառութեան ինչ ըլլալը վաղը պիտի իմանամ ու գրեմ :

— Սիրելի պարոն , ըսի իրեն պաշտօնիս հեղինակութեամբը , այդ ընեմ ըսելով աւելի պիտի հիւանդանաք , զոչ ոք պիտի արթընցընէք և մահացու թշնամիներ պիտի վաստկիք :

— Թշնամի վաստրկելը մեր փառքն է , զինուոր ենք և մեր տեղը կրակին մէջ է :

Այս ըսելով երկու ձեռքով իր կուրծքը բռնեց նա ու սայլիտին վրայ երկնցաւ :

— Տօքթօր , պոռայ Համպրի , հասիք . կը տեսնէք որ շունչը կ'սպառի : Այս ապիրատ մարդիկներու համար այսչափ յուզուելը կ'արժէ : Գրուդ , ինքնամոլ շուն , դիտմամբ կ'ընես որ մեռնելով սնանկացընես զիս՝ որքան հին բարեկամ եմ : Երեսս նայէ տեսնեմ :

Գրուդ ձեռքն անոր երկնցուց ժպտելով տրտմադին : Այս խեղճ Պօզէմին* համար՝ որ իր կեանքը ամենէ քիմբական ու ամենէ ցաւալի պաշտօնին կը զոհէր , տեսակ մը զութ զգացի ակամայ :

* Քրաններէն այս անունը կը փայտի անհոգի և սրէպ շուայրոս քայց ուսումնական երէրասարդներու , Պօզէմը բան մը չունի և անեցածովը կ'այրէ , այս կարէին էլ վերաբերին Բարեղի ուսանողները : Ծ . Թ .



Երբ տաղնապն անցաւ ու հիւանդը սխաւ շունչ առնուլ , Համպրի իր երկու արմուկները սեղանին վրայ կ'ընցուց և ձայնով մը՝ որու չյաջողեցաւ զուարթ եղանակ մը տալ ,

— Իմ սիրելի Գրուդ , ըսաւ , ասկէ ետքը ճշմարիտ կոչումիդ դէմ մը դնեմ ակ , քարոզիչ եղիր : Մուլութիւնները անխօսիկ են և անձայն ամեն յանդիմանութեանց կը տանին : Ամեն կիրակի քարոզիչը զանոնք կը մտրակէ իր մերձաւորին ուսերուն վրայ՝ յետորոյ հանգարտ ու խաղաղիկ կ'երթայ կը ճաշէ կամ կ'ընթրէ : Բայց այս երկոտանիները որ երկու թաթերու վրայ քալելով ինքզինքնին մարդ կը կարծեն , այն կլոր զլխարկով գայլերը , այն ակնոցաւոր աղուէններն , փողպատեալ կապիկներն , սևազդեստ սագերը , անոնց միայն անգթութեան , աղահալութեան , ծլութեան և ապշութեան վրայ խնդալու համար մօտենալու է : Զանոնք բանաւոր կարծողը սրտաբեկ կը մեռնի :

— Ահա իմ յաջորդը , վրայ բերաւ Գրուդ ձեռքէս բռնելով , իմ սիրելի Համպրի , տօքթօրը քեզի համար լաւ ընկեր մը պիտի ըլլայ :

— Տօքթօրը , ըսաւ Համպրի , անկարելի բան , այժեամի երես մ'ունի նա :

— Ուրեմն ո՞րն է , զոչեցի , այն անասունի տեսակը՝ որմէ խմբագիրներ յառաջ կու գան :

— Լաւ խմբագիր մը ըլլալու համար , պատասխանեց Համպրի ծիծաղելի ծանրութեամբ մը , շունի գէմք ունենալու է , շունի հօ-

տառութիւն, շունի լրբութիւն, շունի համարձակութիւն և շունի հաւատարմութիւն: Շան դէմքը պէտք է խարդախները վախցընելու, շան հոտառութիւնը պէտք է անոնց խարդախ ըլլալը 'ի հեռուստ զգալու, շան լրբութիւնը հարկաւոր է անոնց սպառնալիքներու հակառակ ետևեն հաջելու, շան մը համարձակութիւնը հարկաւոր է վզերնին ցատկելու, վերջապէս շան հաւատարմութիւնը կարևոր է մեկնելու, կանց առնելու և ճշմարտութեան առաջին կոչումին վերագառնալու համար:

— Ծանուցումներու արդոյ անօրէնդ, ըսի անհամբերութեամբ, մտքէս չէր անցներ բնաւ որ ճշմարտութեան համար այսպիսի կենդանի և անշահախնդիր համակրութիւն մ'ունենաս:

— Ինչո՞ւ ուրեմն, իմաստունդ Էսքիւլար, վրայ բերաւ նա խեղճ կատակ եղանակաւ մը: Ար կարծես թէ երկու երկու ալ չորս ընելը չեմ գիտեր: Ծանուցումներու արժէք տաւորն ի՞նչ է: — Ընթերցողներու թիւը: Ընթերցողներն ի՞նչպէս կը վատարկուին: — Համարումով: Միթէ հասարակաց կարծիքը խաբելով կրնան հասարակաց կարծիքը կամ համարումը շահիլ:

«Ճշմարտութիւնը լրացրոյն մարմինն է, և ծանուցումները միայն անոր բլբլեկները, ծիծաղելի հաղուստ՝ որ ստութիւնն և ունայնասիրութեան ծնունդ առած է: Desinit in piscem mulier formosa superne*» Արձ է յանցանքը: Հասարակութեան ողբոյն և բարի ճաշակին:

— Պարոն, ըսի իրեն խօսքերուս ոյժ տալու համար ծուխի տուփը ձեռքերուս մէջ դարձրնելով, ամեն ճշմարտութիւն ըսելու յարմար չէ: Կան ճշմարտութիւններ որ ընկերութիւնը կը յուզեն ու կը յօշոտեն:

— Այո՞, սիրելի տօբթօր, ճշմարտութիւնը յեղափոխական է:

— Աւերջապէս, պոռացի, կը խոստովանիս:

— Անշուշտ: Կայ՛ վերանորոգումը ինչ զօհողութիւններով խրղճերու աղատութիւն տուաւ:

* Կեղեցիկ կնի մը որ յուրեւ զուրկ էր կը վերջապէս:

— Ճիշտ է, ըսի դաւազանս զարնելով, ճիշտ է:

— Հապա աւետարանը, վրայ բերաւ Համալը: Ի՞նչ տակուրացութիւն բերաւ: Ամբողջ քաղաքակրթութիւն մը տապալեցաւ, Աբամազդ գահընկէց եղաւ: Կեսարներն արհամարհուեցան, կործանեցան: Ի՞նչ լաւ պիտի ըլլար եթէ իր ծնած ատեն խղդէին այդ ճշմարտութիւնը որ աշխարհ մը կ'սպաննէր ու նոր մը կ'ստեղծէր: Ի՛՛հ, չեն խօսիր, սիրելի Հիբօքրամը: Հապա Ֆրանսայի յեղափոխութիւնը:

— Պարոն, նուիրական բաներու չղպինանք, պոռացի: Առանձնաշնորհութիւններու դիմադրութիւնն ծնաւ բոլոր չարիքը: Խոստովանէ որ սարսափելի ճշմարտութիւններ կան:

— Այո՞, ինչպէս որ լոյսը զողերը կը սարսափեցընէ:

— Կան ճշմարտութիւններ որ ասելի են նոյն իսկ զանոնք լսողներուն:

— Այո՞, երբ այդ ճշմարտութիւնները գինովութիւնը կը խուզեն կամ խղճի խայթը կ'արթնցընեն:

— Կան ճշմարտութիւններ որ նոյն իսկ զանոնք յայտնողին համար վտանգաւոր են:

— Այո՞, երբ այդ ճշմարտութիւնները լսողները վերիի և սարուկի մը սիրտն ունին:

Կունակս դարձուցի այս անամօթ իմաստակին՝ որ խոհեմ նախապաշարուածներու գէմ յարձակելէ չէր վախնար, և կը համարձակէր թօթուել բարձր՝ ուր աշխարհս երկու հազար տարիէ 'ի վեր խաղաղութեամբ կը ննչէ, խօսքս Գրուգի ուղղեցի որ դարձեալ թուղթ կարելու ետև էր ու կարծես թէ զմեզ մտիկ չէր ըներ:

— Ինչի՞ վրայ կը մտածես, սիրելի հիւանդս, ըսի իրեն, արդեօք մեր խօսակցութիւնը քեզ կը ձանձրացընէ:

— Տօբթօր, պատասխանեց նա ժպտելով, երևակայութեանս լրբութեանը ներէ, Պիղատոսը միտքս եկաւ: Այս պատկառելի գործակալին՝ Քրիստոսի Ի՞նչ է ճշմարտութիւնը ըսելը՝ և առանց պատասխանը սպասելու գուրս ելնելը կը յիշէի: Տիրերիտս Կեսարու օրովը՝ լաւ կառավարիչ մը կ'ըլլայի որ Յուզայի երկրին:

Ի՞նչ, շարունակեց նա, հետզհետե վառելով, միթէ չե՞ս հասկընար որ մեզ՝ մարդկանցս համար, ճշմարտութիւնը կեանք է ու ստու-
թիւնը մահ: Բողոքաբեկ երջանիկ, լուսաւորեալ, առաքինի, ողոր-
մասէր երկիրները փնտռէ անդամ մը, և պիտի տեսնես որ այն,
երկիրներն են անոնք՝ ուր ամեն ոք իրաւունք ունի ճշմարտութիւնը,
ամբողջ ճշմարտութիւնն ըսելու՝ առանց անձերու համար ակնա-
ուութիւն, նախապաշարութեան, առանձնաշնորհութեան և եղծում-
ներու համար՝ պատկառանք ունենալու:

Նկատէ Անկլիոյ մեծութիւնը, Ամերիկայի բարգաւաճումը, Աս-
տրալիայի նորածին հարստութիւնը: Ի՞նչ է այն զօրութիւնը որ
ութտան ասրուան միջոցին մէջ մեր Միացեալ-Նահանգներու ե-
րեք միլիոն բնակիչներու թիւը՝ երեսուն և մէկ միլիոնի հանեց:
Գիտցած ըլլաս որ ճշմարտութիւնն է: Թո՛ղ քաղաքագէտները գրու-
թիւններ ու վարչական ձեւեր հնարեն ու կազմեն և դուն գիտէ որ
ազատ ժողովուրդներու կենդանի հիմնադրութիւնները որո՞նք են:
Գպրոցները, ընկերութիւնները, բեմասացութիւնը, մամուլը և
ֆի՛նչ են, եթէ ոչ նոյնքան գործիւններ ճշմարտութիւնը տարածելու՝ և
զայն ամեն սրտերու սիրելի ընելու համար: Ժողովուրդի մը լրա-
գիրները համրէ և քաղաքակրթութեան աստիճանին մէջ անոր կար-
գը կը գանես, վասն զի այնպիսի ջերմաչափ մ'է անի որ երբէք
չխաբեր: Ինչո՞ւ: Արտհետեւ ճշմարտութիւնը ուրիշ բան չէ՝ բայց
եթէ ուրիշ անունի տակ օրէնքը՝ որ բարոյական աշխարհը կը կա-
ռավարէ, որտհետեւ ինչպէս իրերու՝ նոյնպէս մարդերու մէջ բնա-
կան յարաբերութիւններ կան: Այս յարաբերութիւնները ճանչել
և յարգելը, ճշմարտութիւնը՝ ու լաւ ևս ըսելով՝ նոյն իսկ զՅատուած
յարգել ու ճանչել է, որ աշխարհիս մէջ ներկայ է իր ամենակա-
րող կամեցողութեամբը:

— Միրելի պարոն Գրուգ, ըսի խօսքերու այս մակընթացութենէ
քիչ մը յուզուած, Համպրի իրաւունք ունի, դու քարոզ տալու
համար ծնած ես: Այլ փորձառութիւնը շատոնց սորվեցուցած է
ինձ՝ որ գործնականը տեսականին հակառակն է: Ա՛րքան ճշմարտու-
թիւններ կան որ թէ՛ և հեռուէն սրանչելի՝ գործադրութեան ատեն

կը մարին: Ամեն օր կը լսեմ՝ որ մարդիկ եզրայր են, թէ կինը՝
էրիկ մարդուն հաւասար է, թէ վարչութիւնները ժողովուրդներու
համար շինուած են . . .

— Եւ այդպէս ըլլալուն կը տարակուսիս:

— Ոչ, չեմ տարակուսիր *Դեմոկրատի*, այլ այս գեղեցիկ ա-
ռածները՝ ՚ի գործ գնելու ջանս անդամ մը՝ և նայէ ո՞ր կը հաս-
նիս:

— Աւետարանի թագաւորութեան կը հասնիմ, պատասխանեց լրա-
գրապետը եզական ծանրութեամբ մը: Թէ որ դու անկէ լաւագոյն
խտէական մ'ունիս՝ յայտնէ, բայց թէ որ անոր տեղ գնելու բան
մը չունիս, Մէֆիսթոֆիլիսի ցաւալի դերը մի խաղար, վասն զի
մարդկութիւնը հաւատալու և յուսալու պէտք ունի:

— Նայէ ինչ կ'ըսեմ, սիրուն տօբթօրը՝ որ տեսականին չես
հաւտար, պողաց Համպրի լիբը եղանակաւ մը, խօսեցած ատենդ
գիտես ինչ կը զրուցես, հիւանդներու գ դարման մը տուած միջոցիդ
գիտես ինչ կ'ընես . . . Մի բարկանար. թէ որ գիտես, ահա
նաև այն ատեն՝ տեսականն ՚ի գործ կը գնես, եթէ չես գիտեր,
ինչ իրաւունք ունիս չորամարանելուդ վրայ այդքան հպարտ ըլ-
լալու:

Թիկնաթոռիս մէջ ընկղմեցայ, թեկերս ու ստքերս խաչաձև ծալ-
լեցի, և լաւ մը Համպրիկի երեսը նայելով:

— Պարոն, ըսի իրեն, լըջօրէն միտ գիր ինձ եթէ երբէք լուրջ
բան մ'ընելու կարող ես: Դարձեալ կ'ըսեմ որ տեսականին մէջ
ճշմարտութիւնը՝ կը սիրեմ, կը սիրեմ զայն՝ որքան որ դու ալ
կրնաս սիրել, այլ մամուլը ճշմարտութիւն չէ: Անոր մէջ կիր-
քերու, նախատինքներու և ստութիւններու այնպիսի խառնուրդ
մը կայ՝ որ փափուկ սիրտ մը կը զզուի: Այս երկրին մէջ տիրող
վայրենի ազատութիւնը իմ ճաշակին յարմար չէ, ասոր վրայ եր-
կար ատեն մտածեցի, և եթէ զիս մտիկ ընելու զիջանիս, պիտի
ըսեմ քեզ թէ ինչպէս կարելի է մամուլը կազմակերպել, ճշմար-
տութիւնը իմաստութեամբ վարել, չարոյն ստատիկ ժպրհոթութիւնը
սանձելով միայն բարոյն ազատութիւնը թողուլ:

— Շուները հաջելէ արդիլէ , պոռաց Համպրիլ քրքանք մը ձգելով , շրջանակի քառանկիրնութիւնը գտնուեցաւ :

— Կ'ենթադրեմ , շարունակեցի առանց այս յիմար կատակին պատասխանելու , կ'ենթադրեմ լուսաւորեալ , բարոյական , հայրական վարչութիւն մը որ միայն իր հպատակներու բարօրութիւնը մտածէ :

— Տօքթօր , ատիկա տեսական է :

— Ոչ , պարոն , ատիկա գիտողութիւն մ'է որ կ'ընեմ : Այս վարչութիւնը խեղացի պաշտօնեաներ ունենայ . . .

— Կ'իմանամ , ըսաւ անտանելի ծաղրողը , լուսաւորեալ , բարոյական , հայրական և միայն իրենց կառավարեալներու աղէկութիւնը մտածող պաշտօնեաներ . . .

— Այո , պարոն , և այս պաշտօնեաները իրենց հրամանին տակ՝ հազարաւոր գործակալներ ունենան . . .

— Ամենքն ալ լուսաւորեալ , բարոյական , հայրական և , վերջապէս սև զգեստով հրեշտակներու բանակ մը :

— Աստուծոյ սիրուն , Համպրիլ , լուէ , պոռաց Գրուգ : Թող որ իր բէրիններու պատմութիւնը լմնցընէ . աօքթօր , մտիկ ընելու ատեն կը կարծեմ թէ Գաղղիացի մը կը լսեմ որ վճիռներ շարելուն և բաւերը իրարու ետև կ'ապելուն համար՝ կ'երեակայէ թէ կը տրամարանէ :

— Պարոն Գրուգ , պատասխանեցի չորութեամբ , զիտնաս որ իմ բերնով բանաս որոթիւնը և փորձառութիւնը կը խօսին քեզ . զիս մտիկ ըրէ , ճշմարտութեան աւանդը , այս իմաստուն կառավարութեան՝ որ ամեն բան զիտէ , ամեն բան կը տեսնէ , ամեն բան կը լսէ , կը յանձնեմ , անոր մենավաճառութիւնը իրեն տալու համար չէ . վասն զի ազատութեան բարեկամ եմ , այլ օրինաւոր , սահմանաւոր և բարոյական ազատութեան : Տպագրիչներու թիւը կը նուազեցընեմ , այնպէս որ տպագրութիւնը խոհեմ զգուշաւոր զբարնութիւն մը՝ և պահպանողական պաշտօն մ'ըլլայ . յետոյ լրագրիչներու թիւը կը սահմանաւորեմ քանի մը բեմեր հաստատելու չափ՝ ուրկէ ճշմարիտ ամպիտաններու պէս , միայն չափաւորութիւնը և պարկեշտութիւնը թոյլտուութիւն ունենան խօսելու :

Ինչպէս որ քահանաներ կան , անանկ ալ խմբագիր գտնուին , այսինքն ճշմարտութեան պաշտօնեայնէր՝ որ իրենց յատուկ դրօշմն ու նշանաբանը կառավարութեան ընդունին : Թէ որ պետութեան իմաստուն վերակայութեանը հակառակ՝ լիբը խմբագիր մը իր պարտաւորութեանց ծանրութիւնը մոռնալով , պէտք եղածին չափ չյարգէ իշխանութիւնը՝ որ արգարութեան և ճշմարտութեան անձնաւորութիւնն է , այն ատեն չեմ գիմեր երդուելոց ատեանին որու ձեռքը ծանր է և շատ անգամ յանցաւորները կը փակցընէ իր մատերու մէջէ , այլ ստութիւնը մտրակելու՝ և ի հարկին գեռ չծնած զայն արդիլելու սուրբ պաշտօնը՝ այն միշտ հայրական և բարեխնամ վարչութեան կը յանձնեմ :

Միշտ խոհեմ , լուսաւորեալ , անշահախնդիր և իրեն օգտակար կամ վնասակարը ուրիշէ աղէկ դիտող վարչութիւնը՝ պէտք է տղիտութիւնը և յանդգնութիւնը պատժել , նորածին ընդդիմութիւնը պիտի խղզէ այն՝ ինչպէս որ Հերակլէս օրօրանին մէջ Օձերը կ'խղզէր : Այս ճարտար առողջապահութեան շնորհիւ՝ լրագրիչները անմեղ սնունդ մը՝ և թոյնի աեղ դարման մը կը լլան : Մամուլը վարչութեան ձեռքը ջահ մը կ'ըլլայ և հրդեհէ չվախցուիր : Հարկաւոր եղող նախապաշարութեանը , օգտակար սխալները կը յարգուին , ճշմարտութիւնը պետութեան պիտոյից և ժողովուրդներու ոյժին վրայ կը չափուի և թէ դուրսը նոր վարպետութիւն մը ծնունդ առնէ՝ կ'սպասուի որ խաղաղասէր և միայն հանգստութեան փափաքող հոգիները շիտօված՝ նախ իր ծննդեան երկրին բաղդը շինէ : Ահա իմ տեսութիւնը այս է , դու ի՞նչ կ'ըսես , պարոն Համպրիլ :

— Շտապէ՛ք , հանա՞ք վարա՞ք , պոռաց նա ուսիս այնպիսի բռնցի հարուած մը իջեցընելով՝ որ եզի մը եղջիւրները կընար խորտակել : Ինչ աղէկ բան է ճարտասան ըլլալը , մարդ՝ բսելիք պարապ բան մը կը գտնէ : Տեսայ խսկոյն որ իր հանդիսաւոր եղանակաւ սա վարպետորդին՝ ինձի պէս ծերուկ եանքի մը պիտի ծաղրէր :

— Պարոն Համպրիլ , ըսի իրեն ուս շփելով , այդ բիրտ առարկութիւնները չեմ սիրեր : Կոփելը պատասխանել չէ :

— Նմանապէս խղզելը , գոնեց խմբագիրը ծիծաղելով : Շարու-

նակէ, տօբթօր, կարծածէս աւելի զուարճալիես: Verba placent et vox #: Բայց մնաս բարև, ահա լրագիրը լմնցնելու ժամն եկաւ հասաւ, ժամանակը ստակ է, դիս կը սնանկացընես:

Գրուդի հետ մինակ մնացած ատենս՝ հարցուցի իրեն թէ յայտնած գրութեանս մեծութեանը վրայ համոզուած չէր, թէ միթէ կըրնար համեմատութեան կշիռի մէջ դնել Ամերիկեան մամուլին անկարողութիւնն ու խռովասիրութիւնը այն ճնշեալ կազմաւորութեան հետ՝ որ քիչ ժամանակի մէջ աշխարհիս ամենէ եռանդոտ ժողովուրդը պիտի սանձէր և չափաւորութեան սովորութիւնը և անմեղ ազատութեան մը ճաշակը տար անոր:

— Տօբթօր, ըսաւ նա քաղցրութեամբ, ես ալ Համպրիկի կարծիքէն եմ. մեր պարզմտութեան վրայ դու կը խնդաս: Այդ վարդապետութիւնը գոր դու իբր նոր դիւտ մը կը ներկայացընես, շատոնց կը ճանչեմ: Հաւատաքննութեան վարդապետութիւնն է, ճըշմարտութիւնը պաշտօնական բան, Instrumentum regni և Եկեղեցիէն ու վարչութիւնէն մենավաճառութիւն դարձած: Երեք դար է որ Առտեր այդ վտանգաւոր երազներու վրայ փչեց և ամեն քրիստոնեայ իր խղճին և իրաւունքին տէրն ըրաւ: Աշխարհիս մանկութեան ատեն՝ ճշմարտութիւնը ելաւ Բանտօրի տուփէն շատ մ'ուրիշ բարիքներու հետ՝ որոնք անյաջող ձեռքերու մէջ չարիք դարձած են: Ճշմարտութիւնը փնտռելը ամենուն գործը, և զայն գրաւել և ոչ մէկուն իրաւունքն է:

«Բաւերով մի խարտիր, կառավարութիւն, պաշտօնեայ, գործակալ բաժնեակ ինչ են, եթէ ոչ մարդեր՝ որոնք ոչ մենէ աւելի անսխալական և ոչ աւելի գիտուն են: Չանոնք ճշմարտութեան բաշխիչները ընելը երազ մ'է: Ճշմարտութիւնը ամենուն է, ինչպէս օդն ու լոյսը. միայն մէկ բան կայ կարելի, այն է մարդերը արդիւիւ չէ թէ խորհելու այլ խօսելու: Այսպիսի գարշելի գիւտէ մը ո՞վ շահաւոր կ'եղնէ: Կառավարութիւնը: Առաջին զոհը այն կ'ըլլայ ընդհակառակը: Զինքը պիտի խարեն անդադար, ափ մը

* Կը սխալեմ որ խօսեցը և յայնը:

խառնակիչք բաւական կ'ըլլան ամենէ առաքինի դատաւորը հրապուրելու և զան ամենէ յիմար արկածներու մէջ ձգելու համար: Ասկէ զատ՝ չէն տեսներ որ կառավարութեանդ չարիք ընելու ամեն կարողութիւն կու տաս՝ բաւական է որ դէշ արամարանելու հոգ տանի:

«Միւս կողմէն՝ միթէ քաղաքացիք կը շահին: Քանի որ հասարակաց բաները իրենցը չեն, անոնցմէ կը խլես կեանքի մէջ գտնուած ամենէ աղիւ, ամենէ գեղեցիկ ու ամենէ մեծ իրերը, այսինքն հայրենիքի սէրը ու ազատութեան արիփք: Աւերցուր բեմի և լրագիրներու յուզմունքը, ընկերութիւնը ոչ այլ ինչ է՝ բայց եթէ նիրհուն ջուր մը՝ ուրիշ ասպականութիւն և մահ յառաջ կու գայ: Միթէ կ'ապահովցնենս դանէ նիւթական բարօրութիւնը՝ միակ խայծը որով կը խարուի ամբօխը: Ընդհակառակը հարստութիւնը ազատութեան արդիւնք է: Միայն այն երկիրներու մէջ կ'անքի ապահովութիւն, զանձային գործողութիւններ, առուտոր և ճարտարութիւն կայ՝ ուր կը վտան այս լրագիրները՝ որոնց ձայնը կը նեղէ զքեզ: Առութիւնը տխմարներու յաղթութիւնն է, մութը առաքինի մարդերու թագաւորութիւնն է, լոյսն, ազմուկը և կեանքը մեզ ձգէ: Յիշէ որ Հռոմի մէջ ալ բեմերու շատիստութեանց վրայ կը գանդատէին, օր մը Սիլլա լուեցուց գանոնք՝ ի մեծ բերկրութիւն ճարտասաններու, և այն օրէն սկսաւ նուազութիւն (decadence) մը որ մէ զաշխարհս չկրցաւ փրկել նոյն իսկ քրիստոսնէութիւնը:

— Ներէ, պատասխանեցի իրեն մեր վիճաբանութեան կերպարանափոխ ըլլալուն վրայ զարմանալով, քաղաքականութեան մէջ փիլիսոփայաբարը դոտած ըլլալ չեմ համարիր ինքզինքս: Ամեն գրութիւն իր զեղծումն ունի, համեմատութեան խնդիր մ'է: Խոստովանէ որ ձեր լրագիրներու լեզուն սարսափելի է և անոնց կատաղի համարձակութենէն աւելի սոսկալի չարիք չկայ:

— Տօբթօր, Աւետարանը զիտեն ինչ կրտէ, Ծառն ՚ի պտղոյ իւրմէ ճանաչի: Ցուցուր ինձ երկիր մը՝ ուր Ամերիկայէ աւելի լուսաւորութիւն, ողորմասիրութիւն ու նիւթական բարօրութիւն գտնուի:

— Ամեն կողմ գայթակղութենէ ուրիշ բան չեմ տեսներ, պա-

տասխան տուի : Ընկերութեան նոյն խնկ հիմերը կը վիւրին այս շարժուն աւազին մէջ զոր ռամկագետութիւն կը կոչէք : Ինչ կը յարդէք նայիմ — կրօնը : Լաւ , թող քարոզիչ մը իր պարտաւորութիւնը մոռնայ , իր վարքը թեթեւայ և ահա իսկոյն քսան խմբադիր ինդալու կ'սկսին , Նոյ նահապետին անարժան որդւոյն նման՝ փոխանակ հասարակութեան տեսութենէ : գաղտնի պահելու տկարութիւն մը՝ որու ամօթը Եկեղեցւոյ վրայ կը ցայտէ :

— Ամօթը , ըսաւ Գրուգ , այն եկեղեցւոյն համար է , որ յանցաւորին դատը կը պաշտպանէ և չէ թէ այն եկեղեցւոյն՝ որ ասպականեալ անդամ մը իրմէ հեռի կը նետէ :

— Միթէ արդարո՞թիւնը կը յարդէք : Տակաւին երէկ , շնական խտտութեամբ կը յարձակէիք դատաւորի մը վրայ՝ որ իր նկզարտութեան մէկ միջոցին՝ չդիտեմ՝ ո՞ր ստահակը կը յանդիմանէր խտտի . ինչպէս կ'ուզէք որ դատաւորը յարդուի , երբ իրբն անսխալ ջճանչցուի ձեր անի :

— Արդարութիւնը , ըսաւ Գրուգ , ամբաստանելոյն համար եղած է , և չէ թէ ամբաստանեալը արդարութեան :

— Ստորին պաշտօնեայ մը , շարունակեցի , եթէ իր մասնաւոր արտօնութենէ կամ իրաւունքէ դուրս դորձ մը ընէ , եթէ դիպուածով օրէնքը մոռնայ , անդու շարար անմեղ մը բանտարկէ , ահա իսկոյն տասը լրագիր կ'սկսին ունալ բռնաւորութեան դէմ , լուսնի գէմ ունայող շունբրու նման , երկիրը կրակի կու տան տրուպ թշուառականի մը , ինչ գիտեմ , մուրիկի մը կամ գոշի մը համար՝ որ բանտ նետուեր է աւանց պատշաճ եղող ձեւերն 'ի դորձ դրուելու :

— Իրաւունք ունին , ըսաւ Գրուգ , յետին թշուառականի մ'ազատութիւնը՝ ամենուն գործն է : Օրինաւոր ձեւերը բռնարարութեան պէտ՝ ամեն քաղաքացիի համար սպառնալիք մը կայ : Այս բանս չդիտողը ազատութեան ինչ ըլլալը չդիտեր :

— Միթէ հարկ չէ՞ երբեմն օրէնքի արձանը քողարկել և երկիրը փրկել բժախնդիր օրինաւորութեան մը ներհակ :

— Տօթթօթ , Պիղատոսին համար համակրութիւն մը ունիս դուն :

Ան ալ բժախնդիր օրինաւորութեան մը առջև կայ չառաւ և լաւագոյն համարեց անմեղ դատապարտել՝ քան թէ իր պաշտօնը 'ի վտանգի դնել : Աւարպետ մարդ մ'էր նա , և չզիտեմ ինչո՞ւ աշխարհս այնքան խիստ է անոր նկատմամբ :

— Եւ այսպէսով գործն ո՞ր կը հասնի , ըսի Գրուգի պաղտութենէ ևս քան զևս զայրացած , տասնեակու կամ տասնեակնոց լրագիր ունիք որոնք հասարակութեան կարծիքներու և հասարակագետութեան աէր գարձած են :

— Ինչ տասնեակնոց լրագիր , ըսաւ Գրուգ զարմանալով , այդ բտելով ինչ կը հասկընաս : Երեք հարիւր լրագիր ունինք՝ և այսքանը քիչ է մէկ միլիոն վեց հարիւր հազար հոգւոյ համար : Պօսթի մէջ՝ որ երկու հարիւր հազար բնակիչ ունի , հարիւր լրագիր կայ , իրաւ է որ Պօսթօն՝ խտտակրօն քաղաք մը ըլլալով՝ իր բնակիչները՝ քաղաքակրթութիւնը և ազատութիւնը Բարեղէ տարբեր կերպով մը կ'ըմբռնեն :

— Երեք հարիւր լրագիր կայ , գոչեցի այս ահապին թիւէն զարմացած : Ան ատեն հասարակաց կարծիքը ո՞վ կ'ուղղէ և կը կառավարէ : Ով որ ուղէ , առանց պաշտօն ունենալու կրնայ իրբն մարդարէ և օրէնսդիր կանգնիլ , առաջին զբարանը՝ ուզածը կրնայ ըսել ու իր կարծիքը ամբօթին ընդունել տալ : Անհնարին բռնաւորութիւն մ'է այդ :

— Սիրելի բարեկամդ իմ , ըսաւ Գրուգ զիս աւելի մեղմ եղանակի մը բերելու համար ձայնը ցածցընելով , քու կատակներդ նորէն մի սկսիր , զհամարիկ կ'զբոսցընեն և զիս կը վշտացընեն անոնք , ուր որ ամեն ոք կրնայ խօսիլ , ոչ պաշտօն , ոչ մարգարէ և ոչ ով որ ուղէ կայ , այլ կայ իրաւունք մը՝ որ ամեն մէկ քաղաքացիի կը վերաբերի և զորն որ ամեն մէկ քաղաքացի իր մասնաւոր շահին կամ ընդհանուրին օգտին համար կը գործ ածէ : Ազատ ժողովուրդի մը մէջ ո՞վ մտքէն անցուցած է երբէք հասարակաց կարծիքն ուղղել ու կառավարել : Եանքի մը կը դանուխ որ իր բռնելիք ընթացքին կանոնը ինքը չդնէ , ենթակայի դիտութեամբ իր կուսակցութիւնը և դրօշը չընտրէ : Մամուլը ամենուն դաղափարները կրկնող արձագանք

մ'է միայն : Այս անթիւ լրագիրները միակ առարկայ մ'ունին , այն է , եղելութիւնները , տեղեկութիւնները , գաղափարները ժողովել , և լոյսը բազմապատկել ու տարածել : Որչափ շատ լրագիր ըլլայ , ամեն մէկ քաղաքացի այնքան աւելի կարող է կարգաւ խորհիլ և ինքնին դատել : Ճշմարտութիւնը ամենուն հպելի ընել , ահա այս է մեր փառասիրութիւնը . լրագիրներու այս կարծեցեալ բռնաւորութիւնը միայն քու երեւակայութեան մէջ գոյութիւն ունի : Շատ շատ կարելի ըլլար այն հոն՝ ուր անխոհեմ կառավարութիւն մը լրագրութիւնը իրեն դէմ մենավաճառութիւն մը ընելով , միայն տասը կամ տասնուհինգ թերթ հրատարակել տար և այսպէսով իրեն դէմ միանալու ստիպէր կուսակցութիւններ՝ որոնք բնապէս բաժնուելու կը միաին : Բայց Վանքիկայի մէջ՝ ուր երկու երեք հազար լրագիր կայ , ուր ամեն օր նոր լրագիրներ կը հրատարակուին հետզհետէ , բռնաւորներու շատութիւնը , բռնութիւնը սպաննած է :

— Թող ըլլայ , այդ այնպիսի դրութիւն մ'է զոր Արիստոտէլ չէ նախատեսած . թղթի ռամկապետութիւն : Այս երջանիկ երկրին մէջ կառավարութենէ զատ՝ ամեն բան կառավարութիւն է : Գուք որ լրագրապետ էք (և հոս ամեն մարդ լրագրապետ է) եկեղեցիէն , արգարութենէն , պետութենէն ալ աւելի էք : Ա՛լ էք ուրեմն :

— Պատասխանը չափէ դուրս դիւրին է , ըսաւ Գրուդ , ընկերութիւնն ենք մենք :

— Բայց թէ որ ընկերութիւնը՝ այսինքն ժողովուրդը կառավարող է , կառավարեալն ո՞վ պիտի ըլլայ :

— Տօքթօր , պատասխան տուաւ խմբագիրը ժպտելով , երբ փողոցին մէջ կ'ուղղիս , ուղղեալն ո՞վ է : Բառի մը սիրոյն՝ սանձ դնել կ'ուզէս ինքդ ինքիդ : Երբ դու քու կերպերը կը կառավարես (իրաւ է որ միշտ չես կառավարես զանոնք) կառավարեալն ո՞վ է : Ինչպէս անհատներու՝ նոյնպէս ժողովուրդներու համար հասուն տարիք մը կայ : Թող Զինաստան յախտե՛նական մանկութեան մը մէջ ծերանայ , վրան կը ցաւիմ , բայց մենք քրիստոնէսայքս , մենք՝ մեծ երկրի մը քաղաքացիքս սպուշ և տխմար ժողովուրդ մը չենք : Շատոնց 'ի վեր ինամակալութենէ՛ զերժ՝ մենք մեր գործերը կը տեսնենք : Ի՛նչէ՛ այն

ժողովրդային վեհապետութիւնը որ եօթանասուն տարիէ 'ի վեր մեր սահմանադրութեանց ճակտին վերայ կը դրն'ք՝ եթէ ոչ չափահասութեան հրատարակում մը :

— Նմանութիւնները բան մը չեն հաստատեր , վրայ բերի խստութեամբ , անհատի մը նկատմամբ ճշմարիտ եղածը բանը , ազդի մը նկատմամբ ճշմարիտ չէ :

— Գարձեալ պարսպ խօսքեր կ'ընես , տօքթօր , ազդ ըսածդ անհատներու հաւաքածոյ մ'է : Տասը , քսան հազար անձի նկատմամբ ճշմարիտ եղածը , նաև մէկ միլիոն անձի համար ճշմարիտ է : Ըսէ՛ նայիմ՝ ո՞ր թիւին հասած ատեն անբաւականութիւնը կ'սկսի :

— Ո՛չ , ըսի , սխալ է կարծել թէ ազդ մը պարզապէս անհատներու հաւաքածոյ մ'է , տարբեր բան է :

— Ըսել կ'ուզէս որ գումարումի մը ամբողջութիւնը , ամեն միութիւններու բովանդակութիւնը չէ :

— Սխալ , պոսացի կարճամտի մը հետ վիճելէ ձանձրանալով : Հոս այնպիսի տարբերութիւն մը կայ , որ մարդուս աչքը կը պայթեցնէ : Մասնաւոր շահերը մէկի ընելու համար քաղաքագէտ մարդերու մէջ բերած մողական բառը ո՞րն է : — Ընդհանուրին շահը . ի՛նչ առարկութիւն յառաջ կը բերուի երբ կառավարութեան նեղութիւն պատճառող իրաւունքներու պահանջումներ ջնջել կ'ուզեն , զերազոյն՝ այն է ընկերական շահը :

« Հասարակայ օդուտը , անհատական իրաւունքի ժխտումն է , կամ գոնէ ամեն քաղաքակիրթ երկիրներու մէջ այսպէս կը տրամաբանուի : Եթէ առաւելագոյն մասին փափաքը լսելն և շահերն ու կամքերը գումարելը բաւական ըլլար , քեզի կը հարցընեմ՝ անդամ մը թէ՛ քաղաքագիտութիւն բսածդ ի՛նչ կը դառնար — նպարավաճառի արհեստ մը՝ և ուկիցէ առաքինի մարդու հպելի դեր մը : Գեղջուկին ձայնը մտիկ ընող , կամ քսնի մը հազար ոստանիկ քուէն առնող կեսար մը , Ռիշլիէօ մը , Քրօմուէր մը , Ղուի Թ.Գ. մը կրնան երևակայել : Ան ատեն ի՛նչ կ'ըլլան քաղաքագիտութիւնները , դաշնակցութիւնները , պատերազմները , աշխարհակալութիւնները , բոլոր այն պետական հարուածներն և ամեն այն բազդի խաղերն ուր

գիւցազունները կը յաղթեն : Ազգ մը յաղթութեան ու փառքի առաջնորդել , ժողովրդային ամբոխին այնպիսի կարծիքներ ընդունել տալ՝ որ իրօք իրը չին , զայն ծառայեցընել այնպիսի փառասիրութեանց ու զիտաւորութեանց՝ որ իրեն ամենևին վերաբերութիւն չունին , ահա այս է մեծ հանճարի մը գործը : Ահա այս է ժողովուրդներու սիրածը , զիրենք առաժուր կոխողները կը պաշտեն անոնք : Եթէ այդ խեղճ մարդիկը իրենց գլխուն ձգես , կ'երթան իրենց կաղամբը կը անկեն և իրենց տարեգիրները երկու տող խօսքով կը վերջանան . Երբոր արբիներ տարեցան , երջանիկ եղան և շարքաւորները անկեցան : Այս գեղեցիկ գրութիւնով պատմութիւնը ինչ կ'ըլլայ : Եւ ինչ կը մնայ մեր տղոց իբրև հոետորական դաս :

Կ'զգայի որ լեզուանի էի : Գրուդ շիտթած եղանակաւ մ'ինձ կը նայէր :

— Տօքթօր , բաւ ինձ , իմաստակութիւնները չեմ սիրեր , բայց բոլոր մտքի այս խաղերու մէջ կ'ատեմ մանաւանդ՝ հինօրեայ վճիռները , որոնք շատոնց մեռած ստութիւններ են : Արաս պառաւ խենէշի մը ապաւորութիւնը կ'ընեն՝ որ ինքզինքը թաղել տալու մոռցած է և որ իր շարքը , կեղծ մաղերը ու փոթերը կը ժուռ անէ իրմէ զգուած երիտասարդներու մէջ : Աւօշինկիմըն սորվեցուց աշխարհիս թէ ազատ ժողովուրդ մը կառավարող առաքինի մարդ մը ինչպէս կ'ըլլայ . ահա փորձն եղած է . քաղաքական ինքնամոլութեան դարն անցաւ և ալ միայն ինքնուիրութեան համար տեղ կայ : Ո՛վ որ զայս չհասկընար , ո՛վ որ նոր սերունդներու ձայնը չլսեր , ո՛վ որ չզգար որ ճարտարութիւնը , խաղաղութիւնը և ազատութիւնը հիմնական աշխարհքիս թաղուհիներն են , լոկ երազոտ մը և յիմար մ'է : Կա չէ թէ փառքի՝ այլ ծաղր ըլլալու կը գիտէ :

— Ա՛լ խօսքը կարենք , պարոն , գոչեցի ոտք ելնելով . և ակամայ ձեռքս տարի բացակայ սրոյս դաստապանին :

Եթէ ազգային պահակի համազգեստս ունենայի , պիտի բռնադատէի այս աներեսը սորը ձեռքն առնելու և զինքը զետին տապալելով պիտի ապացուցանէի իրեն անգառնալի կերպով որ Ամերիկա քաղաքակրթութենէ բան մը չհասկընար , և թէ Գաղղիացի մը երբէք չսխալիր :



Մինչդեռ Գրուդ իմ զայրոյթին ու եռանդին վրայ պաշած՝ վրաս խոսկեալ նայուածքներ կը նետէր , Համպրիկ ներս մտաւ փորձերու գէղ մը բերելով՝ զորս գրասեղանին վրայ դրաւ :

— Օ՛ն , արէք , մրմնաց իր հաստ ձայնովը , գործը կ'սկսի . Nunc animis opus, a Enea, nunc pectore firmo*. Խօքթօր , օդնէ մեզ , քու աջ ձեռքն ազատ է , ա՛ռ սա թուղթը , ծանուցումը պատրաստէ :

— Գրէ , պարտութիւն դառնալից քոնորերու , ահա այդ մեր բոլոր առաջին էջը բռնեց , այս ըսելով նամակի տուփին մէջ փորձ մը նետեց :

— Պարտութիւն , ըսի . միթէ հայրենեացդ ազգ պիտի առնես որ յաղթուած է : — Սը որ բազմաբնական ամբոխուհի զբոս , կամ վարպետ հարաբնակութիւն ըսէ , թէ ոչ անխոհեմութիւնդ ամեն տեղ սարսափ և անհանգստութիւն պիտի սփռէ :

— Անուղղայ ես , Խօքթօր , վրայ բերաւ Գրուդ . դարձեալ կ'ըսեմ որ բոլոր ճշմարտութիւնը ըսել կը պարտաւորինք մեր հայրենակիցներուն : Միթէ կարծես որ ձախորդութիւն մը եանքիները կը վճատեցընէ և թէ տղաներու պէս անոնք բաղդին ձեռքն են : Յաղթանակ մը զմզ կ'ընայ անտարբեր գանել , պարտութիւն մը՝ մեր գործօնութիւնը , ստակն ու զինուորները կը կրկնապատկէ :

— Սպաննուած 3,000 հոգի , բաւ Համպրիկ , վիրաւոր 6,000 , բացակայ 2,400 :

* Ենևա , ելմակ պէտք է արեւելիս և քիմաբոս սերտ մը :

— Թիւերը դիր, կրկնեց Համպրկ. տօքթօր, դուն ալ զանոնք ծանուցումին վրայ գնելու մի մուռնար: Հիմա տեսնենք թէ խորհրդարանն ինչ է ըրեր:

— Երեսօրյոսին մէջ, ըսաւ Համպրկ, գերութեան վրայ երկայն ճառ մը: Պ. Սըմմէր քօլօմպիոյ դաշնակից դաւառին մէջ գերութիւնը ջնջեց: Այս առաջին քայլ մ'է: Գրէ, տօքթօր. Մէսսչէսէի հարցառան աքէնտիլին ստանդէի հարը: Ահա մեր առաջին թերթը լմնցաւ, դանք յաւելուածին:

— Երեսօրյոսանց խորհրդարան. հետաքրքրական բան մը չկայ. երեք անգամ կոչումն 'ի կարգ. և ատենապետին հետ կուրներով ժամանակի կորուստ:

— Այդ սովորութիւնն է, ըսաւ Գրուգ. անցինք: Ահա քաղաքական յօդուածը. դրէ, տօքթօր, վերադարձ դէպ 'ի օրինակորութիւն և յազատութիւն. վերահաստատութիւն Հապէսսօքիսի:

— Ինչ, ըսի արմանալով, պարտութեան մը միջոցին երբ ամեն իշխանութիւն կեդրոնացրնել և ղինալէս կառավարել պէտք է, դուք քաղաքական ազատութիւնը կը հաստատէք իր ամեն վտանգներով: Փորձով զիտցէք ուրեմն՝ որ ամեն իրաւունք գաղըցընելու ատենն է: Չկայ բան մը՝ որ այն աստիճանի սպահովցընէ ժողովուրդ մը, որքան զգալը թէ ինքը հոգւով մարմնով իշխանութեան ձեռքն է: Յիրաւի, քաղաքագիտութենէ ամենեկն հասկըցած չունիք եղեր դուք:

— Բունութիւնը զօրութիւն չէ, պատասխանեց Գրուգ, ժողովուրդ մը որքան ազատ այնքան հեզ, հնազանդ՝ ու զոհողութեանց պատրաստ կ'ըլլայ: Եթէ կ'ուզես որ այն քեղի օգնէ, ինքզինքդ իրեն վտահէ: Շարունակենք: Ծովայնի Գրուգը քօլօմպիոյ քաղաքացիներէն է: Գրէ, տօքթօր, և ստորագծէ որպէս զի ծանուցման վրայ այդ խօսքերը խոշոր գրերով գրուին:

— Չափազանց յանդգնութիւն է այդ, պոռացի: Մտածեցէք ան-

* Habeas-corpusը օրէնք է՝ որ շատ պարագայերու մէջ արքայութեան կողմէն կու գայ բանարկելայն արշակնան՝ որբամական երաշխով:

գամ մը թէ ինչ շահեր կը վիրաւորէք և ինչ գանդատներ պիտի յարուցանէք:

— Թող գողերը գանդատին, ըսաւ Գրուգ, ես ալ ատոնց կ'ըսպասեմ, փորձեր ունիմ 'ի ձեռին:

— Փորձեր ունիս. ուրիշ ձեռք ձգեցիր զանոնք:

— Աւր որ բեմ մը կայ, հոն խօսող մը ևօ կայ, պատասխան տուաւ Գրուգ: Ժողովուրդի մը մէջ՝ որ լռելու բունագատուած է, գողերը կը գործեն և զողջուողները կը լռեն, այլ հոն՝ ուր ամեն մէկ քաղաքացի, ազգին մէկ գործունեայ անդամն է և յանուն իր երկրին ազատութիւն ունի ամբաստանելու, գողերը կը սահուրտին, գողջուողները կը պոռան ու կը գործեն: Արտօխայի մէջ ոստիկանութեան համար զործ ամուսն քսան միլիոն տօլարը՝ միլիոններ գողնալու արդէք չեն ըլլար. ոստիկանութիւնն ալ ծախու կ'առնուի անով, բայց մեր մէջ՝ ուր ամեն մարդ ոստիկան է, դենար մը չեն գողնար առանց դողալու: Ազատութեան մեծ առատելութիւններէ մէկն է՝ բարձրագոյն զողտութիւնը արգիլելը: Անցնինք արտաքին լուրերուն:

— Աւստի կեն, ըսաւ Համպրկ. Նօտրայի երեք թղթակցութիւնները:

— Ինչո՞ւ երեք թղթակցութիւն, ըսի այս անօրուտ շուայլուութեան վրայ զարմանալով:

— Անկիւն մէջ երեք կուսակցութիւն կայ, պատասխանեց Համպրկ. ուստի ամեն ձայները կրկնելու համար երեք արձագանք պէտք է մեզ:

— Առաջին թղթակցութիւն. գոյն ձեր Բամի* «Պատերազմ Ամերիկայի դէմ. արդարութիւնը լաւ՝ այլ բամպալը լաւագոյն է. այրնք զաշխարհ Անկիւն տաքցընելու համար:»

Երկրորդ թղթակցութիւն, Տէրպիի գոյն՝ «Երն Բամ՝ հասարակութիւնը կը ծագրէ, 'ի զէն կը պոռայ,

* Երն Բամ, ընդամենին անունն է՝ զոր Անկիւնայի կու գոյնն ասանքին պաշտօնեայ՝ լըդ Բալթիքսիլնի:

բերդեր և զրահաւոր նաւեր դրպանը կը նետէ, զինուորութիւն կը ծախէ և միայն երկու բան կ'ուզէ պահել, այսինքն խաղաղութիւնն ու իր պաշտօնը: Թող պաշտօնէութիւնը մեզի յանձնուի, մենք ալ նոյնքան հայրենասէր և աւելի աման ենք:

Երբորդ թղթակցութիւն, Պրայթ և Քօպլանի գոյն,

«Ճօհն-Պիւլ»,^{*} բարեկամէ իմ, քու կառավարութիւնը զքեզ կը հեղնէ: Քու սնապարծութիւնդ կը շոյէ յետին շէնքէ կորզելու համար: Մարդ եղիր: Յովնաթան[†] տոհմիկդ հետեւէ. դործերդ դու անձամբ տես, այն օրն ուր ժողովուրդները պիտի դադրին խնամուելէ այն տուն փլիչ և սպարձուկ մեծաբաններէ՝ որ մեծ քաղաքազէտ կամ «Ինքնակառ» կը կոչուին, եղբօր պէս, խաղաղութեամբ և քիչ ծախքով պիտի ապրին:»

— Կը յուսամ որ, ըսի Համպրիկին, այս երեք թղթակցութիւնները հասարակութեան ընծայելու ատեն քու կարծիքը անոնց հետ պիտի հրատարակես:

— Բնաւ ամենեւին, պատասխան տուաւ Համպրիկ. Յովնաթան սովորութիւն ունի իր կարծիքն ինքնին շինել, նա աղէկ աչեր ունենալուն՝ մեր ակնոցին պէտք չունի:

Յանկարծ գուռը բացուեցաւ. շքեղ կերպով հագուած երեք նորատի կիներ մեզ մտնեցան, ամենէ տարեւորը՝ որ քսանուհինդ տարեկան չկար սկսաւ խօսիլ, համետ՝ միանգամայն համարձակ կերպով մը,

— Պարոն, ըսաւ Համպրիկին, մենք դերձակուհի տիկնանց կողմէ իբրև պատգամաւոր կու գանք, կ'աղաչենք զձեզ ազդ առնել թէ՛ կար կարելէ գադրած ենք և յառաջիկայ երկուշաբթի օրը «Ինքնակառ» մը պիտի ընենք պրծելու համար այն ճնշումէ՝ որով կը տառապինք. մեր իրաւունքը վերստին ստանալ ու ապահով ջընել կ'ուզենք:

^{*} Անկիւնացոց ազգին որոտած մականունն է:

[†] Ամերիկացոց ազգին որոտած մականունն է:

[‡] Անկիւնարէն բառ որ կը նշանակէ հասարակայնի ժողով կամ խորհուրդը ընդհանուրի վերաբերեալ ինքնիշխանութեամբ վրայ վիճելու համար:

— Գերձակներն հարուստ են, ըսաւ Համպրիկ, անոնց քիթը քսելէ յառաջ՝ պիտի հարկագրիք ձեր խնայողութիւնները մտնել, կամաց կամաց ուտելու համար միլիոն մը ունիք:

— Պարոն, ըսաւ կրտսերագոյնը ստամբակ եղանակաւ մը, հարիւր տօլարի ծանուցումով մեր նպատակին կը հանինք: Կը ցուցնենք պարոնայք դերձակներուն և համայն աշխարհին թէ՛ ինչ կրնան ընել հինգ հարիւր կիներ՝ որ մտքերնին դրած են տեղի չտալ: Դաս մ'է այս՝ որ բռնաւորներու և մենավաճառներու օգտակար պիտի ըլլայ, դաս մը՝ որ հին աշխարհին բռնակալները իրենց գահին վրայ պիտի դեղնեցնէ: Միայն՝ հաճեցէք պարտաւորել զմեզ ձեր լրագրին մէջ գնելով հասարակութեան ուղղուած յայտարարութիւնը՝ զոր մեր յանձնաժողովը վիճաբանած ու խմբագրած է:

Այս ըսելով ամազոնը՝ չորս ծալլած թուղթ մը երկնցուց լրագրապետին. Համպրիկ բարձր ձայնով կարգաց այս լիբր կատակը, նշանաւոր յիշատակարան՝ իրական խնթութեան և կամակորութեան այնպիսի երկրի մը մէջ՝ ուր նոյն իսկ կիներն ազատութեան կը հասան:

Բարիդէանքդ Մասաչիւսէի,

Մեր ժխտուած իրաւունքը ստանալու և արդարութիւն պահանջելու համար՝ մէք Բարիդի (Մասա) դերձակուհիքս՝ գործէ կը դադրինք. ութ օրէն՝ կամ մեր բռնաւորք տեղի կու տան և կամ՝ ալ գործ ու պաշտօն չենք ունենար: Ա՛վ կ'ուզէ գործ տալ մեզ, ձեռքերնիս կախ և օրօրուն չենք ուզէր նստիլ, բայց որոշած ենք ձրի չաշխատիլ յօգուտ այնպիսի մարդերու՝ որոնք կարողութիւն ունին վճարելու:

Չեռնուի ձվ պէտք ունի, զիտենք զլիտարկներ, խիլայներ, բուրբիներ, կարկանդակներ և քաքար շինել, զիտենք կար կարել, ասղնագործութիւն, գուլպայ հիւսել, խորվել, խաշել. զիտենք կովեր կըթել, կողի ու պանիր շինել, հաւեր զիւրցընել, և պարտեզ մը նայիլ. զիտենք խոհանոցը մաքրել, խօսնարանը աւելել, անկողին պատրաստ

տել, փայտ ճեղքել, կրակ վարել, լաթ լուալ, արգակել (repas- ser) և որ աւելին է՝ երեխաներու վրայ հոգի կուտանք: Մէկ խօսքով մեն՛ ամեն մէկը կատարեալ սնտեսուհի մը կրնայ ըլլալ: Մեր խելացութեան համար եթէ տեղեկութիւն կ'ուզէք, մեր վաղեմի տեարք դիմեցէք:

Հուտ պատասխանեցէք, պարոններ:

Սև աչեր, գեղեցիկ ճակատ, դանդուր և դուր մազեր, Հեքէի երիտասարդութիւնը և քաղցրութիւնը, սերովբէի մը ձայնն ու հրեշտակային ժպիտը ո՛վ կուզէ: Ծեր տանուտեարքդ, որ բարի կառավարիչի մը պէտք ունիք տան համար, գեղեցիկ երիտասարդներ որ զործունեայ և անձնուէր կին մը կը փնտռէք, խօսեցէք աճուրդը բացուեցաւ: Մէկ, երկու երեք, յառաջ, յառաջ: Ո՛վ է նայինք երջանիկ մահկանայուն:

Դիմել՝ առ յանձնաժողովն գերձակուհի տիկնանց,
Կաղամախներու փողոց, թիւ 20:

— Հատ լաւ, տիկնայք, ըսաւ Համարկ, յայտարարութիւնն այս իրիկուն լրագրին մէջ պիտի երեայ, և ծանուցումն վրան ալ կը դնենք Գերձակուհեաց Գործարարն՝ որպէս զի ամեն ոք տեղեկութիւն ունենայ:

Այս ըսելով խորին բարև մը տուաւ և այս շաղակրատները ճամբ բեց այնպիսի քաղաքավարական ձևերով՝ որ կարծես թէ ըզեշտի մ'առջև կը գտնուէր:

— Միթէ կարելի է, գոչեցի, որ Ամերիկայի մէջ կանայք ուզածին ընելու իրաւունք ունենան. միթէ այդ բանը փորձառութեան և ուղիղ մտքի գէմ չէ: Գերձակուհիները միջին ընեն, էհ, թող լուացութիւնն ալ գաշնակցութիւն մ'ընեն կամ մանկաբարձներն ալ գործադուլ: Եթէ էրիկ մարդերու հանած յեղափոխութիւնը ասելի՛ կիներունը ծաղրելի է:

— Ծաղրելին այն է որ էրիկ մարդիկ կը կարծեն թէ՛ կիները ճնշելու իրաւունքն ունին, պատասխան տուաւ Գրուդ իր սովորական պաղարինութեամբ:

— Լաւ է, ըսի, ուրեմն այս խնթ գլուխներու մէջ ազատութեան զինովութիւնը զիր և տեսնես որ առաջին զոհերը իրենք պիտի ըլլան:

— Տօքթօր, չարագուշակ ես դու, ըսաւ Գրուդ*, հին նախապաշարութիւնը ամենապղտի ցնցում մը կրե՛նուն պէս, կը պոռաս որ աշխարհ պիտի կործանի: Ախրերը, սիրելի պարոնս, մարդկային սեռի կէսը կը կազմեն, մեծ ճշմարտութիւն մ'է այս՝ զոր Արիստոտէլ հաստատած՝ բայց երկու հազար տարիէ՛ ՚ի վեր փիլիսոփային միտքը Ամերիկացիներէ զատ՝ ոչ ոք հասկըցած է: Եթէ մեր կիները մեր յոյսերու և երկիւղներու մասնակից չըլլան, զմեզ իրենց սկարութեանց ու քմածին հաճոյից մասնակից կ'ընեն: Մեզ այնպիսի կիներ, ազջիկներ ու մայրեր պէտք են՝ որ ազատութիւնը մոռնալն սիրեն՝ որպէս զի էրիկները, հայրերն ու որդիք՝ այս սուրբ սէրը երբէք չկորուսեն: Այս գերձակուհիները քեզ ծաղրելի կը թուին և ես վրանին կը հիանամ իրենց յայտարարութեան վրայ խնդալով, կը սիրեմ վեհ հոգիներն որ արդարութեան վրայ հաւատ ունին և որոնք իրենց իրաւունքը կը պաշտպանեն: Ահա այս հոգիներով է որ մեծ ժողովուրդ մը կը կազմուի, և այս է նաև մեր գեղեցիկ երկրին գերազանցութիւնը:

— Լրագիրը ըմբռնենք, ըսաւ Համարկ. աւասիկ տաւորական մասը: Բամպակ, բուրդ, ածուխ, երկաթ, ալիւր, գարի, խոզենի, ոչխարենի, եզան միս, խար, կաշի, շաքար, խահուէ. նշանակելի բան մը չկայ, միայն ալիւրին աղէկ դրօշմ (marque) կրող տեսակը, հասարակ ալիւրէն հարիւրին երկու աւելի սուղ ծախուեցաւ:

— Ի՞նչ դրօշմ է այն, ըսաւ Գրուդ ցուցակը ձեռք առնելով. Քօլֆարս, Սթիվլընս, Բէնիլիթըն. այս անունները ստորագծել և խոշոր գրերով տպել պէտք է. կը խնդաս, տօքթօր, սակայն այս պղտի բան մը չէ: Անհատական պատասխանատուութիւնը հասարակապետութիւններու ոյժը և կեանքն է: Հասարակապետութեան

* Գիտնալու է՝ որ Գրուդ (Trough) ճշմարտութիւն կը նշանակէ և Համարկ բախարան:

մէջ ամեն ոք պէտք է իր սկի ըլլալն ու ինչ ըրած ըլլալը ճակտին վրայ կրէ : Կառավարութեան ու բարոյութեան գաղտնիքն է առաքինի մարդուն պատիւ ու հարստութիւն ընծայել՝ և գողերը սնանկութեան և վատ համբաւի դատապարտել, այս այնպիսի հանդոյց մ'է՝ որու լուծումը և ոչ օրէնսդիր մը դտած է՝ և զոր մամուլը ամեն օր կը լուծէ :

— Տակաւ մը ալիւրի առթիւ ահա քեզի աղուոր հատուած մը, ըսի :

— Եւ որու գործադրութիւնը հիմակ իսկոյն պիտի տեսնես, ըսաւ Համպրի, աւասիկ. խողենեաց հրապարակ, քսան տակաւ աւրուած ապուխտ Թհոմասի և Ուիլիէմի գրօշմարով : Այս երկու խարդախ անուանները ստորագծելը՝ զիրենք հրապարակէ վաւտել է :

— Այդ բանը պիտի չընէք և ընելու իրաւունքը չունիք, պոռացի : Կառավարութեան պաշտօն խաղալով դո՛հ չէք ըլլար ու տախիկանի դեր ալ խաղալ կ'ուզէք :

— Ճիշդ խօսեցար, պատուելի տօբթօր, վրայ բերաւ Համպրի, մենք ուստիկանութիւնը՝ նաև անկէ ալ աւելին՝ հասարակաց խիղճն ենք : Պատիւն ու հարստութիւնը բաշխողը մենք ենք. *Honestus rumor alterum patrimonium est*, թէ որ կ'ուզես աչերդ մնծ մնծ բաց և եթէ կը զուարճանաս զարմացական ձայներ ալ ձգէ : Բայց, թէ որ լըջօրէն կը խօսիս՝ ստուգիւ դայեակդ սխալմամբ ուրիշողու հետ փոխած է գրեզ և ճշմարիտ Վմերիկացի մը չես դու :

— Չգիտես, միմնացի, չգիտես ագէտդ դու, թէ որքան իրաւունք ունիս : Չես կրնար երեւակայել, թէ՛ ի՞նչ աստիճանի կ'արհամարհեմ մայնպիսի յիմար Տօն Քիշօտ մը՝ որ դիմացը ելած առաջին մարդուն շահը կը պաշտպանէ առանց պաշտօն մը կամ ամսական ունենալու : Ահա առանց պաշտօնաւորի երկիր մը այսպէս կ'ըլլայ : Պէտք է նաև որ ամեն ոք իր գործերու ևս խառնուի : Ծիծաղելի բան : Ֆրանսայի մ. ջ արթուն ու հոծ վարչութիւն մը զիս ամեն հոգէ կ'ազատէ. թագաւոր եմ, ինձ կը ծառայեն ու խաղաղու-

* Բարի համբատ մը երկրորդ ժառանգութեան մ'է :

թեամբ կը վայելեմ երջանկութիւն և փառաւորութիւն մը՝ որ միայն քսակիս կը մնասեն : Կամ ես քաղաքակրթութենէ չեմ հասկընար, կամ թէ քաղաքակրթութեան յաղթանակն այս է :

— Ահա Պօրսայի յայտարարութիւնը, ըսաւ երիտասարդ մը՝ վաղելէն շունչը կտրած ներս մտնելով :

- Նոր բան մը չկայ, հարցուց Համպրի :
- Ոչինչ, միայն Մեքսիկեան փոխառութիւնը :
- Անոր վրայ ի՞նչ կը խօսուի, հարցուց Պ. Գրուդ :
- Բողոքովն պարասն ելաւ : Ծերուկ Լիթլի մէկ նենդութիւնն էր :

— Ի՞նչպէս նենդութիւն, ըսի Պօրսայի յայտադիրը կարգալով, փոխառութեան բաժնետոմսերը մէկ տողար վրայ դրեր են :

— Լիթլ մէկ ձեռքով ծախածը, միւսովը գնոյ առաւ, ըսաւ Գրուդ, այդ կատակը հինցած է և մեր քոֆէ ստակ չընէր ամենեւին : Այնքան ապուշ չենք : — Պարոն Ռօզ յաւելցուց յետոյ, խօսքը նորեկին ուղղելով, վաղը այս գործին վրայ ինձ յօդուած մը դրէ, փոխանակադիրերու գործակալները տես ու ամբողջ ճշմարտութիւնը իմացիր :

— Այս իրիկուն կը կատարուի այդ, պարոն Գրուդ, ուզածէս աւելի տեղեկութիւն կ'ստանամ :

— Պարոն, ըսի այս երիտասարդին որու անունէն կը մակարեբէի որ գեղադործին տղոցմէ մէկն էր, այսինքն փեսացուիս մէկ եղբայրը, գործ ընելը շատ գժուար պէտք է ըլլալ հօս՝ քանի որ այս կերպով կը մազեն զանոնք ու անոնց ներսը դուրսը կը խուզարկեն :

— Պարոն, պատասխան տուաւ Էօմէն բողոքովին զարմացած, գործերու ներսը դուրսը որքան լաւ խուզարկուելով ճանչցուին այնքան դիրաւ կը կատարուին : Պօրսայի մէջ ստուութիւնը սնանկութիւն է ու զուտ ճշմարտութիւնը՝ հարստութիւն :

— Լաւ, ըսի մտովի, ամենքն ալ նոյն զէվզէկութիւնը կը կրկնեն : Ի Բարիզ՝ որ խեղքի մայրաքաղաքն ու բանականութեան կեդրոնն է, արարած աշխարհք գիտէ որ հասարակութիւնը ամենեւին չհասկըցած գործերուն ետեւէն կը վազէ ամենէ շատ : Յայտնի ու ծանօթ

գործ մը՝ ինչ շահ կրնայ տալ, — շատ շատ՝ հարիւրին հինգ կամ վեց, մինչդեռ անյայտ գործը հարիւրին տասնհինգ կամ քսան կը խոստանայ. սեղանաւորին զաղանիքը հօն է: Հոս արժէզին մը արժէզինի հետ կը փոխանակուի որ խեղճ առուտուր մը ըսել է, Բարիզի մէջ յոյս կը ծախուի. խաղին բանաստեղծութիւնը և վիճակահանութեան համայն աս է: Գաղղիացիին ինչ հոգն է ստակ կտրուանել, որ ցամաք բանմ'է: Մտքով հարստութիւն լափել, երևակայութեամբ՝ կիրք, հաճոյք և փառասիրութիւն գոհ ընել, ահա այս է իտէականը, իրաւ ասոր համար ստակէ կ'երնեն, բայց չէ՛ մի որ մարդ՝ խաբուելու համար որչափ ստակ տայ քիչ է:

— Համարի բարեկամ, ըսաւ ունացող ձայն մը, երկու պղտի ծանուցում ունիմ զորս քու լրագրին մէջ կ'ուզէի հրատարակել, գնոյն վրայ ինձ լաւ զեղջ մը պիտի ընես, վասն զի նեղ օրերու մէջ ենք:

Այսպէս խօսողը՝ երկայն խիլայով մանրուկ մարդ մ'էր, գլուխը ահաղին զլխարկով մը. իր կերպարանը, ձեւը և հագուստը կարծես թէ՛ կը պողային ամենուն,

- Ինձ նայեցէք, ես քուէքրք եմ:
- Համարի երկու ծանուցումներն առաւ ու սխաւ խնդալ:
- Նորալուր ծանուցումներ են, զորս սակայն չեմ հասկընար, այս ըսելով հետևեալը կարդաց նա,

ՄՕՆՄՕՐԱՆՍԻ ԱՄԱՐԱՆՈՑ

Սեթ Տուլիթը՝ Մօնմարանսիի մէջ Աւրդ հիւրատան տէրը, պատիւ ունի ազդ աննել հասարակութեան՝ թէ տարուան բոլոր զեղեցիկ եղանակին մէջ իր հիւրատունն իջնող սիրահարները, միայն կէս զին պիտի վճարեն:

- Այս բացառութեան պատճառն ինչ է:
- Քարեկամ, պատասխան սուաւ, մանրուկ մարդը ձեռները փոքրին վրայ խաչաձև ծալլելով և աչերը երկինք վերցընելով, սէրէն աւելի յարդելի ու զեղեցիկ բան չկայ: Ան երիտասարդ մը՝ և

զանի ճերմակ պարեգօտի և հովին թուշտող երկու սև գանգուրներու առջև դիր. ինքզինքը այնքան վերացեալ կ'զգայ նա, այնքան եթերացեալ՝ որ ամբողջ շարաթը խորտիկին դախալու չզիջանիր: Գողութիւն է հաւատար դին մը պահանջել այս երկնային հրեշտակներէ՝ որ հանած հաշիւդ երբէք չեն քններ, խիղճս այս անխառութիւնը չկրնար ընդունիլ:

— Այդ խղճահարութիւնը պատիւ կը բերէ քեզ, ըսաւ պատուականն Համարի շուրթերը խածնելով: Անցնիք երկրորդ ծանուցման:

ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԱԶԴ

Առ Տինահ Տ. Լ. — Կ'աղաչեն զքեզ որ չվերադառնաս: Մայրդ խիտ լաւ ու առողջ է. բան մը կարելի չէ կարգի դնել և բոլոր ընտանիքդ յառաջմէ շատ աւելի աղէկ է քու երթալէն ՚ի վեր:

— Սաի ընտանեկան զաղանիք մ'է, ըսի ժպտելով, բացատրութիւն չկայ ամենեին:

— Հասարակութեան համար չկայ, բայց քեզի համար այո՛, տօքթօր Սմիթ, վրայ բերաւ քուէքրք: Խնդիրը քրոջ մը վրայ է որ թեթևասլիկ ըլլալուն՝ նոյն իսկ իր՝ իր ընտանիքի շահուն՝ և հասարակաց բարոյականին պահանջութեանը համար, իբր վարժուհի Քալիֆօրնիա զրկեցինք: Կը վախնանք որ թշուառահին ճամբան կանգ առած չըլլայ և դարձեալ հոս չվերադառնայ: Հետևաբար՝ բարեսրտութեամբ և մութ բառերով իմաց կու տանք իրեն որ իւր ճամբան շարունակելով աւելի աղէկ կ'ընէ. տունը իրեն համար տեղ չկայ ամենեին:

— Այդ ինչ սքանչելի ողորմասիրութիւն է, պարոն Սեթ վրայ բերի ուսերս վեր ընելով. քեզի նման առատասիրտ մէկը աւելի կանուխ վերաճանչցած չըլլալուս կը ցախիմ:

— Քիչ մը դժուարութիւն պիտի ունենայիր զիս վերաճանչելու, ըսաւ Սեթ, աչերը խոնարհեցընելով, վասն զի երբէք տեսած չես զիս, այլ օրիորդ Մարթա իր տէրը ու երէկուան դէպքը այնպիսի հաւատարմութեամբ մը նկարագրեց՝ որ առաջին տեսքով դուն ըլլալդ գուշակեցի:

Այս առաքինի հիւրապետը՝ Մարթայի անունը տարօրինակ քաղցրութեամբ մը արտաբերեց որ յետոյ միտքս եկաւ, այս բանին աւելի ուշադրութիւն պիտի ընէի՝ եթէ նոյն հետայն բոցալաւ դէմքով մարդ մը յանկարծ սենեակը չմտնէր պոռալով:

— Մեծ լուր, պարոն Գրուդ, մեծ լուր, պարոն Համպրկ, քաղքին շահապը (maire) դատապարտուեցաւ: Լէ-է-մ-թատրոնի գուսաններէ մէկու հետ մեղսալի տեսակցութեան ատեն բռնուելուն համար և հիմա դերասանուհւոյն էրկանը տասը հազար տօլար տուժելու պարտաւոր է:

— Տօքթօր, ըսաւ Համպրկ, զրիչն առ և մեր ծանուցումը լմնացնենք: Ըրպիւրնիս լաւ լեցուած է, ծախուելիքը ապահովուած է, տեսնենք:

ՊԱՐՏԱԹԻԻՆ

ԳԱՇՆԱԿԻՑ ԳՈՒՆԳԵՐՈՒ

3,000 հոգի սպաննուած, 6,000 վիրաւոր

Ծերակոյտի ժողովին մէջ հիանալի ճառ Մասաչիւսէի պերճախօս ատենակալին:

Վերագարձ դէպ ՚ի օրէնք ու աղատութիւն

Ծովային տեսչութեան գողութեանց վրայ ազդարարութիւն առ ազդն:

Գործադուլ գերձակուհեաց

Քաղաքիս շահապին ոճրական դատապարտութիւնը:

— Աղէ, շարունակեց նա, այսօր յաջող օր մ'է, խորհախնբրու ետևէ բաւական հաջեցինք: Ուստի, պողոսց նա տպարանի կողմ մը դառնալով, բանեցէք տեսնեմ, տղանք, և մէկ քառորդէն՝ ծանուցումը բարձրացուցէք գուրսը:



ԸՆՏԱՆԻ ԿԵԱՆԻԲԸ ՊԵՏԻ Է ՎԱՐԱԳՈՒԲԵԱԼ ԸԼԼԱՅ,
ՊԱՀՊԱՆՈՂԱԿԱՆ ՍՈՍԾԻՆ ՎՐԱՅ

Թիկնաթոռիս մէջ ընկղմած էի, աչքիս տակ ունեցած տխուր տեսարանիս վրայ խորհրդածութիւններ ընելով մտովի: Սպառիչ անիշխանութիւն, ընդհանուր լրտեսութիւն, տիեզերական խռովութիւն՝ ամենուն ձեռքն ընկած կառավարութիւն մը, ահա այնքան գովուած մամուլն այս էր: Գիմացդ այսպիսի թշնամի ունենալէն ետքը՝ թէ որ գործ չունիս, եկ, ու ժողովուրդը կարգի կանոնի դիր նայիմ, — Ե՛, լաւ, սիրելի տօքթօր, ըսաւ ինձ Գրուդ ողորակի ձայնով մը, ահա հիմա դիտես որ լրագիր մը ինչպէս կը շինուի: Ինչպէս ես, հրապուրուեցանք, յաջորդս պիտի ըլլան:

— Ո՛չ, երբեք. երբեք, պատասխան տուի ականայ շարժումով մը աթոռս քաշելով: Տեսածս զիս կը զարհուրեցընէ, կը տեսնեմ որ դուք կը ծաղրէք այն ամեն բաները՝ զորս իբրև յարդելի ու նուիրական նկատելու վարժեցուցած են զիս: Հոգս չէ թէ որ պաշտօնէի կամ երեսփոխանի մը դէմ՝ յարձակում ըլլայ, ատոր սովորած եմ, ամեն ատեն պաշտօնեայք խմբադիրներու կէտ նշապտակին եղած են, երկու, երեք պաշտօնեայ վար աւնել տուող խմբադիրը՝ ամենէ հոչաւ կաւորն է: Եթէ կան երկիրներ ու ժողովուրդներ որ այս եղծումով կ'ըբօսնուն, վարձքերնին կատար: Իրենց քանի մը յեղափոխութիւն կը մաղթեմ զիրենք բուժելու համար: Բայց ընտանի կեանքը, վարագուրեալ պէտքէ ըլլայ, կը լսեն, պարոն, խստիւ վարագուրեալ:

— Ո՞վ է ըսեր այդ բանը: Հարցուց Համպրկ հեղնական եղանակաւ մը՝ որ միայն իր տղիտութիւնը կը հաստատէր:

— Պարոն Համարի, պատասխան տուի. Ռոյէ-Քոլլարն է ըսողը մեծ բնազանց մը՝ որ երբէք սեպհական կարծիքներ ունեցած չէ, բայց որն որ պղինձով թափած և արոյրի վրայ փորագրած է ուրիշներու դադափարները: Այն հռչակաւոր իմաստունն է ըսողը այս ասկեղինիկ խօսքը՝ զոր ամեն մէկ լրագրի գրասենեակի մէջ պատին վրայ դրօշմել պէտք է, ընդանի կեանք պէտք է վարսիւն-բաւ ըլլայ:

— Մեծ բնազանց մեծ զէվէկո-Ռիան մը ըսեր է, վրայ բերաւ Համարի: Միթէ մարդ մը կէսէն երկու կը կտրուի: Միթէ կրնայ մարդ ընտանի կեանքի մէջ խարդախ մը՝ և հրապարակային կեանքի մէջ՝ Գապրիչիոս մը ըլլալ: Ըսէ նայիմ, ընտանի կեանք ըսածդ ուր կ'սկսի և ո՞ր կը լմնայ: Ատողած շան մը ետեւէն պուալը ընտանի կեանքի դէմ՝ յարձակում մ'է թէ հրապարակային կեանքի: Եթէ անամօթ մատակարարներ մեր ծովային տեսչութիւնը կ'կողոպտեն, դողերը մասնանիշ ցայ տալով՝ ընտանի կեանքի դէմ՝ յարձակում եղած կ'ըլլայ: Եթէ ուրիշներու միլիոններով, հարստացած արդոյ Պ. Լիթլ՝ անդամ մ'ես պարզամիտները կողոպտել կ'ուզէ 'ի նպատա իր անյագ արծաթասիրութեան՝ ընտանի կեանքի դէմ՝ յարձակել է Պ. Լիթլի համար գող մ'է ըսելը:

— Պարոն, ըսի այս անամօթին, մտքէդ չեն անցիր այն ամեն բաները՝ զորոս կրնամ քեզ պատասխանել, միայն խօսք մը բաւական է: Ահա քեզ Բարիզի շահապը որ ցաւալի տկարութեան մը տեղի տուեր է: Արեւի է ընկած է թակարդի մը մէջ՝ որ ստորին խենէշ մը իրեն դէմ՝ լարած էր: Ինչ և է տարակոյս չկայ՝ որ այս յանցանքը իբրև քաղաքական գատաւոր չէ՝ գործած: Ուստի ինչ օգուտ ունի այսքան աղմուկ հանել, գայթակղութեան առիթ տալու վատահամբաւել այնպիսի մարդ մը՝ որու սխալը վերջապէս քեզի չդպնար:

— Ինչ օգուտ ունի, ըսաւ Գրուգ՝ Ռօպէսթիէրի արժանի պաղու-թեամբ մը, զինքը հրաժարեցընել տալու օգուտն ունի: Ինչպէս կրնանք մեր ընտանիքներու մէջ ամուսնական կապին պատկառանքն ու ակնածութիւնը քարոզել, մինչդեռ ատին կառավարութեան պալատին մէջ շնութիւնը կը գահակալէ: Անկարելի է: Ընտանեկան կեանքի պատիւը հրապարակային առաքինութեան երաշխաւորու-

թիւնն է մեզի համար: Թէ ոչ՝ քաղաքականութիւնը զաւելտ մը կը դառնայ, ուր ամեն ոք դիմակ մը կը կրէ, դեր մը կը խաղայ և կ'զբօսնու, խղճի, իրաւունքի, պարտքի վրայ կը խօսի՝ առանց իր ըսածներու մէկ խօսքը ինքն իսկ հաւատալու: Արքան մանուկ ժողովուրդներ կան որ վտանգաւոր կատակները կ'ընդունին և դէշ կը վերջանան կարելի է, այլ Ամերիկայի մէջ բան մը չկայ որ կատակ ըլլայ: Թէ որ կ'ուզեն մեր անաւանները երթան իրենց առողջութիւնը և ստակները ովկիանոսին միւս կողմը փճացընեն, մեր մէջ յարգուելու համար մարդ պէտք է յարգելի ըլլայ նախ:

— Ահա առիկ շահապէն նամակ մը, ըսաւ գործակատարը, իր հրաժարականը կու տայ նա:

— Պարոն Գրուգ, գողեցի, զեւ ժամանակ կայ, լրագրին տպու-լը արդիլէ, աներեւութացուր գատապարտութիւն մը՝ որ լոկ քաղաքացիի մը վրայ կ'ըյնի, վճիռ մը՝ որ մարդու մը անարգուելուն և ընտանիքի մը դժբաղդութեան պատճառ կ'ըլլայ: Ձեր ծանուցումին մէջէն աւրեցէք այն զղուելի տողերը՝ որոնք անշուշտ ներելի և օրէնքին չնախատեսած մէկ յանցանքին կեղտը կը նորոգեն: Ուրեմն Ամերիկա Աստօններով լի է, և դուք որ մանաւանդ աւետարանի վրայ կը խօսիք շարունակ, մէջէրնիդ մէկը չկայ որ շնացող կնոջ պատմութիւնը կարգացած ըլլայ: Աստուծոյ սիրոյն, քիչ մը մարդասէր եղիք:

— Ոչ անգութ եմ և ոչ մարդասէր, պատասխան տուաւ Գրուգ իր սառ եղանակաւ, ես չէ թէ անձ մը՝ այլ լրագիր մ'եմ, այսինքն արձագանգ մը, լուսանկար պատկեր մը: Ծանուցումը ինչ որ է նոյնը պիտի մնայ, ասոր համար յանցաւորին վրայ կը ցաւիմ, բայց ես ալ պաշտօն մը ունիմ կատարելու, ճշմարտութեան հետ իրաւախոհ չեմ ըլլար երբէք:

— Բայց այդ պաշտօնը, պողացի զայրացած, դուն ինքնին առեր ես:

— Միթէ ես ինքնին առած ըլլալուս համար նուա՞ղ նուիրական կ'ըլլայ անի: Հեղ մը իմ գերը հասկցիր: Ինչպէս հաստատ կը մնայ ազատութիւնը այնպիսի ընկերութեան մը մէջ՝ որ բոլորովին

իր գործերով ու շահերով զբաղած է, և որ սակայն ինքզինքը կը կառավարէ: Անհզաղափարներն ինչպէս կը մնան ու կը մեծնան, իրաւունքը ինչպէս ամենէն յարգուած, առաքինութիւնը մեծարուած ու ծառայութիւնները վարձատրուած են — Մամուլի շնորհիւ անշուշտ, որ շողիէն ու ելեքտրականութենէն աւելի զարմանալի գիւտ մ'է: Մենք խմբագիրներս՝ ընկերութեան արձադանգն ենք, արձադանգանք ահարկու, որոտուն թմբուկ՝ որ ամեն ձայն ու շուկ կը մեծցընէ, զանոնք տէրութեան մէկ ծայրէ միւսը կը հասցընէ և կ'երթայ կ'արթնցընէ ամենէն թմբած խիղճը: Թէ բարին՝ թէ չարը՝ կը ծառայեն մեզի, բարին՝ ամեն սիրտերը ուրախութեամբ և նախանձաւորութեամբ տրոփել տալու. չարը՝ նոյն սիրտերը զրուանքով ու զայրոյթով լեցընելու համար:

«Երէկ գիւցազնական գործ մը ըրիր, թէ որ Ռուսաստանի, Սպանիոյ կամ Թուրքիայի մէջ գտնուէիր, ո՞վ պիտի լսէր զայն. քանի մը բարեկամներ, զբացիք կամ շատ շատ քաղաք մը: Բայց հոս՝ Ամերիկայի մէջ, մեր շնորհիւ՝ երեսուն և մէկ միլիոն հողի, Սմիթ բժշկին անունը պիտի կրկնեն. երեք միլիոն երիտասարդ՝ քու արիւթեան վրայ պիտի նախանձին և 'ի մտի պիտի դնեն քեզի հետեւելու: Ահա այս է այն պարսաւազրոյնեբու գործը՝ որոնց համար կ'երևի թէ շատ յարգանք չես զգար դու:

«Այս օր դատաւոր մը զայթաղելի գործ մը կամ յանցանք մը կը գործէ: Օրէնքը զմարդը դատապարտեց, մամուլը յանցանքը կը դատապարտէ և զայն բոլոր ազգին ատելի ու զզուելի կը ներկայացընէ: Անկումը որքան մեծ՝ դասն այնքան ազդու կ'ըլլայ: Մեր խտտութիւնը ընտանիք մը պիտի վշտացընէ, քանի մը երկշուտ հողիներ պիտի վերաւորէ, սակայն հաղարաւոր մարդիկներ պիտի փրկէ նմանօրինակ տկարութենէ մը, մինչդեռ անպատժութիւնը իրենց համարձակութիւն պիտի տար: Տարակոյս չկայ որ մեր կծու լեզուն մահացու թշնամութիւն մը պիտի յարուցանէ մեզի դէմ: Ինչ, հողերնիս է: Միթէ մեր շահն ու պարտաւորութիւնը 'ի կշիռ կը դնենք: Տօթօթ, մեզի համար նուազ խիստ եղիր: Խմբագրի արհեստը այնպիսի յատկութիւններ կը պահանջէ, որ խիստ քիչ քա-

զարգէտներ սոյն արհեստը կրնան կատարել, քանի՞ հատ կրնաս գտնել, որ մեր վտանգներն ու աննշանութիւնը կարենան ընդունիլ արիարար:

— Կեցես, Գրուգ, պոռաց Համպրի: Գրքի պէս կը խօսիս, սիրելի բարեկամդ իմ, և այնպիսի գրքի մը՝ որ ճշմարտութիւնը կը խօսի, *Rara avis in terris, negroque similima cygno.*

— Կան փառասիրութիւններ որ կը պահուրտին, վրայ բերի, Գրուգի՝ և ինքզինքիս դէմ խօսելով (վասն զի այս իմաստակին խօսքերը համոզումներս խախտած էին), այսինչը խտտութիւն ծախելով՝ ինքզինքը առաքինի կը կարծէ, մինչդեռ ներսէն առանց զիտնալու՝ իր շահին կը հետևի և հարստութեան ետևէ կը վազէ:

— Հարստութիւնը, խմբագիրներու համար չէ, ըսաւ Համպրի: Տօթօթ, բարեկամդ իմ, աշխարհս թատրոն մ'է ուր միայն երեք տեսակ անձիք կ'երևան, հանդիսակախք, դերասանք և հեղինակք: Հանդիսակախք՝ դուն, Կրին, Ռօզ և այն բարի մարդիկներդ էք՝ որ ոչ առաքինութիւն և ոչ մեղութիւն ունիք և ձեր այգիին կամ թղենոյն շուքին տակ կ'ապրիք: Գերասանները՝ նախանձոտ մարդերու խումբ մ'է՝ որ կատակերգութեան ամեն խումբերուն կը նմանի: Պառասէրը, պերճախօսը, աղահը, վախկոտը, բռնաւորը, և ծառան՝ իրենց գերը կը խաղան 'ի մեծ հաճութիւն հասարակութեան՝ որ ստեպ կը ծափահարէ, երբեմն չհաւնելով կը սուլէ բայց միշտ կը վճարէ: Առաջին կարգի երգողներուն աղուոր հագուստ, պալատներ, ոսկի, շատ ոսկի պէտք է: Ամբոխին ճաշակը կը ճանչեն անոնք և զայն կը խաբեն: Իսկ հեղինակը, բանաստեղծը, խմբագիրը՝ որ օրուան խօսքն ստեղծեց, համբաւաւոր եղանակը գրեց, բանաստեղծական հատուածը ներշնչեց, բազմութեան միտքը բացաւ, ասոր առջին հացի կտոր մը կը նետեն և երեսը չեն նայիր: Աւարպետ մարդերու համար զաղափարն ինչ է, լոկ կուսակցութեան մը նշանը, զոր պատեհ ժամանակին գործածելու է:

«Քսան տարի պոռա կանչէ որ՝ ազատութիւնը ժողովուրդներու

«Թուղան՝ որ սև կարողի մը նման հազարաքիսոր է երկրէ վրայ:

փրկութիւնն է, տիրապետող մարդերու համար ատելի՝ և ստրկաբար ծառայողներու համար տաղտկալի ձայն մ'ես միայն: Վերջապէս կը հաննի այն օրը՝ ուր ժողովուրդը ձանձրացած՝ զինքը ճնշող բեռը թօթուել կ'ուզէ: Ամբոխը այն մարդը կ'ընտրէ որ առաջինն յանդգնած է դրօշի մը վրայ գրել այն խօսքը՝ զոր քսան տարի շարունակ կրկնած ես: Միակ ժամ մը, այս առաջին գերին բազմը կը շինէ. ուստի և նա չափազանց կ'արհամարհէ անձանթ խմբադիրը՝ որ քսան տարիէ՝ ի վեր վիշտ ու վտանգ աչքն առած՝ իր յաղթանակը պատրաստած է: Թողովուրդը դերասանին պէս կը դատէ զքեզ: Պատմութեանս կ'ուզեն բարոյական մը գնեմ: Բարիք իրեն շահապ մը պիտի ընտրէ, հաւատտի եղի որ ամեն մարդ պիտի յիշուի բաց ՚ի այն միակ մարդէն՝ որ այս պաշտօնին պատիւ կրնար բերել — այդ մարդը Գրուզն է: Այն օրը՝ ուր նա իր աշխատութեան տակը պիտի մեռնի, նոյն իսկ իր լրագրին մէջ երկու սող զովեստ պիտի չունենայ իր վրայ, եթէ ես չըլլամ: Ահա Ամերիկայի մէջ քաղաքային առաքինութիւնը այսպէս կը վարձատրուի և սակայն աշխարհիս առաջին ժողովուրդն ենք, Ab uno disce omnes.* Ասոր վրայ ալ մեր փառասիրութիւնը դատել քեզի կը մնայ:

— Համարի բարեկամի իմ, ըսաւ Գրուզ, քե՛նէ սիրուած ու զովուած ըլլալուս պատիւը ոչինչ կը հաշուես:

Գրուզը բացուեցաւ և երկրորդ անգամ տեսանք կուզի քթին երկնայի՛ր՝ որ միայն Պ. Ֆօքսինը կրնար ըլլալ:

Իրօք ան էր և յառաջմէ աւելի խնդում երեսով մը:

— Պարոն Գրուզ, ըսաւ նա իր ամենէ անուշիկ ձայնովը, կը հաճիք ձեր պատուական լրագրին մէջ ազդ առնել թէ պատուելին Պ. Լիթլ տղոց հիանդանոցին տասը հազար տօլար, քաղքին աղքատաց հինգ հազար տօլար՝ և թաղապետական թանգարանին հինգ հազար տօլար նուիրեց:

— Մեքսիկեան փոխառութիւնը աղէկ կ'երթայ: Լիթլ բարեպաշտ հրէայ մ'է որ Տիրոջը տասանորդը կը վճարէ:

* Մէկ հոգիէն քսապէ զամենէն ալ:

— Մեքսիկեան փոխառութիւնը ետ ձգուեցաւ, պատասխանեց Ֆօքս. Պ. Լիթլ հարցոյց, փորձեց և իմացաւ որ Մեքսիկայի կառավարութեան տուած երաշխաւորութիւնները բաւական հաստատուն չեն եղեր:

— Այս կասկածելի առատաձեռնութիւնը ո՛րիկէ յառաջ կու գայ, հարցոյց Համարի, սոսկալի շահագործութիւն մը՝ պէտք է ըլլալ ձեռքի տակէ: Ահա տասը հազար տօլարի պարզե մը որ մեզ սուղի պիտի նստի:

— Հարունակ կասկածի մէջ էք, ըսի, ինչո՞ւ համար:

— Որովհետեւ ես ձեր խմբագիր մ'եմ, պատասխան տուաւ Համարի, և քուէքըններու պարզմտութեան հատացած իս չափ՝ սեղանաւորներու առաքինութեան կը հաւտամ:

— Քեզ հաւատի պիտի բերեն, ձեր մեղաւոր, վրայ բերաւ Ֆօքս խնդալով:

— Մե՛ծ լուր մը Պօրսայի մէջ. ըսաւ ներս մտնելով Պ. Էօմէն Ռօզ:

— Մեքսիկեան փոխառութիւնը ետ մնացեր է, զիտենք, ըսաւ Համարի:

— Բայց չէք զիտեր որ շահապը իր հրաժարականը տուաւ և զպարոն Լիթլ իբրև ընտրելի կը ներկայացընեն:

— Իբան, ըսաւ Ֆօքս, այդ կարելի բան չէ, Պ. Լիթլ ասոր վրայ բան մը չըսաւ ինձ, նաև կը տարակուսիմ որ իր այնքան բազմաթիւ գործերով այն ծանր պաշտօնն ընդունի:

— Պատուականն Ֆօքս, գօչեց Համարի, գառնուկի մը անմեղութիւնը ունի: Տեսնես, առաքինի դատասացդ, որ Պ. Լիթլ այդ մեծ զօհողութեան յանձնառու պիտի ըլլայ:

— Բայց մենք խղճահար մարդեր ենք, ըսաւ Գրուզ, և մեր մասին՝ զինքը պիտի չբեռնաւորենք այսպիսի ծանր պաշտօնով մը, իր ընտրութեան գէ՛մ պիտի գնենք:

— Ինչո՞ւ համար, պոռաց Ֆօքս:

— Այդ բանը կատակերգութեան հանդոյցն է, չհարցուիր, ըսաւ Համարի:

— Այսպէս ուրեմն, կրկնեց Ֆօքս, շարունակ մեր ճամբուն վրայ պիտի դաննե՞ր զձեզ, առաքինի մաքրակրօններ, բարձրամիտ ու վայրենի սերունդ: Բայց կրողը տանի զիս՝ եթէ օր մը չգամ ձեր մեղուանոցին մէջ զձեզ չայրեմ, անօգուտ պի՞ծակնէր, որ ձեր ատելի բզզանքով մեր ականջը յոգնեցընելէ ուրիշ բան չէք դիտեր:

— Ֆօքս, բարեկամդ իմ, ըսաւ Համպրկ, համբերութիւնս ու բազուկս փորձի մի դներ, թէ ոչ գքեզ պատուհանէն դուրս կը նետեմ:

Ֆօքս չսպասեց սպառնալիքի մը՝ որու գործադրութիւնը շատ հաւանական էր. ես՝ լրածիս վրայ յուզուած ու խռոված դուրս ելայ: Բանականութիւնս և դաստիարակութիւնս ինձ կ'ընէին որ մամուլը իշխանութեան և ընկերութեան դէմ լեցուած հրացան մ'էր. ամենէ իմաստուն պաշտօնեայնէրը այս անգին ճշմարտութիւնը քսան հեղ լեցուցած են ականջս. բայց միւս կողմէն՝ Գրուդի վարուց վեհութեան ու մեծութեան վրայ կ'սքանչանայի և Համպրկի դերին, արիութեան և համարձակութեան վրայ կը զարմանայի: Իրօք բաւական բան մ'է սակայն՝ առաքինի մարդերու դատը ձեռք առնուլ ընդդէմ ամեն գողերու և նենդաւորներու՝ որոնցմով աշխարհքս լի է, ամեն օր գողութեան, անիրաւութեան, ստութեան ետեւ ըյնիլ ու չարաչար հալածել զանոնք: Այսպիսի մարդեր իր ծոցին մէջ պահող ժողովուրդ մը, հասարակ ժողովուրդ մը չէ անվերջ:

— Բէօհ, ըսի իւրովի խղճի ունայն խայթերը մէկդի ընելով. բացառութիւն մ'է այս: Ամենէ մեծ խելացութիւնը լրագիրները խափանելն է. պիտի ըսեն որ այդպէս ընելով չէ թէ չարիքը՝ այլ զարմանը խափանուած կ'ըլլայ. բայց երբ չարիքը դարման չունի, մարդ կը հպատակի, և եթէ մեռնի իսկ, դէթ անգանդատ կը մեռնի: Մեծ առաւելութիւն մ'է այս . . . բժիշկներու համար:

Այս խորհրդածութիւնները կ'ընէի, երբ փողոցին մէջ տեղ ձայն մը զիս կանչեց, Սիւզանի ձայնն էր: Աղջիկս կը մօտենար երկանիւկաքի մը մէջ նստած՝ որու կառավարը Մարթան էր:

Չին հաստատ քայլով ու անսայթաք կը քալէր, և Մարթա խոհեմ աղջիկ մ'էր որ աւելի սանձով քան մտրակով գործ կը տեսնէր, բայց

Թէպու և տը Հէլտէր փողոցներու մէջ կը սխալիմ, եօթերորդ և ութերորդ ծառուղիներու անկիւնը, պղտի ու սարսափելի սալարկ մը կայ՝ որ կարծեմ թէ շահասէր անասնաբոյժ մը շինած է, վասն զի տասը տարիէ ՚ի վեր օր չըլլար որ հոն ձի մը չըյնի:

Մարթայի երիվարն ալ նախասահմանուած էր անոր, ինձ մօտելու ատեն խեղճ կենդանին յանկարծ ծոռերի վրայ եկաւ, Մարթա ձիուն գլխին վրայէն սահեցաւ, Սիւզանը թեքուած մէջ ընկաւ և ինձ զարնուած տեսն՝ զիս ալ գետին նետեց ու հետս հողին վրայ գլորեցաւ:

Կատուած ու փոշելից ոտք ելայ, Սիւզանի երեսը կեղեքուած ու Մարթայի երեսը արիւնլուայ եղած էր:

— Միթէ վիրաւորուած ես, Մարթա, պոռացի:

— Ո՛չ, պարոն, բան մը չէ, ըսաւ նէ, Յաւիտենականին աջը զիս պահեց. միայն քթիս ծայրը զարկի:

Մտիջպպէս երկուքսիս մէկ եղանք ձիուն փոկը քակելու և զինքը ոտք հանելու համար:

Երբ ձիս վերստին լծուեցաւ:

— Աստուած վկայ, պոռացի, աս ինչ ամօթ բան է որ թաղապետական վարչութիւնը, տասը տարիէ ՚ի վեր դրանս առջև այսպիսի վտանգաւոր սալարկ մը կը ձգէ քաղաքին ամենէ բազմանցորդ փողին մէջ:

Ու բարկութենէս դարձեալ լրագրին գրասենեակը մտայ:

— Ի՞նչ ունիս, տօբթօր, ըսաւ Համպրկ դարձեալ խնդալով, միթէ արդէն Ֆօքսի հետ ընտրական պայքար մը սկսա՞ր: Հագուստէդ դատելով յաղթական չելեր ես:

— Ի՞նչ ունենալու եմ, ըսի, այս ինչ գարշելի թաղապետութիւն է որ տասը տարիէ ՚ի վեր սալարկ մը այսպիսի վիճակի մը մէջ կ'ընողու, ահա ձիս գետին տապալեցաւ հիմակ, աղջիկիս երեսը վիրաւորուեցաւ, քիչ մնաց որ խոհակերուհիս ջարդուբուրդ պիտի ըլլար: Բարկացած եմ սաստիկ, կ'ուզեմ բողբոջել ու հատուցում պահանջել: Ամերիկայի մէջ, ՚ի Բարիդ կը գանուինք, հատուցումը կ'ստանամ: Բողբոջիս հրատարակութեամբը ամեն մարդ իմ կողմը պիտի ըլլայ:

գրիչ մը և մելան տուէք ինձ՝ որպէս զի ձեզ խիստ նամակ մը ուղղեմ՝ ուր վարչութիւնը ինչպէս որ պէտք է պիտի լուամ :

— Ահա ուղածներդ և վրան ալ մէկ տօլար , ըսաւ Համպրիլ :

— Տօլար մը , ի՞նչ ընելու համար :

— Մեզ այլևայլ մը բերողին միշտ տօլար մը կը հատուցանենք . բերանդ ծուռակելով արհամարհանք մի յայտներ , տօքթօր պահէ զայն և թուականովը շրջանակի մը մէջ անցուր : Այն պիտի յիշեցընէ քեզ որ մամուլը ամենուն ձայնն է և թէ գլուխդ փորձանք մ'եկած օրը՝ այս մեծ ճշմարտութիւնը սորվեցար :

— Համպրիլ , պատասխան տուի իրեն , այս խօսքերը որ զու քու սովորական թեթևութեամբ հովին կը նետես , կարծածէ՞ք աւելի զօրութիւն ունին , և բնաւ մտքէս պիտի չեընեն : Առտու լրագիրս կարգալու ատեն , ամեն մէկ դանդատ՝ ինձ պիտի յիշեցընէ տառապանք մը՝ որ կարելի է վաղը իմն ալ պիտի ըլլայ , կամ չարք մը՝ զոր կրնամ դարմանել կամ անոր առջևն առնուլ հասարակաց ձայնին հետ միանալով :

— Ահեցես , տօքթօր , մեծ փիլիսոփայ մ'ես : Աչքերդ բացուած ատեն կը պտուս . Et lux facte est* : Հող չէ , քիչ ատենէն ասորմէ ոչ նուազ մեծ ճշմարտութիւն մը պիտի գիտես . այսինքն թէ մամուլի ազատութիւնը միայն առաքինի մարդերու համար շահաւոր է : Այսքան բաւական է մեզ սորվեցընելու թէ մամուլի թշնամիները որոնք են :

*Եւ եղաւ լոյս :



Բողոք այս վիճարանութիւնները զիս յուզած էին : Իբրա՛ իմ մանկութեան վարժապետներու ինձ տուած քաղաքական հաւատք ուրանալու տկարութիւնը չունէի . ուրացողներէն կը զզուիմու կը ստուկամ : Մարդ երբ սխալ դադարներու մէջ ծնած է և իր խիղճը կ'ուզէ զանոնք փոխել , պատիւը կը պահանջէ միւս կողմէ՝ որ զանոնք անփոփոխ պահէ , և Գաղղիացի մը միշտ իր պատիւին կը հնազանդի , հետեւաբար ես ալ լաւագոյն ունէի կտոր կտոր ըլլալ քան թէ խոստովանիլ որ այս եանքիներն իրաւունք ունէին :

Սակայն հողույս խորէն կ'զգայի որ իմ առաջին անմեղութիւնը կորուսեր էի . մամուլի գիտնի էի՝ և զիմելուս համար ամշնալու կարողութիւնը չունէի :

Ինքս ինքէս դժգոհ՝ յուզուած քնով մը քնացայ : Արթնցած ատենս տակաւին մութ էր : Գրուդի և Համպրիլի իմաստակութիւնները մտքիս մէջ թափանցեր էին , ինչպէս որ սլաքները մտի մէջ կը մտնին . անկողնոյս մէջ պարապ տեղ անոնց պատասխաններ կը փնտուէի՝ երբ յանկարծ լուութեան ու մութին մէջ՝ փողօցէն ձայն մը լսեցի՝ որ զիս կը կանչէր : Աղջկանս ձայնն էր այն , և հայր մը իր աղջկան ձայնին վրայ երբէք չսխալիր :

Գիշերազգեստս հագնիլ ու պատուհան վազելս մանրերկրորդի մը գործն եղաւ : Մութին մէջ որոշել կարենալու համար՝ դէպ 'ի վար կախուեցայ : Գլուխս չգիտեմ ինչ արդեւէքի հանդպեցաւ որ կունչեց : Իսկոյն պայծառ արեւ մը աչքս շլացուց , զուարթ ձայնեւ իմ երեւոյթը ողջունեցին :

Փողոցը լի էր բազմութեամբ, ահադին ծանուցում մը բոլոր տունս կը ծածկէր, և հոկայաձև Օփ մը մէջ մտած զլուխ՝ ծիծաղելի տեսարան մը կ'ընծայէր անցորդներուն:

— Հայրիկ հող կեցիր, կ'ըսէր Սիւզան իր թեթև ոտքերու վրայ ցատկելով ու ծափելով: Համայն Բարիզ ծանուցումը պիտի կարգայ: — Green for ever* կը կրկնէին եանքիները վազելով: A very good trick †, կը յաւելուին իրենց մեծ ախուսներու ծայրով խնդալով:

Փութով հաղուելով փողոցն իջայ:

Բոլոր Բարիզը ահագին ծանուցում մը դարձեր էր. կապոյտ, կարմիր, ճերմակ, դեղին, կանաչ, վարդագոյն՝ ամեն դունով ընտրելիներ՝ իրենց առաքինութիւններն ու հայրենեաց մատուցած ծառայութիւնները իրենց տան պատերուն վրայ՝ ի ցոյց հանած էին:

Իմ տունը կանանչ գոյնի կողմն էր: Green for ever բառերը երեք ոտք մեծութեամբ զլխագիրերով կ'երկնային անոր վրայ, դիմացս՝ տպարանը մինչև երկինք հանած էր հսկայ ծանուցում մը՝ որու վրայ կը կարդացուէր:

Քաղաքացիքդ

Աշխարհիս առաջին քաղաքին. Մի ընտրէք.

Ո՛չ սեղանաւոր,

Ո՛չ փաստաբան,

Ո՛չ երկդիմի մարդ,

Այլ՝ իր գործերովն յառաջ եկող

Վեհանձն հայրենասէր,

Գիւցազն խանութպան,

Ընտանիքի բարի հայր,

Բարիզու զաւակ՝

Պատուաւոր ու առաքինի Կրիստը ընտրեցէք:

Այս ուսմկապետական զատեշտը զՍիւզան կ'զբօսցընէր: Իր քովն էր

* Կեցցե՛ք կրկն:

† Պատրաստե՛ն խաղ մ'է:

Պ. Ալֆրէտ Ռօզ, պատկառելի դեղագործին՝ ու անոր ու թը որդուցը հետ: Հէնրի ուրախութենէն կը պարէր աղմուկէ զուարթացած տղու մը պէս. ես իմ մասին՝ քիչ հաճոյք կ'զգամ այս ժողովրդային տօներէ՝ որոնք երկու խօսքի մէջ կրնան բովանդակուիլ. ոչինչ բանէ համար՝ շար աղմուկ:

— Գրացի, ըսաւ ինձ դեղագործը, աւասիկ մեր գնդապետը կրակի կ'երթայ. կը յուսամ որ դու ալ մեզի պիտի օգնես, հակառակ կուսակցութիւնը զօրաւոր է և միայն ճարտասանութեամբ ու գործելով պիտի յաղթենք:

— Սիրելի պարոն Ռօզ, պատասխան տուի իրեն, եթէ ինձ կը ներէք՝ ես տունս պիտի նստիմ. այս բոլոր գործերուն մէջ շահ չունիմ: Ես մեծ սեպուհ մ'եմ որ իր գործերու տեսչութեան համար բազմաթիւ պարէտներ ունի թոշակով առանց զանոնք ընտրելու աշխատութիւնը իսկ յանձն առնելու. իմ գործակալներու մէջ անցածը ու դարձածը՝ հոգս անգամ չէ: Բարիզի շահապ մը լինչ է, օսկեթել հաղուստով պարոն մը՝ որ օտարդ աղջիկներն ու անմիջեմար այրիները կը կարգէ և տարին երկու հեղ փառաւոր կառք մը կը հեծնայ՝ պարոն ըզեշիը շնորհաւորելու և կառավարութեան պալատը ճաշելու համար: Մեծ պատիւներ են ասոնք՝ զորս մարդ քանիով ձեռք ձգելու ըլլայ նէ սուղ չէ. բայց ինձ պարզ ոտտանկիս՝ ջնջու է պէտք այս բանը՝ քանի որ ունեցած միակ առանձնաշնորհութիւնս վճարել է պիտածէ մը զորս չեմ բուարկեր: ** Չգիտեմ թէ շահապ մը զով կը ներկայացընէ, բայց ապահով եմ որ իր տեսչութեան ակ եղողները չներկայացընէր: Աւտի օվ որ կ'ուզէ թող ընտրէ զան. ես բժիշկ եմ, ունայն տեղը ինքզինքս չեմ նեղեր:

Փոխանակ պատասխան տալու, Պ. Ռօզ թեւս բռնեց ու զարկս քննեց:

— Ահարկուտօթթօր, ըսաւ ինձ, քու յախտենական կատակներովդ ինձ սոսկում կու տաս, կարծեցի որ ըզեզդ խանդարուած է: Միթէ հիմակ քեզի՝ որ ազատ երկրի մը քաղաքացին ես, հարկէ հասկըցընել թէ՛ այսօր մեր ամենէ մեծ շահերն ՚ի խաղու են. չէ՛ մի

* Voter

որ շահապը քաղքին ամենէ նշանաորանձը, մեր գաղափարներու և իղձերու ներկայացուցիչն է : Չէ մի որ շահապը մեր երեսփոխաններու աջակցութեամբ ոստիկանութիւնը, շուկաները, փողոցները և ամեն բան կը կարգադրէ այն գերագոյն իշխանութեամբ՝ որ մեր քուէն կ'ընծայէ իրեն :

«Եթէ տէրութեան մէջ անորմէ բարձրագոյններ կան, քաղքին մէջ ամենէ մեծը ան չէ : Մեր աջ թևը, մեր գործիքը չէ նա . չէ մի որ իր գործերուն և պիտածէին համար՝ միայն մեր առջև պատասխանատու է : Եւ կ'ուզես որ այսպիսի ընտրութեան մը առջև անտարբեր մնանք : Ես իմ մասին քիչ հոգս է թէ հիւսիսի և արևմուտքի պերճախօս պարոնները ինչ կ'ընեն 'ի Ռօշինկիթըն . այլ Բարիզ՝ իմ ստացուածքն ու իմ ինչն է, հօրս գերեզմանը, զաւակներուս օրօրը : Բարիզի ամեն ինչը կը սիրեմ, մինչև իր ելունդները* ու արասները . կը սիրեմ իր հին փողերն ուր մանկութեանս ատեն խաղացի, կը սիրեմ իր պողոտաները՝ որոնք քաղաքակրթութեան լայն շնչերակներ են, կը սիրեմ իր գոթական եկեղեցիներն որ անցեալը կը յիշեցնեն . կը սիրեմ իր կայարանները ու գարոցները որ ապագան կ'աւետեն ինձ : Ինծի համար է որ քառասուն սերունդ՝ երկրի այս անկիւնը ճոխացուցին, ժառանգութիւն մը կայ հոն՝ որ նախնիքներէս մնացած է և զոր աւելի գեղեցկացրնէլ էտքը իմ զաւակներուս կ'ուզեմ թողուլ : Չեմ ուզեր որ առանց իմ հաւանութեան՝ իմ սիրելի քաղաքին, ճշմարիտ հայրենեացս՝ ոչ մէկ քարին և ոչ մէկ հիմնադրութեան գպնան : Բարիզեան եմ ես . Բարիզն իմն է :

— Ռօզ, բարեկամդ իմ, պուսպի, գեղադործերու Աիկերոնն ես գու, բայց ճարտասանութիւնը ճշմարտութեան հակառակն ըսելու յատկութիւնն ունի : Ատառի ընելու գիտաւորութեամբ կ'ըսես որ Բարիզի նման համաբնասարան † քաղաքի մը ոստիկանութիւնը † մերիններէ մէկուն՝ պարզ քաղաքացիի մը յանձնել կ'ուզես . հոս զօրա-

* Verrue
† Pandemonium.
‡ Police.

ւոր ու անկախ ձեռք մը պէտք է որ զմեզ մեր կամքին ներհակ կառավարէ :

— Հայրիկ, ըսաւ Սիւզան, ինչո՞ւ այդ բարեմիտ Պ. Ռօզին հետ կ'ըյնիս : Լաւ գիտես որ ոստիկանները ընտրողը շահապն է . մեր փողոցը պահպանողն ալ գու ինքդ ընտրեցիր :

— Այն ատեն, կարելի է որ, ըսի ցաւակցութեան եղանակաւ մը . թաղական տուրքերու քանակութիւնն ալ այդ տուրքը վճարողներու քուարկել կու տար :

— Անշուշտ, ըսաւ Ռօզ, ծախք մը քուէարկելու իրաւունքը ուրու կ'ըյնի՝ եթէ ոչ զայն վճարողներու :

— Ուրեմն գեղեցիկ պիտածէ մը պէտք էք ունենալ : Միլիոններ հաւքելու այդ ինչ պատուական միջոց է : Եւ նոր փողոցներ բացած ատեն ալ՝ կարելի է բնակիչներու հաճութիւնը կը հարցընէք մասնաւոր շահերու ինքնամոլութիւնը ձեզի դէմ՝ զրգուելու համար :

— Հասցա որո՞ւ պիտի հարցուի, ըսաւ միամիտ գեղադործը . փողոցները մեզի համար շինուած են կարծեմ և մեր մասնաւոր շահերը միանալով կը կազմեն ընդհանուրին շահը :

— Պատուական է, պատուական, գոչեցի ինդալով . ամենքն ալ նոյն իշուն կաթը խմը են : Ողորմած Աստուած, որչափ հարկաւոր է եղեր ներկայ քաղաքակրթութեան մեծ գաղափարները՝ մուրճի հարուածներով այս նեղ ըզեղներու մէջ խօթել : Եթէ ասոնք կեդրոնացման մեծ հրաշքները տեսնէին, պիտի գիտնային որ մեր գործերը երբէք այնքան աղէկ չեն կատարուիր՝ որքան երբ ասոնք առանց մեր հաւանութեան կը յանձնուին այնպիսիներու ձեռքը՝ որ այն գործերէ շահ մը չունին : Հասցա՞ գարոցները, աւելցուցի . կարելի է ընտանիքի հայրերն են անոնց տուրքը քուէարկողները և ծախքին քանակութիւնը որոշողները : Հասց հետաքրքիր եմ այդ գումարը գիտնալու :

— Գարոցներու ծախքը, ըսաւ Պ. Սիֆրէտ իր արթնութիւնը ցուցընելու փութալով, ամեն մարդ կը քուարկէ . գաստիարակութիւնը հասարակաց պարտքն է, և ամեն ոք իրեն պատիւ կը համարի աւնոր մասնակցել : Երէկ չէ առջի օր 1862ի տուրքը սահմանեցին,

մարդ գլուխ երկու տօլար է առանց տերութեան տուածը հաշուելու :

— Ի՛նչ, Բարիզի մէկ միլիոն վեց հարիւր հազար բնակիչները, տասնևվեց միլիոն ֆրանք կը վճարեն մեծ քաղաքին դպրոցներուն համար : Այդ բանը երբէք տեսնուած չէ և պիտի չտեսնուի, պուացի, անկարելի է :

— Հայրիկ, վրայ բերաւ աշխուժիւ Սիւզան, Ջշմարիտ է քանի որ զայն ըսողն Ալֆրէտ է :

— Իրաւ է, սիրելի բարեկամներ, ըսի ըստ կարգէ, Գայլերու հետ բնակողը անոնց պէս ստալու է : Եթէ մեր գործերը իրօք մեր գործերն են, եթէ Բարիզ չէ թէ մեր տերութեան՝ այլ մեր քաղաքն է . եթէ մեր ստակը նոյն իսկ մենք քուարկելով կը վատնենք՝ որ անհաւատալի, անհնարին, փորձառութեան և ուղիղ մտքի դէմ բաներ են՝ ես ալ հասարակաց յիմարութեան տեղի կու տամ : Միայն Ամերիկայի մէջ տեսնուած սփինքս մ'է Բարիզեան մը՝ որ Բարիզի մէջ օտարական մը չէ, որ թաղապետական ատենին մէջ ձայն ունի, որ կը խօսի ու մտիկ կ'ըլլուի . է՛հ, քուէնիս տանք լմնայ, կեցցէ՛ Կրին, շահասին Բարիզու . . . Ի Մասաչուսէ :

— Կեցցէ՛ Կրին, գոռաց բոլոր ամբօխը դէպ'ի նպարավաճառին խանութը ուղղելով :

— Հայրիկ, ըսաւ Սիւզան, մեկնելէ յառաջ գրկէ զիս : Գիտես, յաւելցուց մեղմիկ, որ անունդ ցանկին վրայ է :

— Ի՛նչի՛ ցանկ, աղջիկս :

— Թաղապետական պաշտօնակալներու ցանկը : Բարիզեան-հերաւո՞քին մէջ ընտրողներու յանձնաժողով մը՝ զքեզ իբրև փողոցներու և ճամբաներու վերատեսուչ կ'առարկակէ Պ. Համպրիկ քով զոր հաշտարար դատաւոր՝ կը կարգէ : Հոս նայէ, հայրիկ . այս ըսելով

* Il faut hurler avec les loups.

† Juge de paix կը կոչանին օրեսակ մը դատաւորներ՝ որոնք պղտի քործերը դատելու համար քրտապետներու կարգադրելու պաշտօն ունեն : Հաշտարար դատաւորի պաշտօնը օրակալին ընդունուած չէ Տանկասարանի մեջ :

օրիորդ աղջիկս իր գողնոցի գրպանէն լրագիրը հանեց : Այս ի՛նչ երկիր է՝ որ նշանած աղջիկ մը լրագիր կը կարդայ ու ընտրութիւններու հետաքրքիր կ'ըլլայ :

Բարիզեան-հերաւո՞քը ձեռքս առի, խոշոր գրելով ու վայելուչ գովեստով մը ընկերացած անունս՝ ցուցակին ճակատը կը տեսնուէր . այս բանը վրաս եղական տպաւորութիւն մ'ըրաւ :

Իշխանութիւնը ամեն առթիւ քննադատելը կը հասկընամ, վասն զի Բարիզեան եմ, մեր մեծերը հեղինակ ու վրանին երգեր շինելը միակ աղատութիւնն է, որ նոյն իսկ Ղուի ԺՊ. ձեռքերնէս չկրցաւ աւուուլ, այս մեր քաղաքական պարագոյ մտիթարութիւնն ու վրէժխնդրութիւնն է : Այլ կառավարել ու հրամայել, պուալու տեղ գործել, ընդդիմութենէ ելնել ուրիշ ընդդիմութեան մը հանդիպելու ու ժրութեամբ և յաջողութեամբ զայն լռելու պարտաւորել ինծի համար անձանթ ու մեծ ակնկալութիւն մ'էր . փառասիրութիւնը արդէն սրտիս մէջ կը սպրդէր : Ար յիշէ՛ի որ առջի օրը Համպրիկի հետ խտտութեամբ վարուէր էի (լրացիր մը մեծ աղղեցութիւն մ'է) և թէ Ռօզի՛ ու իր որդւոց հետ դաժան կերպով խօսեցած էի, առանց մտածելու որ հոն տասը ընտրող կար :

Հետեւաբար՝ զՍիւզան գրկելու փութացի և դեղագործին ետեւէն վաղելով՝ հետը մտերմական խօսակցութիւն մը սկսայ իմ զիւան եզող սքանչելի դեղահատերու վրայ, դեղահատեր՝ որ թէ ծուխերս յեղափոխութեան պիտի շարժէին և թէ բազը պիտի շինէին բժշկին որ զանոնք երևակայեր էր ու դեղագործին որ զանոնք պիտի ծախէր : Անթեմի զուտ քաղուածոյ մը՝ ութ օրուան մէջ կը բուժէ խնայի մարդերու անբուժելի ու ցաւալի հիւանդութիւնը, այն է անմարտողութիւնը :

Այս հրաշալի զիւտին երախայրիքը բժշկական ձեւարանին կը պահէի . վեց տարիէ ՚ի վեր յիշատակարանս սկսուած էր . բայց մարդուս վրայ փառասիրութիւն եկածին պէս՝ խոհեմութիւնը կը կորուսնէ : Ձեւարանին փառքը զիս շլացնելէ կը դադրէր . փողոցներու վերատեսուչութիւնը քաղաքական ասպարէզը կը բանար ինձ, ընտրելի էի :



ԲՆՏՐԱԿԱՆ ՄՐՅՈՒՄԸ

Եթէ սիրահարութիւն մը ունեցած ես երբէք, սիրելի ընթերցող, եթէ կ'իշխես թէ այն երանելի օրերու մէջ սիրտդ ինչ զուարթ, աչերդ վառվռուն, միտքդ արագ ու կեանքդ թեթև էր, ահա այն ատեն զիտես թէ ինչ է ընտրելի մը :

Ես ալ կարճատեսութեանս հակառակ՝ յիսուն քայլ հեռուէն կը վերաձանչէի ընտրողներ՝ զորս երբէք չէի տեսած, ըզեղիս մէկ անկիւնը կը դանելի խել մը մարդերու պատմութիւնը՝ որոնց հետ երբէք չէի խօսեցած, և չէ թէ միայն անոնց՝ այլ նաև իրենց կիներուն, որդուց, հարց, նախահարց ու հեռաւոր ատճմիկներու պատմութիւնը զիտէի :

Յաջ և յահեակ խոստումներ ու ողջոյններ կը բաժնէի, պղտիկներու հետ ընտանի, մեծերու հետ համեստ էի. ամեն անիրաւութիւնները կ'ուղղէի և բոլոր սալարկները կը նորոգէի : Հիւպատոսներու աղերսած ատեն՝ Կիկերոն ոչ աւելի լեզուանի՞ ոչ աւելի վեհ՝ և ոչ աւելի խոնարհ եղած էր անվրէպ :

Կրին՝ մեր կացուրդին* միացաւ, յերաւի կողմէ ասել ընտրելի մ'էր նա : Զինքը առջև դնող ընտրողները՝ իրենց ընտրութեան մէջ յաջողած չէին, միևնոյն փողոցին մէջ անորմէ խիտ լուաղոյն մը կրնային գտնել : Նպարավաճառ մը չունի այն բարձր գաստիարակութիւնը որով մարդ իրն մաններն ու առարկաները կը հեղնէ :

Ամբոխին շողջորդութիւն մը չէր ընէր, կամ այն տեսակ խոս-

* Cortège.

տումներ՝ որոնք միշտ քուէտուփի մը յատակը կը մնան. չէր ընէր նաև այն հաճելի սուտերէն՝ որոնք ամեն ընտրութեանց արհեստական հուրերն* են :

Կրին՝ սբաղ ու երկչոտ էր թանգարի մը նման որ առուտուր մը կ'ընէ և իր ամեն մէկ խոստումը կը կշռէ :

Ընտրողի մը ձեռքը սեղմելով — Ձեռքէս եկածը պիտի ընես, կամ Գոթոտրէն պարահաներու մէջ կը հրնուին, կամ Եթէ ասելի յարմար կը դասուի գն. Լէիլ ընտրեցէ, ըսած ատեն՝ իր դերը կատարած կը համարէր :

Իրեն ուղղած բարեկամական յանդիմանութեանցս՝ սառ եղանակաւ մը կը պատասխանէր :

— Խիղճս կարգիլէ զիս ասկէ աւելին ընելու, ձեռքէս եկածէն աւելին չեմ կարող խոստանալ :

Նորօրինակ բան մ'էր ինձի համար, խղճահար ընտրելի կամ հետամուտ մը տեսնել, նպարավաճառի խղճահարութիւն : Հարստութեան կամ փառքի հասնիլ ուղղը մարդը՝ ընտրութենէ օր մը յառաջ իր խիղճը կրկին կղզւանքի տակ կը գնէ և շատ անգամ ետքէն ալ նոյն կղզւանքը չվերջընէր : Ֆրանսայի մէջ այս բանը ամեն մարդ զիտէ :

Այս ընտրական թափօրին մէջ ձանձրոյթէս պիտի մեռնէի թէ որ զուարթ և ահագնատեսիլն Համպրի մեզ չընկերանար : Արթուն ու պատրաստարան խմբադիրը ամենուն ծիծաղը կը շարժէր : Մեզ եղած ընդունելութիւնը սիրալիր չէր ամեն սեղ. ինչպէս իր բարեկամութեանց՝ նոյնպէս իր ատելութիւններու մէջ՝ Մարսօնը կոշտ անկեղծութիւն մը ունի, Վմերիկեան աղը՝ Ատտիկեան աղը չէ : Բայց Համպրի զարմանալի ճարտարութիւն մ'ունէր, կատակ մը չկար որու պատասխանը իսկոյն չտար, ու իրմէ հարուած մ'ուտողը մէկ մ'ալ անոր վրայ յարձակելու սիրտ չէր ընէր բնառ :

— Կրինը շահապ ընտրել, ինչ խանդկութիւն, կ'ընէր գեղնած գէմբով և նիհար վաշխավաճառ մը : Կառավարութեան պաշտօնատեղ

* Feux d'artifice.

նպարավաճառը աչքիդ առջև բեր հեղձը : Ջանդակը զարնուած ատեն՝ պիտի պոռայ . հասայ , եկայ , հրամայեցէ , ի՞նչ կը խնորրէ : Գժոխքին ծախն երթան ինքն ու իր բոլոր արբանեակները :

— Գժոխքին ծակը՝ ըսաւ Համպրի . հոն ի՞նչ պիտի բսնը խարդախութեամբ սնանկացեալ հօրդ . — բսնը թէ գուն ալ երեք անգամ սնանկացած էս չորրորդն սպասելով :

— Արինը ընտրելի՛ , կ'սկսէր նորեկքի խանութի մը դործակատարը . փայլուն կօշիկներով շրփրթիկ մը , որ ամեն մէկ բառ արտասանելուն՝ իր անմեղ խարաղանով օդը կը ծեծէր . Արին՝ խանութպան մը , որ ձի մը էշէ չկրնար զանաղանել :

— Մի վախնար , տղաս , զքեզ շատ դիւրին է զանաղանել :

— Պատուական պատասխան և արժանի այնպիսի մարդու մը՝ որ իր հանձարով կ'ապրի :

— Թէ որ դու ապրելու համար միայն հանձարդ զբամազլուխ ունենայիր , ինձի պէս գէր պիտի չըլլայիր , տղաս , պատասխան տուաւ Համպրի՝ ամբոխին քրքանքներու մէջ տեղէ իր ճամբան շարունակելով :

Միութիւն անուն հիւրատունը մտանք՝ որու տէրը իբրև քաղաքին ազդեցութեան տէր ընտրողներէ մէկը ներկայացուցեր էին մեզ : Այլ իր տան մէջ՝ եթէ սանձը բունողը մարդն էր , կի՞նն էր ուղեցոյցը : Կրինի առաջին խօսքին՝ կրակոտ տան տիկինը զինքն ընդմիջեց ,

— Կրողը տանի քաղաքական խնդիրները , ըսաւ :

— Կրողը տանի հիւրատունը , պատասխան տուաւ Համպրի , տիկնոջ մեծ բարև մը տալով :

— Յովսէփ , պոռայ խրոխտ Հերան , կի՞նդ կը նախատեն և գուժաւի կոճիկ պէս կը նստին : Միթէ երակներուդ մէջինը կո՛ւրջուրի* արին է :

Այս սոսկալի ձայնին վրայ՝ Յովսէփ յանկարծ կայ առաւ աչերը մեծցրնելով : Կարծեմ թէ եթէ փողոցը գտնուէինք , բարի մարդը՝ յօժարութեամբ մեր ձեռքը պիտի սեղմեր . իր լայն դէմքէն , կախ

* Ռասիզմէն Հնդկահասի սրբաձօ անուան է :

շուրթէն ու մեծ փորէն չէր գուշակուեր որ պատերազմական կայծակ մ'էր նա . բայց իր կնոջ աչքին տակ դանուելուն՝ խոհեմութիւն համարեց բարկութեան ելնել . արտաքին կռիւը ներքին խաղաղութիւնը պահելու միջոց մ'էր :

— Թո՛ղ դայ նայիմ , սա գեղեցիկ հետամուտը , պոռայ նա հասա ձայնով մը՝ որու շարութեան եղանակ մը կը ջանար տալ . սա տեղ զինքը կախելու համար լիամ մը ունիմ իր արամադրութեան տակ :

— Մեծապէս շնորհակալ ենք , սիրելի բարեկամ , ըսաւ անոր Համպրի անուշիկ ձայնով մը , մեր խիղճը շներեր որ զձեզ ընտանեկան կարասիէ մը զրկենք :

Ամենքս ալ սկսանք խնդալ այս Պօղիբէմի որջին խոյս տալով , բայց եկ ու տես որ ճամբանիս կտրուած էր : Գրան սեմին վրայ՝ տիկինը , վարժութիւն ընող պահնորդի մը նման կանգուն , զՀամպրի արդիւնց ու բարկութենէ գողացող ձայնով մը ,

— Գիտես ես ով եմ , պոռայ անոր :

— Ջձեզ ո՞վ չճանչեր ու վրանիդ չզարմանար , վրայ բերաւ Համպրի պարծենկոտութեամբ , սիրուն մանուկ մ'էք գուք որ տակաւին խեղահաս ըլլալու տարիքը հասած չէք :

Ատր վրայ բարեկեց նա , պատուական կինը Ղուլտի կնոջ արձանին պէս անշարժ թողլով :

Ասոնք կռիւի պզտի սկզբնաւորութիւններ էին տակաւին . անդին հրապարակային ժողովներ ալ կային՝ ուր ընտրելիներու հանդամամանաց վրայ վիճաբանութիւններ կ'ըլլային : Պատերազմը հոն տեղի կ'ունենար և յաղթութիւնը կ'որոշուէր :

Իրարմէ բաժնուելու վայրիկանն եկած էր . ամեն մարդ անձամբ դործել պէտք էր : Կնձի համար Լտարանը երթալ որոշուեցաւ : Մտայ այս ահադին սրահը՝ ուր յուզուած ամբոխ մը կը ծփար : Ջիւ ճանչեցին , անունովս կանչեցին . ամենուն նայուածքը վրաս դարձաւ , որով սիրտս վախ մ'է մտաւ , կը փափաքէի քաշուիլ այս դժնդակ հետամուտիցնէ՝ որ զիս հասարակութեան կը յանձնէր . այլ բարէ , կարի ուշ էր :

Գիմացս՝ ըեմի մը վրայ ելած մարդ մը , տարօրինակ աշխուժով

մը կը խօսէր ձեռքերը շարժելով: Լուեւեայն ականջ կը դնէին իրեն. յետոյ յանկարծ կեցցէ՛ներ ու սարսափելի մռնչիւններ կ'արձակէին: Սարսոնները ահա այսպէս կը ծափեն* կամ կը սուլեն: Այս ժողովրդային աստնաբանը որ ըստ իր քմաց ամբոխին կիրքը կը շարժէր, Լիթլ սեղանաւորին փաստաբանն՝ ու մեր թշնամի Փօքսն էր:

Զինքն անիծելով հանդերձ, ստիպուած էի խոստովանիլ սակայն՝ որ տաղանդ ունէր նա և զայն առ չարն կը դորձ ածէր: Կարդ ըստ կարգէ՛ լուրջ և զուարճախօս՝ իր հակառակորդներու զովեսան ընելու կերպ մ'ունէր որ զանոնք ծաղրելի կը ներկայացընէր, և իր ընտրելիները կատակելու ձև մը՝ որ զանոնք կը բարձրացընէր ամենուն աչքին:

Իր խօսքը ըմբուց նա հարևանցի մը հաշուելով այն հարստութիւնները՝ զորս սեղանատունները Յմերիկայի մէջ կը սփռէին: Լիթլ՝ Յրամազդ մը դարձաւ որ նոր Գանայիտի մը կուրծքին վրայ ոսկեղինիկ անձրեի կաթիլներով կը վազէր: Փաստաբանին ձայնին՝ երկաթուղիք, նեղուցք և շոգենաւք, ամենքն ալ եկան շարուեցան սեղանաւորին շուրջը ընտրական կացուրդ մը յօրինելու համար ա՛նոր, մինչդեռ ասենախօսը արհամարհական ձևով մը կը ցուցնէր իր շարաբին մէջ խղզուած՝ իր աղկերներու, սողաձուկերու և հաշիւներու մէջ բնկումս նստարարաւճառը:

— Խաղաղութեան բարեկամներ, պոռաց նա խօսքը ըմբընելով, միթէ քաղաքին գլխաւոր պիտի կարգէք այս վոսֆօրեան լուցկիներու գործատէրը, որու ապրանքը ամեն հրդեհներու մէջ կը գտնուի: Բարեկամքդ ազատութեան, հարաւի դերիները սնուցանող պատուարձ ծախող մը պիտի ընտրէք, որնոր վաղը կրնայ սնանկանալ եթէ իր գնորդները մեր քաջութեամբ ազատութիւն գտնելով իր թունաւորուած ապրանքը ետ տան իրեն: Ո՛չ, երբէք այդ խայտառակութեան պիտի չզիջանիք: Ես իմ՝ մասիս՝ հարազատ եանրի՛ հայ-

* Ինչպէս որ Լիթլերցողը քեզի անշուշտ՝ բեմասայութեան մ'ապէն քափելէ՛ բողոքութեան, և սուլելը դժգոհութեան նշան է:

րենեաց բարեկամ՝ ու մեր ամեն փառքերու վրայ հպարտ՝ ձայնս փոխանակ ասոր տալու լուաղոյն ունիմ՝ տալ. . .

Հոս կայ առաւ նա աչքը թարթելով, ձայնը մեղմելով, ու շարունակեց,

«Բուէս տալ. . . անոր՝ զոր մեր կանայք իրենց տիեզերական դթասրտութեան մէջ՝ խեղճ ու ընկա՞ծ երեշտակ մը՝ կը կոչեն:

Ծափերու որոտում մը բեմասացը ողջունեց: Բարձրաւանդակէն վար իջաւ նա շնորհաւորութիւններ և խոստումներ առնելով: Ամեն ժողովներու մէջ՝ տիմարներու հօտ մը կայ որ վերջին խօսողին ետեւէն կ'երթայ մայելով:

Այս չէր բաւեր մասնիչ փաստաբանին, և ահա ուղղակի ինձ մօտեցաւ նա, ձեռքն ինձ երկնցուց զոր չհամարձակեցայ մերժել և ձայնով մ'որ բոլոր սրահին մէջ հնչեց:

— Տօբթօր Միթ, ըսաւ, հիմա կարդը քուկդ է, խաղն ազատ է ամենուն համար, եանքիներու սկզբունքն այս է:

Պաղ քրտինքով մը ծածկուած ոտք ելայ, ամեն կողմէ՛ մի րբէ+, և մի րբէ+, կը պոռային: Այս աղմուկը, վրաս սեւեւեալ նայուածքները, յետոյ լուծիւնը՝ զիս շուարեցուցին. աչքերուս առջևէ կարմիր ամպ մ'անցաւ, ձայնս կոկորդիս մէջ սպառեցաւ, սրտիս տրոփիւններուն տակ բոլոր մարմինս կը դողար: Ի՛նչ չէի տար թշուառական փաստաբանին լեզուանտ թիւնը ունենալու համար:

Անորմէ աւելի ազնիւ դաղափարներ, աւելի անկեղծ հայրենասիրութիւն մը ունէի, այլ փաստաբանը իր արհեստին սովորութիւնը ունէր, և ինձ՝ ազատ երկրի մը քաղաքացոյց՝ խօսիլ անդամ չէին սորվեցուցած. յաղթուած՝ և առանց պատերազմի յաղթուած էի:

Բարկութեան ու ամօթէս պիտի մարէի, երբ յանկարծ Հէնրի՛ տղաս, որ դեղնիւ կը անանէր, բեմին վրայ ցատկեց և նշմայր ըրաւ որ խօսիլ կ'ուզէ: Մարմինը շիտակ, գլուխը բարձր, ոտքերը ուղղորդ, ձախ ձեռքը՝ կոճկուած խիլային մէջ խօթած, աջ ձեռքով շնորհալի բարև մը տուաւ նա, և սպասեց որ աղմուկն ու շփոթը անցնին:

* Սասանայ:

— Իր տղան է, իր տղան է, կը մըմուսային ամեն կողմէ : Մէր
բրէ՛, Ֆեր բրէ՛ :

Ամենքն ալ տղուս կը նայէին հետաքրքրութեամբ, խորին լու-
թիւն մ'եղաւ, եթէ ճանճ մ'անդամ թուէր ձայնը չպիտի լսուէր :

— Քաղաքացիք և բարեկամք, ըսաւ նա յստակ և ազդու ձայնով
մը, Լիթլ սեղանաւորին սարսափելի Գողիաթին դէմ կուռեւոյ չեմ
դար, ատոր համար քար չպակիւր մեզ, վասն զի Փղշտացին մեր
պարտէզին մէջ շատ քարեր նետեց, բայց ես Գաւթի միայն երի-
տասարդութիւնն ունիմ՝ և այս չափէ դուրս վարժ ախոյեանին հետ
կուռեւոյ ոյժը չունիմ :

Պիտի աշխատիմ միայն հայրս ու մեր կուռակցութիւնը պաշտպա-
նել. հաւաստի եմ, ազնիւ սրտեր, որ ձեր մէջ, չլսնուիլ մէկը
որ չըսէ — այս երիտասարդն իրաւունք ունի :

— Մէր բրէ՛, Ֆեր բրէ՛, կը դռէին ամեն կողմէ, լաւ կը խօսի :

— Պատուելի դատաստացը, շարունակեց որդիս առաջին բառը
շեշտելով, նպարաւաճառութիւնը չսիրեր : Ասոր կը զարմանամ :
Վասն զի այնքան հասարակ աղ կը գործածէ՝ որ երջանիկ կ'ըլլայինք
եթէ մեր դնորդն ըլլար : Թող հաւանի մեր դնորդն ըլլալու՝ և ի-
րեն քիչ մ'ալ շաքար կու տանք՝ որմէ գուրկ է : Շաքարը մաղձը
կը բարեխառնէ և առանց անոր մարդ ամեն բան դեղին կը անսնէ, իր
զինակից եղբարց և բարեկամներու հետ անիրաւ կ'ըլլայ :

Չգիտեմ թէ պարոն որդիս այս կողտ ճարտասանութիւնը ո՞ր
կը գտնէր, բայց կը տեսնէի որ այն՝ տղէտ ամբոխի մը ճաշակին
յարմար էր : Թողովուրդը կը խնդար, կը ծափէր, կանայք իրենց
շուշաակները կը շարժէին, Հէնրի ժպտելով մը կը պատասխանէր ա-
նոնց, ունկնդիրները շահած ու գրաւած էր նա :

— Ես սեղանաւորներու դէմ դէշ չպիտի ըսեմ, շարունակեց իմ
վեշտասանամայ ատենաբանը, սեղանաւորները՝ ատամնաբոյժներու
կը նմանին, մարդ իրեն թնամի ընելու չէ գանձնք, վասն զի, ո՞վ
դիտէ, կարելի է վաղը անոնց պէտք կ'ունենայ, բայց միթէ քաղ-
քին շահերը անոնց ձեռք տալու է : Կը յիշեմ մեծ մայրս՝ որ Քօն-
նէթթիբըթցի միամիտ կ'ին մ'էր, մեր պանդուխտ պատերու մէկ թո-

ուր, կը կրկնէր ստէպ իր առաքինի նախահարցմէ լսածը, թէ՛ սե-
ղանաւորն տէրութիւնը հաստատ կը բունէ՝ ինչպէս չուանը կախուած
մարդ մը, այսինքն զան խղդեւով :

— Երեք մունչիւն սեղանաւորներու դէմ, պուսայ սուր ձայն մը,
բազմութեան մէջ կորսուած պարտապանի մը ձայնը : Այս աղա-
ղալը արձագանգ ունեցաւ, սրահը սարսեցաւ այս մունչիւններէ՝ ու
րոնք իմ հայրական ախանջը Պէթհովրնի մէկ նուազին պէս գգուե-
ցին :

— Իմ մեծ մայրը, յարեց տղաս այս կեցցէնէրէ քաջալերուած՝
մեզ հանելուկներ կ'առաջարկէր ձմեռ գիշերները կրակին քով զմեզ
դրօսցընելու համար : Թէ որ, կ'ըսէր, միւսնոյն սուպրակի մը մէջ
սեղանաւոր մը, դատաստաց մը և գերձակ մը դնես ու ըստ բաղդին
քաշես, սուպրակէն ինչ կ'ենէ անպատճառ :

— Գող մը, կրկնեցին քսան ուկնդիրք մանկական յիշատակ մը
վերագաննելուն վրայ սքանչացած :

Հէնրի բեմին եզրը մօտեցաւ, մէկ մատը բերնին վրայ դրաւ ու
կէս ձայնով ըսաւ :

— Նաև մեծ մայրս այդ խօսքը կ'ըսէր, բայց այսօր փոխուած
է այդ և երջանիկ միլիոնատէր մը կ'ենէ կ'ըսեն :

— Անշուշտ, աւելցուց նա, հարստութեան դէմ չեմ խօսիր,
ես ալ ուրիշի մը պէս յառաջ պիտի երթամ՝ օրին մէկը,

— Եւ շատ յառաջ պիտի երթաս, իմ պղտի հսկան, դուստ
հաստ ձայն մը որ բոլոր ախումբը գողացուց :

— Յուցը ցէք ինձ, աւելցուց տղաս այս գովեստէն քաջալերուե-
լով, պատուաւոր կերպով վաստրկուած հարստութիւն մը, Հնդկաս-
տան, Կորեո-երկիր և Մօլուքեան կղզիները զրկուած նաւեր, ես կ'ող-
ջուենեմ Արիի քսան տարուան աշխատութիւնը, հաշուեզիտութիւնը
և ինայողութիւնը . . . բայց այն դիպուածական հարստութիւն-
ները, մէկ օրուան մէջ խաղով վաստրկուած միլիոնները մի ցու-
ցընէք ինձ, վասն զի ուրիշին ստակն է այն, որ աւելի վարպետոր-
դիի մը գրպանն անցած է, ճակտի քրտինքով չվաստրկուած հարս-
տութիւնը անպատիւ հարստութիւն է :

(Մէր քրէտ, Ռի քրէտ)

— Այլուր, սիրելի քաղաքակիցք, միթէ հարստութիւնը պիտի վարձատրէք, թէ ինքնուիրութիւնը և քաջարտութիւնը: Միթէ կրին չէր այն ազնիւ դնդապետը որ բոցավառ տուն մը մտաւ, կարելի է ձեր կիսը կամ աղջիկը փրկելու: Այն մանուկը որ երէկ հայրս բոցերու մէջէ կ'ազատէր, ամենքդ ալ ձեզ որպէսզի չըրիք: Ո՛վ դուք, որ մեր խիղճերն էք, դուք մեր հոգւոց աստղերը, մարք, ամուսինք, դստերք, քորք, խօսեցէք, տիկնայք, որո՞ւ համար պէտք է քուարկել:

— Ար սիրեմ քաջ մարդիկը՝ որ կրակին մէջ մանկելու չեն վախնար, շարունակեց իմ նոր Արաքոսը, այլ ամենևին չեմ ակործիր անոնցմէ որ կրակին մէջ կ'ապրին յաւիտեան: Այն ազնուականը որու անունը մեզ չեն ուզեր ըսել, թո՛ղ մեր հակառակորդներու բոլոր համակրութիւնը գրաւէ, չեմ զարմանար բնաւ. բնական է որ պատուելին Պ. Ֆօքս, իր ներկայացուցիչը իր ընտանիքին կամ բարեկամներու մէջ փնտռէ. մենք որ նուազ հարուստ ազգակիցներ ունինք, պէտք ունինք որ հասարակութեան գործերու գլուխը պատուաւոր մարդ մը գտնուի. և այդ մարդուն անունը պահելու հարկ չկայ, այն՝ իր գործերով յառաջ եկած . . . քաղքին զաւակը՝ Արինն է:

— Կեցցէ՛ Արին, կեցցէ՛ Սմիթ, դուայ բոլոր բազմութիւնը սրտացոյղ: Յաղթութիւն մերն էր:

Այս ազմուկին մէջտեղ՝ Հէնրի աչերովը զիս կը փնտռէր: Իր նորածին փառքէն խոյս տալու վրայ էր՝ երբ Քընթըքիի հուժկու որսորդ մը՝ այն հսկաներէ մին՝ որոնք կէս մը ձի և կէս մը կոկորդիլոս ըլլալուն վրայ կը պարծին, տղաս թևերուն մէջ առաւ և զան սրահին մէջ ժուռ ածեց:


Ստոր վրայ այնպիսի ծափահարութիւն մը փրթաւ որ կարծես թէ պատերը կը փլէին: Ամեն էրիկ մարդիկ նորատի ճարտասանին ձեռքը կը սեղմէին ու բոլոր կիները կը զրկէին զինքը:

Ուզեցի պուռալ թէ՛

— Ես եմ հայրը:

Բայց երկրորդ անգամ երկիւղը կոկորդէս բռնեց և հառաչեցի կամացուկ մ'ըսելով.

— Մէ՛ղք, երանի թէ Պ. տղուս տեղն ըլլայի:



Երբ ամբողջ ցրուեցաւ, ապագայ Ուէսթէրի անունը ու փառքը հուշակելով, ես հանդստութեամբ զրկեցի ատենախօսը և անոր հետ տան ճամբան բռնեցի: Իմ ծիծաղելի երկչոտութեամբ, խաղացած մունջ զերիս վրայ ամչնալով նորատի կիկերոնին հետ ըյնելու բաղձանքիս դէմ չկրցայ գնել, և,

— Ծօ, պզտիկ ստահակ, ըսի իրեն, շատախօսութեան այս դիւրութիւնը ու բանէ մը չըփոթող համարձակութիւնը ո՞ր գտար: Յանպարտաստից խօսիլ, ճառախօսել, ձեն ու շարժումը խօսքին կցելը և այս հիներէն 'ի վեր' կորուսած արուեստն ո՞ր սորվեցուցին քեզ:

— Գպրողը, ըսաւ տղաս: Այսպէս ըլլալը, նաև դու գիտես, հայրիկ, որ այնքան անզամներ իմ Ինֆելտո* բերնուց ըսել առած

* Enfield's speaker՝ Անֆելտրեն լեզուաւ հոստորական ամենէ գեղեցիկ կործաներու և իերթուածներու հաստատու ծ'է: Ատերիկայի դպրոցներու մէջ զայն կը գործ ածեն որոց ճարտասանութեան սորվեցնելու համար: Գիրքը՝ միմանիմութեան (mimique) և շարժումներու վրայ տեսութեան ծ'էս ունի, հանրեք պատկերներով որոնք մարմնու, գլխի և թևերու շարժումն որերքը կը ցուցնեն մեն մի կիրք Բացարեւելա յարմար:

են ինձ : Ինչպէս , համարձակ էի , թևս զլիսէս վեր կը վերցընէի , գո՛հ ես :

- Բողոք քու ընկերներն ալ քեզի պէս կը շողակրատեն :
- Անշուշտ , հայրիկ : Հասցա , համր ժողովուրդ մը լինչ գեղեցիկ քաղաքացիներ կը կազմէր : Խօսիլն ու շարժումներ ընելը , զրեւ ու կարգալու չափ հարկաւոր է մեզ : Չկայ մենէ մէկը՝ որ ընկերութեան , հասարակութիւն , կամ տէրութեան մէջ բան մը չըլլայ օրին մէկը : Կամ միթիւնիկ մը կամ ընկերութեան մը անգամ , կամ ընտրող , կամ ընտրելի հետամուտ , կամ գատաւոր , կամ ասեռնակալ , ամենքս ալ հասարակութեան դիմելու պէտքը պիտի ունենանք՝ և դպրոցին մէջ այս բանին կը վարժեցընեն զմեզ : Յանպատաստէ ճառախօսելը շատ զուարճալի՝ և դժուար ալ չէ : Մեր դրօսանքի ժամերու մէջ վիճելը մեզ ուրախութիւն մ'է . արդէն հարիւր ճառ բաժն եմ իմ ապառնի ընտրողներու : Բայց մանաւանդ շարժումներու մէջ յաջողակութիւն ունիմ : « Ըրթումը , կ'ըսէ Տիմոթէնէս , իմ Ինճիլիոյ մէջ , շարժումը , շարժումը » աւասիկ նայէ , հայրիկ :

Այս բնելով իմ ստահակը կ'սկսի ճեմել , լորտ Շաթէմի՝ Ամբիկայի պատերազմին դէմ բաժն չգիտեմ որ ատենարանութիւնը ճառախօսելով : Ար քայլէ , կանգ կ'առնու , աչերը երկինք կը վերցընէ , ձեռքերը կը միացընէ . մէկ ձեռքը գոյելով առջև կը բերէ , թևին մէկը սրտին վրայ կը դնէ և վերջապէս զիս կը գրկէ ահազին քրքիջ մը բառնալով . մինչդեռ ես իր հայրը՝ բառ մ'ըսելու և մատերէս մէկը շարժելու անկարող բոլորովին ապուշ ու ապաբան կը մնայի այս կանխահաս չարութեան առջև՝ որ փնտաւար դաստիարակութեան մը արդիւնք էր : Տղաս չէ թէ սքանչելիք մը՝ այլ շատ վարպետութեամբ վարժուած եանքի մ'էր :

— Թշուառական տղայ , ըսի իրեն . քանի որ Հնդկաստան կ'երթաս , հտպիտի արուեստը ինչ օգուտ պիտի ունենայ քեզի համար : Ի՞թէ փաստաբան ըլլայիր , ինչ և իցէ :

— Օրին մէկը փաստաբան ալ պիտի ըլլամ , հայրիկ , պատասխան տուաւ Հէնրի : Թող որ հոն երթամ տասը հազար տոլար շա-

հիմ . վերադարձիս օրէնսդիտութիւն կը ստիճիմ ու փորձ վարպետի մը հետ ընկեր կ'ըլլամ :

- Եւ յետոյ , հարցուցի այս նորատի փառասիրտ թենէ զարհուրած :
- Յետոյ , հայրիկ . Մասաչուսէի նահանգին մէջ զիս երեսփոխան ընտրել կու տամ ու ատենակալ կ'ըլլամ :
- Եւ ապա՞ :
- Ապա , հայրիկ , խորհրդարանի երեսփոխան և աւելի ետքը Միացեալ-Նահանգներու ատենակալ կ'ըլլամ :
- Եւ ետքէն :
- Ետքէն , հայրիկ , Պ . Սէվարտի պէս պաշտօնեայ մը՝ կամ , եթէ չյաջողիմ , Պ . Լինքոլնի պէս նախագահ կ'ըլլամ :

— Անկէ ետքը , սրուացի , անշուշտ Լիւսիֆէրի կը յաջորդես , վասն զի իրօք սատանայի մը փառասիրտ թիւնն ու հպարտութիւնը ունիս :

— Հայրիկ , վրայ բերաւ պատանին բարկութեանս վրայ անհանգիստ ըլլալով , իմ բողոք ընկերները ինձի պէս կ'ընեն : Մեր վարժապետները մեզ միշտ բաժն են որ մենք մեր հայրենեաց յոյսերն ենք և թէ հասարակապետութիւնը մենէ պէտք ունէր : Քաղաքական ասպարէզի մէջ մտնելը չէ թէ փառասիրտութիւն մը՝ այլ պարտաւորութիւն մ'է : Ամեն շատ յառաջ երթող քաղաքացին իր հայրենիքի ամենէ աղէկ ծառայողն է :

— Այն հեթանոսներ վայ , չըսես որ Հռոմի և Յթէնքի խռովութեանց հասեր ենք : Քրիստոնեայի մը առաջին պարտաւորութիւնը , պարոն , խնամար ըլլալը , քաղաքադիտութենէ փախիլն ու երբէք իր երկրին գործերուն չխառնուիլն է , բայց եթէ՝ երբ կառավարութիւնը զինքը կը բռնադատէ :

— Հայրիկ , ամպիոնի վրայէն մեզ այդպէս չեն սորվեցընէր : Անցեալ կիրակի բար մը յիշեցին մեզ , կարծեմ Պիոս Է . որ տակաւին եպիսկոպոս եղած ատեն կ'ըսէ եղեր « Բարբ քրիստոնեայ եղիք սրբէս զի Բարբ հասարակապետութեան ըլլաւ » : Մեր ամեն ազատութիւնները աւետարանէ կը բղխին : Անդադար կը կրկնեն մեզ թէ « քրիստոսի

բարոյականը զմեզ ուսմկայետութեան կը տանի, այսինքն եղբայրական հաւասարութեան ու ամենասղտի անհատ մը յարդելու: Սէբեցէ՛ դիմանա, ինչ ըսել է, բայց թէ՛ ամենէ զօրաւորը տկարագունին օգնելու է իր հարստութեամբ, իր խրատներով և իր ինքնուիրութեամբը:

Հէնրիի թեք բռնեցի:

— Իսեղճ տղայ, որ վարժապետներուդ խենթութիւններովը կուրցած ես, նայէ, ըսի, ուսմկայետութեան ծայրը ո՞ր կ'երթայ:

Մեր առջևէն զոյշ քայլերով կ'երթար տախտակէ շուրջաւի մը մէջ գոցուած մարդ մը: Այս գնայուն ծանուցումին վրայ խոշոր գիրերով կը կարգացուէր:

ԼՈՒՍԱՆՆ

ԼՐԱԳԻՐ ՌԱՄԿԱՊԵՏԱԿԱՆՆԵՐՈՒ

ՔԵՂԵՔԵՎԻՑՔ

Խառնակիչներէ ու տխմարներէ զզոյշ եղիք

ԿՐԻՆ }
ՍՄԻԹ } Կամ ծաղրելի երրորդութիւն նշաւակեալ
ՀԱՄՊԸԿ }

— Լուսանը ինձի տուր, ըսի լրագիր ծախողի մը:

— Աւասիկ է, պարոն, ըսաւ մարդը խեղկատակ եղանակաւ մը, բայց թէ որ խնդալ կ'ուզէք. կը յորդորեմ որ Աբել կամ Բէթե առնէք, ասոնց մէջ սոյն երրորդութիւնը աւելի աղէկ խայտառակուած կը գտնէք:

Լուսանը կը բաւէր ինձ. այս դարշելի թերթը բացի: Կրին ճարտարութեամբ հեղուած էր, անխորժ ճշմարտութիւններ ուղղուած էին առ Համպրկ. բայց, Աստուած իմ, զիս ինչպէս լուացեր էին. ինչ սուտեր, ինչ աղտեղութիւններ:

Այս թշուառական պարսաւածովը ճմուեցի ու զայն պիտի նետէի տղմն մէջ՝ որ իրեն վայելուչ տեղն էր, երբ տանս սեմին վրայ Համպրկի զուարթ ու լիրբ դէմքը տեսայ:

— Կը յաղթանակես, պարոն խմբագիր, ըսի իրեն լրագիրը քթին տակը դնելով: Ընտրութիւնները ձեր հանդէսներն են, զրպարտութեան սանդարամետականները:

— Ջրպարտութիւնը, ըսաւ հաստ մարդը ուսերը վեր ընելով, վարդ ախտի* կը նմանի, երբ գուրս կ'եննէ չմեղքներ, երբ ներս կը զարնէ կը մեղքնէ:

— Այսպիսի անարդական բաներ միայն ձեր ուսմկայետութեան մէջ կը հրատարակուին:

— Անշուշտ, պատասխանեց իմաստակը, նոր վճիռ մը ձեռք անցընելուն վրայ ուրախանալով: Եւրոպայի միապետութեանց մէջ, զրպարտութիւնը հրատարակելէ զգուշանալով զայն իրարու ականջն 'ի վար կը խօսին՝ որ աւելի վատ ու ապահով միջոց մ'է: Հոն մարդերու վրայ բացէ 'ի բաց չեն յարձակիր, որովհետեւ այն ատեն զրպարտեալները ինքզինքնին կը պաշտպանեն, այլ ետեւէն կ'սպաննեն զանոնք: Ահա հոն ստութիւնն ու քսութիւնը անբաժանելի կերպով կը թաղաւորեն և հոն է որ մանաւանդ տիրապետող իշխանը առաջին զոհը կ'ըլլայ այն թոյնին՝ որու գոց մնալուն պատճառը և տարածուելուն արգելք զնողն ինքն է: Summa petit livor†: Տօթթօր, զրպարտութիւնը բռնութեան ժանտախտն ու պատուհասն է, մինչդեռ ազատ երկրի մը մէջ պիծակի խայթ մ'է այն, և երկրորդօրը կը մոռցուի:

— Փիլիսոփայ պարոն, ըսի չորութեամբ, սա լրագիրը կարգաւ, մէջը քու վրայ բան կայ:

— Այդ աւելի պատճառ մը կու տայ ինձ զայն՝ չկարդալու: Միշտ միևնոյն բնաբանը ունի այն, և նագարաթը, փոխելու համար ութը կամ տասը ուսուցիկ մականուաններով զարդարուած գոյականներ:

* Rougeole Էրլանայոսի:

† Խախտնը Բարնը Կեղ կը յարչակի:

Թէ որ վարպետ պարագլուխներէ վարուած հլու գառնուկներու չհետեւելու յանդիմութիւնը ունիս, եթէ դու մասնաւոր կարծիքի և կամեցողութեան տէր ես, հպարտ երազող մը և փառասէր մեղեամբ մ'ես կ'ըսեն: Թէ որ ճշմարտութիւնը կը յայտնես քու քաղաքակիրցներու, եթէ ազատութեան պայմաններու վրայ զանտը լուսաւորել և անխիչամտութեան վտանգներէն զգուշացնել կը տրտնուիս. կը գրեն որ անորք աշխատողներուն մ'ես, կամ թէ մարտնչութիւնը սորուկ զարմացող մը. ուրիշ կերպ խօսելով, ժողովրդին աչքը բանալը՝ կոյրերը առաջնորդողներու արհեստը ջնջել և մոխրի վրայ նստեցնել է պարտաւոր մարդեր՝ որոնք քեզի չեն ներեր ամենևին: Եթէ անկեղծօրէն խօսիս և զեղծումներն ու անոնցմով ավրողները յակամէ անուանէ կոչես, աճէրիկն մէկ շողորմն ես և վարձու աշխատող մը: Թէ որ ընտրութիւնդ գէշ երթայ, երգիծական դավեսաներ, եթէ յաջողի կոչու ու ստորին նախատինքներ, ահա այս է ինքզինքնին չյարգող լրագիրներու և լրագրագետներու յախտնական եղանակը: Մենք ասոնց սովորած ենք, ինչպէս փողոցները շրջող երգահաններուն: Այդ նուազը նախանձոտներու, վայրահաշններու ու կոշտահանջ բարեմիտներու վայելքն է: Մարդկութեան այդ սղտի սխալներուն ներողամտ ըլլալու է:

— Յօգուածը կարգի, կրկնցի համբերութիւնս հասած, տեսնենք թէ անհոգութիւնդ մինչև ո՞ր կ'երթայ:

Խօսնարանը մտածնուս պէս՝ որ բարեբաղդարար մարդ չկար, Համայնի սկսաւ կարգալ նախատալի պարսաւադիւր՝ մինչդեռ Հէնրի լուրերը իմանալու կը վազէր:

— Կրին դանդաղելու տեղ չունի, ըսաւ խնդալով վիթխարի լրագրագետը: Վրան այնչափ գէշ խօսուած է այս լրագրին մէջ որ յայտնի է թէ իր վարկը հրապարակին մէջ վրայ կը գնէ: Իմա ալ գէշ չերթար: Անոնքն Գալիլէոսի ըսեր են, ազուօր է, այս գէլնով Սեղեմիայի թիւնն անբաժանելի զէ երբ որոշեցրէր զիս է, խօսքը

* Անկէն:
 † Հէյսթիքի երէտ որածերու խեղհապալ անց մը:
 § Պանի որբին օտ Բաբոսի ընկերը, իշու վրայ հեծած կը նշարարուի:

այնպիսի դիցարանական կտոր մ'է՝ որ հեղինակին հմտութեանը պատիւ կը բերէ: Այս ամենը՝ յետին տագնապի մէջ գտնուող կուսակցութեան մը տկար ու անզօր սլաքներն են:

— Այս թշուառականներու խօսիլը ինչո՞ւ չեն արդիւնք:

— Տօքթօր, արդեօք փիլիսոփայաբարը գտար: Մարդկանց, ըսելիքը յառաջմէ գուշակելը գաղտնիք մ'է որ չէ գտնուած տակաւին: Զքեզ վախցրող գայթակղութիւնը արդիւնքու միակ միջոցը՝ ամեն մարդու բերանը կապելն է. գիւցաղնական միջոց՝ որ զմարդիկ դէշ ապրելէ արդիւնքու համար կ'սպաննէ: Բու ՚ի գործ դրած բժշկութիւնը ո՞ր է: Արիտի ըսես որ այդ ստահակները վատ պաշտօն մը ընելու համար վճարուած են, ազատութիւնը կը եղծեն, զայն կ'անարդեն. կ'ընդունիմ, բայց այս զեղծումը մեր իրաւունքներու իրաւութիւնը կ'սպահանջուի մեզ: Կան օրիորդներ՝ որ փողոցներու մէջ շրջելու ազատութիւնը չարաչար կը գործածեն, ասոր համար միթէ մեր կրկնը հարէ՞մի մը մէջ փակել պէտք ենք: Կան մարդիկ որ չափազանց որկրամուտութեամբ կամ զիննմուտութեամբ ինքզինքնին կը մեռցնեն. բայց միթէ ատոր համար Պարաթարիայ կողմէն մէջ Սանթոյի հաստատած գրութեամբ կ'ուզես որ ապրինք: Հրձիգի մը վախէն՝ կայծքան ու լույկին պիտի արդիւնք: Մարդասպաններու վախով մեր ազատ ժողովրդի առաջին իրաւունքներէ մէկը, զէնք կրելու իրաւունքը պիտի ջնջես: Ամեն ազատութիւն իրեն հետ կարելի զեղծում մը կը բերէ. նոյնպէս ամեն զօրութիւն և գործիք: Զեղծումներու առջև աննելու համար՝ ազատութիւնը ջնջել, չարիքին առջև աննելու համար բարիքն արդիւնք՝ նոյն իսկ Յստուծոյ դէմ դատ բանալ և հաստատել է որ նա արարչարգործել չէր գիտեր:

— Թէ որ զրգատութեան առջև անուղ չես կրնար, պուստի, պատմէ զայն. սոսկալի չարչարաններ հնարէ, ինչպէս որ վա սպաննողը կը պատմես՝ անանկ ալ պատիւս մեռցրնողը պատմէ:

— Դատական ասեանները բաց են առ ջիգ, պատասխան տուաւ Համայնի, այլ արհամարհանքը աւելի արագ ու ապահով պատիժ մ'է: Ընտրողներն այսօր քեզի եղած նախատինքներու վրէժը կը

լուծեն : Բայց նայինք անդամ մը թէ իրաւ զրպարանք են : Ես իմ մասիս ինքզինքս վիրաւորուած չեմ գտար :

— Զգիտեմ թէ երակներուդ մէջ ինչ ունիս , ըսի իրեն , լրագիրը ձեռքէն յափշտակելով : Մտիկ ըրէ անդամ մը թէ անանուն վատ մը ինծի պէս և իմ տարիքով մարդ մը ինչպէս նախատելու կը ժտի . ետքն ալ պիտի ցուցնեմ քեզ թէ այսպիսի անարդանքներն ինչպէս կը պատժուին :

Եւ բարկութենէ գողացող ձայնով մը հետեւեալը կարդացի :

Տօքթօրը երբակի տխմար մ'է : Ի ծնէ տխմար մը՝ որ երեսուն տարի ուսմանը սորվելով աւելի տխմարցած է . դոյզն ինչ փառասիրութիւն կը պակսէր իրմէ՝ կորուսնելու համար այն կտոր մը դատադատութիւնը՝ որ յարասեւ աշխատութիւնը ձգած է իր վրայ : Ամենու ծանօթ է այս մարդուն խենթութիւնը՝ որ իր քթին ծայրէն հեռուն չտեսներ : Անցելոյն ապուշ սիրահար՝ իր իտէականն է հին Եւրոպան . Իրեն համար գեղեցիկ բաները միայն այն զուռամալ ընկերութիւններն են՝ ուր Հռոմէական աւանդութիւնը , ուր վարչութեան բունութիւնը , ամեն կեանք ու ամեն անկախութիւն կը խզդէ : Մտիթ գիտունը , քսան անծանօթ ձեմարաններու փառքը՝ այն երկիր զածներէ մէկն է՝ որ արարչագործութեան օրը պիտի պուռար անվրէպ — Աստուած իմ , կեցիր , քառօր պիտի տակուվրայ ընես : Նա կը նմանի շողեկաւայ այն վարիչներու՝ որ կռնակին զիրենք տանող շողեկաւին կը գարձրեն : Տօքթօրն ալ միայն անցելոյն ստուերին մէջէ խոյս տուող և աներեղմը ըլլող բաները կը տեսնէ ու վրանին կը զարմանայ . չգտար որ իր ետին նոր արեւ մը՝ նոր աշխարհ մը կը ծագին , այն է անհատի վեհագեատութիւնը , ազատութեան յաղթանակը : Այսպիսի մումիա մը թող իր թանգարանին մէջ մնայ ու ապուշներու գովեստն ընդունին , զինքն հոն չենք նեղեր . Բայց հրապարակային կեանքի լոյսին առջն՝ ինչի կը ծառայեն իր մարմնուն աչքը , իր համր բերանը ու անդամալոյծ թեր : Այսօր մեր նորատի և փառաւոր հասարակապետութեան պէտք են ժամանակիս յարմար մարդեր , սեղանաւորներ՝ որ քաղաքակրթու-

թիւնը յառաջացնեն , ամեն օր նոր ձեռնարկութիւններ , նոր գործեր ստեղծելով . հսկողներ պէտք են՝ զմեզ առաջնորդելու համար գէպ 'ի այն վեհ ճակատագիրերը՝ զոր տպագան պահած է մեզի :

« Երեսնները թող գիրար թագեն . մեզի ընկերական մեծ բաղձանքները զգացող սրտեր , ներկայ կենդանի խնդիրներով վառ գլուխներ պէտք են : Թող զէվզէկներն ու տխմարները իրենց հին գլուխ կուռքերու համար քուէ տան , մեր հետամուտները այնպիսի մարդիկ են՝ որոնց վրայ Եւրոպա կը նախանձի , այն է Ղիթլ հանձարեղ ու առատասիրտ սեղանաւորն՝ ու պերճաբան և հուշակաւորն Քօքս :

« Ազդը ժողովրդեան ձայնը , ամպէ ելնող որոտումին պէս քուէտուփէ՝ դուրս գուալով բոլոր Ամերիկայի մէջ ուսմկապետութեան ընտրեալներու յաղթանակը պիտի հուշակէ . կեցցէ՛ Ղիթլ . կեցցէ՛ Քօքս :

— Կեցցէ , ըսաւ Համպրկ . ահա նաև քու սիրտդ շարժեցաւ : Պատուական հաստած մ'է այս , և մէջը բան մը չկայ որ քու արժանաւորութեան գպնայ . իրաւ քիչ մը կծու կատակներ կը պարունակէ այն , բայց ասոնց հետ գեղեցիկ և նուրբ ասացածք , վառ եռանդ մը և վարպետ դիտողութիւն կայ , ասոնց հետ մէկտեղ արդի վայելուչ ոճ մը : Այս հատուածը գրող երիտասարդը՝ ապուշ մը չէ :

— Հետս Ղուսանի գրատունը եկու , ըսի ըստ կարգէ , և տես թէ երբակի տխմարը՝ զմտացի երիտասարդը ինչպէս կ'սպտակէ : Այնպիսի գաս մ'է այս՝ որմէ այդ պարոնը պէտք ունի :

— Խենթ ես , պուռայ գէր մարդը միահաղոյն ոտք ելնելով : Եթէ ըսածդ մէկ ուրիշը լսէր , քենէ տասը հազար տօլարի երաշխաւորութիւն մը կ'առնէին կամ քակը կը զրկուէիր : Միթէ զմեզ վայրենիներու տեղ կը գնես : Քրիտոնէ չեմ գուն : Արքանաստի աւապաններու մէջ է որ կատաղիները հրացան 'ի ձեռին կը կուրին . Մասաչուսէի մէջ օրէնքի վրէժխնդրութենէ ուրիշ չկայ : Քաղաքակրթեալ ժողովուրդ մը շատ կը խօսի , աշխուժիւ կը կուռի , բայց ներքին չէ հակաւարդ մը սպաննել և ոչ իսկ անոր հետ մնամարտիլ :

— Այրենիններ էք, պտացի, որ պատոյ կէտի մը ի՞նչ ըլլալը չցիտէք :

— Այրենի դուն ես, կրկնեց Համգրի : Սպուղի, տօքթօր, արին առնելու տենչը զքեզ կը վայրենացընէ : Չմարդիկ սպաննել կամ անոնցմէ սպաննուիլը արդարութեան կամ բանականութեան դատին ի՞նչ օգուտ ունի, մնամարտութիւն մը՝ միայն բժշկի՝ կամ մնուելութեան մը համար շահաւոր կրնայ ըլլալ :

— Ուրեմն թուղթ մը արտողէ մը վատօրէն նախատուած ատենդ ի՞նչ կ'ընես, պարոն :

— Սիրելի տօքթօրս, պատասխանեց այս անամօթ ընտրելին . բարձր կամ ցած ձայնով Թուրքերէն առած մը կը կրկնեմ՝ որու մեծ իմաստութեան վրայ ուշդ կը հրաւիրեմ, Ո՛վ որ էք ետէն հաջող ամէն շահեբուն քար նեպելու համար կանչ կ'արանու, էք ճամբորդութեան նպատակին չհասնէք : Սյս ըսելէ ետքը՝ կ'երթամ իմ և քու ընտրութեանց հոգ տանելու . դու ալ քու կողմէ նոյնն ըրէ, ան ատեն Լուսանն ու իր հոետորութիւնը շուտով կը մոռնաս : Tu ne cede malis, sed contra audentior ito.* Մնաս բարև :



ԲՈՑԱԿԱՅ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԵՇԱՏԱԿ ՄԸ

Կնոջս ու զաւակներուս զալուստն իմ զայրոյթը մեղմեց, զբախ լուրերն աղէկ էին : Այլֆրէտ ու Հէնրի ամեն ժողովները պտտե՛ր՝

* Դժբաղբորութեան անջն օրից մի քար . ընդհակառակը առելի արիւնքն Բեամբը արիւնքուէ :

և ամեն կողմէ կեցցէներ ու խոստամներ հաւքած էին : Հէնրի ու Սիւզան իրենց բոլոր բարեկամուհիները տեսեր էին : Քաղաքին ամենէ երևելի տիկինները, շուրջ երկու հարիւր հոգի իմ լուսանկար պատկերը միտալի մէջ առած վզերէն կախած էին . մեր ընտրութիւնը ապահովուած էր :

Մեր համեստ ընթրիքի զուարթութիւնը վիշտերս կատարելապէս բուժեց : Ամենքս ալ մէկ սիրտ մէկ հոգի էինք : Թէննիս իր առջինեկին Կուշի օրուանէ աւելի ուրախ ու զուարթ էր՝

Միշտ դիտած եմ որ կանայք բնականապէս փառասեր են, երիտասարդ, դեղեցիկ՝ բայց բան մը չեղող ամուսին մը՝ չկրնար երբէք երկար ատեն սիրելի մնալ անոնց . և ծերունի էրիկ մը՝ եթէ իր ճերմակ մազերը փառքով կամ հարստութեամբ պսակուած են, անոնց ամենէ անոյշ ժպիտը կ'ընդունի : Երբ սէրը այս օրինաւոր փառասիրութեան հետ կը միանայ, ահա այն ատեն կ'ինը իրապէս մեր ընկերն է բառին ամենազեղեցիկ նշանակութեամբ :

Երկու սիրտ մէկ կը մտածեն կ'երազեն՝ և այս է երկրի վրայ ճըշմարիտ երանութիւնը . երանութիւն՝ որ գրեթէ անծանօթ է ՚ի Ֆրանսա, ուր նորելքը* չթողուր որ կ'իները լուրջ յօժարութեանց և վեհ կիրքերու ետեւ ըլլան . երանութիւն՝ որ հասարակ է յԱմերիկա՝ ուր հասարակաց կարծիքը կողմնակցութեան մը յառելու կը հրաւիրէ նաև կ'իները :

Սիւզան՝ իր մօրմէ աւելի եռանդոտ էր . վասն զի իմ արիւնս կը կրէր : Իմ ընտրութենէ ուրիշ խօսք չէր ընէր նէ : Իրաւ է որ զԱլֆրէտ իմ մեծ ընտրողներէ մէկն ըրած էր որով ինձմով զբաղելը՝ իր սիրականօնը զբաղել էր :

Իրիկունը՝ ընտրական նոր ցոյց մը տեղի ունեցաւ . բոլոր հրանցողները գրատ հաղած և ձեռքերնին ջահեր՝ նուագարաններն առնէնին ձգած՝ մեր պատուհաններու տակէն անցան :

Քաղաքին բոլոր պարմանիները՝ համազգեստ և զանազան հագուստներ հաղած կ'ընկերանային անոնց՝ երկայն ձողերէ կախած չինական լապտերներով : Կացուրդին մէջ տեղ՝ լուսաօրորուած նկա-

* Mode.

բովաճաղին լուսանցոյց մը՝ ասլած հասարակութեան կը ներկայացը-
նէր երկու սև սատանաներու նման բաներ՝ որոնք ճերմակ ծրարներով
բոցերու մէջէ կ'ենէին: Այս պատկերներու տակ գրուած Արինի
ու Սմիթի անունները՝ մարդկային նշանակութիւն մը կու տային այս
դժոխային տեսարանին՝ որ անցնելու ատեն ծափերով կ'ընդունուէր:
Մեր ազատած կիսն ու մանուկը՝ չորս սփիտակ ձիերով լծուած և
լապտերներով ու արձանագրութիւններով զարգարած կառքերու
մէջ նստեցուցած կը պարտցունէին:

Յաղթական պտոյտ մը, Էլէւսիսի զեղեցիկ օրերու արժանի թա-
փօր մ'էր: Ամեն կողմէ աղաղակներ, կեցցէներ կը լսուէին և եր-
բեմն նաև քանի մը մունչիւններ՝ որոնք խկոյն կեցցէի ձայնե-
րու տակ կը կորուէին: Հակառակ կուսակցութիւնը յաղթուած՝ ու
մեր հնարներու զեղեցկութեամբ ցրուած էր: Գժուարին էր Լիթ-
լի՝ մեր հրաշալիքներու հետ մրցիլ: Եւ ինչ կրնար պարտցընել
նա փողոցներու մէջ:

— Միթէ սնանկացած բաժանորդները՝ պիտի պարտցընէր: Այս-
պիսի ամենօրեայ տեսարաններով ժողովուրդ մը չհրապուրուիր:

Ժամը տանին, Ժէննի՝ մեզ Աստուածաշունչ կարգաց: Գանիէլի
հինգերորդ գլուխը հասած էինք նախընթաց հեղուն, այսինքն Պաղ-
տասար թաղաւորին և վրէժխնդիր ձեռքին պատմութեան՝ որ պա-
տին վրայ մահու վճիռը կը գրէ:

Մահէ, Թեկէ, Փարէս:

Մարթային համար մարդարէութիւն ընելու զեղեցիկ առիթ մ'էր
զոր նէ չփախցուց:

Կամայ ակամայ, Նարուզոգոնոսոր արքային նմանեցուց զիս՝ և
Վայրենի Եղբորս հետ բնակելու և եղան պէս դաշտերու խորն ուսու-
ղատապարտեց եթէ երբէք մոռնայի որ Բարձրեալը մարդկան վրայ
զերբադոյն իշխանութիւն մ'ունի և զով որ ուզէ արքունի գահը կը
բարձրացընէ:

Գասը քիչ մը չափազանց մեծ կը թուէր ինձ փողոցներու ապաղայ
տեսուչի մը նկատմամբ. բայց կարելի է կան մարդիկ որ թագաւոր
չեղած՝ Նարուզոգոնոսորի մը յոխորտանքն և ամբարտաւանութիւնն

ունին: Ո՛վ դիտէ եթէ Ասորեստանի գործակատարները՝ արդէն ի-
րենց առատասիրտ ինքնակալէն աւելի լիբը չէին:

Սիբիղան հեղինցի, սակայն ընտրելի ըլլալուս դաղափարով
այնքան յուզուած էի որ քունս չէր գար: Ուստի սենեակս ելած իս
պէս՝ Վիրգիլիայի ընտիր ծուխով ծխափայտս լեցուցի ու պատուհանիս
մօտ նստելով՝ յուզուած զգայութիւններս թմրեցընելու աշխատե-
ցայ:

Փողոցը անմարդի էր, լուսինը՝ անձայն ու գոց տուները իր ա-
ղօտ լուսով լուսաւորելու ատեն՝ զիշերային հանգարտութիւնը ու
խորհրդաւորութիւնը կ'աւելցընէր: Այս տիեզերական լուսութիւնը
միակ խանդարողն կամ զայն աւելի զգալի ընողը՝ անկողնոյս ոտքը
զրուած ժամացոյցի մը թնդիւնն էր: Այս միօրինակ երգէն օրօրուե-
լով ու ծխախոտին մուխովը թմրած՝ ինքզինքս երազներու յորձան-
քին տուած էի, երբ յանկարծ ժամացոյցը կենդանացաւ:

Ճախարակներու կունչիւն մը, անխներու և պարաններու հեծիւն
մը՝ իմաց տուին որ ժամը պիտի զարնէր:

Գերմանական ժամագործութեան այս հրաշալիքը դիտելու հա-
մար ոտք ելայ: Քովը հասած ատենս՝ ժամացուցին դաղաթին վրայ
թաւած փայտեայ դունաւոր ազաղաղ մը՝ թեկերը զարկաւ և երեք
սուր աղաղակ արձակեց:

Ետքը ազաղաղին տակը դուռ մը բացուեցաւ մէկէն՝ ի մէկ, և
ինձ 1830ի Բարիզը, Սէն գետը ու կառավարութեան պալատը ցոյց
տուաւ: Լաֆայէթ գեղձան կեղծամով, կապոյտ խիլայով ու սպի-
տակ տափատով մը հագուած՝ հետեակ մը, հեծելազօր մը և միան-
գամայն եռազոյն դրօշ մը կը գրկէր՝ որու վրայ ոսկեզօծ գրերով
կը կարգացուէր:

ԱԶՍՏՈՒԹԻՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱՑ ԿԱՐԳ:

Ժամացոյցը տաննեմէկ անգամ զարկաւ, տաննեմէկ անգամ արին
Լաֆայէթ գլուխը ցնցեց իր դրօշը շարժելով, յետոյ գուռը դու-
ցուեցաւ, Գաղղիայի ազլորը թեկերը շարժեց, առաջինէն աւելի
սուր Կոթիքէ մը ձգեց ու ատիլն աներևոյթ եղաւ:

Այս կորսուած յիշատակը, շատոնց ի վեր մոռցուած այս նշա-

նարանք իմ երեսասարդութեան ոսկեզօծ երազները միտքս բերին : Ո՛հ 1830ին մեր սիրտը ինչպէս կը գտնէր : Խեղճ տղէտներս չէինք զիտեր այն ատեն՝ թէ ազատութիւնը ամեն ուրիշ սիրուհիներու պէս՝ զինքը սիրողները կը սնանկացնէ ու կը մատնէ : Ազատութիւնն, հասարակաց կարգ, սարսափելի բաներ որ ներկայ ժամանակներու Մանի, Թէկէզ, Փարէան է : Ահա այս է հանելուկը որ տասնհինգ տարին անգամ մը յեղափոխութեանց սփինքսը՝ Քրանսայի կ'առաջարկէ : սփինքս՝ որ յարածամ պատրաստ է կուլ տալու զէօտիբը որ չկրնար զայն լուծել :

Ազատութեան, հասարակաց կարգ ըստած բաները՝ կարծես թէ իրարու անմահ թնչամիներ են՝ որ կարգ ըստ կարգէ յաղթական ու յաղթահար՝ իրարու գէմ անվերջ կուլու մը կ'ընեն որու մրցանակը մենք ենք :

Օր մը ազատութիւնը յաղթանակը կը տանի, երկինք ուրախութեան և յուսոյ ձայներով կը թնդայ . այլ այս զուարթ զիցուհայն գիմակի ներքև յաղթանակողը անիշխանութիւնն է՝ որ իր ետևէն կը բերէ, ամեն իրաւունքներու վրայ յարձակող, ամեն անտակ շահերու սպառնացող քաղաքական պատերազմը՝ որ ժողովուրդը զարհուրանքի մէջ կը թողու : Երկրորդ օրը՝ կը նայիս որ հասարակաց կարգը կը հաստատուի թուր ՚ի ձեռին . խաղաղութիւնը կը հաստատէ, լուսութիւն կը հրամայէ և շուտ մը ամեն արդել խորտակելով ինքնիր ծանրութեամբ կը սահի գէպ՝ այն անդունդը՝ ուր կ'ըլլանին այն ամեն զօրութիւնները որ խրատ ու սանձ չեն ընդունիր :

Արդեօք ո՞ր կէ կու գայ այս յարատե նաւարկութիւնը : Ինչէն է որ եօթանասուն տարիէ ՚ի վեր, առաքինի, քաջ և հանձարեղ ժողովուրդ մը, միայն աւերակներ կը կանգնէ, միշտ իր յոյսերու մէջ կը խաբուի և ինք իր կացութենէ դժգոհ է յարածամ :

Արդեօք ինչէն է որ Միացեալ-նահանգներու մէջ՝ ուր ազատութիւնը ամեն գլուխները կը վառէ . ուր՝ ոչ ոք հասարակաց օրէնքի խօսք կ'ընէ, ներքին խաղաղութիւնը չվրդովիւր երբէք :

Այս խռովարկու ռամկավարութեան՝ այս ինքնիշխան ամբողջին մէջ՝ որ ոչ ոստիկանութիւնը և ոչ զինուոր տնի, ինչու յեղափոխութիւն և ապստամբութիւն չկայ :

Ամերիկա՛ Քրանսայի պէս պատերազմի կարգաւ շարուած՝ հազար պաշտօնաւոր, ամեն բան հրամայող, ամեն բան նախատեսող, ամեն ինչ ուղղող, ամեն ինչ կանոնադրող զարմանալի վարչութիւն մը չունի . այս հոծ կառավարութեան առջև հլու, հնազանդ, ժուժկալ, ուղղեալ, կանոնադրեալ ժողովուրդ մը չկայ, բայց և այնպէս Ամերիկա հանդարտ ու երջանիկ է :

Ամերիկացոց համար հասարակաց կարգը ուրիշ բան չէ՝ բայց եթէ օրինօք երաշխաւորեալ ազատութեան լիութի վայելումը, և նոյն ազատութեան օրինաւոր սահմանէ ելողին պատժուիլը՝ արդարութեան ատեաններու ձեռքով :

Ամերիկացոց սահմանափակ միտքը՝ երբէք բարձրացած չէ մինչև այն պահպանողական կեդրոնացումը՝ որ մեր Գաղղիացոցս՝ միութեան պատճառն ու փառքն է : Այն համբակ ժողովուրդը՝ ազատութիւնը հասարակաց օրէնքէ զատած՝ անձնաւորած՝ ահարկու պարիսպներով և միշտ լեյուս թնչանթմերով պատած պաշարած չէ տակաւին : Հոն ոչ զատապետական վարչութիւն, ոչ խափանիչ ոստիկանութիւն, ոչ հրովարտակ, ոչ անբարեխաղի պաշտօնաւոր և ոչ առանձնաշնորհութիւն ունեցող ատեան կ'ըլլան :

Ամերիկա չունի այն վարչական ներքնազամ մեքենան՝ որ քաղաքակիրթ ազգերու մէջ ամեն արդելու գիտելիութիւն կը փշրէ ու ամեն անհատ կը ճղմէ : Հոն օրէնքի քամնակարող քաղաքացին իր անձին աէրն ու գործերուն պատասխանատու է . պաշտօնաւորը հասարակային իրաւունքէ աւելի չնորհ մը չունի, վարչութիւնը ատեաններու առջև դատելի և դատաւորը միայն օրէնքի թարգմանն է : Ահա բոլոր դրութիւնը որ իրօք ծիծաղելի սարդութիւն մ'ունի :

Այս վարչական սաղմին մէջ ուրիշ բան չես տեսնիր՝ բայց եթէ օրէնք ու դատաւորք, և սակայն ամեն կողմ հարստութիւն ու խաղաղութիւն : Զարմանալի հեղուցութիւն բաղդի՛ դոր մեր մեծ գիււանդակները տակաւին չեն բացատրած : Ինչպէս կ'ըլլայ որ մինչև հիմա կարելի չէ եղած համոզել Ամերիկացիները՝ որ իրենք ամեն կանոններու հակառակ՝ երջանիկ են, և թէ մեր յեղափոխութեանց վրայ մենէ պէտք են նախանձիլ :

Սոյն խորհրդածութիւններով քուն մտայ :

Չգիտեմ որքան ատենէ ՚ի վեր կը հանդէի, երբ ուժեղ ձեռք մը զիս ցնցեց : Անկողնոյս վրայ, քովս՝ հեծելազօրի տասնապետ մը կար : Այս երեւոյթը հաճելի եղաւ ինձ : Քանի որ հեծելազօր մը կար քովս՝ ըսել է որ Ֆրանսա կը գանուէի, հայրենիքիս մէջ :

— Ոտք ելիք, ոտք ելիք, Պ. Լըֆէպրը, պողոսց ինձ տասնապետը կապրօնեան արտասանութեամբ մը որ մէկ մղոն հեռուէն խտոր կը հոտէր :

Ի մտուստ նայեցայ այս սիրասուն բանբերին. իր դէմքը ինձ անծանօթ չէր : Այս աչքը, ձայնը, Սարդոնեան ծիծաղը՝ Յովնաթան Տրիմ, սոսկալի ոգեկանը՝ իմ թշնամին էր : Նենգաւորը ճանչցածիս պէս ուրախութիւնս վախի փոխուեցաւ :

— Ո՞վ էք դուք : Ի՞նչ կ'ուզէք, հարցուցի իրեն : Ի՞նչ իրաւունքով խաղաղատէր քաղաքացիի մը տունը կը մանէք գիշերայն : Իմ տունը իմ ամբոյն է :

— Լուծիւն, ոստանիկ, պատասխանեց տաննապետը : Ախճաբանութեան չեղնեք կառավարութեան հետ՝ որ չպատճառաբաներ, վասն զի իրաւունք ունի :

Այս ըսելով իր պայուսակը բացաւ, ու մէջէն դրօշմալ թուղթերու ծրար մը հանեց նա :

— Թիւ մէկ ըսաւ : Առ Պ. Լըֆէպրը, (անոր անձին կամ այնպէս կոչեցելոյն խօսելով) : Առ այժմ պարզ ազդարարութիւն մը, հրատարակային թերթի մը մէջ թաղապետական իշխանութիւնը քննադատելու համարձակած ըլլալուն համար, փողոցի սալարկի մ'առութիւն :

— Ի՞նչ նորալուր բան է այդ, պողոսցի : Կառավարութիւնն ինձ ազդարարութիւն մը զրկելու տեղ աւելի աղէկ կ'ընէ թէ որ ինէ ներում խնդրելով սալարկը փոխէ :

— Լուծիւն, ոստանիկ, վրայ բերաւ զինուորը : Իբր մասնաւոր անհատ չեմ ուրանար որ սալարկը անձուռնի է, դեռ հիմակ այս գրան առջև ընկած երկու ձի վերցուցի . այլ իբրև տաննապետ՝ ազգ կ'առնեմ քեզ թէ քու գանդատը որքան անխոհեմ այնքան ալ անպատեհ :

է : Թէ որ հազարապետս ինձ ըսէր. « Կասնուէր, լալը կ'ուզէի քեզի պէտք ըլլաւ » . — Լաւ, հաղարուէր, պիտի պատասխանէի և ուտիկանտ թեան սրահը* պիտի նետէի առաջին ստամբակը որ նոյն ժամուն լոյս ըլլալը պնդել ուզէր : Բարձրագոյն հրամանը կ'ըսէ թէ սալարկն աղէկ է. ուրեմն աղէկ է այն. միայն չարակամ մարդիկներ մեղաւալի չարութեամբ մը կ'երթան մասնաւորապէս կ'ըյնին այն տեղ :

— Ի՞նչ, ըսի բարկանալով, իր պարտաւորութիւնը չկատարող կառավարութիւնը քննադատելու իրաւունքը չունիմ :

— Ընդ հակառակը. ոստանիկ, կրկնեց տաննապետը, գանդատէ, Ֆրանսայի կառավարութիւնը բաւական կը ներէ որ զինքը քննադատես, այլ քաղաքավարութեամբ : Զինքը քննադատելու հրաման չես խնդրած իրմէ : Հետեւաբար անքաղաքավար գտնուած ես, սիրելի բարեկամ :

— Կը յարգեմ դքեզ, քաջդ իմ, բայց կը տեսնեմ որ զինուորի մը նման կը տրամաբանես : Կարծեմ թէ կառավարութիւնը մեզի համար եղած է և չէ թէ մենք կառավարութեան համար :

— Ահազին սխալ մ'է այդ, ըսաւ զինականը արհամարհական եղանակաւ մը որ զիս բարկացուց : Հնազանդողները հրամայողներու համար եղած են և չէ թէ հրամայողները հնազանդողներու համար :

— Բայց նոյն իսկ Ֆրանսան ենք մենք, մենք հայրենիքը կը ներկայացընենք :

— Հայրենիք, ըսածդ, բարեկամ, ըսաւ տաննապետը, մարեշալներէ, զօրապետներէ, հազարապետներէ, գնդապետներէ, տեղակալներէ, քաղաքապետներէ, շահապետներէ և ուրիշ ոսկեթել խիլաններէ կը բաղկանայ զորս կը յարգեմ, մնացածը՝ զինուորներու և հարկատուներու խումբ մ'է՞ որ հնազանդելու ու լռելու պարտաւոր են :

— Ա՞ռանց տրտաւալու, այնպէս չէ՞ : Այդ եղանակը կը ճանչեմ, անհ, թէ որ արդարութիւն ունենայինք :

— Թէ որ արդարութիւն ունենայիք, կառավարութիւն չէիք

* Բանար :

ունենար, ոստանիկ, վայրենի կ'ըլլայիք Անկիւացոյ կամ ուրիշ մարդակերներու պէս որոնք ուղածնին կ'ընեն: Քաղաքակրթեալ մը, Գաղղիացի մ'ըլլալու պատիւը պիտի չունենայիք:

— Թիւ երկու, շարունակեց նա: Պարոն Լըֆէպըր, իր ձախող անձը դուռէ դուռ պտըտցրնելու յանդգնութիւնն ունեցած ըլլալուն համար, ազգարարութիւն կ'ըլլայ իրեն Պ. քաղաքապետին կողմէ՝ որ բարեգործական ընկերութեան անդամութեան ձրի պաշտօնէ արձակուած է առայժմ:

— Որ և է հետամտութիւն աղատ է, պողացի:

— Անշուշտ, պատասխանեց տասնապետը, աղատ է, բայց կառավարութեան հրամանաւ:

— Թիւ երեք, շարունակեց. Ար ծանուցուի պարոն Լըֆէպըրի, որ այս օրս դուրս ձգելով ութ օրուան միջոցի մէջ՝ սճրական ասեանքը կազմող նախագահին ու դատաւորներու առջև անձամբ կամ փոխանորդ մը կարգելով պէտք է ներկայանալ, առանց կառավարութեան հաւանութեան, իրեն՝ կամ իրեն պէս անձանթթ ու զայն թակղիչ մարդերու անունները կրող սպեալ քուէթուղթեր * ցրուելուն համար:

— Ի՛նչ, իմ անունը կրող քուէթուղթեր չեմ կրնար բաժնել իմ ընտրողներու:

— Ամեն բան կրնաք, բարեկամ, պատասխան տուաւ տասնապետը, այլ կառավարութեան հրամանաւ: Է՛հ, հասցա ի՛նչ, կը կարծէք թէ բարեխնամ ու մարդասէր կառավարութիւն մը, կը թողնու որ խել մը ապուշներ անանկ խենթութիւն մ'ընեն որ կրնայ յետոյ ընդդիմադիր կուսակցութեան մը փոխուիլ: Թող ես կառավարութիւնն ըլլայի ու տեսնէիք թէ ինչպէս գրե՛ղ քա՛կը կը ղրկէի:

— Թիւ չորս: Ինքնակոչ ընտրական ժողով մը կազմելու համար հաւքուած խումբ մը մարդերու հետ հրապարակաւ միացած ըլլալուն՝ որ եթէ ոչ զազտնի ընկերութիւն, զոնէ ընդդիմադիր ժողո-

* Bulletins electoraux.

վակ * մը ըսել է, Պ. Լըֆէպըր վերոյդրեալ ասեանք ներկայանալու կը հրաժիրուի՝ որպէս զի պատժական օրինաց † 251րդ յօդուածին համեմատ առ այժմ բանախ դատաւարութիւնը լսէ:

— Թիւ հինգերորդ: Պ. Լըֆէպըր այն ժողովակին մէջ իր անչափահաս տղուն բերնովը խռովացոյց ճառ մ'ըսել առած ըլլալուն համար Պ. Բըթիի դէմ՝ որ կառավարութեան կողմէ ընտրելի հետամուտ է. ազգարարութիւն կ'ըլլայ իրեն առայժմ յիշեալ ասեանին առջև երևալու, իբրև կողմնակից, գործակից և ասիէ զատ քաղաքային օրինաց համեմատ իբրև պատասխանատու վերոյդրեալ յանցանքին:

— Ի՛նչ, ես իմ ընտրողները ժողվելու՝ և անոնք ալ իրենց երեսփոխանին կարծիքները իմանալու իրաւունքը չունին:

— Ամեն իրաւունք ունին, բարեկամ, պատասխան տուաւ տասնապետը, բայց միշտ կառավարութեան հրամանաւ: Ի՛նչ աղուոր բան կ'ըլլար, եթէ զինանոցի մը մէջ թող տրուէր որ զինուորք առանց հրամանի ժողվուին և պուան:

— Բայց զինանոցի մէջ չենք գտնուիր:

— Յիմար հարցումի չկայ պատասխան, վրայ բերաւ զինուորը: Բայց և այնպէս ձեր խորին սոցիալութիւնը լուսաւորելու կը զիջանիմ: Ամեն Գաղղիացի զինուոր ծնած և կարգախօսը § սպասելու պատրաստ է: Որչափ հրամանի տակ մտնէ այնչափ գոհ կ'ըլլայ: Պէտք չէ խռովել իր հնազանգութիւնը որ իր երջանկութիւնը կը շինէ: Թէ որ ես կառավարութիւն ըլլայի բոլոր շաղակրատները կը կախէի:

— Թիւ վեց: Պ. Լըֆէպըր անձամբ կամ ուրիշի ձեռքով պատերու վրայ շնչին ու ապօրինի ծանուցումներ կ'պցուցած ըլլալուն, նոյնպէս յեղափոխական թափօր մ'հանած՝ կամ հանել տալով անվայել խռովութիւն մը պատրաստած ըլլալուն՝ որ անշուշտ տեղի

* Club.

† Code penal.

§ Mot d'ordre.

պիտի ունենար թէ որ ոստիկանութիւնը՝ որու աչքը միշտ բայ է, խոհեմութիւն և աչալընութիւն չբանեցրնէր. կը հրաւիրուի վերոյիշեալ ատենին առջև երևելու օրէնքի հրամայած պատիժներու դատապարտուիլը տեսնելու ու լսելու համար:

— Հնորհք, տանապետ, գոչեցի, շնորհք պարոն, սխալի մը զոհն ընկած եմ: Անշուշտ Ֆրանսայի մէջ մեծ յանցաւոր մը պիտի համարուէի, բայց Ամբրիկա կը գտնուինք, հետևաբար անմեղ եմ: Ֆրանսայի մէջ յանցանք մ'եղած բանը՝ Միացեալ-Նահանգներու մէջ իրաւունք մ'է:

— Պարապ տեղ մի աղաչէք, պատասխանեց անողոր զինականը, զրպանէն բան մը հասնելով որ ձեռնկապի կը նմանէր: Իբրև մասնաւոր անհատ՝ կը պարծիմ որ սիրտս անզղայ չէ, այլ այս պարագայիս մէջ ես օրէնքին ձայնն եմ:

— Ուրեմն օրէնքը կասքօնութիւն մ'է:

— Լուութիւն, աստամբդ գու. շատ խօսեցանք: Թէ որ ձեր խօսքերուն հաւտա մարդ, նորածին մանկան սէս անմեղ էք ամենքդ ալ: Անմեղ կամ մեղապարտ, կասկածելի կ'երևիք ինձ, քաղաքացի, և զգուշութեան համար կը ձերբակալեմ զձեզ:

Այս ըսելով թևս այնպէս մը սեղմեց նա՝ որ ցաւի աղաղակ մը ձգեցի: Այս աղաղակը զիս արթնցուց: Փառք Աստուծոյ, կ'երազէի:

Այս գարշելի խրտուիւկը վանելու համար կազը վառեցի: Եղևի ինձ, անկողնոյս խորր սպառնական թևի մը շուքը տեսայ և այն երեղջիբայն՝ ու ծոպերը՝ որ ամենէ յանդուգն մարդերու ահ կը պատճառէ:

Վախէս սառած ու սիրտս դողալով՝ իր մահու վճիռը սպասող յանցաւորի մը նման անշարժ մնացի: Այս միջոցին ժամացոյցին աքլորը երկեց, աքլորը՝ որ զիշերուան դէշ ողինները կը փախցընէ.

* Menotte.

† Tricorne. Երեւ ծայրով զլեւաբի՝ որ ոստիկանութեան պաշտօնէն շնորհը և հեծելազօր էր հաբնին:

պատին կողմը դարձայ և . . . քրքանք մը ձգեցի: Այն զիս վախցընող թևը՝ իմ էր, երեղջիբայն՝ քանի մը տակու վրայ մագերուշութիւն էր. վերջապէս այն զարհուրելի ծոպերը՝ իմ. . . : Անթերցողութեամբ պարկեշտութիւնը յարգելուս խօսքս չեմ լմնցընէր: Ճառագս անցուցի և անկողնոյս վրայ նետուելով,

— Ո՛վ զինական, սրտացի, արի և անկեղծ զինուոր, պարզ ու վեհ սիրտ, քենէ աղէկ ոչ ոք կը ներկայէ հասարակաց կարգը այնպիսի ժողովուրդի մը մէջ՝ որ կառավարութիւնը համազգեստ հագած՝ և խաղաղութիւնը թուր 'ի ձեռին կ'ըմբռնէ: Ար սիրեմ ու կը յարդեմ զքեզ, ով զինականդ՝ որ մուրացկանին ու դատարկաշըջիկին սարսափը, նենգորսակին* կսկիծն, պանդոկապետին խղճի խայթը, շահապիւն աջ ձեռքը, Պ. քաղաքապետին միջնորդն ես, այլ իմ երևակայութեան յանդիմութեանց ներէ՛, կր փափաքիմ որ զայ օր մը որ աղքատութիւնը յանցանք մը շտպուի, որ ոստիկանութիւնը շատ մը բարիքներու թումը չընէ, չարիքներու առջևն առնելու համար՝ որոնք բացառութիւններ են միայն. կը փափաքիմ որ ազատութիւնը ամեն քաղաքացիներու հաստարացէս ջամբուելով մեր օրէնքներու մէջէ սրբէ հանէ այն յանցանքները որ յանցանքներ չեն, կը փափաքիմ 'ի վերջէ որ (ուսերդ վեր մի ըներ ով կառավարութեան պաշտօնեայդ), կը փափաքիմ որ միայն արդարութիւնը հրամաններ սայ քեզ և քու վրէժինդիր պաշտօնը միայն խաղաղութիւնը հալածելով և օրինաւորացէս ճանչցուած ապիրամները ձերբակալ ընելով դո՛հ ըլլայ: Գիտեմ, ո՛ տասնապետ, թէ այս Ամբրիկեան Է-բ-է-ն ուրբան քու ծիծաղը պիտի շարժէ, բայց զայն քսանեմէ կերորդ գարուն կը կտակեմ. ինչպէս նաև այն մտածութիւնը որ օր մը իմ անունը պիտի անմահացընէ: Այն օրը կը փափաքիմ որ իմ ծննդեան քաղքին մէջ, իմ տան ու փողոցին տեղը բունող հրապարակին մէջ՝ երևակայական կիսարձան մը կանդնեն ինձ չորցած աղբիւրի մը վերևը և հոն հետևեալ խօսքերը փոռաղբն,

* Braconnier.

Ի ՅԻՇԱՏԱԿ ԵՐԱԶՈՂԻՆ

Որ յամին 1862

Կը փափաքէր որ միայն արդարութիւնը

Օրինաւոր ամբաստանութեան վրայ՝

Իրաւունք ունենայ քաղաքացիները ձերբակալ ընելու .

Երախտագէտ զինականք

Այս մահաբանը կը կանդնեն :

14 յուլիս 2089.

Եւ վերջին հինգ ֆրանքոնցս կտակ կ'ընեմ՝ արձանագրութեանց
և գեղեցիկ գարութեանց ճեմարանին՝ սրպէս զի սոյն գումարին եր-
կու հարիւր տարուան շահը վրան զարնելով, Երբայերէն, Ատորե-
բէն ու Խոյսերէն լեզուով գրի առնէ՝ զազափար մը՝ որ 'ի ծնէ
չարաճճի Գաղղիացին երբէք չէ հասկըցած և զոր բացատրելու ան-
բաւական է նաև իր լեզուն :

Sub lege libertas*.

* Առատութիւնը երէնդ պահպանութեան որով :



Հասաւ վերջագէս սպրիլի 5, հռչակաւոր շարաթ օրը որ Շօսէ
տ'Անթէնի մէկ Բարիզեանը՝ Բարիզն 'ի Մասաչիւսէի թաղական վար-
չութեան անդամ պիտի ընէր : Առաւօտեայ ժամը եօթին, սքանչելի
օդով մը, հանդիսաւոր լուութեան մը մէջ՝ քաղաքին հարիւր քսան
քուէտուփերը բացուեցան :

Մէն մի դրասան գուռը՝ ընտրողներու երկու երկար շարքեր կը տես-
նուէին որոնք բոլորովին Սաքսօնեան համբերութեամբ ու ճշու-
թեամբ մը իրենց վեհապետական իրաւունքը 'ի գործ դնելու վայր-
կեանը կ'սպասէին :

Արիւնները դադրած էին, նախընթաց օրը իրար թշնամի եղողները
մէջէնին կատակներ ու բարեներ կը փոխանակէին : Մեծամասնու-
թեան վճռոյն առջև ամեն դք կր խոնարհէր կանխաւ՝ տարի մ'ետքը
փոխադարձաբար շահելու պայմանաւ :

Կէսօրին, քուէտուփը պարպուած և ընտրութիւնը հռչակուած
էր : Արին ընտրուեցաւ 116,735 քուէով փոխանակ Ղիթլի՝ որ
78,622 քուէ ստացաւ : Համարի 116,327 քուէ շահեցաւ մինչդեռ
գժբաղը Գոքսը միայն 18,124 ունէր : Աերջագէս ես ալ՝ քանի մը
նախանձոտներու վէճի տակ ձգած քուէ թուղթերու հակառակ՝ ընտ-
րուեցայ 199,999 ձայնով : Փողոցներու տեսուչի մը ասկէ աւելի
պատկառելի մեծամասնութեամբ ընտրուիլը երբէք չէր տեսնուած :

Այս ընտրութեան ազդեցութիւնը մեծ եղաւ 'ի Մասաչիւսէ և
աւելի մեծ յԱնկլիա : Այն օրերը բամպակին գինը վրայ դրած ըլլա-
լուն՝ Թայփը լրագիրը հրատարակեց որ եանքիները վայրենիներ էին

որոնք իրենց ընտրութիւնները միայն հրացանի հարուածներով կ'ընէին և ասկէ հետեցոյց որ ռամկայետիւնը անկառավարելի դրութիւն մ'էր :

Ծերն Բամ՝ խորհրդարանին մէջ այս բնաբանը բռնեց և հաստատեց որ Անկլիացիք աշխարհիս առաջին ժողովուրդն էին և թէ Յովնաթան՝ այսինքն Ամբրիկացին՝ ժառանգական ազնուապետութիւն մը չունենալուն համար ճօհն Պիւլին՝ այն է Անկլիացիին ոտքին չէր դարձ. քիչ մը կարծր ճշմարտութիւն՝ որ բարին ճօհն Պիւլ իր սովորական համեստութեամբ մարտեց իր ամենէ մեծագումար պիւտճէն քուարկելով :

Ընտրութիւնս ինձ իմաց տուողը սիրուն Գրուզն եղաւ և յաւելցուց որ այս աւետիսը հասարակութեան իմաց տալ չկարենալուն կը ցուէր, առջի օրը իր լրագիրը Պ. Էօթէն Ռօզին ծախած էր՝ ալ քաղաքական աստղերէն քաշուած ըլլալուն համար :

— Աղէկ կ'ընես, ըսի իրեն, հանդչէ, և երկար ատեն, վասն զի հանդտի պէտք ունիս :

— Հանդչել բառը Ամբրիկեան լեզուին մէջ չկայ, պատասխանեց նա իր անոյշ ժպիտով : Եանքի մը առողջ եղեր է կամ վատառողջ՝ մինչև ցմահ կ'աշխատի : Համարիկի խրատը բռնեցի ու իմ երիտասարդական յօժարութեանց և ուսումներու վերադարձայ : Աքսիաներու փողին միաբանական եկեղեցին՝ իր քարոզիչն ըլլալու հրաւիրեց զիս և ընդունեցայ : Աաղը պաշտօնս կ'սկսիմ :

— Երէկ խմբագիր էիր, վաղը քարոզիչ պիտի ըլլաս, տիեզերական մարդ մ'ես դու, հաղուստ փոխելու պէս արհեստ կը փոխես : Աեց ամսէն ինչ պիտի ըլլաս նայինք :

— Ինչ որ Աստուած կամենայ, պատասխան տուաւ նոր քարոզիչը : Եթէ Համարիկ՝ որ կարգ ըստ կարգէ արևմտեան նահանգին մէջ հողատէր, Մերսիկայի մէջ զինուոր, Ֆիլատեֆիայի մէջ փաստաբան և ի Բարիզ խմբագիր եղած է, հոս դանուէր՝ իրեն սիրելի եղող մէկ վկայութեամբ պիտի պատասխանէր քեզ :

*Aller à la cheville.
† Congrégationaliste.

Hum sum. humani nihil a me alienum puto. *

Դու իսկ, Տօքթօր, անցեալ օր զիպտն, երէկ չէ առջի օրը հրանցոյց, երէկ ընտրելի, այսօր փողոցներու վերատեսուչ ես, և երկուշաբթի բժիշկ պիտի ըլլաս : Կարծեմ թէ բառական դիւրութեամբ դեր կը փոխես : Մեր գեղեցիկ երկրին բարի յատկութիւններէն մէկն է այդ : Հին Եւրոպայի մէջ կատակերգութեան գերասանի մը մտքի մէջ կը ծնին ու կը մեռնին : Մարդ հոն իր բոլոր կեանքին մէջ զինուոր, դատաւոր, թանգարտ, գործատէր է՝ և երբէք մարդ չէ : Միշտ իր արհեստին նախապաշարու մտերով ու զաղափարներով կ'ապրի : Հոս արհեստը բանի տեղ չդրուիր և պարագաներուն համեմատ վրայի հաղուստնիս կը հազնինք ու կը հանենք, ամեն տեղ և ամեն բանէ յառաջ մարդ ենք :

«Ահա ասոր մէջ է այս հաւասարութեան արմատը՝ որ մեր փառքն ու գօրութիւնը կը կազմէ :

«Քէյ՝ Քէնթօքի ջաղացպան մ'էր, Տօկլէս ու Աինքօլն՝ Իլինուայի վարձակալներ, Պէնքս զօրապետը՝ Ճախարակի մանչ մը, ասոնց ամենքն ալ մեծ մարդեր եղան : վասն զի աշխատեցան ու տառապեցան : Ով որ կեանքին դժուարութեանց հետ կուռած չէ անոր ինչ արժէք ունենալը չգիտեր :

«Առարկաներու դէմ պատերազմը՝ կամեցողութեան դաստիարակութիւնը և մտքի իմաստութիւնը կը կազմէ : Ազնուապետութիւնը, փափուկ, նրբացած, հիւանդոտ հողիներ յառաջ կը բերէ, մինչդեռ աշխարհիս տիրապետութիւնը չքեմեքս պահուած է : Ապագան մերն է :

— Դրուդ, սքանչելի կերպով քարոզ կու տաս : Խօսեցած ատենդ, կ'զգամ որ իրաւունք ունիս, այլ երբ դուն կ'երթաս և ես իմ յիշատակները միտքս կը բերեմ, քու նկատումները ինձ վախ կ'ազդեն : Թէ որ զքեզ մտիկ ընելու տկարութիւնս ունենայի, իմ վարժապետ

* Մարդ է՛, հէրաբար ինչ օրար չէ ինչ որ մարդային է :
† Marchand.

ներու ինձ սորվեցուցածները շուտով պիտի մոռնայի : Փոյթ չէ , վաղը պիտի դանք գեղ մտիկ ընելու : Նոր օրինակ բան մը պիտի ըլլայ ինձի համար հասարակ քրիստոնեայ մը տեսնել որ իր եղբարցը կը խօսի և իր ամենօրեայ լեզուովը աւետարանը կը մեկնէ անոնց : Քրիստոնէութիւնը հասարակապետական չեմ կրնար երեւակայել :

Այն միջոցին որ Գրուգ ինէ կը հեռանար՝ իմ նոր պաշտօնիս մէջ հաստատելու համար զիս առնելու եկան :

Թէննի , Սիւզան , Ալֆրէտ և ես աղւոր կառք մը հեծանք Մարթայի հետ՝ որ անշուշտ իմ հպարտութեանս վրայ հսկելը միտքը դրած էր :

Հէնրի կառապանին քով նստաւ , Ջամիգ կառքին յետակողմը մազլցեց և երկու ուժեղ և տրօտող երիվարներ որոնք միայն Ամբրիկա կը գանուին , զմեզ Մծնմորանսի տարին , իմ իրաւասութեան վերջին սահմանը : Քանի մը անգամ կայ առնուլ հարկ եղաւ , ամեն մէկ սալարկող* իր տեղն էր ու իր նոր գլխաւորը կ'սպասէր , այս բարի մարդերու մատուցի իմ բարեկամութեան հաւաստիքը մինչդեռ կինս ու աղջիկս իրենց ամենէ շնորհալի ժպիտները կը շնորհէին անոնց : Արածես թէ ամենքս ալ ընտանեօք իշխան ըլլալու համար ծնած էինք :

Միայն բան մը չսիրեցի , այն էր իրարու մօտ շինուած բաժատունները , հոն կը տեսնէի ռամկապետական դձձութիւնը , որ սալարկի տուրքը կ'առնէր այն մարդերէն որ նոյն սալարկը կը դործածէին , զայն չգործածողները միւս կողմէ հարկէն ազատ ձգելու համար , 'ի մտի դրի հին Եւրոպայի անձաւօթ եղող այս զեղծումը ուղղել և ամեն կողմ յաղթական հաւասարութիւն մը հաստատել : Բայց այս սրանեղութիւնս ալ չդիմացաւ այն սքանչելի փունջերուն տոջն՝ որ գլխաւոր սալարկողներն ու բաժատուններու բաժառուները Թէննիիս ու Սիւզանի կը նստիւնէին :

Ասորք ծաղկալի կողով մը գարձեր էր ու ծաղկըներու մէջ աներևոյթ կ'ըլլայինք : Անզ ճառեր կ'ուզէին , ինչպէս որ թագա-

*Cantonnier.

ւարներու կ'ընեն , և միամիտ մարդեր , որոնք Երբայերէն չլիտէին անվրէպ՝ Սիւզանը դաշտերու շուշանին նմանցուցին :

Թէննի բերկրութենէն կարմրած՝ փթիթ վարդ մը գարձեր էր : Իսկ Մարթա՝ մատուտակ մ'էր , կարծես թէ իր շառագոյն այտերէ արիւնը դուրս պիտի ցայտէր , և ախօսին ծայրն հասած եզան մը պէս կը հեւար : Ո՛վ կիներ , ձեր ճշմարիտ անունը ունայնասիրութիւն է : Ես՝ կառքիս մէկ անկիւնը թուլակի երկնցած՝ այս նորածին ժողովրդականութեան մուխերով չէի զինովար , բայց իմ հոգւոյս ու խղճիս մէջ՝ ճամբաները պատուական կը գտնէի և կը բարկանայի գարշելի ձիուս դէմ որ օր մը յառաջ , այսպիսի քաղաքավար սալարկողներէ պահուած սալարկի մը վրայ ընկեր էր :

Մծնմորանսի հասած ատեննիս , կառապանը առանց մենէ կանխաւ հրաման առած ըլլալու՝ զմեզ շիտակ Ռօզի հիւրանոցը տարաւ , Սեթ քուսքէր հիւրապետին տունը :

Ալֆրէտ ու Սիւզան սակայն՝ զեղեցիկ տարիքի այս բարեկամին քով չնորհ չգտան , և նա զմեզ փոխանակ սիրահարի պէս նայելու՝ կրկին զինն առաւ ու շատ դէշ ճաշ մը հանեց . գանդատեցայ , բայց իր բնական ազահութեան վրայ՝ եղբայր Սեթ ամենէ անտանելի մոլութիւնը կ'աւելցնէր որ քաղաքակրթութիւնը կուտայ , թշուառականը անտեսագէտ էր : Ինձ կանոնաւոր քարոզ մը ըսաւ նա հաստատելու համար թէ լաւ ու ժամանակաւորը՝ վաճառականութեան և արուեստ չունեցող ժողովուրդի մը դժբաղդութիւնն էր , մինչդեռ սղութիւնը ամենէ յառաջադէմ քաղաքակրթութեան նշանն է , վասն զի ժողովուրդը ծախելիք քիչ բան կ'ունենայ և հարստութիւնը գնելի առարկաներու գինը կ'աւելցնէ :

Պիտի գայ օր մը , կ'ըսէր , որ վերջին Ռօշաչիւտը միայն հաւկիթ մը գնելու կարող պիտի ըլլայ , ահա այն օրը տիեզերական հարստութեան վերջին ծայրը պիտի նշանակէ : Գոնէ անտեսութեամբ խօսք և ժամանակ ինայելու համար ուզածը վճարեցի : Աստուած չընէ որ այսպիսի միակ դաղափար մը ունեցող մարդերու հետ վիճեմ : Այս խարդախները կը ճանչեմ , ասոնք Գաղղիան , իր զինարանը , նաւատորմը , բանակները , փառքը , իրաւունքը ամենքն ալ

Տաճկաց թագաւորին կը յանձնեն եթէ նա խոստանայ իրենց տալ . . . մտադործութեան աղատութիւնը :

Երեկոցեան ժամը չորսն էր երբ մեր պզտի կարավանը Բարիզի ճամբան բռնեց : Մեծապէս զարմացայ տեսնելով որ հիւրատան գուներն ու փեղկերը երկաթի ձողերով կը գոցէին իբր թէ տան մէջ սուգ ըլլար :

Վիրակիին մերձաւորութիւնը զարմանալի կերպով տօնել մ'էր , բայց ուրիշ երկիրներու հակառակ ձևով շինուած այս երկրին մէջ բանի մը վրայ չզարմանալն իմաստութիւն է : Մեր Սեթ բարեկամը հետերնիս քաղաք կ'իջնէր , մեծ ձիու մը վրայ հեծած՝ զոր իր ընդարձակ գլխարկին շուքին տակ առած էր : Իր քովէն մոխրապոյն ու գիրուկ զամբիկի մը վրայ Մարթա կը տրոտէր , բարձրագիտակ , շիտակ ու հրացանակրի մը նման վեհ : Արթնու թէ երկու լրտեսներ էին որ առջևէն կ'երթային մեր յաղթական մուտքը ամէն անցորդներու իմաց տալու համար :

Առաջին բաժատան * առջև խաղաղատէր քուէրը բաժառուին հետ կուտի բռնուած գոսայ :

— Տուրքը չվճարած չեմ թողուր որ անցնիք կ'ըսեմ ձեզ , կը պոռար այս վերջինը : Երկու հոգի էք քսան չորս ցնիւր՝ կ'ընէ և չէ թէ տասներկու :

— Բարեկամ , պատասխան տուաւ հիւրասպետը , ձեր արիւնը տաքցընելով գեշ կ'ընէք , ատի ոչ քրիստոնէի և ոչ խելօք մարդու գործ է : Սակագինը նայեցէք և միայն օրէնքին պահանջածը խնդրեցէք ինէ , թէ ոչ իբրև հարստահարիչ կ'ամբաստանուիք :

— Ահա սակագինը , վրայ բերաւ բաժառուին կատղած , գուք ինքնին կարգացէք , անտանելի շողակրատ , ձիու դուրս ութը ցնիւր է և մարդու պոլս չորս , սկանջնիգ մտան :

— Շատ աղէկ մտաւ , ըսաւ քուէրը , և այս յարգելի անձերը վկայ կը կանչեմ որ տասներկու ցնիւր տուի ձեզի :

* Barrière.
† Արթնու քուէր որ 100 ցնիւր ձի պուր է :

— Հասցա այդ կի՛նը , ըսաւ բաժառուին Մարթան ցուցնելով որ յառաջ կը տրոտէր :

— Է՛հ , վրայ բերաւ Սեթ իր անշիոթ ծանրութեամբ , այս կինը մարդ չէ , իր զամբիկը ձի չէ , հետևաբար նէ պարտք մը չունի :

Այս ըսելով արշաւակի մեկնեցաւ նա բաժառուին ափ 'ի բերան թողլով :

— Կը յուսամ որ , ըսի բաժառուին , այդ լիբբ մարդուն ըրածը սխտի արձանագրես :

— Ոչ , պարոն վերատեսուչ , պատասխան տուաւ նա , վասն զի իրաւունք չունինք : Այդ մարդը այն հանաք վարած անձերէ մէկն է որ առանց բռնուելու մեր օրէնքներու մէջէ քառաձի կառքով մը կրնան անցնիլ : Սակագնոյն տաուը զինքը կ'ազատէ :

— Բայց օրէնքին ողին զինքը կը դատապարտէ , ըսի , և իր պահանջումը տղայական բան մ'է :

— Հոն մեր երկրի մէջ , պարոն , վրայ բերաւ մարդը , օրէնքը ողի չունի : Օրէնքին միայն բնագիրը կը ճանչենք , եթէ դատաւորը՝ արտօնութիւն ունենայ , կ'ըսեն , օրէնքը մեկնելու՝ ինքը օրէնսդիւ եղած կ'ըլլայ և ան առեն ալ քաղաքացուց իրաւունքն ու պատիւը երաշխաւորութիւն չեն ունենար ամենեւին :

— Վայ , տղաներ վայ , ուրեմն օրէնսդիւութեան աբըր անգամ չէք գիտեր : Երբ դատի մը մէջ՝ մասնաւորին ու տէրութեան գանձուն մէջտեղ տարակուսելի կէտ մը կայ՝ չէ մի որ այդ կէտը գանձուն համար պէտք է շահաւոր ըլլայ՝ որ ընդհանուրին շահն ըսել է :

— Երբէք , պարոն , ըսաւ բաժառուին : Միշտ քաղաքացիին նպատաւոր կերպով կը տրուի վճիւր : Գանձն իր դատը վաստակելու համար կրկին անգամ իրաւունք ունենայու է :

Այսպիսի վայրենի պատասխաններու մէջ ինչ կրնայի լինել : Ուսերս վեր ըրի և հրաման տուի կառապանին որ իր ճամբան շարունակէ :

— Քաղաք մանելու առեն՝ կարծեցի որ իմ բացակայութեան մի-

Չոցին զայն փոխեր էին : Փողերն ու հրապարակները մարդ չկար , ետեւէս հաստ շղթաներ երնցընելով շրջադայութիւնը կ'արգիլէին : Պատուհանները տարօրինակ տեսարան մը կ'ընծայէին , ամեն պաշտօններու վրայ պատերազմի կարգաւ շարուած կօշիկներ կը տեսնուէին ներքանները անցորդներուն դարձուցած՝ եթէ երբէք անցորդ կար :

Նայուածքովս այս կօշիկներու երկուքին հետեւելով , նախ երկու մարդկային սրունք , ետքը կռնակի վրայ պառկած մարմին մը՝ և վերջապէս սիկար մը տեսայ՝ որու կապուտակ մուխը երկինք կը բարձրանար : Չէի կրնար իմանալ թէ զմարդիկ այս կերպով պառկեցընելը ինչ տեսակ յանցանքի մը պատիժն էր :

Ասոր վրան Չամպօն հարցափորձեցի և նա ինձ իմացուց որ նորեկ հաճոյք մ'էր այն : Ամեն շաբաթ իրիկուն Ամերիկացին կաթուածահար ըլլալու կ'աշխատի և երբեմն կը յաջողի :

Ո՛հ , որքան աւելի խելացի ենք մենք Գաղղիացիքս՝ որ մեր թատրային սրահներու մէջ ինքզինքնիս միայն խղրուելու սկզբնաւորութեան մը վտանդին մէջ կը դնենք :

Տուն հասածիս պէս՝ այս յաջող օրը ուրխտութեամբ անցընել ուզեցի , զՍիւզանն ու Հէնրին աղաչեցի որ ինձ՝ *La ci darem la mano* , Տօն ճիւանի սիրած եղանակս կանչեն , սակայն Սիւզան երեսնայեցաւ ու գոյնը նետեց :

— Ի՞նչ ունիս , սիրելի աղջիկս , պուտայի , միթէ հիւանդ ես :

— Հայրիկ , պատասխանեց նէ , զիս զարհուրեցընողը քու խնդիրքն է : Միթէ բոլոր քաղաքը մեր պատուհանին տակ հաւքել կ'ուզեն : Մեր պատիւը մէկ ստակի ընելու միայն ունին : Ար մոռնաս որ շաբաթն սկսած է և թէ բան մը պէտք չէ որ Տիրոջ հանդիսորը խանդարէ :

— Տեր Աստուած , ըսի մտովի , արդեօք սա նենդաւոր Յովնաթանը զմեզ Ամերիկա փոխադրելու ատեն Հրէայ ալ ըրաւ : Ներէ , սիրելի աղջիկս , ըսի Սիւզանիս , միտքս ուրիշ տեղ էր , այս օրուան դէպքերը յիշողութիւնս տակուվրայի բերին : Գնա գրադարանիս մէջմեծ Հիբօքրթաթս փնտռէ , քիչ մը Յունարէն կարգալով զլուխս

հանդէսընել կ'ուզեմ . այդ ընթերցումէ աւելի կաղուրիչ բան չկայ :

Ասոր իբրև միակ պատասխան , Սիւզան եկաւ ծունրերուս վրայ նստաւ , ձեռքը ճակատի վրայ քսեց ու զիս զրկեց :

— Խեղճ՝ հայրիկ , ըսաւ նէ , աես ինչպէս յոգներ կս : Նայէ , մայրիկ , նա մոռցեր է անդամ՝ որ շաբաթ զիշեր միայն Աստուածաշունչ կը կարգան :

Առանց գիտնալու Հրէայ էի աներկրայ : Սակայն ասոր վրայ ալ քիչ մը տարակուսեցայ , զի ընտանեկան Աստուածաշունչը բացած ատենս՝ անոր ետին նոր կտակարանը տեսայ ու Ս. Մարկոսի մէջ կրցայ կարդալ . Ըտէսիւր մարդոսն համար եղաս և չէ իւ մարդը շաբաթոսն համար : Այս խօսքը ինձ մտմտութաւաւ , բայց մարդ չիշտացընելու նպատակաւ խորհրդածութիւններս ինձի համար պահեցի , և երկու կիները իրենց բարեպաշտական ընթերցումին մէջ ընկղմած թողլով՝ պարտէզը իջայ :

Գեղեցիկ իրիկուն մ'էր , ծառերն իրենց նորածիլ տերեւներու զովու թիւնը կը սփռէին ու արեւը ոսկեղէն ամպի մը մէջ մար կը մանէր . ամեն ինչ կարծես թէ զմարդ կը հրաւիրէր մտախորհ ըլլալու : Յողնած ըլլալուս Չինական հովանոցին մէջ մտայ , բազմոցին վրայ նստուեցայ ու սիկար մը վառեցի : Քովս շինական թիկնաթու մը կար պարագ , ոտքերս յենարանին վրայ դրի և տեսայ՝ ի նախատիւս իմ , թէ Ամերիկեան նորեկքը աղէկ բան էր :

Հովանոցին վարագոյններու ետին ծածկուած կը հանդէկի աչերս մեքենարար Չամպօի վրայ յառած՝ որ պարտէզին մէկ անկիւնը նստած կուլիճ կը փշրէր զանակները մաքրելու համար : Խեղճ տղան բոլորովին իր գործով զբաղած էր՝ երբ Մարթա ճանճի վրայ յարձակող մամուկի մը պէս խոհանոցէն դուրս ելաւ :

— Քամին զաւակը , ըսաւ նէ մորձը անոր ձեռքէն խլելով , հոգ ինչ կ'ընես դու :

— Ար տեսնես , օրիորդ Մարթա , քար կը փշրեմ :

— Թշուտաւական , սրտաց նէ , կիրամուտքը կ'արես :

Չամպօ խեղճուկ դէմքով մը կծիկը զբաւ , իմ թաղստոցի առ-

Ղեկն անցաւ հառաչելով, յետոյ յանկարծ տեսնելով որ տան կատուն դաշտամուկ մը կը բռնէր,

— Աչքդ բաց, քաշ, ըսաւ կատուն ուղղելով, կիրամուտք զիշեր մուկ որսալուդ համար, երկուշաբթի օրը Մարթա գլխի պիտի կախէ:

Սեկն ապուշ դէմքին վրայ տակաւին խնդալու վրայ էի՝ երբ հովանոցին առջևով գրուած նստարանին վրայ երկու հոգի եկան նստան ինձ այնքան մօտիկ՝ որ իրենց խօսակցութենէն բաւ մը չկորուսի: Սիրուն Սեթը ճանչցայ իսկոյն որ երեկոյեան և կիրամուտքին առանձնութիւնը ՚ի կիր կ'առնուր զեղեցիկ Մարթային քարոզ մը տալու համար:

— Յնուշիկ քուրիկ, կ'ըսէր նա խեղկատակ ծանրութեամբ մը և իր մէն մի բառը մօտիկ ընելով, երեք բան կայ որ զիս մեծապէս կը զարմացնեն. առաջին՝ ինչ տխմար են մանկաիք որ ծառերուն մէջ փայտ ու քար կը նետեն պտուղները վար ձգելով հաքելու համար, թէ որ հանդարտ կենային պիտի դար օր մը որ պտուղները ինքնին պիտի ըյնէին: Երկրորդ՝ ընդհանրապէս մարդիկ և մասնաորայէս Ամերիկացիք, ինչ յիմար ու չար են որ մէջերնին կը կուտին ու զերար կ'ըսպանեն, մինչդեռ եթէ հանդարտ նստելով կրնային բնական մահաւամբ մեռնիլ: Երրորդ՝ ինչ ապուշ են երիտասարդները որ իրենց կնութեան առնելիք աղջիկներուն ետեւէն վազելով ժամանակնին կը կորուսնեն, մինչդեռ տեղերնին նստին ու ստակ շահին, աղջիկները անոնց ետեւէն պիտի վազեն: Գու ինչ կ'ըսես, Մարթա:

— Սա կ'ըսեմ, Սեթ, որ Սողոմոն թագաւորին իմաստութիւնը բայց նաև նոյնին սնապարծութիւնը ունիս դու:

— Մարթա, պոռայ քուէքը շարժած ձայնով մը, և դու գեղեցկութեանդ չափ խելք ունիս:

— Սեթ, պատասխանեց Մարթա միշտ ողեսպառ, դու ըսածիդ պէս չես խորհիլ:

— Իւ գու Մարթա, վրայ բերաւ միւսը, խորհածիդ պէս չես խօսիր:

— Անցե՛, ըսի մեղմիկ, Ամերիկայի մէջ կը սիրուրտին եղեր. կիրամուտքային սովորութիւն մ'է այս՝ որ մտքէս չէր անցած: Այս վաճառական ժողովուրդը որ ամեն բան ՚ի հաշիւ կ'առնու և միայն հարստանալու համար կ'ապրի, շարժելու մէկ զիշեր ինքզինքը բռնի հանդստի դատապարտած է սիրոյ և երիտասարդութեան հարկը նոյն օրը վճարելու համար: Տեսնենք Սեթ վարպետը՝ իր սիրոյ յայտարարութիւնը ինչպէս պիտի ընէ:

Բիւր շրջաններէ ետքը, սիրահար քուէքըը եկաւ այն խօսքին՝ որ ըստ երևութիւն շատոնց կ'ըսպասուէր:

— Մարթա, ըսաւ նա երկայն հառաչանք մը արձակելով, Մարթա, զիս կը սիրեն դու:

— Սեթ, պատասխանեց բարի քրիստոնուհին, միթէ Աստուած հրամայած չէ որ սիրենք զմիմեանս:

— Այո՛, Մարթա, բայց ես կը հարցնեմ թէ՛ դու ինձ նկատմամբ կ'ըզան բան մը այն մասնաոր զդպրութենէն զոր աշխարհք սէր կ'անուանէ:

— Չգիտեմ ինչ պատասխանեմ, միմայ ամէլոտ աղանին, միշտ ջան ՚ի գործ դրած եմ բոլոր եղբայրներս հաւասարապէս սիրելու, բայց եթէ հարկ է քեզ խօստովանիլ, Սեթ, գիտնաս որ շատ անգամ իմ ներսը իջնելու ատեն տեսած եմ որ դու այս ընդհանուր սիրոյ մէջ՝ իրօք քեզ ընկած մասէն շատ աւելի գրաւած էիր:

Խօստովանութիւնը եղած էր, ալ կարելի չէր ըսածը ետ առնուլ. կարծեմ թէ հաստ պագիկի մը շէլունը լսեցի որ նշանուքը կը կնքէր՝ երբ յանկարծ Մարթա ահուելի ձայն մը ձգեց և նստարանին վրայ ցատկեց: Ահազին շուն մը, նոր երկրի գամիւ մը՝ մէկէն ՚ի մէկ այս սերահարական տեսակցութեան մէջ նետուեր էր: Ուք ելայ և մութին մէջ Ջամպօի ճերմակ ախտանքը տեսայ:

Թշուառականը մեծ քրքանք մը ձգած էր, ինքն էր որ քուէքուհիէն վրէժ առնելու համար տան դուռը բացեր՝ ու Մարթայի վրայ արձակեր էր այն անպատեհ այցելուն որ զնէ վախցուցած էր:

Քուէքըը քիչ կը սիրէի, բայց իր հեղութեան և հանդարտութեան վրայ ստիպուեցայ զարմանալ: Փոխանակ շունէն վախնալու՝ զայն իր

քովը կանչեց նա, և գրպանէն կտոր մը շաքար առնելով անոր տուաւ :
Հունը զիւրաւ հրասպանուեցաւ ու թողուց որ զինքը շոյէ նա :

— Բարեկամ, ըսաւ սուրբ մարդը շան հետ խօսելով, որ իր սոցը շարժելով անոր երեսը կը նայէր, գուկեանքիս ամենէ անոյշ վայրկեանը եկար խուզեցիր, իմ տեղս թէ որ ուրիշ մէկն ըլլար, զքեզ կը ձեռնէր կամ կ'սպաննէր, և իրաւունք ալ կ'ունենար. տեսնես հիմակ թէ հասարակ մարդու և քուէքրի մէջ ինչ տարբերութիւն կայ : Ես իբրև միակ վրէժխնդրութիւն, քեզի դէշ անուն մը տալով դո՛՛հ պիտի ըլլամ :

Այս ըսելով Սեթ՝ դգուեց շունը որ շաքարի նոր կտոր մը ընդունելու համար իր քովը կը ցատկըտէր, և զայն քաղաքավարութեամբ մինչև գուռը տարաւ, յետոյ յանկարծ վանդակը գոցելով թորերուն բոլոր ուժովը պուսաց :

— Կարողա՞ շան, կարողա՞ շան :

Ի զըթեւ ական՝ պատահաններու մէջ կօշիկ չմնաց, բիրաւ որ գլուխներ թշնամոյն կը նայէին և կ'սպառնային, բիր, գաւազան ու կարասի անձրեկ պէս անասնոյն գլուխը կը տեղային՝ և փողոցին անկիւնը չհասած՝ հրացանի հարուած մը զայն գետին կործանեց. ընկաւ նա անյարիտ՝ արձակելով կաղխանձիւն մը որ սրտիս մէջ հնչեց :

Սեթի օձիքէն բռնեցի մոլեղին ու զինքը տունէն դուրս նետեցի :

— Թշուառական, ըսի իրեն, չցիտեմ ո՞վ կ'արդիւլէ զիս որ ես ալ կարողա՞ Իտէլք պուսամ, այս խեղճ կենդանւոյն պէս զքեզ ըսպաննել տալու համար :

— Եղբայր Գանիէլ, պատասխան տուաւ Սեթ իր գլխարկը գետնէն վերցընելով, գարձեալ իրարու պիտի պատահինք :

Եւ քաղաքավարութեամբ մեկնեցաւ :

— Սենեակդ ելիր, օրիորդ, ըսի Մարթային. սոյն ժամուս պարտեղին մէջ ի՞նչ կ'ընէիր :

— Տէր ողորմեա, պարոն, ըսաւ նէ հեծկտալով, զէշութիւն չէի ընէր, մօրս համար փետայ մը կը փնտռէի :

Բարկութենէս կը պայթէի :

— Ա՛հ, պուսցի, արդեօք քանիներ կան որ ինքզինքնին առաքինի կը կարծեն ու այս վատ կեղծատրին պէս կը վարուին. իրենք իրենց վրայ կը զարմանան իբրև սուրբ և պարկեշտ մարդեր իրենց թշնամոյն չղպնալուն համար՝ մինչդեռ անոր անձուռնի անուն մը տալով զայն մէջ տեղէ կը վերցընեն : Զրպարտութիւն, զրպարտութիւն, իրենց քաղաքակրթութեամբ պարծող ժողովուրդներու մէջ՝ մարդասպանութեան ձեռն ես դու : Ամ՛թ այս թունաւոր զէնքը գործածողներու գլխին, նաև երբ խեղճ շուն մը սպաննելու համար է այն :

Իմ մենաւորիկ ճարտասանութենէս ձանձրացած՝ պառկեցայ, նորածին կիրամուտքի զբօսանքներէն՝ կիրակիի տիրութիւնը դուշակելով : Արչափ կարօտցած էի Բարիզեան կիրակիներու ազատ զուարթութեան :

— Գաղղիացիք, կը դոչէի, ասպետական և սիրուն ժողովուրդդ դու, թող որ կուրս ազգեր իրենց տենդոտ ճարտարութեանց և տաղտուկալի ազատութեան վրայ պարծին : Քենէ հետի վանէ այն վայրագ ուսմկապետականները որ զքեզ Սնկիտայոյն և Ամերիկայոյն հասակաւորքը կ'ընեն եթէ զիրենք մտիկ ընես : Գինիի, փառքի, և գեղեցիկներու բարեկամդ, քու վիճակդ լաւագոյն է : Երկրի տիրապետութիւնը՝ այս աշնապէմ աշխատողներու թող, որ կեանքը լուրջ բանի տեղ կը գնեն և քու անուղղայ ու սքանչելի զուարթութիւնը քեզի պահէ : Զուարճացիր Գաղղիացիդ, սէր ու պատերազմ ըրէ, աշխարհս ու քաղաքականութիւնը մոռցիր, վասն զի եթէ մտածող ըլլաս խնդացող չես ըլլար :



ԵԿԵՂԵՅԻ ՄԸ ԳՏԵՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Երկրորդ օրը կանուխ ելայ :

Հրապարակային մարդ մը ուրիշներու օրինակ տալ պէտք է և ես զոհ էի նոր թաղապետիս ժրութեան և արթնութեան վրայ՝ եանքինները զարմայրնելու :

Պոչոս երկայն եղաւ , սալարիը իմն էր : Նախանձախնդիր նաշուածքով մը կը հետեւէի բոլոր այս անցորդներուն՝ որ բազերու պէս իրարու ետեւէ կ'երթային կարգաւ և որոնք իմ տրոսնոցներու մէջ ախօս մը կը բանային :

Գոեհին մէջ անիշխանութիւնը կը տիրէ , ամեն մարդ ուզածին պէս և ուր որ ուզէ կ'երթայ . գայթակղելի բան մ'է այս և չեմ իմանար թէ ինչու օրէնք մը չեն շիներ զմարդիկը կառավարութեան ուզածին պէս քայլեցընելու : Այս վերջին զեղծումը ուղղելու պաշտօնը՝ դարձեալ ֆրանսայի անդորրութեան՝ և պատշաճութեանց այս թաղուհւոյն պիտի ըյնէր :

Տան մօտենալու ատեն՝ Չամպօն տեսայ որ ոտքէն գլուխը սև հագուեր էր ազնուականի (հէլլէն) նման . բաճիկն , վզնոց , ձիւնի պէս ճերմակ ձեռնոցներ ու գուլպաներ ունէր՝ որ զինքը անծեղ թուչունի մը դարձուցեր էին : Հեռուէն զիս ճանչցածին պէս , վրաս վազեց անհամբեր ձեռքերը շարժելով ,

— Մասա , պուաց , ամեն մարդ եկեղեցին է , շուտ ըրէք զձեզ կսպասեն :

Այս ըսելով ձեռքս այծեմօրթով կազմուած ու արծաթի կարծերով գոցուած զիրք մը տուա :

— Միթէ տիկինները պատարագ տեսնելու գացին , հարցի իրեն :

— Ինչի՞ պատարագ , ըսաւ նա զարմացական եղանակաւ մը . իմ տիրուհին քիստոնեայ է :

— Ծօ՛ յիմար , միթէ քաթօլիկները տաճիկ են :

— Մասա , կ'ըսեն թէ պապականները Ափրիկէի հեթանոսներու պէս են ու վարդապետներ ունին :

— Վարդապետ ի՞նչ է :

— Վարդապետ աստուածիկ մ'է զոր մարդիկ ինքնին կը շինեն և որ ճշմարիտ բարի Աստուածը չէ :

— Վայ զեղբէկ վայ , ծօ կը կարծես թէ քաթօլիկները կուռք կը պաշտեն : Այդ՝ ձեր Սենեկալի վայրենիներուն յատուկ է :

— Մասա , ըսաւ սեր աչերը մեծ մեծ բանալով , պապականները արձաններու առջև աղօթք կ'ընեն , աչքով տեսայ որ անոնց առջև ծունրի վրայ եկած էին :

— Եւ չհասկցար որ անոնք չէ թէ նոյն քարերուն՝ այլ այն սուրբերուն կ'աղօթէին որոնց պատկերը կը ներկայացընեն անոնք :

— Ես կարգաւոր չեմ , մասա , ըսաւ սեր կոտրած սիրտով մը , այլ մեր երէցը՝ որ ամեն բան գիտէ , ստէպ կը խրատէ զմեզ որ պապականներու պէս չընենք որոնք կուռքեր կը պաշտեն :

— Ո՞վ քարոզիչներ , ամեն տեղ նոյնն էք դուք , պուացի : Քաթօլիկ կրօնը սորովե՛լէ գիւրին բան չկայ , ասոր համար քիստոնէական զիրք մը բանալը հերիք է . այլ ատելութիւնը լուսաւորել չուզեր և կը տքնի երկրագնդիս ամենէ մեծ կրօնը նախատել : Շարունակեցէք դուք ձեր հօրը՝ սատանային արժանի այդ զուելի գործը : Մենք քաթօլիկներս որ ձեր զոհերն ենք՝ զրպարտութեան զէնքերը չենք գործ ածեր ձեզի դէմ . ճշմարտութիւնը կը բաւէ մեզի : Ամեն մարդ գիտէ որ Լուսեր ու Կալվէն երկու անգգամներ են որք փառասիրութենէ ու արծաթափրութենէ շարժած՝ մարդուս հողին ի կորուստ մասնեցին զայն զինովութեամբ ու հպարտութեամբ լեցընելով : Ստութիւնը նորոգութեան մայր եղաւ , նորոգութիւնը փիլի-

* Ministre.

փիլիսոփայութեան, փիլիսոփայութիւնը յեղափոխութեան, յեղափոխութիւնը անիշխանութեան ծնունդ տուաւ, անիշխանութիւնը. . . :

— Մասա, ըստ Չամպո որ իմ սուրբ բարկութենէն բան մը հասկընալու անկարող էր, թէ որ պապականները քրիստոնէ են, աւելի աղէկ, շատ գոհ եմ:

— Ինչո՞ւ համար աւելի աղէկ:

— Անոր համար որ Քրիստոս՝ ամեն իր անունը տուողներու համար մնաւ, միւս քրիստոնէներու պէս նաև պապականները պիտի փրկէ նա:

— Չամպո, բարեկամդ իմ, ըսի իրեն այսքան միամտութեան վրայ ամենամեծ արհամարհով մը, երբէք աստուածաբան պիտի չըլլաս դու: Ելիր եկեղեցիդ գնա, ալ չեմ արդիւլեր զքեզ: Տիկինները ո՞ր են:

— Իմ տիրուհին Եպիսկոպոսական* եկեղեցին է, քաղաքին ամենէ ընտիր ընկերութեան հետ, պատասխանեց նա: Օրիորդը Երիցականաց † տաճարն է:

— Անշուշտ իր եղբորը հետ:

— Ոչ, մասա, Պ. Ռօզի հետ, իսկ Պ. Հէնրի՝ Մկրտիչեաններու § եկեղեցին գնաց:

— Շատ լաւ, ըսի հառաչելով, և դու, Չամպո, անշուշտ Մարթայի զանգուած եկեղեցին պիտի երթաս:

— Ոչ, ոչ, մասա, պոսաց նա. օրիորդ Մարթա Տիւնքերեան է, ես Մէթոսան † եմ: Մենք խեղճ սեամորթերո՞ զորս ձերմակները իրենց տաճարներէ կը վնտեն, ամենքս ալ միննոյն կրօնքէ ենք:

— Իմացայ, կ'երեւի թէ դուք ալ սև եկեղեցի մը՝ և նոյն գոյն ալ քրիստոնէութիւն մը ունիք: Աղէ՛ք, բարեկամ, գնա քու զիացած ձեռովդ աղօթք ըրէ՛ք Քրիստոսին: Իրարու թշնամի այս աղանդ-

* Episcopale. աղանդ մ'է որ Անկլիկան եկեղեցի ալ կը կոչուի:
† Presbytérien.
§ Baptiste.
‡ Methodiste.

ներու մէջ որոնք Աւետարանի կտորները իրարու ձեռքէ կը յափշտակեն՝ Տէրը իրենները կը ճանչէ:

Մինչդեռ Չամպո կը հեռանար մեծաքայլ, ես կամաց կամաց կը քալէի գլուխս կախած: Լսած բաներս զիս կը ճնշէին: Տունս, որ իմ ամեն վշտերու մէջ ապաստանարանս պիտի ըլլար, Բաբելոն մը՝ ամեն տեսակ հերետութեանց որջ մ'էր:

Ամուսինը քաթօլիկ, կինը եպիսկոպոսական, աղջիկը երիցական, տղան՝ մկրտիչեան, աղախինը՝ քուէքրուհի, ծառան՝ մէթոսեան, ամեն ոք տարբեր կրօն ու ներհակ յոյսեր ունէր: Ինչ խառնակութիւն, ինչ անիշխանութիւն էր այս, տունս դժոխք դարձած էր: Սակայն եկ ու տես որ Ժէննի տրփանօք կը սիրէր զիս, մեր դաւախները միայն մեր քով երջանիկ էին, ծառաները զիս կը յարգէին և բոլորտիքս միայն գոհ ու հանգիստ դէմքեր կը տեսնէի: Ամեն մարդ իր ձեռովը Սուրբ Գիրք կը կարգար, ամեն ոք իւր մասնաւոր նշանաբանն ունէր, բայց և այնպէս իրարու հետ կուխ չէինք ընել: Միութիւնը և ոչ անդ մը կ'երեւէր, այլ ամեն տեղ սէր ու միաբանութիւն կը տիրէր: Իմ մանկական գաղափարներու հերքում մ'էր այս, և այնպիսի գաղտնիք մը՝ որ մտքիս դէմ կու գար:

Ոչ, կ'ըսէի մտովի, այս բարոյական անկարգութիւնը չեմ ընդունիր: Ասոր տակ խաբերաց խաղաղութիւն մը՝ և ծաղիկներու ներքև անդունդ մը կայ թագուն: Եթէ այս բանը տես, կորստած եմ: Կ'ուզեմ որ տանս մէջ ամեն մարդ ինծի պէս խորհի կամ լուէ, միակերպութիւն կ'ուզեմ: Թող միջակ քրիստոնէայ մ'ըլլամ հող չէ, հերքէ է որ հողուով ու մտքով քաթօլիկ եմ, Եկեղեցւոյն, տէրութեան, ընտանիքի մէջ՝ միայն մէկ օրէնք՝ մէկ կամք մը տիրել պէտք է: Եթէ հարկ ըլլայ փրկաւէտ խստութիւններ պիտի բանեցընեմ. կիսնս պիտի վախցընեմ, զաւակներուս պիտի սպառնամ, ծառաներս պիտի վնտենեմ, ամեն բան պիտի զոհեմ լուսութիւն և հնազանդելու հաստատելու համար: Ես Գաղղիացի եմ, կեցցէ՛ միութիւնը:

Այս իմաստուն խորհրդածութիւններով ժամանակը կ'անցնէր: Աքասիաներու փողոցը մտած կէտիս ժամը տասը զարկաւ. անբաւ

Ճամբայ մ'էր՝ որ իր երկայնութեամբ և զեղեցկութեամբ Բարիղի Ռիփօլի փողոցէն վար չէր մնար : Սա տարբերութեամբ որ ամեն մէկ հարեւր քայլիդ՝ յոյն , բիւզանդեան կամ զօթական շէնք մը՝ իր խաչը կամ զանդակատունը դէպ 'ի երկինք կը բարձրացնէր : Այնպիսի երկրի մը մէջ ուր ամեն ոք իր կրօնը կը շինէ՝ բնական է որ մէն մի քայլիդ եկեղեցիի մը հանդպիս :

Այս լարիւրինթոսին մէջ ուղղիւր դիւրին բան չէր , հեռեւարար պառաւ կնոջ մը դիմեցի որ ձեռքը դիրք մ'առած քովէս կ'երթար , և աղաչեցի որ Միաբանականներու տաճարը ցոյց տայ ինձ :

— Ատկէ դիւրին բան չկայ , սիրելի պարոն , պատասխան տուաւ ինձ պառաւ սիրուն ժպիտով մը : Երաւ քիչ մը հեռու կ'ընի , բայց իմ տալիք անդեկութիւններով առանց դժուարութեան կը գտնէք զայն : Չախ ձեռքի վրայ ընկած եկեղեցիներու ականջ մի կախէք , վասն զի միաբանականներունը աջ կողմը կ'ընի : Թէ որ զանդակատունները համբէք չէք սխալիր : Առաջին եկեղեցին , շարունակեց նէ իր վարդարանը * հատկրտող կնոջ մը արագութեամբ , առաջին եկեղեցին քաթօլիկներու մատուռը՝ Ս. Պօղոսն է , երկրորդը՝ Եւրսիւլեանց վանքը , երրորդը՝ Եպիսկոպոսական եկեղեցին , չորրորդը՝ Քրիստոսեաններու վանքը , հինգերորդը՝ Մկրտիչեանն է , վեցերորդը՝ բարեկարգեալ Հոլանտացոց , եօթերորդը՝ Լուտերեաններուն , ութերորդը՝ Մէթոսական սեւերուն . իններորդը՝ Հրէից սինակօհան , և տասներորդը՝ Չինացոց տաճարը զոր ահա հոն վերը կը տեսնէք իր կրկին յարկերովու զանգակներով : Հոն հասնելուդ պէս՝ ալ կ'սկսիք վար իջնել , նախ Մեմֆոկանաց վանքը կը գտնէք , Մեմֆոնականներէ ետք Բարեկարգեալ Գերմանացիները , Բարեկարգեալ Գերմանացիներէ ետքը՝ Բարեկամը կամ Գուաքէրները , Գուաքէրներէ ետքը՝ Երիցականները , Երիցականներէ ետքը՝ Վորալեանները . Վորալեաններէ ետքը՝ սպիտակամորթ Մէթոսականները . սպիտակամորթ Մէթոսականներէ ետքը՝ Միանձնականները , ասոնցմէ ետքը՝ Տիւնքի բնանները : Ապա չորս եկեղեցի համբեցէք , զայն

*Chapelet.

որ ինքզինքը բրիտանից ընտրելագոյն եկեղեցին կը կոչէ , երկրորդ Ազատ եկեղեցին , երրորդ Շվեյտնայօրկինը և 'ի վերջէ՝ Ընդհանրականը՝ որով ամենը քսաներեք տաճար ու մատուռ կ'ունենայք . քսան և չորրորդ շէնքը՝ որ գրեթէ փողոցին մէջտեղն է , Միաբանականներու եկեղեցին է :

Առանց շունչ առնելու այս երկայն շարականը ինձ ըսելէ ետքը , պառաւ համբարուն աղւոր խոնարհութիւն մ'ըրաւ ինձ ու իր ճամբան շարունակեց :

— Իսպ Վկայ , ըսի մտքէս , թէ որ սատանան իր կրօնը կորուսնէ (կ'ենթադրեմ թէ դժօրքին մէջ Աստուծոյ հաւատալու ստիպուած են) այս փողոցին մէջ կը գտնէ զայն անվրէպ : Ահա երկիր մը՝ ուր կրօնքի պաշտօնէութիւնը դիւրին գործ մը չէ : Քրիստոսայի մէջ՝ ուր պետութիւնը միայն չորս կրօն կ'ընդունի (Ալճէրիան հաշուի չեմ դնէր) վարչութիւնը երբեմն նեղը կը մնայ , արդեօք հոս ինչպէս կ'ընեն պիտաճէն բաժնելու և հանդարտ պահելու համար երեսուն տեսակ եկեղեցիներ՝ որոնց ամեն մէկը իր կողմը կը քաշէ և որոնք անշուշտ իրարմէ կը նախանձին ու քրիստոնէարար զիրար կը նղովեն : Այս խնդրին լուծումը վրաս չեմ առնուր : Այնչքէ Սպանիան . ահա առանդութեան հաւատարիմ ժողովուրդ մը ան է որ ճշմարիտ սկզբունքները պահած է : Երկիրը սատրինջի տախտակ մ'է ուր ամեն ինչ իր տեղն ունի , ուր մարմինն ու հոգին իրարու յար և նման կերպով մը կառավարուած են : Եկեղեցոյն և տէրութեան միութեամբը ամեն բան դիւրին է : Հոն եպիսկոպոսը բղջիկի պէս է , և ժողովրդավետ* մը շահապի նման . հոգեւոր և աշխարհական պաշտօնեաներու տեղը՝ մի և նոյն շրջանակին մէջ նշանակուած է և անոնք համաքայլ կ'ընթանան : Ծնունդ , մկրտութիւն , գաստիարակութիւն , հաղորդութիւն , զինուորագրութիւն , խոստովանանք , տուրք , մամուլ , մահ , թաղում , ամեն բան իրարու կապուած է : Գասալիք զինուորն ու խմբագիրը կը նղովու ին . հերիտիկոսները թիարան կը դրկուին : Ժողովուրդը՝ այդ յախտենական մանուկը՝ առանց իր մաս-

*Curé.

նակցութեան՝ քաղցրութեամբ կամ զօրութեամբ կը տարուի դէպ ՚ի այն նպատակին՝ որ իրեն համար ընտրած են առանց իրմէ խորհուրդ ուղեւոր :

Աջանչելի ոստիկանութիւն որ քրիստոնէութեան երջանկութիւնը կը կազմէր, Լուստերի գալէն և քաղաքական ու կրօնական ազատութիւններու շղթաները արձակելէն յառաջ. կրկին ժանտախտներ՝ որոնցմէ աշխարհս ալ չտխտի բժշկուի : Այն օրէն ՚ի վեր որ իրենց հոգւոյ և կեանքի հոգը մարդիկներու ձգուեցաւ, ոչ կրօն մնաց և ոչ կառավարութիւն :

Իւրսիւ լեանց վանքը հասած ատենս ներս մտայ : Իմ հայրենիքի կրօնը վերագանել՝ Ֆրանսայի մօտենալ էր՝ որմէ նախանձոտ ճակատագիրս զիս կը հեռացընէր, Կեղեցին երկրորդ հայրենիք մ'է՛ ուրիշ նոյն իսկ քարտը չկրնար վռնակել զքեզ :

Մատուռը թէև պղտիկ՝ այլ փառաւոր կերպով զարդարուած էր. առաջ խորանին վրայ, ոսկիով բանուած կարմիր աստիէ ամպհովանիի մը ասկ, մարմարեայ Աստուածին մը՝ գիրկը բռնած էր Յիսուս մանուկը, և՛ փրկիչը ծնող կուսի մը անհասնում խանդաղատանօք՝ անոր կը նայէր : Հաղուաղիւտ բոյսեր, նոր ծաղիկներ, սպիտակ շեփոտակի խորձեր՝ լուսերով շողշողուն խորանը կը պատէին : Երգեհոնը իր ներդաշնակաւոր ալիքները կը գալարէր, ամպաձև բարձրացող խունկի մուխին մէջ արևու շառաւիղ մը կը սողոսկէր, մինչդեռ վարագուրով մը գոցուած վանդակապատի մը ետին՝ հաւատահիներ ու նորասի կոյսեր անուշ և ծանր ձայնով մը կ'երգէին . *Inviolata, integra et casta es, Maria.* Խեբէք, անարար և օտարք էս, Մարեմ : Մէկ վայրկենի մէջ և երազի պէս աչքիս առջևն եկան՝ իմ արագախոյս երիտասարդութիւնը և կորուսած բարեկամներս, ծունրի վրայ եկայ և լացի : Չէ, զգայարանքներ անցնելով մարդու սրաին հասնող կրօնք մը կուսպաշտութիւն մը չէ ամենին. և ինչո՞ւ մը մարմինն ալ մեր հոգւոյն պէս Տիրոջ պիտի չծառայէ :

Վանքէ ելնելով անկէ քանի մը քայլ հեռուն դանուող Կալիսկոպոսական եկեղեցին մտայ : Հոն ալ քաթուրիկի պատարագ կը մատուցուէր այլ աւելի անշահ երգերով ու կերպով : Քարոզի ժա-

մուն՝ քարոզիչ մը երկայն ամսիտնի մը վրայ ելաւ թեին տակ հաստ տետր մ'առած՝ զոր իր առջև գնելով կամաց կամաց թղթատեց : Տարւոյն ամեն տօներուն և կիրակիներուն համար քարոզներու ձեռագիր մ'էր :

Երբ քարոզիչը իր փնտուած ճառը դտաւ, ակնոցը քիթը գրաւ և ժողովրդեան խորին ուշադրութեան մէջ տեղ իր ընթերցումը սկսաւ միօրինակ եղանակաւ մը : Իր ընտրած նիւթը, Բանին յաւելտեանական բղխումը և համադրութիւնն էր. այն խորհուրդներէ մին՝ որ մարդկային իմացականութենէն վեր են և որոնց առջև հաւատացեալը ուրիշ բան չկրնար ընել բայց եթէ խոնարհիլ : Բայց աստուածաբանի մը յանդգնութիւնը բանէ մը չվախնար և նա Ս. Գրքի մէկ վկայութեամբ, մէկ սահմանով* և երկու հաւաքարանութեամբ նոյն իսկ Ս. Պօղոսին կրնայ դաս տալ և հաւատքը ջնջել :

Տիրող լուծենէ կը հասկցուէր որ ունկնդիրներուն սիրտը շարժած էր : Թէննի՛ աչքը ընթերցողին վրայ տնկած՝ բառ մը չէր կորուսնէր : Կարծես թէ նոյն իսկ Լատիներէն, Յունարէն և Եբրայերէն վկայութիւններն որով այս ճառը համեմալ էր՝ կը հասկընար. չէի կարծեր որ դպրոցականութիւնը այնքան հրապոյր ունենայ : Քարոզին առջի մասը լմնցածին պէս կ'իլլը գրի վասն զի այս ամուլ վիճաբանութիւններէ կը խորշիմ, սկեպտիկ կ'ըլլամբեր կը տեսնեմ որ անբացատրելի բան մը ինձ բացատրելու կ'ենեն : Խորհուրդը կ'ընդունիմ վասն զի ամեն կողմէ զիս կը պատէ այն, ինչպէս բնութեան՝ նոյնպէս հոգւոյն մէջ, կ'զգամ անսահմանութիւնը որ ինէ դուրս կը յորդի, այլ բանականութիւնս ինձ կ'ըսէ թէ ես որ անբաւութեան մէջ կորսուած հիւլէ մ'եմ, զայն կրնամ զգալ բայց չէ թէ ճանչել : Զիս և աշխարհները վերցընող ձեռքը չեմ տեսներ, այլ ինքզինքս անոր կը յանձնեմ ու կը պաշտմ : Աստուած ինքզինքը մեզի տալու ատեն զմեզ չխրատեր որ զինքն ըմբռնենք այլ կ'ուզէ որ զինքը սիրենք :

Մեթոսականներու առջևէն անցնելու ատեն հետաքրքրութենէ

* Definition.

շարժած ներս մտայ . ներսի բազմութիւնը շատ՝ ու աղմկալի էր :

Սեուհիները ոսկիով և զոհարներով ծածկուած՝ իրենց քրինօլիններու ահագին լայնութիւնը նստարաններուն վրայ կը տարածէին , սևերը՝ ճիշդ և ցաւապին եղանակաւ մ'երգելով զորովալիք սրտերու բոլոր խանգով զԱստուած կը փառաբանէին :

Քարոզիչը, բարձրահասակ պատկառելի գէմբով սև մը՝ բերանը բացաւ և քարոզ մը տուաւ որ զիս կըթեց : Զիտեմ թէ այս սևը աստուածաբանական դաստիարակութիւնն ո՞ր առած էր . իր ըսածին նայելով վարեմի դերի մ'է եղեր որ Աստուծոյ բարութեամբ փրկուեր էր ծառայութենէ մը՝ որ մեղքի ծառայութենէն նուազ ծանր և նուազ ամօթալի է : Այլ այս գերին տառապած ու խորհած էր . մարդ մ'էր նա . կեանքն իրեն սորվեցուցած էր ինչ որ դպրոցի մէջ չեն սորվեցընէր . իր ընտանի և ազգու ոճը ունկնդիրներու սրտին կը խօսէր ուղղակի և այսպէս ըլլալը դիւրաւ կը դու շակուէր անոնց սրսրփութներէն :

Սկսելու ատեն Մեթոտականութեան Կովեսան ըրաւ . կրօն՝ որ Աստուծոյ օրհնուած էր կ'ըսէր ամեն օր ըրած դարձերէ զատելով : Հաւատացեալներն ու եկեղեցիներու հարստութիւնը հաշիւ ըրաւ երկայն բարակ :

— Զորս միլիոն հազորդուող , սասնեցիւ հազար քարոզիչ , տասն վեց հազար տաճար . եօթանասուներեք միլիոնի կալուած ունինք և այս անխոնջ ժրութեան մը արդիւնք է , կ'ըսէր նա : Հին Եւրոպան՝ որ Եկեղեցին պետութեան կը ծառայեցընէ և զայն յարատեւ խնամակալութեան մը կ'ենթարկէ , երիտասարդ Ամերիկային հետ բաղդատեց որ իրենց կրօնի և խղճերու հոյզ քրիստոնէից կը թողու :

— Սղատութիւնը , կը կրկնէր նա , երբ կրօնքն նուիրագործուած է , այնպիսի հրաշքներ կ'ընէ զորս երբէք պիտի չտեսնէ հին աշխարհը իր հին նախապաշարումներու մէջ թաղուած ըլլալուն : Իր պերճութեան վրայ այնքան հպարտ եղող Անկլիան իր եպիսկոպոսներու բարոյականութիւնը կ'ապականէ զանոնք աշխարհական շուքալութեամբ մը պատելով , և միւս կողմէ ալ իր երէցները կ'անարգէ զանոնք անարդ աղքատութեան մը դատապարտելով , մինչդեռ Միա-

ցեալ-հասանդաց կենդանի եկեղեցիներու մէջ , հաւատացելոց առատասիրտ պարկեշտութիւնը յարգանքով և բարեկեցութեամբ կը պատէ քարոզիչ մը՝ որ իր հօտին բան մը չպարտաւորիր : Երբ դիպուածով իշխան մը մատուռ մը կ'օժտէ , ինքզինքը նոր Աոստանգիանոս մը կը կարծէ , մինչդեռ ասկին միայն հիւսիսային Մեթոտականները՝ չորս հարիւր յիսուն եկեղեցի շինեցին 1860ին : Աքասիաներու փողին խեղճ սևերը իրենց մատրանապետը՝ արևմուտքի թաղաւորներէ աւելի աղէկ կը նային :

— Այլ , շարունակեց նա , վարպետութեամբ խառն պարզմտութեամբ մը . այդքան աղէկ հասցիներ առնող այդ քարոզիչը , զինքն ընտրող սևերուն պէտք է վճարել պարտք մը՝ զոր շատ անգամ իշխաններու ողորմաբաշխերը բարձի թողի կ'ընեն : Այս պարտքը ճշմարտութիւնն է :

«Մտիկ ըրէք ուրեմն , գոչեց նա , թէ ճշմարտութիւնը ինչ ըսելու կ'ստիպէ զիս . սևը հեղ սիրտ և բաց ձեռք ունի . լաւ է այդ , քրիստոնէական բան է . բայց նա առատաձեռնութիւնը այնքան հեռի կը տանի որ իր հողին 'ի վտանգի կը դնէ : — Պիտի ըսէք թէ այսպիսի բան մը երբէք ըսած չէք , թէ ընդհակառակը միշտ ձեզ ըսած են որ քրիստոնէայ մը մեղք կը մտնէ երբ ազահաւատութեան մէջ կ'ընի և արծաթասիրութեան կու տայ ինքզինքը , և թէ՛ մինչև հիմա ոչ ոք ձեզ սորվեցուցած է թէ ծայրայեղ առատաձեռնութեամբ մարդ մը կը կորսուի :

«Ըսեմ ձեզ , եղբարք , թէ ո՞րն է այս մեղսալի առատաձեռնութիւնը . ըսածս ճիշդ այն առատաձեռնութիւնն է զոր դուք 'ի գործ կը դնէք եկեղեցոյն մէջ քարոզը մտիկ ըրած ատեննիդ : Եթէ բարկութիւնն ու պշտանքը , արբեցողութիւնը կամ անառակութիւնը դատապարտէի , ձեռնէ մ'կը այդ դասը վար պիտի դնէր , և անկէ օդուտ պիտի քաղէր : — Լաւ , պիտի ըսէր այն մարդերէ մէկը որ օղիով կ'ապրին , այդ խմանի նկարագրութիւնը հասկըցայ . քարոզիչին ըսած մարդը՝ իմ տոհմիկը՝ Սամուէլն է . առ , զինովդ դու , ամենը քեզի համար սուր : — Լաւ , պիտի ըսէր այն գեղանի Մատիանցիներէ մին՝ որոնք նոր պարեգօտ մը ձեռք ձգե-

լու համար՝ իրենց ամուսինը մարդ խարելու և սուտ ըսելու կը մղեն ,
 քարոզիչն իրաւունք ունի իմ դրացու հիներուս մոլութիւնները ե-
 բեան հանելու : Ա՛ն քեզի , օրիորդ Տէպօրա , ա՛ն քեզ , տիկին Ի-
 քասպօտ , ամենքն ալ ձեզի է , ինծի համար բան չկայ , սչըողներ :

«Ահա այսպէս , եղբարք , իմ խօսքերուս մէջէ ձեզի բան մը վար
 չէք դներ , առաջին երրորդ մասը ձեր դրացիներու կու տաք , երկ-
 րորդը բարեկամներուն , վերջինը ձեր ամուսնոյն կամ կնոջ : Ահա
 ինչ կերպով Տիրոջ վարդապետութիւնը ամուլ կը դառնայ , աւա-
 սիկ ինչ կերպով ծայրագոյն առատաձեռնութեամբ ձեր հոգին կը
 կորուսնէ :

«Քրիստոս ինքն ալ առատասիրտ է այլ ուրիշ կերպով , ազահ
 մ'է նա որ ամեն բան իրեն համար կը պահէ , մեր մեղքերը ,
 թշուառութիւնները , մեր տկարութիւնները և վշտերը . և անոր
 համար կը տեսնենք որ խաչին վրայ գլուխը կախ՝ և շունչը սպա-
 աած է ճնշուած մարդու մը նման : Եղբարք , ե՛րբ ուրեմն մենք ալ
 անոր բեռէ մեր բաժինը պիտի առնունք : Ե՛րբ արդեօք պիտի մի-
 թարենք մեր փրկիչն ու բարեկամը զՅիսուս՝ որ մեղաւորին և գե-
 րիին համար մեռաւ :

Այս կոչումին վրայ բոլոր ժողովուրդը ծունրի վրայ եկաւ և ընդ-
 հանուր արցունքներու մէջ սարսափելի ալելուիա մը երկինք բարձ-
 րացաւ : Այս շարժումը սքանչելի եղաւ ու զիս տխրեցուց :

Ոչ կալուածատէր և ոչ ազնուապետական եմ , կը հատամ որ
 սնը կապիկ մը չէ՝ քանի որ ձեռներ ունի և կը խօսի , բայց լսած-
 ներէս ետքը սկսայ կասկածիլ որ սեն ալ ինծի պէս մարդ մ'էր և
 կարելի է լաւագոյն քրիստոնէայ մը . այս մտածումը ինձ վախ
 առթեց : Կ'նչ ջամպօն իմ եղբայրս և Քրիստոս գոռոզ գլուխնե-
 րու համար մեռած ըլլայ , այս բանը հոգարտութիւնս չէր կրնար
 տանիլ :

Եթէ այս իրաւ է , կ'ըսէի մտովի՝ դուրս ելնելու ատենս , ի՛նչ
 ոճիւր է ուրեմն գերութիւնը : Հարտային Ամբիկան կործանող այս
 քաղաքային պատերազմը արդեօք այն պատիժը չէ՞ որով Աստուած
 զԿայէնը պատժեց :



Ժամը տասնամեկուկէս էր , Գրուզ կէսօրին քարոզ պիտի տար .
 քայլերս փութացուցի Միաբանական ակմբին կանուխ հասնելու հա-
 մար :

Բայց ճամբան Չինական տաճարը տեսնելու փափաքիս դէմ չկրցայ
 դնել : Երկրի մը մէջ՝ ուր միւս ամեն անիշխանութեանց մայր եղող ,
 կրօնական անիշխանութիւնը կը տիրէ , հետաքրքիր էի տեսնելու թէ
 Քօնֆուկիոսի զաւակները Քրիստոնէութիւնը ի՛նչպէս լուացեր էին :
 Գաղտնի ձայն մը ինձ կ'ըսէր թէ յազեցած և ծերացած ժողովուրդ
 մը անշուշտ աւելի խելք և իմաստութիւն պէտք էր ունենալ , քան թէ
 բողոքականները :

Ներս մտնելու ատեն զգուանքի ձայն մը ձգեցի . Պուտական կուա-
 տան մը մէջ կը գտնուէի :

Դիմացս բարձրաւանդակի մը վրայ շրջանակով պատած խորանի
 մը մէջ՝ ներկուած և ոսկեզօծեալ փայտէ սոսկալի մարդահրէշ մը՝
 սրունքները խաչաձև ծալլած նստած էր ներդիւնի տերեւի մը վրայ :
 Պուտտան էր այն իր ահագին փորովը , կնտակ գլխովն , ճակտին
 սապատովը , խոշոր ականջներովը և մեծ աչքերով : Ազատամիտ եմ
 հարկաւ և ատանկ ըլլալուս կը պարծիմ , երեսուն տարիէ՛ ՚ի վեր
 Սահմանադրական լրագրոյն բաժանողը գրուած եմ և լրագրիս պէս
 նաև ես չեմ փոխուած : Ես ալ անոր պէս՝ և սուանց պատճառը
 զիսնալու Յէզուսիթները կ'ատեմ , որ ազատասիրութեաննչան է , բայց
 զազատութիւնը կուսապաշտութեան աթոռ տալու գործածելն ինձ չա-
 փազանց կը թուի : Լուսերականութիւնը , Կալվինականութիւնը ,
 Յուդայութիւնը և նոյն իսկ Մահմետականութիւնը կ'ընդունիմ , բա-
 ւական է որ Նլժէրիաէ՛ դուրս չելնէ այն առանց կառավարութեան

հրամանին , բայց առիտ առելի հեռուն երթալը չէ թէ ազատամտութիւն՝ այլ հեթանոսութիւն և Միթհրայի պաշտաման դառնալու հետ նոյն է :

Առատան մէջ միայն երկու աղայ կար , երկու սոսկալի Չինացիներ՝ որոնք բարձրաւանդակին երկու կողմը դրուած էին , խահուէ այրող մարդերու նման , ասոնցմէ ամեն մէկը հորիզոնական գլան մը կը դարձնէր վրան խել մը պզտի թղթերով : Այս նոր կրօն մ'էր ինձ համար :

Քայլերուս ձայնէն մօտակայ խղիկէ մը կրօնականի նման մէկն ելաւ : Իր թուխ և կարկատուն պարեպօտը , բոկ ոտքերը , ածիլուած գլուխն , իր պզտի ու ներս քաշուած աչքերը , փոթ փոթ ու դեղին կաշին Ֆրանչիսկեանի պէս ծպտած պառաւ կնոջ մ'երևոյթը կու տային իրեն . ասիկայ բոնցիկ* մ'էր : Ինձ մօտեցաւ նա և առանց խօսելու փայտեայ թաս մ'երկնցուց . այս մուրացիանէն ազատելու համար մէջը ողորմութիւն մը նետեցի :

— Շնորհ ունիմ , եղբայր իմ , բտաւ նա պատուական Անկլերէնով մը : Երկնայինն ֆո՛՛քու ողորմութեան փոխարէնը հատուցանէ քեզի : Երանի թէ ուրիշ կեանքի մը մէջ կնոջ կամ շնադայլի մը գծագրութեան տակ չծնիս :

Իւ զիս այս նորօրինակ օրհնութեան վրայ բոլորովին ափ 'ի բերան ձգելով , բոնցիկը խորանին վրայ ելաւ , պզտի արկղէ մը , արծաթով ու ոսկիով օծուած քանի մը թուղթի կտորներ հանեց և զանոնք կուռքին քթին տակ այրեց :

— Ատ ի՛նչ կ'ընես , հարցուցի իրեն :

— Եղբայր , պատասխան տուաւ նա , քու տասը ցէնթը ոսկիի և արծաթի ձոյլ դաւազանի փոխելով ճշմարտութեան տիրոջ նուիրեցի զանոնք :

— Չոյլ դաւազաններդ թղթէ են , ըսի , և երկու ստակ չեն ըներ :

— Փոյթ չէ , ըսաւ քուրմը , ֆո՛՛ մտքին կը նայի և չէ թէ մատաղին :

* Այս բառը արբէն ծանօթ է ասիաց և կը նշանակէ քարոս :

† Գոտարայի աղաապետը անուանը :

— Ահ ուր էր թէ մեր զանձային պաշտօնեայները Չինացիներ ըլլային , պիտի պոռայի , բայց այս յանդուգն խորհրդածութիւնը ինձի պահելով հարցուցի քուրմին թէ այս անխնայ թեւերով տղաքն ի՛նչ կ'ընէին :

— Բոլոր աշխարհի համար կ'աղօթեն , պատասխանեց նա , այն ամեն թուղթերուն վրայ նուիրական վանկը դրուած է , և այս ըսելով երկրպագութիւն ըրաւ նա պտուղով Օ՛Մ , Օ՛Մ , Օ՛Մ : Այս զլաններու ամեն մէկը այս սուրբ խօսքերէ հազար հատ կը կրէ և մէկ վայրկեանի մէջ յիսուն անգամ կը դառնայ , ժամու մը մէջ երեք հազար անգամ , և քսանչորս ժամու մէջ եօթանասուներկու հազար անգամ : Հետեւաբար միայն այս տաճարէն ամեն կիրակի՝ հարիւր քառասուննչորս միլիոն աղօթք յերկինս կը բարձրանան : Շարժու մէջ առելի ըլլայ , վասն զի զլաններս շողիով դարձնել կու տամ , այլ կիրակի օր այս անհաւասաներու երկիրը նոյն իսկ մեքենաները շարափ պահելուն՝ այս սրոյց թեւերուն զիմեցի :

Այս կուսպաշտի յիմար դիւրահաւանութիւնը ինձ զզուանք տուաւ :

— Քրիստոնեայ երկրի մը վրայ ինչպէս կ'ընդունին զձեզ , պոռայի , եթէ տակաւին Իսրայէլի մէջ հաւատք զանուէր՝ շատոնց մեռցուցած էին զձեզ , Բասաղու քուրմեր :

— Ինչու պիտի չընդունին , պատասխանեց բոնցիկը հանդարտ ձայնով մը . ճշմարտութիւնը արեւու նման է , ամենուն համար կը փայլի : Քանի որ Ամերիկացիք միսիօնէր կը զրկեն 'ի Չինաստան , ինչու Չինացիք ալ Ամերիկա միսիօնէր պիտի չզրկեն : Ա՛րտուի թէ Ֆրանսա երկնի զաւկին գէ՛մ պատերազմ ըրաւ մի միայն մեր մանտարէններէն օրինաւորապէս սպաննուած քանի մը կրօնաւորներու մահուն վրէժը լուծելու նպատակաւ , կ'աւելցնեն թէ Բեքինի մէջ շատոնց զանուած քաթօլիկ եկեղեցին վերստին հաստատուեր է . ես երկու կողմէն ալ թափուած արիւնը կ'անիծեմ , իմ կրօնս սպանութենէ կը սոսկայ և համբերութենէ ու քաղցրութենէ ուրիշ զէնք չճանչեր , այլ ձեռք բերուած ազատութիւնը կ'օրհնեմ և կը փափաքիմ որ այն՝ թէ Չինացուցուց և թէ Գաղղիացուց՝ օգտակար ըլլայ :

— Շանդ-Էլիզէի մէջ կուստուն , պաշտօնական կուռքեր , մարդ Աստուծոյ , խենթեցիք ես գուն . Բարիդի մէջ Չինացիի պէտք չունինք , որքան որ յախճապակիէ . . . ունինք հերիք է :

— Կարծեմ թէ, յարեց քուրմը ծիծաղելի հանդարտութեամբ մը, իրաւունքները փոխադարձ են : Թէ որ Բեքինի մէջ մատուռ մը բանալը գեղեցիկ և արդարացի է, ինչո՞ւ Բարիզի մէջ կուտան մը բանալն ու հոն ազատօրէն ճշմարտութիւն քարոզելը գէշ պիտի ըլլայ :

— Տխմար բնոյիկ, պոռացի սուրբ եռանդով մը շարժած, դո՞ւ ես ճշմարտութեան վրայ խօսելու համարձակողը : Միթէ չես զգար որ քու վարդապետութիւնդ ստութիւն՝ և կրօնդ կուսակաշտութիւն մ'է : Եթէ գիտես՝ պատիժի արժանի խաբեբայ մ'ես, եթէ չես գիտեր, տէրութեան առաջին պարտաւորութիւնն է քու բերանը դոցել, որպէս զի աղիտութեանդ մէջ իր հպատակներու միտքը չսղտորես : Սխալի ազատութիւնը, թոյնի՝ կրակի աղատութիւնը ըսել է. ճշմարտութիւնը միայն խօսելու իրաւունք ունի :

— Կը կարծէի թէ, ըսաւ Չինացին, Ամերիկայի, Ֆրանսայի, Անկլիայի մէջ շատ քրիստոնէայ Եկեղեցիներ և նոյն իսկ Հրէից Սինակոկաներ կային :

— Անշուշտ, և մանաւանդ թէ Ֆրանսայի մէջ տէրութիւնը ամեն ճանչցուած կրօնները կը վճարէ, վասն զի գիտցած ըլլաս որ Ֆրանսա կրօնական ինչպէս նաև ամեն ուրիշ ազատութիւններու գլուխն անցած է :

— Ուրեմն, շարունակեց բոնցը, տէրութիւնը երեք կամ չորս կրօնական ճշմարտութիւններ կը ճանչէ որոնք փոխադարձաբար իրարու դէմ կը կուռին և զիրար կը կործանեն : Օրինակի աղաղաւ, քրիստոնէից համար Յիսուս Աստուած մ'է, բայց Հրէից համար ինչ է նա :

— Բարեկամք իմ, ըսի այս բառաբարոսին, քու աղիտութեան վրայ կը ցաւիմ : Եթէ պաշտօնական ճշմարտութեան ինչ ըլլալը հասկընայիր, պիտի գիտնայիր որ հակասութիւններով կ'ապրի : Հէկէլի իրացած երազն է այն : Հոն բնաբանն* ու հակաբուութիւնը† կը խառնուին և զարմանալի համագրութեան§ մը մէջ կը միանան :

Բոնցը իր պզտի աչերը բացաւ ու գլուխը դէպ 'ի երկինք վերցուց * Յայանի կ'երևար որ քաղաքակրթեալ Եւրոպայի մեծ գաղափարները

* Thèse. † Antithèse. § Synthèse.

այս ուղեղին մէջ չէին կրնար մտնել, մինչդեռ ես կարծեր էի որ Գերմանացի իմաստասէր մը Չինացիէ մը շատ հեռի չէ : Ուստի իմ հաստատութիւնս շարունակեցի ուրիշ ձևով մը, այսինքն բառերը փոխեցի առանց իրերու ուշադրութիւն ընելու. վիճարանութիւն մը առջև տանելու ճշմարիտ միջոցն աս է :

— Տէրութեան պաշտպանած ճշմարտութիւնը, ըսի այս ամբարշտին, հասարակ ճշմարտութեան հետ յարաբերութիւն մը չունի : Անիկա ընդարձակ ու գիւրիմաց ճշմարտութիւն մ'է որ իր մէջ կ'ամփոփէ մեր նուիրական գրքէն՝ Աստուածաշունչէն ելնող բոլոր հաւատքները : Հրէութիւնը, Քրիստոնէութիւնը և նոյն իսկ Մահմետականութիւնը՝ ճիւղեր են այն նախնական կրօնին որ աշխարհիս չափ հին է՝ և որ իր կողմն ունի թիւի առաւելութիւն, բարոյութիւն և քաղաքակրթութիւն : Այս Եկեղեցիներէ՝ որ Տիեզերքը մէջերնին կը բաժնեն, դուրս մնացածը կուսակաշտութիւն և բարբարոսութիւն է : Մեր պարտքն ու իրաւունքն է զձեզ թնդանօթի հարուածներով հաւատքի բերել : Պատերազմին բացած արիւնոտ ակօսներուն մէջ ճշմարտութիւնը կը ծլի, վասն զի քրիստոնէից Աստուածը բանակներուն Աստուածն է :

— Գու եանքի չես, պոռաց մոլեռանդը՝ որու աչերն յանկարծ տարօրինակ լուսով մը փայլեցան : Հոս գալէդ 'ի վեր դքեզ կը գիտեմ : Սաքսոնի դէմքը քիչ մը ցուլի և քիչ մը գայլի կը նմանի, մինչդեռ քուկէ կապիկի ու շան հով ունի : Ազատութենէ կը վախնաս, չգիտցած բաներուդ վրայ կը խօսիս ու անիմաստ խօսքեր կը թափթփես, Գաղղիացի ես սնովբէպ :

Չիս ապշութենէ համը տեսնելով շարունակեց նա,

— Միթէ թիւի առաւելութիւնը կը համարձակին ճշմարտութեան սպացոյց համարիլ : Թիւի առաւելութիւնը մեր կողմն է : Ո՞րչափ քաթօլիկ կայ : — Հարիւր երեսուն միլիոն, բոլոր քրիստոնէից թիւը քանի է — Առ առաւելն երեք հարիւր միլիոն : Մենք Պոտտայականք՝ հինգ հարիւր միլիոն եմք, Բամշաթբայէ սկսելով մեր հաւատքը մինչև Ճերմակ ծովը կը տարածուի, վայրենիներու բարբըր կ'ամոքէ և Չինացիներն ու Ճափոնները կը մոզէ, այսինքն ժողովուրդներ՝ որ Եւրոպա տակաւին անտառ մը՝ և Ամերիկա անապատ

մ'եղած ատեն՝ արդէն քաղաքակրթեալ էին : Հնութեան խօսք կ'ընես ինծի, միթէ գիտես որ Աղէքսանդրի օրով Պուտոսայականութիւնը արդէն իր ժողովները ըրեր էր և թէ Ասօքա թագաւորին Հնդկաստանի ժայռերուն վրայ փորել տուած արձանադրութիւնները ողորմութիւն ընել և զո՛հ մատուցանելու յորդոր կը կարգային աշխարհի : Միթէ չես գիտեր որ Պուտոսայականութիւնը Պրամիններու աղաւաղեալ կրօնին բարեկարգեալն է և թէ Վէտաները՝ մեր նախնեաց նուիրական զրեթըր՝ աշխարհիս առաջին օրերէ մնացած են : Թիւն ու տեղութիւնը մէկ դի մնայ, ասոնք կարելի է յաջող պարագաներ են, և տեսնենք թէ ամենէ յառաջ կամաւոր աղքատութիւնը, ինքնուիրութիւնը քարոզող կրօնը ո՞րն եղած է : Վ'անդիտեն որ Քօհինդ Տարիւր յիսուն մարմնացում ունեցած է և թէ իր մէջ մի այս մարմնացումներու մէջ ինքզինքը զոհած է : Վաղրին համար գաւնուկ, բազէին համար աղանի, անօթեցած որսորդին համար նապաստակ եղած է : Չես կարդացած Վէզանթարաի սուրբ պատմութիւնը որ ողորմութեան համար իր կիներն ու զուակները ձեռք տուած է : Մենք ենք միակ հասարակութիւնը որ սպանութենէ խորշելով կենդանիներու միսն ու արիւնը չենք ուտեր : Ահա քանի մը անտեսանելի ճճիներու կեանքը խնայելու համար ջուր խմելու ատեն ևս քամոց կը գործածեմ : Իսկ ձեր՝ քրիստոնէից կրօնական պատմութիւնը, կռիւներու, պատերազմներու և կոտորածներուն հիւսմ'է միայն կ'ըսեն : Այսօր զո՛հ վաղը դահիճ էք : Պուտոսայականացս մէջ միայն նահատակներ կան : Երկու հազար չորս հարիւր տարիէ 'ի վեր, բազմիցս մեր արիւնը թափած՝ զմեզ Հնդկաստանէ վաճառած են, բայց մեր ձեռները միշտ մաքուր են մնացեր : Բան մը չկայ որ մեր տարեգիրներու մէջէ սրբուելու արժանի ըլլայ, ցուցուր ինձ կրօն մը՝ որ այս խօսքը կարենայ ըսել : — Չեր Աւետարանը սքանչելի վարդապետութիւն մը կը քարոզէ, գիտեմ և քրիստոնէականութեան վաղբին վրայ չեմ գատեր անոնց հաւատքը : Քրիստոսի խօսքերն ու չարչարանքը մինչև սրտիս խորը յուզած են զիս : Բայց զիս ուրիշ գաղափարներով մեծցուցած են, քսան տարի է որ ինքզինքս ետիրած եմ աղքատ կեանքի մը՝ որ զիս կը մխիթարէ ու կը զօրացընէ : Չեզ՝ քրիստոնէից նման, ես ալ իմ հարց կրօնը պահած եմ,

ես ալ ձեզ նման իմ նախահարքս ոչ իբրև ստախօս և ոչ իբրև սխալական կրնամ ամբաստանել : Մեր երկուքին մէջ ո՞վ է խաբուողը, ճշմարտութիւնը որո՞ւ կողմն է, չգիտեմ, և շատ կը փափաքիմ լուսաւորուիլ : Ա՛լ բռնութիւնը, սոցիտութիւնը և արհամարհը վերցընենք մէջտեղէ, ամեն հաւատներու աղատութիւն շնորհենք, թողունք որ բանաւորութիւնը Աստուծոյ իրեն յանձնած պաշտօնը կատարէ : Պիտի դայ մեծ օրը՝ ուր ամեն ստուեր պիտի փարատի : Մարդիկներէ շինուած կրօնը մինակ մնացածին պէս՝ ձեան նման պիտի հալի և երկնքէն եկողը պիտի բարձրանայ կաղնիի մը նման ու իր ոստերովը երկիրը պիտի ծածկէ : Խօսելու աղատութիւնը տուէք, ես հաւատ ունիմ աղատութեան մէջ, վասն զի հաւատ ունիմ ճշմարտութեան վրայ :

— Բանդ գնա՛, գուն ալ Չինացի, ըսի իրեն և վեհ քալուածքով մը հեռանալով այդ թշուառականին վրայ ունեցած զերազանցութեամբս զինքը ափ 'ի բերան թողուցի :



Հասած ատենս ժամասացութիւնը չէր սկսած : Բողոքականի տաճարէ մը աւելի տխուր բան չկայ . կաղնիէ նրստարաններ, մեծ փայտակերտեր՝ որ պատերը կը մթնցընեն, պատկեր չկայ, ծաղիկ չես տեսներ, լոյս ամենեկն՝ և ասոնց տեղախուր ու ցամաք բան մը՝ որ զղայարանքդ կը սառեցընէ : Արծես թէ կոյրերու համար շինուած կրօն մ'է այն : Ար սխալիմ սակայն, զարգ մը կար, այն էր ծանուցման լայն գիր մը՝ որու վրայ ահագին թուանշաններով գրուած էր,

129

Եկեղեցւոյն մէջ բաղմութիւն կար, բայց համբ բաղմութիւն մը : Ամեն հաւատացեալ իր տեղն անշարժ՝ ու իր սե զրբին զբաղած կ'աղօթէր՝ Աստուծոյ հետ աշխարհիս մէջ առանձին եղածի պէս : Ոչ աղմուկ կը լսէիր, ոչ աթոռները շարժելու ձայն, և ոչ այն անուշ շշուկն ու գեղեցիկ արկնանց մէջ փոխանակուած խոնարհութիւնները՝ որոնք իրենց բարեպաշտութիւնն ու պարեզօտը հաւնեցընելու առիթը ունենալուն շատ գոհ են . հոս չկար այն սիրուն անկարգութիւնը որ մեր եկեղեցիներուն՝ ընտիր ընկերութեան սրահիկի մը հովը կու տայ, այլ անտառային լուսութիւն մը կը տիրէր :

Ի վերջէ քարոզիչը ներս մտաւ, իսկոյն կոհակին վրայ հովին հանած շշուկէն աւելի քաղցր ներդաշնակութիւն մը բարձրացաւ : Այր, կին, մանկտի, ամեն ոք իր բոլոր հոգւով, անհասնում եւ ունդով ու խանդով կ'երգէր : Առաջին անգամ էր որ աղօթքին բնական ձևն երգ ըլլալը կ'զգայի : Իմ լուսեան վրայ զարմացած գրացի մը մատովը խորհրդաւոր թուանշանը ցոյց տալով ինձ ինձ երկնցոց երգարանը ուր նուազը խազադրեալ էր : Աջորդ սաղմօսը կ'երգէին՝ կամ քրիստոնէական հետեւութիւն մը այս վտեմ աղօթքին՝ զոր քաթոլիկ եկեղեցին մուտնեբու թաղումի յատկացուցած է : Իր անունով ըսելու համար՝ այն էր 'ի Խոր անբարոյր, աղաղակ յուսոյ և սիրոյ՝ որու գեղեցկութիւնը մեզի չերեւար զայն սակայ լսելուն համար :

- Այս անդունդի խորէն ձայներս գու չեն լսեր,
- Քննէ հեռի մեռնիմ, ո՞վ Տէր .
- Խոստովանիմ քեզ իմ մեղքեր, լուր ինձ Աստուած,
- Եւ թողութիւն տուր իմ մեղաց .
- Ո՞վ ապրելու առջևդ արժան պիտի ըլլար,
- Թէ լինէիր գու անաչառ .
- Այլ դու միշտ մեզ կը շնորհես գութդ անսահման,
- Ես օրէնքիդ վտահանամ .
- Անմահ պատգամդ նեցուկ կ'ընեմ ինձի այն,
- Հոգիս վտահ է քո սիրոյ .
- Ինչպէս սրահնորդ սպասէ ծագելն արեգական՝
- Քեզ տէր Աստուած սպասեալ մնամ :

Արիացիր հոգիս, քո հայրն երկնից դահէ,
 Քու բանտիդ մէջ զքեզ կը դիտէ :
 Իսրայէլի մեղքերն հա է որ կը գնէ,
 Եւ փրկազինդ կը վճարէ :

Երբ երգը լնցաւ Գրուդ սկսաւ խօսիլ : Տը Մէթըրը իրաւունք ունի բողոքական քարոզիչը այսպէս սահմանելու . Սև հոգեւորական զոն զը՝ որ շատ խնամաւոր էր Խոսի . երբէք չէի տեսած մարդ մը որ քահանայական երեցութէ այնքան զուրկ ըլլայ որքան իմ խեղճ բարեկամը : Զինքն իր հօտէն որոշող ծպիտ մը, զինքը ունկնդիրներէ վեր բռնող ամպիոն մը չունէր նա, այլ բոլորովին եղբայրական ընտանութեամբ մը 'ի միւսմ հարթութեան կեցած կը խօսէր : Կարծես թէ դիտմամբ՝ ճարտասանական ձևերէ ալ կը խորշէր :

Գրուդ չունէր այն որոտացող ու մեղմացող ձայնը, Աստուծոյ վրեժիկներութիւնը և յետոյ թողութիւնը խնդրող թեքը, իրարու միացուցած և երկինք բարձրացող ձեռները, զԱստուած փնտռող և զայն տեսնելով լուսաւորուող նայուածքը, քրիստոնէական արհեստին այս գեղեցկութիւնները չէր դիտեր նա :

Հազիւ թէ ձեռքը կը շարժէր, հազիւ ձայնը կը բարձրացընէր, բայց և այնպէս այս պարզ ատենաբանութեան մէջ չդիտեմ ինչ ներդաշնակութիւն մը կար որ սրտիդ բոլոր թեքերը կը շարժէր . երբէք լեզուի այս քօղը որ միշտ գաղափարը կը ծածկէ՝ այնքան թեթեւ ու թափանցիկ եղած չէր : Մտիկ ըրածդ չէ թէ ատենաբան մը՝ այլ մարդ մը ու քրիստոնէայ մ'էր : Սովորական խօսք մը գործածելով, Գրուդ ամեն ճարտար պէս կը խօսէր, այսինքն ինչպէս որ ամեն մարդ կ'ուզէ խօսիլ և ոչ ոք կը խօսի : Մեծ մտածումները ընտանեբար բացատրելը միայն մեծ հոգիներու յատուկ է : Ճարտասանութիւնը որ լուկ հետեւողութիւն մ'է, մինչև հոն չհասնիր :

Աւստիկ գրեթէ իր ճառը : Այլ ինչպէս զրոյ առնում իր յուզուած ձայնին սարսուռը, քանի որ բառերը թղթին վրայ կը սաւախն . թողնած ծագիկներ կը գառնան՝ որ իրենց հոտն ու գոյնը կը կորուսնեն : Գուն գործենք սակայն գաղափար մը տալու այս վարդապետութեան՝ որ իմ վրայ խորին տպաւորութիւն մը ըրաւ, թէև Աւետարանը բացատրելու այս ազատ կերպին մէջ այսպիսի նորութիւն և յանդգնութիւն մը կար՝ որ ինձ զարմանք ու զարհուրանք ազդեց :

Յովհաննէս. ԺԸ. 37. 38.

«Ան ասիւնը Պիղատոս ըստ անոր. — Ուրեմն դուն ինչո՞ւ ես ասիւնը համար քննած էմ, և ասոր համար աշխարհի եկո՞ւ, որ ճշմարտութեան համար վկայեմ. այն ասիւնը որ ճշմարտութեան է, իմ յայնչեալ անիւնը ինչո՞ւ պիտի զննէ: Պիղատոս ըստ անոր. — Ի՞նչ է ճշմարտութիւնը. և ուր ըստ ինչո՞ւ ես ասիւնը զննեմ: . . .»

Քրիստոնեայք, եղբարք իմ,

Երկրի վրայ Յիսուսի առած անուններու մէջ՝ չկայ անուն մը որ այնքան ստեպ յիշուած ըլլայ, որքան ճշմարտութեան անունը: Պիղատոսի առջև, վերջին ժամուն, Յիսուս ինքզինքը թագաւոր կը հրատարակէ, այլ այս աշխարհիս չվերաբերող թագաւորութեան մը, այն է ճշմարտութեան թագաւորութիւնը: Իր մահուան նախընթաց օրը, աշակերտներու հետ իր վերջին ընթրիքն ընելու ատեն՝ իբր վերջին հրածեշտ սա մեծ խօսքը կը թողու նա. Ես էմ ճանապարհն, ճշմարտութեանն ու կենսոյն: * Եկե՛ք հօգը Իմ չիտր ելի՛ք ու եկե՛ք: Ուրիշ կերպ խօսելով եթէ մեր ներկայ լեզուներով Եփրայական այս ոճը թարգմանել ուզենք պիտի ըսենք. Ես էմ կենսոյն ճշմարտութեանը որ Աստուծոյ կը որոնէ:

Միթէ կը հասկընանք կենսոյն ճշմարտութեան բառերու նշանակութիւնը և զօրութիւնը: Չկան ձեր մէջը շատեր՝ որոնց համար ճշմարտութիւնը ուրիշ բան չէ՝ բայց եթէ իրերու մէջ եղած առնչութիւնը, հաստատում մը, թուանշան կամ վերացեալ բան մը: Չկան նաև այնպիսիներ՝ որոնց համար առանց նշանակութեան բառ մը՝ հասարակաց կարծիքին հոմանիշ մ'է որ կը փոխուի ու կ'այլակերպի անդու: Որքան իմաստուններ կան, որ Պիղատոսի հետ պիտի ըսէին յօժարակամ, «Ի՞նչ է ճշմարտութիւնը: Երեկուան վճիռը որ վաղը սխալ կ'ելնէ: Ճշմարտութիւնը միայն ներկայ ժամուս մէջ շահաւոր երեցածն է»: Անսարու հաճելի ըլլալ և երկրորդ օրը չմտածել՝ զերազոյն փիլիսոփայութիւնն է այն մարդերուն՝ որոնք բոլորովին մեռնիլ կը յուսան:

Որդիլինք հեթանոսական սկեպտիկութեան այս վերադարձը, վասն զի զայն ընդունելով մեր միտքը ստրկութեան և սիրտը ամեն տեսակ ապականութեանց և ամեն ազգի վատութեանց դատապարտած կ'ըլլանք: Ընդ հակառակը ինչպէս Աւետարանի առջի օրերուն մէջ կ'ընէին՝ ճշմարտութեանը քննարկելու ան ճշմարտութեանը յեղ պիտի ազդէ: †

Երբ վայրաշարժը § մեր փողոցներէ կ'անցնի իր ետևէն երկայն կա-

* Յովհաննէս. ԺԴ. 6. † Յովհաննէս. Ը. 32. § Locomotive.

ուշարք մը քաշելով, ինչո՞ւ մեկի կը քաշուիք անոր անցքը իմացընող զանդակին ձայնը լսելուդ պէս: — Որովհետև ձեզի ստրկեցուցած են որ այն յատկացող զանդուածը իր արդուութեամբ բազմապատկուած ծանրութեան ուժովը զձեզ կը ճզմէ: ՎՏա դիտական ճըշմարտութիւն մը՝ որ ալ ձեզի համար վերացեալ չէ և այնպիսի հաստատ համոզում մը դարձած՝ որ ձեր մարմնը կը պահէ ու կը փրկէ: Այդ համոզումը հիմակ նոյն խն ձեր մէկ մասը կը կազմէ ու ձեզի պէս կենդանի է:

Այս քաղաքին մէջ՝ որ իր քաղաքակրթութեամբը կը փառաւորուի, հաղարար մարդիկներ կան որոնք իրենց միտքը կը փթացընեն ու ինքզինքնին կ'սպաննեն ողբից ըմպելիքներու յիմար գործածութեամբ: Ինչո՞ւ, եղբարք իմ, ինքզինքնիդ չէք տար այս մոլութեան՝ որ աւելի սարսափելի բայց չէ թէ աւելի մեղսուի է խել մ'ուրիշ մոլութիւններէ՝ որոնք ամօթ չեն համարուիր: Որովհետև դիտէք թէ ցքին թոյն մ'է որ կատակ չընեն, և այդ դիտութիւնը առաքինութեան տեղ կը բռնէ: Աւասիկ ևս ճշմարտութիւն մը՝ որ բարոյական ու բնական է միանդամայն, որ անդամ մը ձեր հոգւոյն մէջ մտնելէն ետքը՝ ձեզի հետ կը նոյնանայ:

Գեռ չլմնցաւ: Չէք ճանչնար շատ ազնիւ սրտեր՝ որոնց համար զեղբարութիւնը, փառասիրութիւնը, ազատութիւնը՝ արեւցողութիւնն ոչ նուազ գարշելի բաներ են: Այս մասին հարցուցէք հօր մը՝ որու աղջկան պատիւը զողջած են. հարցուցէք մօր մը՝ որու դաւակը կորսուած է հեռուոր փիերու վրայ, հարցուցէք այն մարդուն՝ որ տարապայման վաշխ մը վճարելով իր կնոջ ու զաւկըններուն կեանքը ազատելու կ'աշխատի: Այդ խեղճ զօհերը փորձաւորութեամբ կ'ատեն այն մոլութիւնը՝ որմէ վնասուած են. կան ուրիշներ որ աւելի բազդաւոր զանուելով իրենց բոլոր դիտութիւնը դաստիարակութեան կը պարտաւորին կամ դիտենք փրկող բնազդումը՝ մօր մը պարկեշտութեանն, տիրոջ մը ինքնուրուութեանն ստացած են: Այս ալ գարձեալ կենդանի ճշմարտութիւն մ'է, ճշմարտութիւն. զոր մեր խղճի մորմուքէ ստիպուած կը խոստովանինք, նոյն խն երբ զայն մտնի ընել չենք ուզեր:

Մեր հասարակապետութեան մէջ կան հայրենասէրներ՝ որոնք ամբոխին յեղեղուկ հաճոյից դէմ կը գնեն, բայց միթէ այս գիմադրութիւնը հարատուութիւն կամ հաշիւէ յատու եկած է: Այ՛. հպարտութիւնը բաւական է որ տիրապետէ, ամեն տեսակ վատութեանց յանձնառու կ'ըլլայ և շահանդրութիւնը ամեն հովերու կը յարմարի: Բայց անբիժ հոգի մը լուսաւորեալ գլուխ մը՝ աւելի բարձրէ ու աւելի հեռուէն կը տեսնէ: Մարդ եղեր է կամ ժողովուրդ՝ բռնաւոր ըսելը կը

նշանակէ տէր մը՝ որու կիրքերը մէկն ու միւսը կը գրգռեն, և որ զինքը պատողներու և խաբողներու ստորին փափաքներէ չկրնար պրծիլ ։ Անիրաւ պատերազմներ՝ խենթ ծախքեր, բարձր դասերու մէջ բարբի ապականութիւն, ստորին կարգերու մէջ թշուառութիւն, ասոնք են քննութիւն չունեցող իշխանութեան մը պատուը ու բանէ մը չչափաւորուող զօրութեան մը ժանտախտը ։ Չայս գիտցողը երբէք շողջօրութի պաշտօնը չընդունիր, վասն զի ճշմարտութիւնը կը հեռացնէ և իւրենց առանձնութեան մէջ կը մտնի թարէ այն հոգիները՝ որոնք երբէք չեն կրնար նուաստանալ ։ Պիտի ըսէք թէ ատոնք հին առածներ են՝ որ ամեն տեղ կը կրկնուին ։ Քսան դարէ ՚ի վեր գպրոցներու մէջ կը սորվեցընեն զանոնք և աշխարհիս ընթացքը բարուրած չեն ։

— Գատճառն ան է որ ճշմարտութիւնը գիբերու մէջ մնալով մեռած է ։ ձեր սիրտը տուէք անոր, ճշմարտութիւնը ձեզի սկզբունք ըրէք, ան ատեն կ'ապրի՝ և ձեր խղճմտանքը ձեր պատիւը ու փրկութիւնը կ'ըլլայ այն ։ Մարդուս միտքը մարմնոյն պէս է՝ բաւերով չանանիր, իրերու մնունքը պէտք է իրեն ։ Ստրուկ ժողովուրդի մը ազատութիւն տալը զէնք մը վստահիլ է մանուկներու որ իրենց ձեռքին մէջ պիտի պայթի ։ Ինչու ։ Քանզի ինք զինքը և ուրիշը յարդիւր, իրաւունքի զգացումը՝ արդարութեան սէրը, ազատութեան այս էական պայմանները, օրէնքի յօդուածներ չեն, չեն վճռուիր, այլ առաքինութիւններ, զոր քաղաքացին կ'ստանայ համբերութեամբ և վարժութեամբ ։ Քանի որ ազատութիւնը հոգիներու մէջ չապրիր, միայն հնչական պղինձ մը՝ ու ուրտաձայն ծնծղայ մ'է, անգամ մը մեր ոսկորներու ծուծին մէջ մտածին պէս՝ բռնաւորներու բոլոր կատաղութիւնը և խորամանկութիւնը չկրնար զայն անկէ հանել ։

Այն կենդանի ճշմարտութիւններ՝ որոնք միանգամայն իրերու մէջ և մեր ներքն են ։ Այս ճշմարտութիւններն են որ զմեզ բնութեան և մեր նմաններու հետ յարաբերութեան մէջ կը դնեն, բնական աշխարհին օրէնքները յայտնելու ատեն զանոնք կը հպատակեցընեն մեզի, ու ամեն մեզի պէս մտածող մարդ՝ բարեկամ և եղբայր կը թուի մեզ ։ Բայց այս լոյսը որ աշխարհիս մէջ մեզի ճամբայ ցուցունելու կը բաւէ, մեր սիրտը չտաքցընէր ամենեւին ։ Մեր միտքը կը մոզէ, կիրքերը կ'ամբէք ինքնասիրութիւնը կը լուսաւորէ ու կը մեղմէ՝ սակայն երջանկութիւն չտար ։ Մարդս անբաւութեան ծարաւ մը ունի՝ աշխարհային անհամբերութիւն մը, սիրելու պէտք մը՝ զոր գիտութիւնը չկրնար երբէք գոհ ընել, ձեռք ձգելու համար այն բարիքը որու համար մեր հոգին կը հառաչէ ։ Կոր ճշմարտութիւն մը հարկ է որ զմեզ Աստուծոյ հետ յարաբերութեան դնէ, որ մեր ներսի դին ու ՚ի նա գանուի ։ Այս ճշմարտութիւնը

որ միայն նոյն իսկ Աստուած կրնայ ըլլալ՝ սիրելու և ճանչելու պէտք ունինք ։

ՉԱստուած սիրել և փոխադարձաբար անորմէ սիրուած ըլլալը հին իմաստասիրութիւնը չկրցաւ երբէք լմբունել և արդի փիլիսոփայութիւնը նոյն անողորմենէն կորսուելու վրայ է ։ Պարապ տեղ մարդուս խիղճը զԱստուած կը փնտռէ, բնութեան իրեն կը կանչէ զայն՝ խղզուելու մօտ եղող նաւարեկեալին եռանդով, պաղ բանականութիւնը մեզ կը կրկնէ թէ Աստուծոյ և մարդու մէջ տեղ անբաւութեան և վաղամեռ արարածին մէջ՝ անանցելի անդունդ մը կայ ։ Անողորմ բնութիւն մը, գերագոյն էակ մը՝ որ նոյն իսկ իր օրէնքներուն գերին է, ահա այս է ամենէ մեծ դուխներու մեզ ընծայած դաղափառը ։ Աստուծոյ սէրը խար մ'է, աղօթքը՝ հոգւոյ այս աղաղակը, բնութեան մրմունջ մը՝ որ համը երկինքի մը մէջ կ'սպառի ։ Առէ մահականացուցողու, սիրտդ խղզէ և յուսահատական համակերպութեան մը մէջ փակուէ վասն զի ուրիշ բան չես՝ բայց եթէ անողորմ ձակատաղ ին անխիւն սակ ձգմուած հիւլէ մը ։

Եւ արդ, եղբարք իմ, տասնեկնք դարէ որ աշխարհք եկաւ մարդուն մէկը մեզի քարէ աւերակ բերելու, զԱստուած մարդկութեան մօտեցընելու համար ։ Այս մարդարէն ինքզինքը Որդի Աստուծոյ և Որդի մարդոյ կոչեց, ինքնիրեն լոյս և ճշմարտութիւն անունները տուաւ (որ կարելի է նոյն խորհրդին մէկ տարբեր անունն է ։) Ես էմ, բաւ, հանապարհ, ճշմարտութիւնը ու կեանքը, թէք հօրը ու զբոր ելի ու ինչո՞ւ ։ Աշխարհք մտիկ ըրաւ զանի ու հաւտաց ։ Այն օրէն որ բանն մարմին տուաւ, որ երկնային ճշմարտութիւնը մարմնացաւ, հաւատքը, յոյսը և սէրը աշխարհիս վրայ երեցան և մարդուն սրտին մէջ մտան ։ Այս խնդիրը՝ զոր բանականութիւնը անլուծելի կը հրատարակէ և ուր հակասական կարծիքներ կը տեսնէ միայն՝ Բրիտտոս լուծած է ։ Անդանի ճշմարտութիւն մը, մարմնացած ճշմարտութիւն մը՝ զոր Աստուած իբրև որդի մը և մարդ իբրև փրկիչ մը կրնայ սիրել, ահա այս է միութեան գիծը՝ որ երկիրը երկնին հետ միացուցած, մարդկութեան հարմը՝ և Աստուծոյ զաւակներ տուած է ։ Հու է ահա յայտնութեան խորհուրդը, հոս է Իր Աստուածութեան ապացոյցը ։ Մարդու միտքը երբէք ինքնիրեն պիտի չկրնար ելնել այն իմացութեան՝ որ մեր միտքը կը շփոթէ և զայն կը լուսաւորէ սակայն անհատնում պայծառութեամբ մը ։ Այո, եթէ Աստուած զմարդիկ կը սիրէ, ուրիշ կերպ չկրնար ըլլալ այն՝ բայց եթէ ինքզինքը սիրելով իր յախտեանական ճշմարտութեան հայեցողութեան մէջ, այո, եթէ մարդ կրնայ զԱստուած պաշտել այնպիսի կրօնով մը՝ որ անոր համար նախասինք մը չըլլայ՝ այս գերագոյն

լուսոյ մէկ ճառագայթը պաշտելով է որ մինչև իրեն իջնելու չգժկա- մակիր :

Յիսուսը սիրել , ճշմարտութիւնը սիրել է : Ճշմարտութիւնը սիրելը Յիսուսը սիրել է , այս է աւետարանին գաղտնիքը զոր չիմացողը ա- նունով միայն քրիստոնէայ է :

Հիմայ , եղբարք իմ , դուք ձեր ներքը մտէք ու մտածեցէք : Քրիս- տոսը սիրելով ինչ կը սիրէք : Միթէ սիրածնիդ , իրեննե բուն համար իր կեանքը նուիրող նահատակը չէ , Չէ մի այն խաչեցեալը որու վէր- քերը տակաւին կ'արհնին : Չգուշացիք սակայն , մարդկային սէր մ'է այդ . ամեն կրօնները , ամեն կուսակցութիւնները իրենց մարտիրոսները ունին : Քրիստոս ասիէ աւելին կը պահանջէ : Քրիստոս լոկ պաշտելի գիտի մը չէ որու վէրքերը կը համբուրուին . Քրիստոս ճշմարտութիւն է և իբրև այն՝ ձեր սէրը կը պահանջէ նա : Ըսէք , այս կերպով կը սի- րէք զանի : Հաւատ ունիք անշուշտ , աւետարանին կը հաւատաք , բայց միթէ ասիկա ժառանգական նախապաշարում մը չէ . նշանաբան մը որու ճակատ առ ճակատ նայելու չէք համարձակիր , վախնալով որ ինքզինք- նիդ թերահաւատ գտնէք : Չեր հաւատքը քննագատութեան կ'առնէք . անոր անբժուելիւնը արատաորոշ հեթանոսական կամ Եբրայական խառնուրդէ կը զտէք երբէք : Չեր դործերը միթէ ձեր հաւատքին վրայ կը կանոնաւորէք : Չեր անձնական և հասարակութեան կարծիք- ները , առ ոչինչ գրելով մարդարեւին և առաքելոյն հետ կ'ըսէք , « Հա- ւատացի , անոր համար խօսեցայ » : Եթէ այդպէս է , կը սիրէք զՔրիս- տոս ինչպէս որ սիրուիլ կ'ուզէ նա . որով ճշմարտութիւնը կը սիրէք :

Բայց եթէ կրօնը ձեզի համար լոկ արարողութիւն մ'է , եթէ անոր մէջ զձեզ հալածող ճշմարտութեան ձայնին դէմ ապաւեն մը կը փնտռէք , եթէ ձեր հաւատքը շուրթերնուդ վրայ սպառելով դործե- բու մէջ չեւեւար , եթէ բոլորովին ձեր հարստութեան և հանգստու- թեան դաղափարով զբաղած՝ մոլորութենէ աւելի գայթակղութենէ կը վախնաք , թէ որ ձեր վատ խոհեմութեան մէջ՝ իր խօսքը պաշտպանե- լու հոգը Աստուծոյ կը թողուք . թէ որ ողորմասիրութիւնը միայն մար- մնոյ թշուառութիւնները սիրովելու կը գործածուի և մոլութեան ու տղիտութեան դէմ չպատերազմիր , թէ որ չէք զգար թէ ձեր առաջին պարտաւորութիւնը անմահ հոգիներ մեղքի ստրկութենէ փրկել է , ե- թէ չունիք բնաւ այն սուրբ խնթութիւնը որ զարուս իմաստութիւնը արհամարհելով առաթուր կը կոխէ , եթէ վերջապէս դուք անձամբ չէք բնեւ այն գործերը զոր Քրիստոս այս աշխարհի վրայ բրաւ , եղբարք իմ , մի խարտիք , կը հաւանիմ որ ճարպիկ , խոհեմ , իմաստուն և զգայուն էք , բայց քրիստոնէայ չէք և ճշմարտութիւնը չէք սիրեր դուք :

— Տարակոյսներ ունիմ , կ'ըսէք , եթէ հաւատայի պիտի սիրէի զՔրիստոս : Եւ ես կ'ըսեմ , սիրեցէք զան յետոյ կը հաւատաք : Սիրե- ցէք զան իբրև կենդանի և Աստուծոյ տանող ճշմարտութիւն : Եթէ այս արարողութիւնները ձեզ անհաճոյ կը թուին մէկզի ձգեցէք զանոնք , թէ որ այս վարդապետութիւնները ձեզի վախ կ'ազգեն մէկզի գրէք , կրնայ ըլլալ որ մարդկային գիւտ մը ըլլան՝ զորս կարելի է ետքէն կը հասկընաք . Քրիստոս ոչ վարդապետութիւն և ոչ արարողութիւն դրաւ : Չեր հաւատքը պարզեցէք ու ինչպէս որ առաքելներու ամենէ յանդուգն ու ամենէ ջերմեանդն բաւ . Սուրբ Հոգին մի մարէ Թե՛ Բան Գործեցէ , Բարե՛ն Կարէցէ : Եթէ նոր կտակարանին մէջ կան տեղեր՝ որ կը շփոթեն զձեզ , ի բաց գրէք զանոնք : Ինչ փոյթ ե- թէ աւետարանիչները իրենց մէջ կը տարբերին , քանի որ աւետարանը ինքիբն հետ միշտ համաձայն է , քանի որ Քրիստոսի խօսքերուն մէջ՝ յաւիտենական ճշմարտութեան բոլոր միշտ կը վառի :

Միթէ ձեր գայթակղութեան առարկան Քրիստոս է . տակաւին հաս- կըցած չէք որ պէտք էր ճշմարտութիւնը մարմնանայ՝ որպէս զի կեն- դանի ըլլայ և կարենանք զայն սիրել : Երբ ուրեմն՝ նոյն ինքն Քրիստոս ձեր տկարութեան վրայ կը զթայ և զձեզ ազատ կը թողու . Եթէ յեղե- թելը Որդոյ մարդոյ դէմ խօսի , դիտի ներսի իբն , Բայց եթէ Թե՛ն Հոգոյն որքոյ (կամ ուրիշ անունով մը) ճշմարտութեան հոգոյն՝ դէմ հայեոյե դիտի ներսի իբն : Աւստի ճշմարտութիւնը փնտռեցէք նոյն իսկ ճըշ- մարտութեան համար , ինչպէս որ կ'ըսէք , բայց անկեղծօրէն փնտռե- ցէք , և երկայն շրջանէ մը ետքը՝ ճշմարտութիւնը զձեզ ի Քրիստոս պիտի տանի :

— Ճշմարտութիւնը կը փնտռեմ ու չեմ գտներ , կ'ըսէք : Չէ եղ- բայր , զայն չես փնտռեր դուն : Մտքիդ հպարտութիւնը , մարմնոյ կիր- քերը՝ զքեզ կ'արդիւնեն , դիտութեան չէք կրնար հասնիլ կարելի է , բայց բարոյական ճշմարտութեան ուր ըլլալը գիտէք : Հոն է այն , ձեր տան մէջ , համր ու քողարկեալ և մեռելոց աշխարհէն խոյս տուած Ալէստի նման , հոն ձեզի կ'սպասէ :

Քաջ գիտէք որ երբ կեանքէ ու ինքզինքնէդ խոնջեցած տունը կը վերադառնաք՝ հոն է այն ու իր քողին տակէն զձեզ կը գիտէ ու կը գա- ատէ : Գիշերը՝ երբ մութին մէջ ու առանձին էք և երկրորդ օրը ձեր գոր- ծելիք մեղքերուն և փառասիրութեանց վրայ կը մտածէք , հոն ձեր քովը կը դանուի այն : Իր աչքը մութին մէջ ձեզ կը հետևի ու իր լուծութիւ- նը զձեզ կը սառեցընէ : Չմարդիկ կ'արհամարհէք , օրէնքը կը ծաղ-

* Յովհաննէս . Ժ. 17 . † Ղուկաս . Ժ. 10 .

բէք, այլ կը դողար այս ուրուականի առջև՝ զոր ոչ կրնար կաշառել և ոչ սպաննել. այս պահանորդին ձեռքէն՝ որ ձեր հոգւոյն բոլորտիքը կը հսկէ յարածամ, երբէք պիտի չկրնար խոյս տալ: Պիտի գայ ժամ մը՝ ուր մահուան ձեռքը ձեր ճակտին վրայ պիտի ծանրանայ, ուր բոլոր ձեր սիրած առարկաները՝ ստակը, պատիւները, կիներն ու զաւակները՝ ամպի մը մէջ պիտի տեսնէք: Բայց ձեր արցունքներու և յուսահատութեան մէջ տեղ՝ միշտ հոն պիտի ըլլայ այն քողարկեալ դէմքը՝ զձեզ ընդունելու և անտեսանելի աշխարհը տանելու համար կազմ ու պատրաստ: Անմեղ կամ մեղաւոր՝ անոր ձեռքէն պիտի չպրծիք երբէք. ձեր խղճի խայթը կամ յոյսը պիտի ըլլայ այն:

Անոր հետևեցէք ուրեմն այս աշխարհիս վրայ. ձեր տարակուսանաց ու յուզման մէջ հետևեցէք, նոյն իսկ ձեր թերահաւատութեան հակառակ: Յառեցէք ճշմարտութեան, այն պիտի փրկէ զձեզ: Այո, երբ այս կեանքէն միւսը պիտի անցնիք, այն ատեն այս դէմքը իր քողը պիտի նետէ և ՚ի վերջէ տեսանելի Քրիստոս եղած՝ իր Աստուածային ժպտին բոլոր պայծառութեան մէջ պիտի ըսէ. «Ճանչցիր դիտ, տղաս, ես ճշմարտութիւնն եմ:»

Այս ճառին վերջի խօսքերուն՝ ժողովարանէն դուրս ելայ ու մտտակայ սրահը վազեցի: Հոն Գրուգ հոգեւսպառ ու նուաղուն՝ թեւերուս մէջ ընկաւ. ձեռքը բռնեցի ու տեսայ որ կրակի պէս կ'այրէր:

— Ինչո՞ւ մարդ, ըսի իրեն, ինքզինքդ կ'սպաննես:

— Բարեկամդ իմ, միմուայ նա գլուխը ուսիս վրայ զնելով, մեր պարտքը կատարենք, մնացածը ունայնութիւն է:

«Ազգային գրադարան»



NL0348729

